

ՔԵՐԱՆ
ՔԵՄԵ

ՏԱՓԱՍՏԱՆԻ
ԳԱՅԼԸ

ՀՏԳ- 830-3 Հեստ
ԳՄԴ- 84.4 Գ-երմ.
Հ 546

Հրատարակված է
պետական պատվերով

Թարգմանությունը բնագրից, վերջաբանը և
ծանոթագրությունները՝ Արա Առաքելյանի

Herman Hesse, Gesammelte Schriften, Suhrkamp Verlag,
Frankfurt am Uian, 1987, Vierter Band

Überzetzung, Nachwort und Anmerkungen von
Ara Arakeljan

Հեստն է.

Հ 546 Տափաստանի գայլը: Վեպ /Հերման Հեստն. քարգմ. Արա
Առաքելյան, Եր.: Նաիրի, 2003, 240 էջ:

Հերման Հեստն (1877-1962) գերմանացի մեծանուն գրող է, 20-րդ
դարի եվրոպական գրականության ամենաճանաչված անուններից
մեկը: «Տափաստանի գայլը» վեպը, որ հայերեն հրատարակվում է
առաջին անգամ, առանձնահատուկ տեղ է գրավում նրա ժառանգու-
թյան մեջ:

- 20681 -

4702460100
Հ ----- 2003
705(01)2003

ԳՄԴ- 84.4 Գ-երմ.

ISBN 5-550-01320-7

© «Նաիրի» հրատարակչություն, 2003

ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս գիրքը բովանդակում է մեզ մոտ մնացած գրառումնե-
րը՝ մի մարդու, որին մենք, օգտվելով արտահայտությունից, որ
անձամբ գործածում էր նա, շատ անգամներ անվանում ենք
«Տափաստանի գայլ»։ Նրա ձեռագիրն ունի^օ, արդյոք, նախա-
բանի կարիք՝ դժվար է ասել, ամեն դեպքում ես անհրաժեշ-
տություն եմ տեսնում Տափաստանի գայլի էջերին ավելացնե-
լու մի քանիսը, որոնցում կփորձեմ ներկայացնել նրա մասին
իմ հիշողությունները։ Ես քիչ քան գիտեմ նրա մասին, մանա-
վանդ նրա ամբողջ անցյալը և ծագումը ինձ համար մնում են
անհայտ։ Բայց նրա անհատականությունից մնացել է ուժեղ և
ինչը հակառակ ամեն բանի՝ ստիպված եմ ասել, հաճելի
տպավորություն։

Տափաստանի գայլը հիսունին մոտ մարդ էր², որը մի քանի
տարի առաջ երևաց մորաքրոջս տանը և հետաքրքրվում էր
հարմար սենյակով։ Չեղնահարկում վարձելով մի սենյակ և
կողքի նեղիկ ննջախուցը, մի քանի օր անց նա վերադարձավ
երկու ճամպուրակով ու գրքերի ծանր արկղով և ապրեց մեզ մոտ
ինը, թե տասը ամիս։ Ապրում էր շատ անաղմուկ, ինքն իր հա-
մար, և եթե չլիներ մեր ննջասենյակների հարևանությունը, որի
հետևանքով պատահաբար հանդիպում էինք աստիճանների
վրա կամ միջանցքում, առհասարակ անձանոք կմնայինք միմ-
յանց, քանի որ այդ մարդը շփվող չէր, անմարդամտությունը
անսովոր չափի էր։ Նման բան ես չեմ նկատել ոչ մեկի մոտ.
նա, իրոք, ինչպես ինքն էր իրեն երբեմն անվանում, տափաս-
տանի գայլ էր, օտար, վայրի, վեհերոտ, անգամ շատ վեհերոտ
մի գոյություն այլ աշխարհի, որը տարբեր էր իմից։ Թե որքան
խոր մենակության մեջ էր նա թաղել ինքն իրեն սեփական հա-
կումների ու ճակատագրի հետևանքով և թե որքան զիաակցո-
րեն էր նա ընկալում այդ մենակությունը՝ իբրև իր ճակատա-
գիր, անշուշտ, իմացա միայն նրա թողած գրառումներից։

Բայց դրանից առաջ էլ, կարճատև հանդիպումների ու գրույցների շնորհիվ, արդեն որոշ չափով ճանաչել էի նրան և այն կերպարը, որ գրատուների միջոցով ստեղծեցի նրա մասին և գտնում եմ, որ հիմնականում համապատասխանում է, անշուշտ, առավել դժգույն և առավել քերի այն կերպարին, որ ինձ համար գծագրվեց մեր անձնական ծանոթության շնորհիվ:

Պատահաբար ես այնտեղ էի այն պահին, երբ Տափաստանի գայլն առաջին անգամ մտավ մեր տուն և սենյակ վարձեց մորաքրոջս մոտ: Նա եկավ միջօրեի մի ժամի, փսեսները դեռ սեղանի վրա էին, և ես աշխատավայրս վերադառնալու համար դեռ կես ժամ ունեի: Չեմ մոռացել այն երկակի ու զարմանալի տպավորությունը, որ նա թողեց ինձ վրա առաջին հանդիպմանը: Նա ներս մտավ ապակեպատ դռով՝ նախապես հնչեցնելով զանգը, և մորաքույրս կիսամութ սենյակում հարցրեց նրան, թե ինչ է կամենում: Բայց նա՝ Տափաստանի գայլը, վեր տնկելով իր սուր, կարճամազ գլուխը, քթով նյարդայնորեն հռատում էր շուրջքուրդը և մինչ կպատասխաներ կամ կհայտներ իր անունը, ասաց.

– Օ՛, ինչ լավ հոտ է փչում այստեղ:

Այդ ասելով՝ նա ժպտաց, և իմ բարի մորաքույրը ժպտաց նրա հետ, բայց, իմ կարծիքով, ողջույնի նման խոսքերը շատ ծիծաղելի էին, և նրա նկատմամբ ես ինչ-որ հակակրանք զգացի:

– Այս, հա, – ասաց նա, – եկել եմ վարձու սենյակի համար, որ Դուք ունեք:

Միայն այն ժամանակ, երբ երեքով բարձրացանք ձեղնահարկի աստիճանները, ես կարողացա ավելի լավ տեսնել այդ մարդուն: Շատ բարձրահասակ չէր, սակայն բարձրահասակ մարդու քայլվածք ու պահվածք ուներ, կրում էր ժամանակակից հարմարավետ ձմեռային վերաբերու և, առհասարակ, հագնված էր վայելուչ, բայց ոչ խնամքով, մաքուր սավորված էր և գլխին ուներ կարճ մազեր, որոնք տեղ-տեղ փայլում էին ձերմակով: Նրա քայլվածքը հենց սկզբից ինձ դուր չեկավ, նրա մեջ ինչ-որ լարվածություն ու անվճռականություն կար, որը չէր համապատասխանում նրա սուր, ուժեղ դիմագծերին, ինչպես նաև խոսքի հնչերանգին ու բնույթին: Միայն հետո ես նկատեցի և հասկացա, որ նա հիվանդ է, և որ քայլերը նրան տառապանք է պատճառում: Առանձնահատուկ մի ժպիտով,

որ նույնպես այն ժամանակ ինձ համար անտանելի էր, նա գննում էր սանդղաղբները, պատերը և լուսամուտները, սանդղահարթակի հին, բարձր պահարանները, թվում էր, որ այդ ամենը նրա համար դուրեկան էր, միաժամանակ նաև ինչ-որ ծիծաղելի:

Առհասարակ, այդ մարդն ամբողջապես այնպիսի տպավորություն էր թողնում, կարծես թե մեզ մոտ էր գալիս օտար մի աշխարհից, անդրծովյան ինչ-որ երկրներից, ու թեև այստեղ ամեն ինչ գտնում էր գեղեցիկ, սակայն փոքր-ինչ ծիծաղաշարժ: Նրա վարվելակերպը, ես այլ կերպ խոսք չեմ կարող գտնել, քաղաքավարի էր, անգամ բարեկամական, նա միանգամից և անանց առարկությունների հավանեց նաև տունը, սենյակը, համաձայնեց սենյակի ու նախաճաշի վարձաչափին, և, այդուհանդերձ, այդ մարդն ամբողջությամբ շրջապատված էր օտար և, ինչն այն ժամանակ թվում էր իմ սրտով, չար կամ թշնամական մթնոլորտով: Նա վարձեց սենյակը, վարձեց նաև ննջախուցը, խոսք բացեց ջեռուցման, ջրի, սպասարկման և տան կարգ ու կանոնից, ուշադիր լսեց ամեն բան, համաձայնեց ամեն ինչին, անգամ վարձի կանխավճար առաջարկեց, սակայն, այդ ամենով հանդերձ, թվում էր ոչ համոզիչ, թվում էր, որ նրա համար իր արարքները ծիծաղելի են, և դրանք ինքը չի ընդունում լրջորեն, որ իր համար տարօրինակ ու նոր բան է սենյակ վարձելը և մարդկանց հետ գերմաներեն խոսելն այն դեպքում, երբ էությունը, ներքնապես զբաղված էր միանգամայն այլ գործերով: Մոտավորապես սա էր իմ տպավորությունը, և այն ավելի չէր բարեփոխվի, եթե նրա հետ չգտնվեիք հակասության մեջ և չփորձեիք ճշգրտել առանձին մանրամասներ: Ամենից առաջ՝ նրա դեմքը, որն ինձ դուր եկավ հենց սկզբից, այն դուր եկավ՝ հակառակ նշածս օտարոտի տպավորության, դա, հավանաբար, ինչ-որ ինքնատիպ, նաև ախտը, զգոն, շատ խելացի, հստակորեն ձևավորված ու ոգելույն դեմք էր: Նրա հանդեպ ինձ ավելի բարեհաճության տրամադրեց նաև այն, որ քաղաքավարության ու սիրալիրության նրա ձևի մեջ, թեև դա նրանից պահանջում էր որոշակի լարում, բոլորովին չկար մեծամտություն, ընդհակառակը, նրանում հուզականին մոտեցող մի բան կար, աղերսանքի նմանվող մի բան, որի համար միայն հետո բացատրություն գտա:

Մինչ կավարտվեին երկու սենյակները դիտելը և մնացած բանակցությունները, սպառվեց նաև իմ ընդմիջման ժամանակը, և ես պետք է գնայի գրասենյակ: Ես հեռացա և նրան բողեցի մորաքրոջս հետ: Երբ երեկոյան վերադարձա, մորաքույրս պատմեց, որ օտարականը սենյակը վարձել է և մոտակա օրերին կտեղափոխվի, նա խնդրել է միայն, որ իր գալու մասին ռատիկանական գրանցում չարվի, քանի որ հիվանդ մարդ է, այդ ձևականությունները ռատիկանական միջանցքներում գրանցումներով և նման բաներով քարշ գալն իր համար անչափ անտանելի են: Դեռ հստակ հիշում եմ, թե այն ժամանակ դա ինչպես շփոթեցրեց ինձ և թե ինչպես էի զգուշացնում մորաքրոջս՝ չհամաձայնել այդ պայմանին: Յուրահատուկ օտարության և անվստահության հետ միասին ռատիկանության հանդեպ այս երկյուղը ինձ թվաց արդեն կասկածելի: Ես հայտարարեցի մորաքրոջս, որ գործ ունենալով միանգամայն անծանոթ անձնավորության հետ՝ ոչ մի կերպ չի կարելի համաձայնել այս տարօրինակ պահանջին, որի կատարումն առիթի դեպքում կարող է իր ետևից շատ տհաճ հետևանքներ ունենալ նրա համար: Բայց պարզվեց, որ մորաքույրս արդեն խոստացել է կատարել նրա ցանկությունը, և որ նա առհասարակ հմայված է այդ օտարականով և հավատարիմ կլինի նրան տված խոսքին, քանի որ նա ոչ մի անգամ դեռ չի ընդունել կենվորների, որոնց նկատմամբ ինչ-որ մարդկային մտերիմ և ազգակցական, ավելի ճիշտ՝ մայրական կապերի մեջ չկարողանա մտնել, մի բան, որից նախկին կենվորները լիառատորեն օգտվում էին: Եվ առաջին շաբաթների ընթացքում ստացվեց այնպես, որ նոր կենվորի մեջ ես նորանոր թերություններ էի գտնում, մինչ մորաքույրս ամեն անգամ ջերմորեն պաշտպանում էր նրան:

Քանի որ ինձ դուր չէր գալիս ռատիկանությունից խուսափելու հանգամանքը, ցանկանում էի գոնե իմանալ, թե արդյոք ինչ տեղեկություն ունի մորաքույրս օտարականի, նրա ծագման ու մտադրությունների մասին: Պարզվեց, որ նա այդ մասին գիտեր, թեև ընդմիջումից հետո աշխատանքի վերադառնալուցս հետո անծանոթն այստեղ մնացել էր շատ կարճ: Նա մորաքրոջս ասել էր, որ մտածում է մի քանի ամիս մնալ մեր քաղաքում, օգտվել գրադարաններից և տեսնել քաղաքի հնությունները: Ըստ էության, մորաքրոջս այնքան էլ հարմար չէր ընդու-

նել կենվորի, որը ցանկանում է տեղավորվել այդքան կարճ ժամանակով, բայց նա արդեն շահել էր մորաքրոջս համակրանքը՝ չնայած իր տարօրինակ ձևով ներս մտնելուն: Կարճ ասած՝ սենյակներն արդեն վարձված էին, իմ առարկությունները՝ այլևս ուշացած:

– Բայց ինչո՞ւ ասաց, թե այստեղ լավ հոտ է փչում, – ասացի ես:

Մորաքույրս, որ ժամանակ առ ժամանակ շատ ճշգրիտ ենթադրություններ էր կատարում, դրա վրա ասաց.

– Ես դա գիտեմ ստույգ: Այստեղ՝ մեզ մոտ փչում է մաքրության ու կարգուկանոնի, հարմարավետ ու վայելույց կյանքի հոտ, որը նրան դուր է գալիս: Նա այնպիսի տեսք ունի, որ կարծես սովոր չէ նման կյանքի և ունի դրա կարիքը:

«Դե ինչ, մտածեցի, հնարավոր է»:

– Բայց, – ասացի, – եթե նա կանոնավոր ու վայելույց կյանքի սովոր չէ, ապա ինչ է լինելու: Ինչ ես անելու, եթե նա մաքրասեր չէ և շուրջըրդրն ամենուրեք թողնելու է իր փնթիության հետքերը, կամ եթե նա ամեն զիջեր առն գա հարբած:

– Կտեսնենք, – ասաց նա և ծիծաղեց, և ես բողեցի այդ մասին խոսելը:

Եվ փաստորեն, իմ մտավայություններն անհիմն էին: Տնվորը թեև կանոնավոր ու խոհեմ կյանք չէր վարում, մեզ ոչ անհանգստացնում էր, ոչ էլ վնաս պատճառում. մենք նրան մինչև այսօր էլ հիշում ենք սիրով: Ներքուստ, սակայն, հոգու մեջ, այդ մարդը երկուսիս էլ մորաքրոջս և ինձ, խանգարել է շատ ու շատ, անհանգստության մատնել, և, պարզ ասած, ես նրանից բոլորովին էլ չեմ ազատվել: Գիշերները երբեմն նրան տեսնում եմ երագում և զգում եմ, որ նա, նրա նման մի արարածի գոյությունը, ըստ էության, խանգարում ու անհանգստացնում է ինձ, թեև դարձել է սիրելի:

Երկու օր անց կառապանը բերեց իրերը օտարականի, որին կոչում էին Հարրի Հայլեր³: Կաշվե շատ գեղեցիկ ճամպրուկն ինձ վրա լավ տպավորություն բողեց, իսկ մեծ, տափակ ճամփորդականը վկայում էր նախկին հեռավոր ճանապարհորդությունների մասին, ամեն դեպքում նրա վրա փակցված էին զանազան, նաև անդրծովյան երկրների հյուրանոցների ու արանսպորտային գործակալությունների դեղնած ազդագրեր:

Ապա երևաց ինքն անձամբ, և սկսվեց այն շրջանը, որի ընթացքում աստիճանաբար ճանաչեցի այդ խորհրդավոր մարդուն: Սկզբում այդ նպատակով ես իմ կողմից ոչինչ չէի ձեռնարկում: Թեև առաջին բուպեններից սկսած, երբ տեսա Հայկերին, նա հետաքրքրեց ինձ, սակայն առաջին մի քանի շաբաթներին ոչինչ չէի անում, որպեսզի հանդիպեմ նրան կամ գրույցի բռնվեմ հետը: Դրան հակառակ, խոստովանում եմ, ես, անշուշտ, հեռուում էի նրան, նույնիսկ բացառության կարգով մտնում էի նրա սենյակը կամ, հետաքրքրությունից դրդված, առհասարակ, մի քիչ լրտեսում նրան:

Տափաստանի գայլի արտաքինի մասին մի քանի տեղեկություններ տվել եմ արդեն, նա անպայմանորեն և առաջին իսկ հայացքից բողոքում էր նշանավոր, բացառիկորեն ընդունակ և անսովոր մարդու տպավորություն, նրա դեմքը լի էր խելացիությամբ, իսկ գծերի արտակարգ նուրբ ու շարժուն խաղերն արտացոլում էին ուշագրավ, չափազանց կենդանի, բացառիկ խոր ու զգայուն ներաշխարհը: Երբ մարդ խոսում էր նրա հետ, և նա, ինչը պատահում էր ոչ հաճախ, դուրս էր գալիս սովորականի սահմաններից ու հաղթահարելով օտարությունը՝ արտահայտում էր սեփական, անձնական մտքեր, գրուցակիցը ստիպված էր լինում առանց այլևայության ենթարկվել նրան, նա ավելի երկար էր մտածում, քան սովորական մարդիկ, և դրսևորում էր սառնությանը մոտ այն ճշգրտությունը, այն հուսալի խելամտությունն ու գիտելիքները, ինչով օժտված են միայն իրոք հոգևոր անհատները, որոնք գուրկ են երբևէ փայլելու կամ մյուսներին համոզելու, կամ իրավացի դուրս գալու որևէ փառասիրությունից:

Նրա՝ այստեղ լինելու վերջին ժամանակներից հիշում եմ նման մի արտահայտություն, որն արտահայտություն էլ չէր, այլ բաղկացած էր նրա տուկ մի հայացքից: Մի համբավավոր իմաստասեր և մշակույթի քննադատ, եվրոպական հեղինակություն ունեցող մի անձնավորություն համապարանի դահլիճում պետք է դասախոսություն կարդար, և ինձ հաջողվեց Տափաստանի գայլին, որն սկզբում բոլորովին էլ չուրախացավ դրա համար, համոզել զնալու այդ դասախոսությանը: Մենք զնացիմք միասին և դահլիճում նստեցինք կողք կողքի: Երբ գեկուցողը բեմ բարձրացավ և սկսեց իր խոսքը, հիասթափեցրեց շատ ունկնդիրների, որոնք նրա մեջ մի տեսակ մարգարեի էին

ակնկալում տեսնել, սակայն նրա մոտքը ինչ-որ ծեփծեփուն, ինչ-որ ունայն բան ուներ իր մեջ: Երբ նա սկսեց խոսել և սկզբի համար ունկնդիրներին մի քանի շողոքոք խոսքեր ասաց, շնորհակալություն հայանեց լեփլեցուն դահլիճի համար, Տափաստանի գայլն այդ պահին մի կարճ հայացք զցեց ինձ վրա, քննադատական մի հայացք այս խոսքերի և գեկուցողի ողջ անձնավորության առնչությամբ, օհ, անմոռանալի և սարսափազդու մի հայացք, որի նշանակության մասին կարելի է գիրք գրել: Հայացքը քննադատում էր ոչ միայն տվյալ գեկուցողին և հանրահայտ մարդուն՝ ոչնչացնելով նրան թեև նուրբ, բայց սպանիչ հեզմանքով, բայց դա դեռ ոչինչ: Հայացքն ավելի շատ տխուր էր, քան հեզմող, այն նույնիսկ անհունորեն և անհուսալիորեն տխուր էր, անդորր, ինչ-որ չափով՝ հուսալի, ինչ-որ չափով այլևս սովորույթ ու ձև դարձած հուսահատությունն էր այդ հայացքի բովանդակությունը: Իր հուսահատ պարզությամբ նա լույս էր սփռում ոչ միայն սին իմաստասեր անձի վրա՝ ծաղրելով ու տեղը դնելով տվյալ պահի իրադրությունը, հասարակության սպասումներն ու արամադրությունը, հայտարարված դասախոսության փոքր-ինչ հավակնոտ վերնագիրը, ոչ, Տափաստանի գայլի հայացքը ներթափանցում էր մեր ողջ ժամանակաշրջանը, ողջ գործարար իրարանցումը, ողջ հառաջավազքը, ողջ սնափառությունը, ծանծաղ հոգու երևութական ողջ խաղը: Այդ հայացքը, ցավոք, ավելի խորանում էր՝ ուղղվելով շատ ավելի հեռուն, հասնում էր մեր ժամանակների արմատներին ու հուսահատությանը, մեր հոգևոր աշխարհին, մեր մշակույթին: Այն ուղղված էր մարդկության սրտին, մեն մի ակնթարթում նա պարզորոշ կերպով արտացոլում էր մտածողի, զուցե իմաստունի ողջ թերահավատությունն արժանապատվության, մարդկային կյանքի իմաստի մասին առհասարակ: Այդ հայացքն ասում էր. «Ահա, ինչպիսի կապիկներ ենք մենք: Ահա, սա է մարդը», և ամենայն հեղինակություն, ամենայն խելացիություն, ոգու ամենայն ձեռքբերում, մարդկային ամենայն ձգտում դեպի վեհություն, մեծություն և հավերժականություն փրվելով էին ու դառնում կապկային խաղ:

Ես շատ առաջ անցա և, ըստ էության, իմ կամքին ու ծրագրին հակառակ, հիմնականում արդեն ասացի էականը Հայկերի մասին, մինչդեռ սկզբնապես իմ մտադրությունն այն էր, որ

նրա կերպարը գծելի միայն աստիճանաբար՝ նրա հետ իմ ծանոթության հետևողական պատմությանը զուգահեռ:

Քանի որ արդեն առաջ եմ անցել, այլևս չարժև շարունակել խոսակցությունը Հալլերի հանելուկային «օտարոտության» մասին և առանձին-առանձին տեղեկացնել, թե ինչպես աստիճանաբար կռահեցի ու ճանաչեցի այդ օտարոտության, այդ անսովոր ու վեհերոտ մենակության հիմքերն ու իմաստը: Այդպես ավելի լավ կլինի, քանի որ ցանկանում եմ իմ անձը հնարավոր չափով սավերի տակ բողմել: Ուզում եմ ոչ իմ խոստովանությունները ներկայացնել, ոչ նովելներ պատմել, ոչ էլ խորանալ հոգեբանության մեջ, այլ միայն, իբրև ականատես, ինչ-որ բան ավելացնել դիմանկարին այն մարդու, որը բողել է Տափաստանի գայլի սույն ձեռագրերը:

Գեռ առաջին հայացքից, երբ նա ներս մտավ մորաքրոջս ապակեպատ դռնով, թռչնի նման ետ գցելով գլուխը և շնչելով տան դուրեկան օդը, այդ մարդու մեջ նկատեցի ինչ-որ առանձնահատկություն, և իմ առաջին պարզամիտ վերաբերմունքը տեսությունն էր: Ես զգացի (և իմ մորաքույրը, որ, ի տարբերություն ինձ, բոլորովին մտավորական աշխարհի մարդ չէր, զգաց միևնույնը), որ այդ մարդը հիվանդ է հոգու, խառնվածքի կամ բնավորության ինչ-որ հիվանդությամբ, և առողջ մարդու բնագրով զգուշանում էի նրանից: Ժամանակի ընթացքում այս զգուշավորությունը մարեց համակրանքը, որը հիմնված էր մեծ կարեկցանքի վրա հանդեպ նրա, ով այդպես խոր ու երկար տառապում էր, և որի մենակեցությունն ու ներաշխարհի մահացումն ընթանում էին իմ աչքի առաջ: Այս շրջանում իմ գիտակցության համար ավելի պարզ դարձավ, որ տառապյալի հիվանդությունը չի կապվում նրա բնավորության ինչ-ինչ արատների հետ, այլ միանգամայն հակառակը՝ ներդաշնակության չհասած նրա ուժերի ու շնորհների արտակարգ առատության արդյունք է: Ես հասկացա, որ Հալլերը տառապանքի հանճարն է, որ նա, Նիցշեի որոշ ասույթների հիման վրա, իր համար մշակել է տառապանքի մի հանճարեղ, չսահմանափակված, անավոր սկզբունք: Միաժամանակ հասկացա, որ ոչ թե աշխարհի, այլ սեփական անձի հանդեպ ատելությունն է նրա հոռետեսության հիմքը, քանի որ անողոր ու ոչնչացնող շեշտով խոսելով կարգերի ու մարդկանց մասին՝ նա երբևէ իրեն դուրս չէր բողմում, մշտապես առաջինն ինքն

էր, ում դեմ ուղղում էր իր նետերը, իր անձն առաջինն էր, ում նա ատում էր ու ժխտում..

Այստեղ ես պետք է հոգեբանական մի մեկնաբանություն տամ: Թեև ինքս Տափաստանի գայլի կյանքի մասին շատ քիչ բան գիտեի, սակայն բոլոր հիմքերն ունեի նեթադրելու, որ նա սիրառատ, բայց խոտապահանջ ու բարեպաշտ ծնողների և ուսուցիչների կողմից դաստիարակվել է այն ոգով, ինչն ընկած է «Կամքի սանձահարում» դաստիարակչական սկզբունքի հիմքում: Անհատականության ոչնչացումը և կամքի սանձահարումն այս դեպքում, սակայն, չէին տուագվել, այդ պատճառով էլ նա ծանր հիվանդ էր, դաժան, շատ հպարտ ու խելացի: Սեփական անհատականությունը ոչնչացնելու փոխանքն նրան միայն հաջողվել էր ինքն իրեն ատելուն սովորեցնելը: Եվ իր դեմ, այդ ազնվական ու անմեղ նյութի դեմ, քանի դեռ ապրում էր, նա ուղղեց իր երևակայության ողջ հանճարը, իր գիտակցության ամբողջ ուժը: Քանի որ, ամեն ինչին հակառակ, հենց նրանով էր նա իսկական քրիստոնյա և իսկական մարտիրոս, որ ցանկացած կծու խոսք, ցանկացած քննադատություն, ցանկացած չարություն և ատելություն, որին նա ընդունակ էր, բոլորից և ամեն ինչից առաջ վերցնում էր անձամբ իր վրա: Ինչ վերաբերում էր մյուսներին, շրջապատի մարդկանց, ապա նա շարունակ ամենահերոսական, ամենահամառ ջանքերն էր գործադրում՝ նրանց սիրելու, նրանց արդարացի վերաբերվելու, ցավ չպատճառելու համար, քանի որ «Մի՞րիք մերձավորիդ» պատվիրանն այնքան խորն էր նստած նրա մեջ, որքան իր անձի հանդեպ ատելությունը, և այսպիսով՝ նրա ողջ կյանքն օրինակ էր այն բանի, թե սեփական անձի հանդեպ առանց սիրո անհնար է նաև սերը դեպի մերձավորը, որ ինքն ատելությունը ճիշտ և ճիշտ նույն բանն է և ուղղակիորեն հանգեցնում է նույն սարսափելի մենակությանը և հուսահատությանը, ինչպես որ ուժեղ եսասիրությունը:

Բայց արդեն ժամանակն է, որ մի կողմ դնեմ իմ դատողությունները և խոսեմ իրական փաստերով: Այսպիսով՝ առաջին բանը, որ իմացա Հարրի Հալլերի մասին, մասամբ իմ լրատության, մասամբ էլ մորաքրոջս դիտարկումների շնորհիվ, վերաբերում է նրա կենցաղին: Որ նա մտքի ու գրքերի մարդ էր և ոչ մի գործնական մասնագիտություն ձեռք չէր բերել, պարզ դարձավ շուտով: Նա անկողնում միշտ շատ երկար էր պառ-

կամ մնում, հաճախ վեր էր կենում կեսօրից քիչ առաջ միայն և խալաթով թեթևակի անցուդարձ էր անում ննջախցում և ընդհանուր սենյակում: Չեղմահարկի մեծ ու հաճելի սենյակը, որ երկու պատուհան ուներ, մի քանի օր էր արդեն, որ այն տեսքը չուներ, ինչ նախկին կենվորների ժամանակ էր: Այն լցվել էր կյանքով և ժամանակի ընթացքում գնալով ավելի ու ավելի լցվեց: Պատերից կախվեցին նկարներ⁴, ամրացվեցին թեթևորից կտրված-հանճեված պատկերներ, որոնք հաճախակի փոփոխվում էին: Հարավային մի բնանկար, գերմանական գավառական մի քաղաքի, հավանաբար Հալլերի ծննդավայրի համապատկերը մեջընդմեջ կախված էին այնտեղ գունագեղ, լուսավոր ջրանկարների հետ միասին, հետո իմացանք, որ դրանք նկարված են իր ձեռքով: Այնուհետև լուսանկարը գեղեցիկ, երիտասարդ մի կնոջ կամ ջահել աղջկա: Որոշ ժամանակ պատից կախված մնաց սխամական մի Բուդդա, նրան հաջորդեց Միքելանջելոյի «Գիշերվա» մի վերատպություն, ապա Մահաթմա Գանդիի դիմանկարը: Գրքերը զբաղեցնում էին ոչ միայն մեծ պահարանը, այլև լցված էին ամենուրեք՝ սեղաններից, հին, գեղեցկատես գրասեղանից, բազմոցից, աթոռներից, հատակից, գրքեր՝ թեթևորի մեջ դրված թղթե ներդիրներով, որոնք նույնպես շարունակ փոխվում էին: Գրքերի թիվը գնալով ավելանում էր, քանի որ նա ոչ միայն գրադարաններից բերում էր ամբողջական կապուցներ, այլև հաճախակի փոստով ստանում էր ծանրոցներ: Մարդը, որն ապրում էր այս սենյակում, գիտնական լինելու բոլոր նշաններն ուներ: Դրան համապատասխանում էին նաև ծխախոտի ծուխը, որն այստեղ ծածկում ու պարուրում էր ամեն բան, և ամենուրեք թափված ծխախոտի մնացորդներն ու մոխրամանները: Սակայն գրքերի մեծ մասը գիտական չէին, մեծաթիվ գրքեր ներկայացնում էին բոլոր ժամանակների ու ժողովուրդների բանաստեղծների երկերը: Բազմոցի վրա, որտեղ հաճախ էր պառկած անցկացնում իր ամբողջ օրը, ժամանակ ընկած մնացին 18-րդ դարի վերջերի մի հաստափոր գրքի բոլոր վեց հատորները, վերնագիրն էր. «Առֆիի ճանապարհորդությունը Մեմելից Սաբունիա⁵»: Գյոթեի և Ժան Պոլի լիակատար ժողովածուները մաշված տեսք ունեին, ինչպես նաև Նովալիսը, բացառություն չէին կազմում Լեսինգը, Յակոբին և Լիխտենբերգը: Դոստոևսկու հատորների մեջ խցկած էին գրոտած թղթեր: Մեծ սեղանի վրա՝ բազմա-

թիվ թղթերի ու ձեռագրերի մեջ, հաճախ երևում էր մի ծաղկաման, այդտեղ էր նաև ջրաներկերի տուփը, որը, սակայն, մշտապես ծածկված էր փոշով, դրա կողքին՝ մոխրամաններ և, սա էլ չպետք է մոռանալ, գանազան շշեր՝ խմիչքներով հանդերձ: Ծոռոտահյուսքով պատված շիշը մեծ մասամբ լցված էր լինում իտալական կարմիր գինով, որ նա բերում էր մոտակա փոքր խանութից, երբեմն հայտնվում էր բուրգունդական գինի: Երբեմն՝ մալագա, իսկ բայի թրմօղիով հաստափոր շիշը, ինչպես նկատեցի, կարճ ժամանակում գրեթե դատարկվեց, իսկ ապա անհետացավ ինչ-որ անկյունում ու ծածկվեց փոշով՝ այլևս չարժանանալով ուշադրության: Չեմ ցանկանում իմ լրտեսությունն արդարացնել և ազնվորեն ասում եմ, որ սկզբնական շրջանում այս բոլոր, թեկուզև մտավոր հետաքրքրություններով լցված, բայց իրականում թեթևամիտ ու անկանոն կյանքի նշաններն իմ մեջ ծնում էին հակակրանք ու անվստահություն: Ես ոչ միայն չափավոր քաղթենու կյանքով ապրող մեկն եմ, որ սովոր է իր աշխատանքը և ժամանակը ճշգրտորեն կարգավորել, նաև չլանդ ու չծխող եմ, և Հալլերի սենյակում այդ շշերն ինձ համար ավելի տհաճ էին, քան մնացած նկարչական անկարգությունները:

Ինչ վերաբերում է քնին ու աշխատանքին, ապա օտարականը դրանց նույնպես մայում էր շատ անկանոն ու քմահաճ: Օրեր էին պատահում, երբ նա առհասարակ դուրս չէր գալիս և, առավոտյան սրճից բացի, ուրիշ ոչինչով չէր սեփմ, երբեմն, իբրև նրա ճաշի մնացորդ, մորաքույրս այլ բան չէր գտնում, քան ընդամենը մեկ բանանի կեղև, բայց այլ օրերին նա սնվում էր ռեստորաններում, հաճախ շատ լավ, ընտիր ռեստորաններում, երբեմն էլ որևէ փոքրիկ, արվարձանային պանդոկում: Նրա առողջությունը, ինչպես երևում էր, ամուր չէր: Ուրբերի արգելակումից բացի, որի պատճառով հաճախ բավական դժվարությամբ էր բարձրանում սանդուղքները, նրան հավանաբար տանջում էին նաև այլ հիվանդություններ, ինքն էլ մի անգամ, իմիջիայրոց, ասաց, որ արդեն երկար տարիներ է ոչ կարգին մաքսում է, ոչ էլ կանոնավոր քնում: Ես դա ամենից առաջ կապեցի նրա խմելու հետ: Ավելի ուշ, երբ մի անգամ նրա հետ մտա այն պանդոկներից մեկը, որտեղ ճաշում էր, տեսա, թե ինչպես էր արագորեն և ինքնահաճորեն խմում գի-

նի՝ զավաթ զավաթի ետևից, սակայն թունդ հարբած նրան ոչ ինքս, ոչ էլ մեկ ուրիշը չտեսավ:

Երբեք չեմ մոռանա մեր առաջին անձնական հանդիպումը: Մենք միմյանց ճանաչում էինք այնքան, որքան ճանաչում են հարևան սենյակներում վարձով ապրողները: Մի անգամ՝ երեկոյան, վերադառնալով գրասենյակից, ի զարմանս ինձ, տեսա պարոն Հալլերին երկրորդ և երրորդ հարկերի միջակա սանդղահարթակի մոտ նստած: Նստել էր սանդղադրի ամենավերին աստիճանին և մի կողմ թեքվեց, որ ինձ անցնելու հնարավորություն տա: Հարցրեցի՝ արդյոք իրեն վատ չի՞ զգում և առաջարկեցի ուղեկցել աստիճաններով մինչև վերջ: Հալլերն ուշադիր նայեց ինձ, և ես հասկացա, որ նրան դուրս էի բերել ինչ-որ երազային վիճակից: Դանդաղորեն սկսեց ժպտալ իր գեղեցիկ ու խղճահարույց ժպիտով, որով հաճախ տանջել էր իմ սիրառը, սպա խնդրեց ինձ նստել իր կողքին: Ես շնորհակալություն հայտնեցի և ասացի, որ սովոր չեմ ուրիշների սենյակների առաջ նստել աստիճանների վրա:

– Ախ, այո, – ասաց նա և ժպտաց ավելի ուժեղ, – Դուք իրավացի եք: Բայց մի պահ սպասեք, ես Ձեզ ցույց կտամ, թե ինչու այստեղ նստեցի-մնացի մի փոքր:

Ապա ցույց տվեց երկրորդ հարկի բնակարաններից մեկի առջևի հարթակը, որտեղ ապրում էր այրի մի կին: Մանրահատակով ծածկված փոքրիկ հրապարակում, սանդղադրների, պատուհանի և ապակեպատ դռան միջև, պատի մոտ կանգնած էր կարմրափայտի պահարան՝ անագե հին զարդապատկերներով, իսկ պահարանի առջևում՝ հատակին, երկու ցածրիկ պատվանդաններով մեծ թաղարներում դրված էին երկու թուփ՝ լեռնավարդ և արաուկարիա* : Թփերը հրաշալի տեսք ունեին և միշտ պահպանվում էին շատ մաքուր ու անթերի, դա ինձ համար էլ հաճելի ու դուրեկան էր:

– Տեսնում եք, – շարունակեց խոսքը Հալլերը, – արաուկարիայով այս փոքրիկ հրապարակը, որ բուրում է կախարդիչ բուրմունքով, հաճախ չեմ կարողանում անցնել դրա կողքով՝ առանց մի փոքր կանգ առնելու: Ձեր մորաքրոջ տանը նույնպես անուշահոտություն կա, իշխում են կարգուկանոնը և ար-

* Արաուկարիա – մշտադալար փշատերև զարդաբույս Ավստրալիայում և Հարավային Ամերիկայում:

տակարգ մաքրությունը, բայց այստեղ՝ արաուկարիայի այս փոքրիկ հրապարակում, որն այնպես է շողում մաքրությամբ, այնպես է մաքրված փոշուց ու լվացված, ձեռք չտալու չափ այնքան մաքուր է, որ պարզապես ճառագում է: Այստեղ մշտապես ուզում եմ լիաթոք շնչել: Դուք նույնպես՞ զգում եք բուրմունքը: Ինչպես է հատակամոմի և բևեկնախեժի թույլ հոտը, միախառնված կարմրափայտի, բույսերի լվացված տերևների և մնացյալ բոլորի անուշահոտությունների հետ, ստեղծում մի ախորժեղի բուրմունք, ստեղծում բյուրգերական մաքրության, բարեխղճության և ճշգրտության ամենավերին արտահայտությունը, պարտքի և հավատարմության իրակամացումը՝ փոքր չափերի մեջ: Ես չգիտեմ, ով է այդտեղ ապրում, բայց այս ապակեպատ դռների ետևում պետք է որ լինի մաքրության և փոշուց զերծ բյուրգերականության դրախտը, դրախտը կարգուկանոնի և մանր սովորությունների ու պարտականությունների հանդեպ սրտառույշ-վեհերոտ նվիրվածության:

Քանի որ ես լսում էի, ուստի նա շարունակեց.

– Խնդրեմ, մի կարծեք, թե հեզնում եմ: Միրիկի պարոն, ոչ ինչ ինձնից ավելի հեռու չէ, որքան այս քաղթենիությունն ու կարգուկանոնը: Գիշտ է, ես ինքս ապրում եմ այլ աշխարհում, ոչ այստեղ և, հավանաբար, մեկ օր էլ չէի դիմանա այն տան մեջ, որտեղ կան նման արաուկարիաներ: Բայց թեև ձեր ու ողորմելի Տախաստանի գայլ եմ, այդուամենայնիվ, նույնպես իմ մոր զավակն եմ, և իմ մայրն էլ քաղթենի կին էր, ծաղիկներ էր աճեցնում, հետևում էր սենյակների ու սանդղադրների մաքրությանը, կահույքին ու վարագույրներին և ձգտում իր բնակարանին ու իր կյանքին հաղորդել որքան կարելի է շատ մաքրություն, խնամվածություն և օրինականություն: Ինձ այդ բանը հիշեցնում է բևեկնախեժի բուրմունքը, հիշեցնում է արաուկարիան, և ահա, ժամանակ առ ժամանակ նստում եմ այստեղ, նայում եմ կարգուկանոնի այս փոքրիկ պարտեզին և ուրախանում, որ աշխարհում դեռ նման բան կա:

Նա ցանկացավ վեր բարձրանալ, բայց պարզվեց, որ դա դժվար է նրա համար, իսկ երբ առաջարկեցի օգնությունս՝ չմերժեց: Ես լուռ էի մնում, բայց շարունակ, ինչպես դա նախկինում մորաքրոջս հետ էր պատահում, ենթարկվելով ինչ-որ կախարդանքի, որ այս տարօրինակ մարդն ունենում էր եր-

րենն: Մենք դանդաղորեն բարձրացանք սանդուղքները, և իր տան առաջ, արդեն ձեռքին բռնած բանալիները, նա մի անգամ էլ ուղիղ և շատ բարեկամարար նայեց ինձ ու ասաց.

– Դուք հիմա գալիս էք Չեր գրասենյակի՞ց: Դե, հա, ես այդ գործից ոչինչ չեմ հասկանում, սպքում եմ մի քիչ կողքի քաշված, գիտեք, մի քիչ ճանապարհից դուրս: Բայց, հավանաբար, Դուք նույնպես հետաքրքրվում եք գրքերով ու նման բաներով, Չեր մտաբանություն ինձ մի անգամ ասաց, որ ավարտել եք գիմնագիտան և լավ գիտեք հունարենը: Այսօր առավոտյան ՆոՎալիսի մոտ ես մի արտահայտություն գտա, կարելի՞ է այն ցույց տալ Չեզ: Դուք էլ դրանից բավականություն կզգաք:

Նա ինձ տարավ իր սենյակը, որտեղ ծխախոտի ուժեղ հոտ էր նստած, գրքերի կույտից վերցրեց մի գիրք ու սկսեց քերթելով փնտրել...

– Այս մեկն էլ լավն է, շատ լավը, – ասաց նա, – լսեք. «Պետք է հպարտանալ ցավով, յուրաքանչյուր ցավ հիշեցնում է մեզ մեր բարձր կոչման մասին»: Հրաշալի է: Նիցշեից ուրսուն տարի ատաջ: Բայց սա այն արտահայտությունը չէ, որը ես ի նկատի ունեի, սպասեք, գտա: Ահա այն. «Մարդկանց մեծ մասը չի ցանկանում լողալ, մինչև չի սովորում»: Մրամիտ չէ՞: Իհարկե, նրանք չեն ցանկանում լողալ: Չէ՞ որ նրանք ծնվել են ցամաքի համար, ոչ քե ջրի: Եվ, բնականաբար, նրանք չեն ցանկանում մտածել, չէ՞ որ նրանք ծնվել են ապրելու համար, ոչ մտածելու: Այո, իսկ ով մտածում է, ով դրա մեջ տեսնում է իր գլխավոր գործը, քեև կարող է շատ բանի հասնել, սակայն հենց իրար հետ խառնեց ցամաքն ու ջուրը, օրերից մի օր կխեղդվի:

Այսպես նա պահեց և հետաքրքրեց ինձ, և ես կարճ ժամանակով մնացի նրա տանը: Այդ օրվանից հաճախակի էինք հանդիպում սանդուղքների վրա կամ գրույցի բռնվում փողոցում: Եվ սկզբնական շրջանում, ինչպես այն անգամ արտակարիսի մոտ, ես ունենում էի այն զգացումը, որ նա հեզնում է: Բայց դա այդպես չէր: Ինչպես արաուկարիսի, այնպես էլ իմ հանդեպ նա ուներ անկեղծ հարգանք, այնքան խորն էր համակված իր մենակության, ջրում լողալու իր դատապարտվածության, արմատներից իր կտրվածության գիտակցությամբ, որ երբեմն իրապես և առանց որևէ հեզնանքի կարող էր ոգևորվել, օրինակ, առօրյա, կենցաղային որևէ արարքով, գրասենյակ գնալ-գալու իմ ճշտապահությամբ, որևէ սպասա-

վորի կամ տրանվայի հսկիչի մի խոսքից: Սկզբում դա ինձ թվում էր բավականին ծիծաղաշարժ չափազանցություն, մի տեսակ հեզնանք և կեղծ սենսիմենտալություն, որ յուրահատուկ է ազնվական և անբան մարդկանց: Բայց ստիպված էի համոզվել, որ նա, փաստորեն, նայում է մեր փոքրիկ, քաղքենի աշխարհին իր անօդ տարածությունից, իր օտարացումից ու Տափաստանի գայլի բնությունից՝ ուղղակի զարմացած այդ փոքրիկ աշխարհով և սիրելով այն՝ իբրև ամուր ու հաստատուն, իբրև իր համար հեռու և անհասանելի մի բան, իբրև հայրենիք ու խաղաղություն, դեպի ուր նա չէր կառուցել ոչ մի ճանապարհ: Մեր դոմապանուհու առաջ, որ շատ կարգին կին էր, նա միշտ հանում էր գլխարկը առանց կեղծ հարգանքի, իսկ երբ մտաբանություն նրա հետ գրուցում էր կամ հիշեցնում, որ նրա սպիտակեղենը կարկատելու կարիք ունի, կամ թուլացել է վերարկուի կոճակը, նա մտաբարոջս լսում էր շատ ուշադիր ու լուրջ, կարծես անասելի և հուսահատ ջանք թափելով, որպեսզի կարողանա ինչ-որ բացվածք գտնել և թափանցել այդ փոքրիկ, այդ մտերմիկ աշխարհը՝ այնտեղ իրեն, ինչպես տանը, գոնե մեկ ժամով զգալու համար:

Այն առաջին խոսակցության ժամանակ դեռ, արաուկարիսի այն մոտ, նա իրեն անվանեց Տափաստանի գայլ, և դա նույնպես մի փոքր վանեց և ավելոծեց ինձ: Դա ի՞նչ արտահայտության ձև էր: Բայց սովորեցի ընդունել, ըմտելացա ոչ միայն սովորությամբ ասված այդ արտահայտությանը, այլև ինքս էլ, շուտով, մտքիս մեջ այլ կերպ չէի անվանում նրան, քան Տափաստանի գայլ, և հիմա էլ նրա համար չկարողացա գտնել ավելի դիպուկ բառ: Դեպի մեզ, դեպի մեր քաղաքներն ու հոտային կյանքը խենթորեն մղվող Տափաստանի գայլ՝ ուրիշ ոչ մի պատկեր ավելի ճշգրտորեն չի ներկայացնում այդ մարդուն, նրա վեհերոս մենակությունը, նրա վայրենությունը, անհանգստությունը, բաղձանքն առ հայրենիք և հայրենագրկությունը:

Մի անգամ ես կարողացա նրան ուսումնասիրել ամբողջ երեկոյի ընթացքում, սիմֆոնիկ երաժշտության համերգի ժամանակ, որտեղ, ի զարմանս ինձ, նրան տեսա ինձնից ոչ հեռու նստած, իսկ ինձ նա չէր նկատում: Սկզբում կատարվում էր Հենդել, ազնիվ ու գեղեցիկ մի երաժշտություն, բայց Տափաստանի գայլը նստած էր՝ խորասուզված ինքն իր մեջ, անհա-

դորդ ոչ միայն երաժշտությանը, այլև իր շրջապատին: Նա նստած էր մեկուսի, մենակ և օտար՝ սառը, սակայն մտախոհ աչքերով դեմքը ցած կախած: Ապա սկսվեց մեկ այլ պիես, Ֆրիդեման Բալսի փոքր սիմֆոնիան, և ես մեծ զարմանքով տեսա, թե ինչպես առաջին մի քանի գործողությունից հետո իմ օտարականը սկսեց ժպտալ և համակվել երաժշտությանը, նա ամբողջությամբ բաղվել էր ինքն իր մեջ ու, երևի, մի տասը րոպե շարունակ երջանկորեն այնքան ինքնամոռաց ու բարի երազների մեջ կորածի տեսք ուներ, որ ավելի նրան, քան երաժշտությանն էի ուշադրություն դարձնում: Երբ պիեսն ավարտվեց, նա արթնացավ, նստեց ավելի ուղիղ, թվաց, որ ուզում է վեր կենալ և դուրս գալ, բայց հետո մնաց նստած և լսեց նաև վերջին պիեսը: Կատարվում էին Ռեգերի վարիացիաները, երաժշտության, որը շատերի համար ընդունվում է իբրև երկարավիզ ու հոգնեցուցիչ: Տափաստանի գայլը նույնպես, որ սկզբում լսում էր շատ ուշադիր ու բարյացակամ, դարձավ անտարբեր, գրպանը խոթեց ձեռքերը և վերստին խորասուզվեց ինքն իր մեջ, այս անգամ, սակայն, ոչ երջանիկ ու երազկոտ, այլ ախուր և, ի վերջո, չարացած, նրա դեմքը կրկին դարձավ բացակա, գորշ ու հանգած, նրա տեսքը ծեր էր, հիվանդ ու անբավական:

Համերգից հետո, փողոցում, նրան նորից տեսա և զնացի հետևից: Փաթաթված վերարկուի մեջ, անուրախ ու հոգնած՝ նա քայլում էր մեր քաղամասի ուղղությամբ, բայց փոքր, հնաձև մի պանդոկի առաջ կանգ առավ, անվճռական նայեց ժամացույցին ու ներս մտավ: Ակնթարթորեն ծագած ցանկությանը ես հետևեցի նրան և նույնպես ներս մտա: Նա նստեց այն սեղաններից մեկի մոտ, որ նախատեսված էին մանր քաղքենիների համար: Տիրուհին և սպասավորները ողջունեցին նրան՝ իբրև ծանոթի, ես նույնպես բարևեցի ու նստեցի նրա մոտ: Այստեղ նստեցինք մեկ ժամ, ու մինչ ես կխմեի երկու բաժակ հանքային ջուր, նա խնդրեց բերել նախ՝ կես, ապա՝ քառորդ լիտր զինի: Ասացի, որ գալիս եմ համերգից, բայց նա ուշադրություն չդարձրեց դրան: Կարդալով իմ հանքային ջրի պիտակը՝ նա հարցրեց, թե չեմ ուզում զինի խմել, ինքը պատրաստ է հյուրասիրել: Երբ լսեց, որ զինի բնավ չեմ խմում, դեմքին կրկին հայտնվեց անօգնականության արտահայտություն, և նա ասաց.

- Այո, իրավացի եք: Ես նույնպես տարիներով ապրել եմ ժուժկալ ու զինուց հեռու, բայց հիժա նորից Ջրոսի նշանի տակ եմ⁶, մոթ ու խոնավ նշանի:

Եվ երբ կատակով ուշադրություն դարձրեցի այդ արտահայտությանը և հասկացրի, որ անհավանական է թվում, թե նա հավատում է աստղագիտությանը, նա վերստին դիմեց չափազանց քաղաքավարի այն հնչերանգին, որն ինձ հաճախ թվում էր վիրավորական ու ասաց.

- Միանգամայն ճիշտ եք, այս գիտությունը նույնպես, ցավոք սրտի, իմ մեջ հավատ չի ներշնչում:

Ես ցտեսություն ասացի և դուրս եկա, իսկ նա տուն եկավ շատ ուշ, միայն զիշերը, բայց նրա քայլերը սովորականից չէին տարբերվում, և, ինչպես միշտ, անմիջապես չմտավ անկողին (իբրև սենյակի հարևան, ես դա զգում է անսլալ), այլ մի ժամի չափ, լույսը վառած, մնաց հյուրասենյակում:

Մեկ այլ երեկո նույնպես իմ մտքից դուրս չի գալիս: Տանը ես մենակ էի, մորաքույրս բացակայում էր, տան դարպասի զանգը տվեցին, և երբ բացեցի այն, իմ առջև կանգնած տեսա ջահել, գեղեցիկ մի տիկին:

Երբ նա հարցրեց պարոն Հալլերի մասին, ճանաչեցի՝ դա նրա սենյակում փակցրած լուսանկարի աղջիկն էր: Նրան ցույց տվեցի Հալլերի դուռը և հեռացա, նա որոշ ժամանակ մնաց վերևում, բայց շուտով լսեցի, թե ինչպես երկուսով իջան սանդուղքներով ու դուրս եկան՝ աշխուժորեն և մեծ բավականությամբ գրուցելով ու կատակներ անելով: Շատ զարմացա, որ մեր կենվորը սիրած աղջիկ ունի, ընդ որում՝ այդքան ջահել, այդքան գեղանի, այդքան շքեղ, և նրա ու նրա կյանքի մասին իմ բոլոր ենթադրությունները նորից ինձ թվացին անհավանական: Բայց մեկ ժամ էլ չանցավ, նա տուն վերադարձավ, մենակ, ծանր, ախուր քայլերով, դժվարությամբ բարձրացավ սանդուղքները և ապա ժամերով ետ ու առաջ էր քայլում սենյակում ամբողջ զիշեր, իրոք, ինչպես գայլ՝ վանդակում: Նրա լույսը վառվում էր մինչև առավոտ:

Ես այդ հարաբերություններից բնավ ոչինչ չգիտեմ և կարող եմ միայն ավելացնել. մեկ անգամ էլ նրան տեսա այդ կնոջ հետ միասին, քաղաքի փողոցներից մեկում: Նրանք քայլում էին թևանցուկ, Հարրիի տեսքը երջանիկ էր, ես նորից զարմանքով նկատեցի, թե որքան գրավչություն, անգամ մանկակա-

նություն կարող է ունենալ նրա մտախոհ, օտարացած ղեմքը, և հասկացա այդ կնոջը, հասկացա նաև մորաքրոջս կարեկցանքը, որ դրսևորվում էր այդ մարդու հանդեպ: Բայց այդ օրը նույնպես նա վերադարձավ տխուր ու դժբախտ: Ես նրան հանդիպեցի տան դարպասի մոտ: Վերաբերյալ տակ, ինչպես շատ անգամներ էի տեսել, նա պահել էր իտալական գինու շիշ և վերևում, ամբողջ գիշեր, նստեց դրա հետ իր դժոխքում: Ես ցավում էի նրա համար. այդ ինչ անհույս, կորած ու անպաշտպան կյանքով էր ապրում նա:

Դե, բավական խոսեցի ինք: Այլևս պետք չեն ոչ պատմություններ և ոչ էլ նկարագրություններ՝ ցույց տալու համար, որ Տափաստանի գայլը վարում էր ինքնասպանի կյանք: Բայց, այդուամենայնիվ, ես չեմ կարծում, որ նա ինքնասպան է եղել այն քանից հետո, երբ մի օր, առանց հրաժեշտ տալու, բայց բոլոր պարսքերը փակելուց հետո հանկարծ բողեց մեր քաղաքը և անհետացավ: Գրանից հետո մենք նրա մասին այլևս չլսեցինք և շարունակում էինք պահպանել նրա անունով հետո եկած մի քանի նամակներ: Նրանից մնաց միայն ձեռագիրը, որ նա գրել էր այստեղ մնալու օրերին և որը բողեց ինձ մի քանի նկատառումների հետ միասին, որոնցից երևում էր, որ կարող եմ դրանց հետ վարվել՝ ինչպես կամենամ:

Ես հնարավորություն չունեի ստուգել, թե որքանով էին իրադարձությունները, որ ներկայացնում էր Հայերի ձեռագիրը, համապատասխանում իրականությանը: Չէի կասկածում, որ դրանք մեծամասամբ հորինված, բայց ոչ կամայական մտա-հղացումներ են, այլ ինչ-որ բան արտահայտելու փորձ, որ խորապես ապրված հոգևոր անցքերը ներկայացնում էին տեսանելի իրադարձությունների շղարշով: Հայերի պատմության մեջ մասնակիորեն ֆանտաստիկ դեպքերը, հավանաբար, առնչվում են այստեղ ապրելու վերջին ժամանակահատվածի հետ, և ես կասկած չունեմ, որ դրանց հիմքում ընկած են ինչ-որ չափով իրական, արտաքին տպավորություններ: Այդ օրերին մեր հյուրի վարքը և տեսքը, իրոք, փոխված էին, երկար էր բացակայում անից, երբեմն նույնիսկ ամբողջ գիշերներով, և նրա գրքերը մնում էին ձեռք չտված: Այն քիչ անգամներին, երբ հանդիպում էի նրան, աչքի ընկնելու չափ աշխույժ ու ջանկար-ցած էր թվում, երբեմն նույնիսկ՝ ուրախ: Գրան, իհարկե, հետևում էր նոր, ծանր ճգնաժամ, նա ամբողջ օրերով մնում էր

անկողնում պառկած, առանց ուտելիքի մասին մտածելու, հենց այդ ժամանակներում պատահեց մինչ այդ չտեսնված բուռն ու անգամ կուպիտ վեճը իր՝ վերստին հայտնված սիրեցյալի հետ, վեճ, որ տակնուվրա արեց ողջ տունը, և որի համար Հայերը ներողություն խնդրեց մորաքրոջիցս:

Ոչ, ես համոզված չեմ, որ նա ինքնասպան է եղել: Նա ղեռ ապրում է, քայլում է ինչ-որ տեղ՝ իր հոգնած ոտքերով բարձրանալով ու իջնելով օտար տների սանդուղքներով, ինչ-որ տեղ ուշադիր դիտում է փայլուն մանրահատակն ու մաքուր մշակված արաուկարիաները, օրեր շարունակ նստում է գրադարաններում և գիշերներ անցկացնում պանդոկներում կամ պառկում է վարձու բազմոցին, պատուհանից այն կողմ ականջ դնում աշխարհի ձայներին ու մարդկանց կյանքին, հասկանում, որ ինքը կտրված է նրանցից, բայց ինքնասպան չի լինում, քանզի հավատի վերջին փշրանքն ասում է նրան, որ նա պետք է մինչև վերջ դատարկի ահավոր ցավի այդ բաժակը, և որ դա այն ցավն է, որից պետք է մեռնի նա: Ես հաճախ մտածում եմ նրա մասին. նա իմ կյանքը չի թեթևացրել, նա չունեի այն շնորհը, որպեսզի իմ մեջ զարգացներ, հենարան դարձներ Ուժն ու Չվարքությունը, օհ, ոչ, ընդհակառակը: Բայց ես Հարրին չեմ և չեմ ապրում նրա պես, այլ իմ՝ փոքր, քաղցրնու, սակայն անվտանգ և պատասխանատվություններով լի կյանքով: Եվ մենք նրա մասին հիշում ենք խաղաղ և բարեկամական զգացումով, ես և իմ մորաքույրը, որը նրա մասին կարող էր գիտենալ ավելի շատ, քան ինքս, բայց դա թաքուն կմնա նրա բարի սրտում:

Ինչ վերաբերում է Հայերի գրառումներին, այդ զարմանալի, մասամբ հիվանդագին, գեղեցիկ ու խորհմաստ ֆանտազիաներին, ապա պետք է ասեմ, որ այդ թղթերը, եթե ձեռքս ընկնեին պատահաբար, և նրանց հեղինակն ինձ ծանոթ չլիներ, անշուշտ, վրդովված մի կողմ կնետեի: Բայց Հայերի հետ ունեցած ծանոթությանս շնորհիվ ես կարողացա դրանք մասամբ հասկանալ, անգամ հավանություն տալ դրանց: Ես ձեռնպահ կմնայի դրանց մասին ուրիշներին պատմելուց, եթե դրանց մեջ տեսնեի սոսկ միայնակ մեկի, մի խեղճ խելագարի հիվանդագին ֆանտազիաները: Բայց դրանք ինձ համար շատ ավելին են՝ ժամանակաշրջանի փաստարուղթ, քանզի

Հայլերի հիվանդությունը (դա ինձ համար այսօր պարզ է) ոչ թե մեկ անհատի քնահաճույթն է, այլ հենց ժամանակաշրջանի հիվանդությունը, նյարդախան այն սերնդի, որին պատկանում է Հայլերը, և գուցե նյարդախտով տառապում են ոչ միայն թույլերն ու ոչ լիարժեք անհատները, այլև մանավանդ ուժեղները, ամենախելացիները, ամենատաղանդավորները:

Այս գրառումները, միևնույն է, թե որքանով են հիմնված իրական դեպքերի վրա, փորձ են ոչ թե շրջանցիկ ուղիներով, ոչ թե գեղագարդելով խուսափել դարի մեծ հիվանդությունից, այլ դա ուղղակի դարձնել պատկերման նյութ: Այդ գրառումները, բառի ուղղակի իմաստով, իրենցից ներկայացնում են անցում դժոխքով, մեկ՝ երկյուղալի, մեկ՝ հանդուգն անցում մթագնած հոգու խառնաշփոթի միջով, որ որոշել է հաստատապես կտրել-անցնել դժոխքը, չափվել քառսի ուժերի հետ, մինչև վերջ տառապել-սպառել չարիքը: Հայլերի մի խոսքը բանալի եղավ այս ամենն հասկանալու համար: Մի անգամ, այն բանից հետո, երբ մենք խոսում էինք, այսպես կոչված, միջնադարյան դաժանությունների մասին, նա ինձ ասաց.

– Իրականում դրանք բնավ էլ դաժանություն չեն ներկայացնում: Միջնադարի մարդուն մեր այսօրվա կենսակերպը կարող էր թվալ ավելի քան դաժան, սարսափելի ու վայրենի: Յուրաքանչյուր ժամանակաշրջան, յուրաքանչյուր մշակույթ, յուրաքանչյուր սովորություն ու սովորույթ ունի իր ոճը, իրեն համապատասխան քնքշությունն ու դաժանությունը, գեղեցկությունն ու կոպտությունը, ինչ-ինչ տառապանքներ նրանց համար թվում են բնական, չարության ինչ-որ տեսակ թվում է տանելի: Մարդկային կյանքն իսկական տառապանք, դժոխք է դառնում այնտեղ, որտեղ հանդիպում են երկու ժամանակաշրջաններ, երկու մշակույթ, երկու կրոն: Եթե անտիկ դարաշրջանի մարդը ստիպված լիներ ապրել միջնադարում, ապա նա ողորմելիորեն շնչահեղձ կլիներ, նմանապես որևէ վայրենի շնչահեղձ կլիներ մեր քաղաքակրթության պայմաններում: Բայց կան ժամանակներ, երբ ամբողջական սերունդներ հայանվում են երկու դարաշրջանների, երկու կենսակերպերի միջակայքում այնպես, որ ոչնչանում է ցանկացած բնականություն, ցանկացած ավանդույթ, ցանկացած պաշտպանվածություն ու անմեղություն: Բնականաբար, դրա ազդեցությունը ոչ բոլորն են զգում: Այնպիսի մարդը, ինչպիսին էր Նիցշեն,

այսօրվա ցավը զգաց և տառապեց շատ և մի ամբողջ սերունդ ավելի վաղ, ինչ նա ապրեց մենակության և չհասկացված լինելու պայմաններում, այսօր հազարավորների ճակատագիրն է:

Գրառումները կարդալիս՝ այս խոսքերի վրա հաճախ են մտածում: Հայլերը պատկանում է նրանց թվին, ովքեր հայտնվել են երկու դարաշրջանների միջակայքում, ովքեր ոչնչով պաշտպանված չեն, չունեն անմեղ մնալու ապահովություն, որոնց ճակատագիրն է մարդկային կյանքի ողջ տարակուսելիությունը, իբրև սեփական տառապանք և դժոխք զգալու ծանր ոգևորությունը:

Դրա մեջ է, իմ կարծիքով, այն իմաստը, որ նրա գրառումներն ունեն մեզ համար, և հենց դրա համար վճռեցի դրանք հրատարակել: Իսկ, ընդհանուր առմամբ, ես ցանկություն չունեմ դրանք ոչ պաշտպանության տակ առնել, ոչ էլ դատողություններ անել դրանց մասին, քող յուրաքանչյուր ընթերցող ինքը դա անի՝ համաձայն իր խղճի:

ՀԱՐԻԻ ՀԱԼԼԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ

Միայն խելագարների համար

Օրն անցավ, ինչպես բոլոր օրերն են անցնում, ապրելու իմ վեհերոտ, պարզունակ եղանակով ես մաշել-մեռցրել էի, ես ոչնչացրել էի այն. աշխատել էի մի բանի ժամ, քրքրել էի հին գրքեր, երկու ժամ շարունակ զգացել էի ցավեր, որ սովորաբար զգում են ծեր մարդիկ, ընդունել էի դեղավոշի և ուրախացել, որ կարողացել եմ խորամանկությամբ խարել ցավին, պատկել էի լոգարանում և ըմբռշխել հաճելի ջերմություն, երեք անգամ ինձ փոստ էին բերել և աչքով էի անցկացրել բոլոր նամակներն ու փաթեթները, որ բանի պետք չէին, կատարել էի իմ շնչառական վարժությունները, իսկ այսօրվա մտավոր վարժություններս, թուլությունից, թողել էի վաղվան, զրոսնել էի մեկ ժամ և երկնքում տեսել փետրավոր ամպերի գեղեցիկ, քնքշամուրր և անմման զարդանախշեր: Դա անչափ դուրեկան էր՝ հին գրքեր ընթերցելու, տաք լոգանք ընդունելու նման, բայց, ընդհանուր առմամբ, օրը հիասքանչ չէր, երջանկությամբ և ուրախությամբ փայլողներից չէր, այլ այն օրերից, որոնք ինձ համար արդեն երկար ժամանակ դարձել են սովորական ու բնականո՞՞ծեր, անբավական մարդու չափավորապես դուրեկան, միանգամայն տանելի, հարմարավետ, անփութիս օրեր, առանձնակի ցավից, առանձնակի հոգսերից, իսկական տառապանքից, հուսահատությունից զուրկ օրեր, օրեր, կրք Ադալբերտ Օթիֆտերին⁷ մմանվելու հարցը, թե ժամանակը չէ՞ արդյոք սափրվելիս մահացու վիրավորվել և վերջ տալ այս ամենին, ընկալվում է առանց հուզմունքի կամ վախի, այլ կշռադատվում է հանգստությամբ:

Ով ճաշակել է այլ օրեր, չար, հողատապի նուպաներով լեցուն կամ ծանր, ակնախնձորների հետևում բնավորված, սատանայի պես աչքի և ականջի համար յուրաքանչյուր գործու-

նեություն ուրախությունից տանջանքի փոխող զլխացավի կամ հոգևոր անայության այն օրերը, ներքին դատարկության և հուսահատության այն գեշ օրերը, երբ անայացած և բաժնետիրական ընկերությունների կողմից հարստահարված հողեղեն երկիրը մարդկանց և, այսպես կոչված, մշակույթն իրենց պատիր, էժանագին, շուկայական փայլով ժամանակ առ ժամանակ սրախառնուք են առաջացնում, և թանձրանալով՝ դրանց ամենաանտանելի արտահայտությունն է դառնում մեր սեփական հիվանդ ես-ը, ով ճաշակել է այսպիսի դժոխային օրեր, շատ գոհ կլինի բնականոն, այսօրվա նման օրերից, բավականությամբ կարող է մտել տաք վառարանի մոտ, առավոտյան լրագրերը կարդալիս՝ բավականությամբ հաստատել, որ այսօր ևս պատերազմ չի բռնկվել, ոչ մի նոր դիկտատուրա չի հաստատվել, քաղաքականության և տնտեսության մեջ չի բացահայտվել արտաքո կարգի ոչ մի կեղտոտ գործարք, գոհունակությամբ կարող է հարմարեցնել իր ժանգոտված քնարի լարերը զուսպ, չափավորապես ուրախ, համարյա զվարթ փառաբանական սաղմոսին, որով նա ճանձրությամբ է պարուրում իր խաղաղ, հեզաբարո, բրոնից փոքր-ինչ խլացած, բավականության տարտամ աստծուն, և այդ բավականության ճանձրույթի հեղձուկ օդի, երախտագիտության արժանի ցավի բացակայության մեջ երկուսն էլ՝ խուլ, գլուխը հավանությամբ շարժող տարտամ աստվածը և փոքր-ինչ վախեցած, ցածրաձայն սաղմոս երգող տարտամ մարդը, ինչպես երկվորյակներ, նման են իրար:

Գեղեցիկ բան է բավականությունը, ցավի բացակայությունը, այս տանելիորեն զլխիկոր օրերը, երբ ոչ ցավը, ոչ էլ ուրախությունը չեն հանդգնում աղաղակել, երբ նրանք խոսում են միայն կիսաձայն ու քայլում միայն ռանաթաթերի վրա: Միայն թե վատն այն է, որ ես հենց այս բավականությունը բոլորովին չեմ կարողանում տանել, այն ինձ համար կարճ ժամանակ անց դառնում է անտանելիորեն տհաճ ու զզվելի, և ես հուսահատված, ստիպված եմ լինում փախչել եղանակային այլ տարածքներ, եթե հնարավոր է՝ ուրախության, ծայրահեղ դեպքում՝ նաև ցավի ճանապարհներով: Երբ մի կարճ ժամանակ չեմ ապրում ոչ ուրախություն, ոչ էլ վիշտ և շնչում եմ, այսպես կոչված, լավ օրերի գաղջ, անհամ տանելիությունը, իմ մանկական հոգին այնպես է պարուրվում անափ վշտով, որ բավա-

սպասելի՝ ախրությամբ գլխի ընկնելով իր ավերորոշումը: Մի քանի քայլ ետ գնացի, մտա ուղիղ ցելսի մեջ, տառերն այլևա չէին երևում, խաղը դադարել էր, երկար մնացի ցելսի մեջ կանգնած ու սպասեցի, քայց իզուր:

Եվ հանկարծ, երբ հույսս կտրել էի և արդեն վերադարձել էի դեպի մայրը, իմ դիմաց՝ թաց, հայելանման ասֆալտի վրա, լուսավառվեցին գունավոր մի քանի տառեր:

Ես կարդացի.

Միայն – խելագարների – համար:

Ոտքերս քրջվել էին, ու մըսում էի, այդուհանդերձ դեռ երկար մնացի կանգնած ու սպասեցի: Բայց էլ ոչինչ չեքլաց: Եվ երբ դեռ կանգնած մտածում էի, թե որքան գեղեցիկ էր գունագարդ տառերի խաղը խոնավ պատի և սևափայլ ասֆալտի վրա, հանկարծ հիշեցի իմ նախկին մտքերից մի պատառիկ՝ համեմատությունը ոսկե, շողշողուն ցուրի հետ, որ անսպասելիորեն կորչում, անհետանում է հեռվում:

Մըսում էի և շարունակեցի քայլել՝ երազելով ոսկե ցուրի մասին, կարոտելով դարպասները մոզական թատրոնի, որ միայն խելագարների համար է: Արդեն հասել էի շուկայի մտերքը, որտեղ երեկոյան զվարճալիքների պակաս չէր զգացվում, յուրաքանչյուր քայլափոխին պլակատներ էին կախված, և ցուցանակները բարբառում էին՝ կանանց երգչախումբ-վարյետատե-կինո-պարեր, քայց այդ ամենն ինձ համար ոչ մի արժեք չունեցր, դա «յուրաքանչյուրի» համար էր, կանոնավոր մարդկանց համար, որոնց ես իրականում տեսնում էի խմբերով՝ դարպասներով ելումուտ անելիս: Այդուհանդերձ իմ ախրությունը փոքր-ինչ անցավ, չէ՞ որ ես այն աշխարհից ողջուն էի ստացել, մի քանի գունագեղ տառեր, պարկով, խաղացել էին իմ հոգում և դիպել թաքուն լարերի, ոսկեղեն ցուրի ադուս լույսը կրկին դարձել էր տեսանելի:

Ես որոնեցի, գտա հնաճ այն գինեատունը, որտեղ այս քաղաք իմ առաջին այցելությունից հետո, քսանհինգ երկարուձիգ տարիների ընթացքում, ոչինչ չէր փոխվել, և տնտեսուհին՝ այն օրերից դեռևս մնացած, և այսօրվա հյուրերից շատերը նույնպես, այն օրերի նման, նստած էին նույն տեղում, միևնույն գավաթների առաջ: Ես մտա այդ համեստ գինետունը, դա ա-

պաստարան էր: Ու թեև սպաստարան էր՝ ճիշտ և ճիշտ նման սանդուղքների վրա՝ արատկարիայի մոտ եղածին, քայց այստեղ ևս ես չգտա հայրենիք ու հասարակություն, այլ միայն, իբրև հանդիսական, խաղաղ մի անկյուն բեմի առաջ, որի վրա խաղում էին օտար պիեսներ, քայց այդ լռիկ անկյունն արդեն ինչ-որ բան նշանակում էր՝ ոչ մարդաշատ էր, ոչ էլ՝ արմկոտ, չկար երաժշտություն, միայն լուռումունջ մի քանի հոգի՝ չժածկված սեղանների մոտ (ոչ մարմար, ոչ էմալապատ իրերի փայլ, ոչ թավիշ և ոչ էլ պղինձ) և յուրաքանչյուրի առաջ՝ երեկոյան ըմպելիքը՝ ընտիր, պատվարժան գինի: Հավանաբար, այս մի քանի մշտական այցելուները, որոնց բոլորին ճանաչում էի տեսքից, իսկական քաղթենիներ էին և տանը, քաղթենու իրենց սենյակներում, բավականության բուր չաստվածների առաջ, կանգնած էին տնային ձանձրալի սրբարաններ, կամ գուցե միայնակ ու ճանապարհից շեղված ջահելներ էին, ինձ նման լռակյաց ու մտախոհ հարբեցողներ, որ կորցրել էին իդեալները, տափաստանի գայլեր և ողորմելի չարացածներ էին, ես դա չգիտեի: Նրանցից յուրաքանչյուրին այստեղ էր ձգում հայրենաբաղձությունը, հուսախաբությունը, փոխհատուցման կարիքը, ամուսնացածն այստեղ փնտրում էր ամուրի ժամանակների ուրախությունները, ծեր պաշտոնյան՝ ուսանողական տարիների կանչերը, նրանք բոլորն էլ բավականաչափ լուռ էին և նրանք բոլորն էլ խմողներ էին և ինձ պես նախընտրում էին նստել կես լիտրանոց էլզասյան գինու առաջ, քան կանացի երգչախմբի: Այստեղ ես խարխախ ձգեցի, այստեղ կարելի էր դիմանալ մի ժամ, գուցե և երկու: Հագիվ էի էլզասյանից մի կուր արել, երբ զգացի, որ այսօր ոչինչ չեմ կերել՝ առավոտյան նախաճաշից բացի:

Չարմանալի է, ինչ ասես, որ չի կարող կուր տալ մարդը: Մոտ տասը բուրե ես ինչ-որ թերթ էի կարդում՝ աչքերիս միջով դեպի իմ ներսը ներարկելով մտքերն անպատասխանատու մեկի, որ հաճույքով իր բերանում ծամում էր ուրիշի բառերը և դուրս տալիս՝ չմարսելով դրանք: Ես այդ բառերն էի, մի ամբողջ սյունակ, քաշել իմ առաջ: Եվ հետո խժոեցի լարդի մի լավ կտոր, որ կտրել-հանել էին սպանված հորթից: Չարմանալի է: Ամենից լավը էլզասյան գինին էր: Ես չեմ սիրում, գոնե սովորական օրերում, կատաղի, կրակոտ գինիներ, որ տապալում են քեզ իրենց ուժեղ թովչությամբ և առանձնահատուկ համ ու-

նեն: Ամենից շատ սիրում են բոլորովին մարտը, թեթև, տեղական համեստ զինիները՝ առանց աչքի ընկնող անունների, դրանցից կարելի է շատ խմել և դրանք այնպես համոզացնում ու մտերմացնում են հողը, երկիրը, երկինքն ու անտառները: Մյս գավաթ էզայան զինի և մի կտոր ընտիր հաց՝ ահա աշխարհիս ամենալավ կերակուրը: Բայց ես իմ ներսում արդեն ունեի լյարդի մեկ բաժին՝ անսովոր վայելք ինձ համար, որ հազվադեպ են միս ուտում, և առջևսմս դրված էր երկրորդ գավաթը: Նաև այն էր զարմանալի, որ ինչ-որ տեղ՝ կանաչ հովիտներում, առողջ, առաքինի մարդիկ աճեցնում են խաղողի որթը և զինի են ստանում, որպեսզի աշխարհի տարբեր կողմերում, նրանցից հեռու ընկած վայրերում հուսալքված, լռության մեջ խմող ինչ-որ մարդիկ և մոլորված տափաստանի գայլեր իրենց գավաթներից մի փոքր արխություն և ուրախություն կարողանան քամել:

Իրոք, այս ամենը կարող էր և զարմանալի լինել: Դա լավ էր, դա օգնեց, որ տրամադրությունը բարձրանա: Թերթային հողվածի բառային շիլան հարուցեց իմ ուշացած, բայց թեթևացնող ծիծաղը, ապա հանկարծ նորից հիշեցի փայտյա փողերով երաժշտությունը, այն բարձրացավ իմ մեջ օճառի փոքրիկ պղպջակի նման, փայլփլուն, գունազեղ ցոլանքներով, ինչպես աշխարհի փոքրիկ պատկեր և կրկին անշշուկ ցնդեց: Եթե հնարավոր լիներ, որ այդ երկնային փոքրիկ երաժշտությունը բարձր արմատ զցեր իմ հոգում և մի օր իր հրաշագեղ ծաղիկը վեր պարզեր բոլոր երանգներով հանդերձ, ես կմեռնեի վերջնականապես: Թեև ես մոլորյալ կենդանի էի, որը չի կարողանում հասկանալ իրեն շրջապատող աշխարհը, սակայն իմ հիմար կյանքը, այդուհանդերձ, ինչ-որ իմաստ ունեի, իմ ներսում ինչ-որ մեկը պատասխան էր տալիս, ընդունում էր հեռավոր, բարձր աշխարհներից եկող կանչեր, իմ ուղեղում իրար վրա էին դիզվում հազարավոր պատկերներ:

Ջիտտոյի հրեշտակների երանը Պաղոսայի փոքրիկ եկեղեցու կապույտ գմբեթի ներքո և նրանց կողքին քայլում էին Համլետը և պսկազարդ Օֆելյան՝ ամենագեղեցիկ օրինակներն աշխարհում բոլոր վշտերի և բոլոր թյուրիմացությունների, վառվող զնդի վրա կանգնած էր օդազնաց Ջանոցցոն¹¹ և փող էր փչում, Աթիլա Շմելցլեի¹² ձեռքին իր նոր զլխարկն էր, Բորբորուդուրը¹³ երկինք էր բարձրացնում իր քանդակների լեռ-

նակույտը: Այս գեղեցիկ պատկերները բոլորն էլ կարող էին ապրել հազարավոր այլ սրտերում, բայց գոյություն ունեին տասնյակ հազարավոր, անձանոթ այլ պատկերներ ու կանչեր, որոնց հայրենիքը, որոնց տեսնող աչքը և լսող զգայուն ականջը միմիայն իմ հոգին էր: Հոսպիտալի հնօրյա պատը, իր վաղնջական, հողմահարված, գորշականաչ երանգներով ու պիսակներով, որի ճեղքերում ու թափվածքների մեջ կարելի է գուշակել-տեսնել հազարավոր որմնանկարներ՝ ո՞վ նրան պատասխան տվեց, ո՞վ նրան առավ իր հոգու մեջ, ո՞վ սիրեց, ո՞վ ընկալեց նրա փխրուն, մեռնող գույների կախարդանքը: Վանականների հին գրքերը՝ շողողացող մանրանկարներով, գրքերը՝ իրենց ժողովրդի կողմից մոռացված գերմանացի գրողների, որ ապրել են երկու հարյուր, հարյուր տարի առաջ, բոլոր այդ քրքրված, խոնավություն փչող հատորները և հնօրյա երաժիշաների տպագիր ու ձեռագիր էջերը, նոտաների ամրապինդ, դեղնած թերթերը՝ հնչյունների քարացած տեսիլքներով՝ ո՞վ էր լսում նրանց հոգեկից, նրանց խորամանկ ու անձկությամբ սպասող ձայները, ո՞վ էր կրում նրանց խոհերով ու կախարդանքով լեցուն սիրտը՝ տանելով այն ուրիշ, նրանց համար անձանոթ ժամանակների միջով: Ո՞վ հիշեց այն փոքրիկ, դիմացկուն, Գուբիո¹⁴ բարձր լեռան լանջերի կիպարիսի մասին, որ վայր գորվող քարերից թեքվել էր ու ջարդվել, բայց չէր լքել կյանքը և նոր, թեկուզև ոչ փաթրամ, ճյուղ էր տվել: Ո՞վ էր, որ ըստ արժանվույն գնահատեց երկրորդ հարկի աշխատասեր տանաիրուսի ու մաքրությունից փայլող նրա արաուկարիան: Ո՞վ էր զիշերները Հենեսի վրա կարդում մատախտղների ամպե երկարածիզ տառերը: Դա տափաստանի գայլն էր: Իսկ ո՞վ էր, որ իր կյանքի ավերակների վրա որոնում էր տարտամ ուրվագծվող խորհուրդը, տառապում իբրև անխելի տպավորություն բողոքի, ապրում իբրև քվացյալ խելագար, թաքուն հավատում էր Աստծո հայտնությանն ու մերձությանն անգամ ամենավերջին մտազրկության ու խառնաշփոթի մեջ:

Վեր կացա՝ ձեռքիս մեջ ամուր սեղմած գավաթը, որ տանտիրուհին ուզում էր նորից լցնել: Այլևս զինու կարիք չունեի: Ոսկեղեն ցոլք վերստին շողաց՝ ինձ հիշեցնելով հավերժականի, Մոցարտի, աստղերի մասին: Ես կարող էի էլի մի քանի ժամ ազատ շնչել, կարող էի ապրել, իրավունք ունեի գոյություն ունենալ, չտառապել, չսարսափել, չամաչել:

Երբ դուրս եկա փողոց, պաղ քամուց քշված մանրիկ անձրևը շառաչով խփում էր լապտերներից ու շողում ապակու փայլով: Հիմա ո՞ր գնայ: Եթե այս պահին կատարվեր հրաշք, և հնարավոր լիներ իմ ցանկացած երազանքի իրականացումը, ապա ես կխնդրեի մի փոքրիկ, գեղեցիկ դահլիճ՝ Լյուդովիկոս Տասնվեցերորդի ոճով կառուցված, որտեղ ինձ համար մի քանի երաժիշտներ կատարեին Հենդելից ու Մոցարտից մեկ-երկու ստեղծագործություն: Դա համապատասխան կլիներ իմ գոյության իմաստին այս պահին, և ես կըմբռնեի այդ գով, ազնվական երաժշտությունը, ինչպես աստվածները՝ նեկտարը: Օ՛, եթե հիմա մի բարեկամ ունենայի, մի բարեկամ որևէ ձեռնահարկում, և նա, մտքերի մեջ ընկած, նստեր մոմի լույսի տակ, իսկ կողքին լիներ նրա ջութակը: Անշշուկ, գիշերային լռության մեջ ես կգտնեի նրան, անաղմուկ կրարձրանայի արմուկավոր սանդուղքները և հանկարծակիի կրերեի նրան, և մենք, զրույցի ու երաժշտության ուղեկցությամբ, կառնեինք վերերկրային մի քանի ժամ: Հաճախ, անցյալ օրերում, ես ուրախանում էի այսպիսի երջանկությամբ, բայց ժամանակների հետ այն ևս կորսվեց ինձ համար ու հեռացավ, այն օրերի ու ներկայի միջև ընկած են թառամած տարիներ:

Վարանած ճանապարհվեցի տուն՝ բարձրացնելով վերարկուիս օձիքը և ձեռնավառս ամուր իջեցնելով թաց սալահատակին: Որքան էլ դանդաղորեն անցնեի ճանապարհը, մինևույն է, շուտով նորից նստելու էի իմ ձեռնահարկում, իմ փոքրիկ, թվացյալ հայրենիքում, որը ես չէի սիրում, բայց և որից չէի կարող խուսափել, քանզի անցել էին այն ժամանակները, երբ ինձ համար ոչ մի նշանակություն չէր ներկայացնում ամբողջ գիշերներ թափառել դրսում: Աստված վկա, վճռեցի ես, որ թույլ չեմ տա երեկոյի այս լավ վայելքը որևէ բանով խանգարվի՝ ոչ անձրևով, ոչ հողատապով, ոչ արտակարհայով, ու թեև չունեի ոչ կամերային երգչախումբ, ոչ էլ ջութակ ունեցող միայնակ բարեկամ գտնելու հույս, այդուամենայնիվ, կախարդական երաժշտությունը հնչում էր իմ ներսում, և ես կարող էի, շնչառությանս ռիթմով մրմնջալով, ինձ համար հանդարտ վերարտադրել այն: Մտախոհ՝ քայլեցի առաջ: Ոչ, աշխարհը չի կործանվել ոչ կամերային երգչախմբի, ոչ էլ բարեկամի բացակայության պատճառով, և ծիծաղելի բան էր կործանել ինքն իրեն ջերմության հանդեպ անգոր կարտաից:

Մենակությունը անկախություն է, ես ինքս եմ այն ցանկացել ու նվաճել ինձ համար երկար տարիների ընթացքում: Մենակությունը սառն էր, այո, բայց և անաղմուկ, զարմանալի անաղմուկ ու մեծ, ինչպես սառը, անաղմուկ տարածությունը, որի մեջ շարժվում են աստղերը:

Պարահրապարակը, որի կողքով անցնում էի, իմ դեմքին խփեց ջազային ուժեղ երաժշտություն՝ տաք և հում, ինչպես հում մսի կտորը: Մի պահ ես կանգ առա, որքան էլ խուսափում էի այդ կարգի երաժշտությունից, այն ինձ համար մշտապես թաքուն ինչ-որ կախարդանք էր պարունակում: Չազն ինձ համար տեսն էր, բայց ես այն տասն անգամ ավելի էի սիրում, քան այսօրվա ակադեմիական երաժշտությունը, իր ուրախ, կոշտ վայրենությամբ նա խոքապես դիպչում էր իմ բնագղճերին և շնչում իր պարզունակ, ազնիվ զգայնությամբ:

Մի պահ ես կանգ առա՝ հոտոտելով գիլ հնչող արյունոտ երաժշտությունը, չարությամբ ու ազահորեն ներծծելով այդ հրապարակի մթնոլորտը: Այս երաժշտության մի կեսը՝ քնարականը, քաղցրահունչ էր, հաճելի, սենտիմենտալությամբ ողողված, մյուս կեսը մոլեգին էր, տրամադրող և ուժով լեցուն, բայց երկու կեսերն էլ, հաշտությամբ ու պարզությամբ միախառնվելով իրար, ստեղծում էին մի ամբողջություն: Դա անկման երաժշտություն էր, վերջին կայսերի ժամանակների Հոռմում, երևի, գոյություն է ունեցել նման երաժշտություն: Բնականաբար, Բախի, Մոցարտի և լուրջ երաժշտության համեմատությամբ, այն խոզություն էր, սակայն խոզություն էր մեր ողջ արվեստը, մեր ողջ մտածողությունը, մեր ողջ թվացյալ մշակույթը: Եթե դրանք համեմատության մեջ դնեինք իսկական մշակույթի հետ: Իսկ այս երաժշտությունն ուներ ուղղամտության՝ պարզեցի ու դուրեկան նեգրականության և զվարթ, մանկական տրամադրության մեծ առավելությունը: Նա ինչ-որ բան էր պարունակում նեգրից և ինչ-որ բան ամերիկացուց, որ մեզ՝ եվրոպացիներին վրա, իր ամբողջ ազդեցիկությամբ հանդերձ, թողնում է երեխայական թաքնության և մանկականության տպավորություն: Եվրոպան նույնպես՝ այդպիսին է լինելու: Նա արդեն՝ այդ ճանապարհի վրա է: Արդյո՞ք մենք՝ հնաշխարհիկ Եվրոպայի, անցյալի ընտիր երաժշտության, անցյալի ընտիր բանաստեղծության գիտակներս ու երկրպագուներս, ուղղակի հիմար փոքրամասնություն-

նը չէինք իմաստակ ջղայինների, որոնք վաղը մոռացության են արվելու և արժանանալու են ծաղրի: Այն, ինչ մենք անվանում ենք մշակույթ, հոգի, ոգի, գեղեցիկ, սրբազան, սոսկ ուրվական չէ՞ արդյոք, վաղուց արդեն մեռած մի բան, որին միայն մենք ենք՝ մի բուռ հիմարներս, համարում ճշմարիտ ու կենդանի: Հնարավոր է, որ այն, ինչի համար մենք՝ հիմարներս, տանջում ենք մեզ, մշտապես եղել է ընդամենը անիրական ինչ-որ տեսիլք:

Քաղաքի հին թաղամասն իր մեջ առավ ինձ, հանգած և անգո՞ իր գորշության մեջ կանգնած էր եկեղեցին: Հանկարծ ես հիշեցի երեկոյան դեպքը, հեքիաթային կամարակապ դարպասները, հեքիաթային ցուցանակը՝ հեզնորեն պարող լուսատառերով: Ինչ էր գրված այնտեղ. «Մուտքը ոչ բոլորի համար»: Եվ ապա՝ «Միայն խելագարների համար»: Չննող հայացքս անցավ հնօրյա պատի վրայով, թաքուն ցանկանում էի, որ գուցե կախարդանքը նորից կսկսվի, և գրությունը նորից ինձ՝ խելագարիս, հրավիրի դարպասից ներս: Հավանաբար, ներսում կար այն, ինչ փափագում էի ես, հավանաբար, այնտեղ կատարվում էր իմ երաժշտությունը:

Մութ, քարե պատը թանձր մառախուղի միջով նայում էր ինձ անխռով, խոր թաղված իր երազի մեջ: Եվ ոչ մի դարպաս, ոչ մի կամար՝ միմիայն մութ, լուռ պատն էր՝ առանց բացվածքների: Ծիծաղելով քայլեցի առաջ՝ մտերմաբար աչքով անելով քարե պարսպին: «Հանգիստ քնիր, պատ, ես քեզ չեմ արթնանցնի: Կգա ժամանակը, և նրանք քեզ կբանդեն կամ կծածկեն ընչաքաղց ֆիրմաների գովազդներով, բայց դու դեռ կաս, դեռ գեղեցիկ ես, խաղաղ և ինձ համար սիրելի»:

Փողոցի սև նրբանցքից, ուղղակի հենց իմ դեմ-դիմաց տնկվելով, ինձ վախեցրեց մեկը՝ միայնակ և ուշացած մի անցորդ՝ հոգնած քայլերով, գլխին գլխարկ, հագած կապույտ վերնաշապիկ, ուսին դրած՝ նա տանում էր պրակատ, իսկ գոտու վրա՝ փոքր կպած ուներ բաց արկղիկ, ինչպիսիք ունենում են առևտրականները տոնավաճառների ժամանակ: Նա հոգնած քայլում էր իմ առջևից՝ ետ չնայելով իմ կողմը, այլապես ես նրան կողջունեի ու ծխախոտ կտայի: Հաջորդ լսպտերի լույսի տակ փորձեցի կարդալ նրա դրոշակի, ձողի վրայի նրա կարմիր պրակատը, բայց այն օրորվում էր այս ու այն կողմ, և ես չկարողացա որևէ բան գանազանել: Այդժամ ես

ձայն տվեցի նրան և խնդրեցի ցույց տալ պրակատը: Նա կանգ առավ և ձողը պահեց ավելի ուղիղ, և ես կարողացա կարդալ պարող, տարուրերվող տառերը.

Երեկոյան անարխիստական ժամանց

Մոզական թատրոն

Մուտքը ոչ բոլորի համար...

– Ես հենց Ձեզ էլ փնտրում էի,– ուրախ կանչեցի ես:– Այդ ի՞նչ ժամանց է: Որտե՞ղ է լինելու: Ե՞րբ:

– Նա նորից սկսեց քայլել:

– Բոլորի համար չէ,– ասաց նա անտարբեր, քնկուտ ձայնով ու շարունակեց քայլել: Նա հոգնած էր արդեն, տուն էր ուզում գնալ:

– Կանգնիր,– կանչեցի ես և վազեցի հետևից:– Ի՞նչ կա Ձեր արկղիկի մեջ: Ուզում եմ Ձեզնից որևէ բան գնել:

– Առանց կանգ առնելու՝ մարդը մեքենաբար ձեռքը մացրեց իր արկղիկը և այնտեղից հանեց փոքրիկ մի գրքույկ ու պարզեց ինձ: Արագ վերցրի այն ու թաքցրեցի: Մինչ արձակում էի վերարկուս և դրամ փնտրում, նա քեզվեց դեպի կողքի դարպասը, իր ետևից փակեց այն ու անհետացավ: Բակում հնչում էին նրա ծանր քայլերը, նախ՝ քարե սալահատակին, ապա՝ սանդղաղբի վրա, որից հետո այլևս ոչինչ չլսեցի: Եվ հանկարծ ես էլ ինձ շատ հոգնած զգացի և հասկացա, որ արդեն շատ ուշ է և լավ կլինի վերադառնալ տուն: Քայլերս արագացրեցի և շուտով անցնելով քնած արվարձանի փողոցներով՝ հասա իմ թաղամասը, որտեղ քաղաքային հին հողապատմելի տեղում զգված զբոսայգու մեջ՝ սիզամարգերի և բաղեղների հետևում, վարձով արվող փոքրիկ, մաքուր տներում ապրում են ծառայողներ ու մանր վարձակալներ: Անցնելով բաղեղների, սիզամարգերի, փոքրիկ եղևնու մոտով՝ ես հասա տան դռանը, գտա բանալու անցքը, գտա լույսը վառելու սեղմակը, սահելով անցա ապակյա դռների, ողորկափայլ պահարանների ու ծաղկամանների կողքով և բացեցի իմ սենյակը, իմ փոքրիկ, կարծեցյալ հայրենիքը, որտեղ ինձ էին սպասում բազկաթոռը և վառարանը, թանաքամանը և նկարչատուփը, Նովալիսը և Դոստոևսկին, սպասում էին այնպես, ինչպես սպասում են մյուս, կանոնավոր կյանքով ապրող մարդկանց, մայրը կամ կինը, ե-

րեխաները, ծառայողները, շները, կառուները, երբ սրանք տուն են գալիս:

Երբ հանեցի թաց վերարկուս, ուշադրությունս կրկին գրավեց փոքրիկ գրքույկը: Հանեցի գրպանիցս, դա բարակ, անորակ թղթի վրա վատ տպագրված մի տոնավաճառային հրատարակություն էր, նման «Հունվարին ծնված մարդիկ» կամ «Ինչպես ութ օրում երիտասարդանալ քսան տարով» գրքույկների:

Բայց երբ տեղավորվեցի¹⁵ բազկաթռոխի մեջ և դրեցի ակնոցս, զարմանքով, հանկարծակի ծնված զգացումով, թե սա հենց ճակատագիրն ինքն է, գրքույկի կազմի վրա կարդացի նրա վերնագիրը. «Բննախտություն Տափաստանի գայլի մասին: Ոչ բոլորի համար»:

Եվ ահա թե ինչ էր բովանդակում գիրքը, որ ես, մշտապես աճող զարմանքով, կարդացի մի շնչով.

ՔՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՏԱՓԱՍՏԱՆԻ ԳԱՅԼԻ ՄԱՍԻՆ

Միայն խելագարների համար

Ժամանակով ապրում էր Հարրի անունով մեկը՝ մականունը՝ Տափաստանի գայլ: Նա քայլում էր երկու ոտքերի վրա, հագուստ էր կրում և մարդ էր, բայց, ըստ էության, նա տափաստանի գայլ էր: Նա շատ բան էր սովորել, ինչ կարող են առհասարակ սովորել դասողությամբ օժտված մարդիկ, և բավականին խելացի էր: Բայց չէր սովորել մի բան՝ զոհ լինել իրենից և իր կյանքից: Դա նրան չէր հաջողվում, նա դժգոհ մարդ էր: Դա գալիս էր, հավանաբար, նրանից, որ նա իր սրտի խորքում մշտապես հասկանում էր (կամ կարծում էր, թե հասկանում է), որ էությամբ ինքը բողբոջվին էլ մարդ չէ, այլ գայլ է՝ տափաստանից: Խելացի մարդիկ կարող են դա վիճարկել, արդյոք իրականում գայլ է, արդյոք նա ինչ-որ ժամանակ՝ երևի իր ծննդից առաջ, մի կախարդանքով գայլից վերածվել է մարդու կամ ծնվել է մարդ, բայց օժտվել ու համակվել է գայլի հոգով, կամ այս համոզվածությունը, թե, իբր, ինքն իրականում գայլ է, սոսկ նրա երևակայության կամ հիվանդության հետևանքն է: Չէ՞ որ, օրինակ, հնարավոր է, որ այդ մարդը մտավորապես իր մանկության տարիներին եղել է վայրենի՝ անսանձ, անկարգ մեկը, որ նրա դաստիարակները փորձել են նրա մեջ սպանել զազանին և դրանով իսկ նրա մեջ առաջ են բերել այն երևակայությունն ու հավատը, որ ինքը, իսկապես, զազան է՝ միայն թե դաստիարակության ու մարդկայնության թեթև քողի տակ ծածկված: Դրա մասին կարելի է երկար-բարակ խոսել, անգամ զրքեր գրել, բայց Տափաստանի գայլին դրանք ոչինչ չէին տա, քանզի նրա համար բողբոջվին մեկ էր, թե իր մեջ գայլը կախարդանքով է հայտնվել, հետևանք է ծեծի, թե՞ իր մտքի երևակայության: Ինչ էլ այդ մասին մտածելի մյուսները, ինչ էլ այդ մասին մտածեր ինքն անձամբ, դա նրա

համար ոչ մի նշանակություն չուներ, դա գայլին դուրս չէր բերի նրա միջից:

Այսպիսով, Տափաստանի գայլը երկու բնություն ուներ՝ մարդու և գայլի, դա նրա ճակատագիրն էր, և հնարավոր է, որ դա առանձնահատուկ և հազվագյուտ ճակատագիր էր: Շատ ու շատ մարդիկ են եղել, որոնք շան կամ աղվեսի, կամ ձկան, կամ օձի գծեր են ունեցել իրենց մեջ, առանց դրա համար առանձնահատուկ նեղություն կրելու: Այդ մարդկանց մեջ միասին սպրել են մարդը և աղվեսը, մարդը և ձուկը, ոչ մեկը մյուսին վնաս չի հասցրել, նույնիսկ մեկն օգնել է մյուսին, այն մարդիկ, ովքեր շատ առաջ են անցել և որոնց նախանձել են, շատ հաճախ իրենց երջանկության համար պարտական են եղել ոչ քն մարդուն, այլ աղվեսին կամ կապիկին: Այս փաստերին ծանոթ է յուրաքանչյուր որ: Հարրիի մոտ, ընդհակառակը, ամեն ինչ այլ էր, նրա մեջ մարդը և գայլը չէին համակերպվում, և ոչ քն օգնում էին իրար, այլ մշտապես մահացու կովի մեջ էին իրար դնել, և մեկն ապրում էր սոսկ մյուսին տառապանք պատճառելու համար, իսկ երբ միևնույն արյան, միևնույն հոգու մեջ առկա են միմյանց ներհակ երկու մահացու թշնամիներ, ապա ապրելը դառնում է աղետ: Դե, յուրաքանչյուր որ ունի իր ճակատագիրը, ոչ մեկինն էլ մյուսից ավելի քեր է:

Մեր Տափաստանի գայլն ապրում էր այնպես, որ քնն իրեն մեկ զգում էր գայլ, մեկ՝ մարդ, ինչպես բոլոր խառնուրդ էությունների դեպքում է, բայց երբ գայլ էր դառնում, մարդը նրա մեջ միշտ դարան էր մտնում՝ իրեն դիտող, բնադատող և իրեն դատավոր, իսկ այն ժամանակ, երբ նա մարդ էր, նույնն էր անում գայլը: Օրինակ՝ երբ Հարրին՝ իրեն մարդ, մի գեղեցիկ միտք էր հղանում, ապրում էր նուրբ, ազնիվ զգացմունքներ կամ կատարում էր, այսպես կոչված, մի բարի գործ, այդ ժամանակ գայլը նրա վրա էր կրճատացնում ատամները, ծաղրում, անհաշտ ոխերիսմությամբ ցույց տալիս, թե որքան ծիծաղաշարժ, որքան օտար է այդ ամբողջ ազնիվ ներկայացումը տափաստանային գազանի՝ գայլի տեսանկյունից, որը սրտանց և ճշգրտորեն գիտի իր գործը, գիտի, ինչն է իրեն հաճելի, այն է՝ մենակ թափառել տափաստանով մեկ, ժամանակ առ ժամանակ արյուն լակել կամ քարշ գալ էգ գայլի հետևից: Եվ գայլի աչքերով ընկալված մարդկային յուրաքանչյուր արարք դառ-

նում էր սարսափելիորեն գվարճալի, հիմար և ունայն: Եվ միանգամայն նույն բանն էր պատահում, երբ Հարրին իրեն զգում էր գայլ և իրեն պահում էր, ինչպես գայլ, երբ ատամ էր ցույց տալիս մյուսներին, երբ ատելություն ու մահացու թշնամանք էր զգում բոլոր մարդկանց, նրանց կեղծ ու այլասերված շարժումների ու բարքերի հանդեպ: Այդ ժամանակ նրա մեջ զգաստանում էր մարդկային կեսը, հետևում էր գայլին, անվանում նրան անասուն ու գազան, փչացնում ու դառնացնում էր նրա ողջ ուրախությունն իր գայլային պարզ, առողջ ու վայրի էության մեջ:

Ահա, այսպիսին էին Տափաստանի գայլի գործերը, և կարելի էր պատկերացնել, որ Հարրին ուղղակի հաճելի ու երջանիկ կյանքով չէր ապրում: Բայց դա չի նշանակում, որ նա դժբախտ էր առանձնահատուկ չափով (թեև նրան անձամբ այդպես էր թվում, չէ՞ որ յուրաքանչյուրին իրեն բաժին ընկած տառապանքները թվում են ամենածանրը): Այդպես չի կարելի խոսել ոչ մեկի մասին: Բայց ով իր մեջ ոչ մի գայլ չունի, ուստի չունի կարիք երջանիկ լինելու: Եվ անգամ ամենադժբախտ կյանքն ունի իր արեալին ժամերը և երջանկության փորրիկ ծաղիկները ժայռերի ու ավազների մեջ: Այդպես էր և Տափաստանի գայլի կյանքում: Ես մեծ մասամբ շատ դժբախտ էր, դա ժխտել չէր կարելի, և դժբախտացնում էր ուրիշներին, հատկապես երբ սիրում էր նրանց, և նրանք էլ՝ իրեն: Քանզի բոլորը, ովքեր սիրում էին նրան, տեսնում էին նրա մի կողմը: Շատերը նրան սիրում էին իրեն նուրբ, խելացի և ինքնատիպ մարդու և սարսափում ու հիասթափվում էին, երբ նրա մեջ հանկարծ հայտնաբերում էին գայլին: Եվ հայտնագործել չէին կարող, քանի որ Հարրին, ինչպես բոլորը, ցանկանում էր, որ իրեն սիրեն ամբողջությամբ, ուստի չէր կարողանում նրանցից, ում սերն իր համար շատ բան էր նշանակում, թարցնել գայլին և ստել: Բայց կային նաև այնպիսիները, որ նրա մեջ սիրում էին հենց գայլին, հենց ազատությունը, վայրենությունը, սարսափը և ուժը, և նրանց նույնպես սոսկալի հուսախաբության էր մատնում ու տանջում, երբ հանկարծ պարզվում էր, որ այդ կատաղի, չար գայլն ընդամենը նույնպես մարդ էր և իր մեջ դեռ բաղձանք ուներ առ բարին և առ բնթշությունը, նաև Մոցարտ լսել, բանաստեղծություններ կարդալ, մարդկային իդեալներ ունենալ էր ցանկանում: Ամենից շատ, սովորաբար,

հենց սրանք էին հիասթափվում ու չարանում, և այդպիսով՝ Տափաստանի գայլն իր սեփական երկատվածությունն ու հակասականությունը փոխանցում էր նաև այն օտար ճակատագրերին, որոնց հետ շփվում էր:

Բայց ով կարծում է, թե ճանաչում է Տափաստանի գայլին և ընդունակ է պատկերացնել նրա ողորմելի, բզկաված կյանքը, սխալվում է, քանզի գիտի բոլորովին էլ ոչ ամեն ինչ: Նա չգիտի (ինչպես որ չկա օրենք, առանց բացառության և ինչպես որ հանգամանքների բերումով մի մեղավորը կարող է¹⁶ ավելի սիրելի լինել Աստծուն, քան իննսուսինը արգարներ), որ Հարրիի մոտ նույնպես պատահում էին բացառություններ ու երջանիկ իրադարձություններ, որ նրա մեջ երբեմն գայլը, երբեմն մարդը շնչում, մտածում ու զգում էր մարտը և անադարտ, որ երկուսն էլ միասին, շատ հազվադեպ ժամերի, հաշտություն էին կնքում՝ իրար հետ և ապրում էին սիրով, այնպես որ՝ միշտ չէ, երբ մեկը քնած, իսկ մյուսը մնում էր արթուն, այլ երկուսն էլ գորացնում էին մեկմեկու, և յուրաքանչյուրը կրկնապատկվում էր մյուսով: Այս մարդու կյանքում նույնպես, ինչպես ամենուրեք աշխարհում, սովորական, առօրյա, ծանոթ և օրինաչափ ամեն ինչ, թվում է, ուներ մեն-մի նպատակ՝ երբեմն-երբեմն կարճ, վայրկենական հանգիստ առնել, հաղթահարել դա և ապա տեղը զիջել անձանոթ, գարմանալի, գբառատ ինչ-որ բանի: Արդյոք թեևսացնում ու մեղմացնում էին երջանկության այս կարճ, այս հազվագյուտ ժամերը Տափաստանի գայլի դժվարին ճակատագիրը, արդյոք երջանկությունն ու տառապանքը վերջնականապես հավասարակշռում էին միմյանց կամ գուցե նույնիսկ այդ հազվադեպ ժամերի կարճ, բայց ուժեղ երջանկությունը սրբում, տանում էր ողջ տառապանքը և ուժ տալիս նրան՝ դա նույնպես հարց է, որի մասին պարասպ մարդիկ կարող են խորհրդածել որքան կամենան: Գայլը նույնպես խորհրդածում էր դրա մասին, և դրանք նրա պարասպ ու անօգուտ օրերն էին:

Այստեղ պետք է անել մի դիտողություն ևս: Հարրիի նման մարդիկ, հավանաբար, բավականին շատ են, օրինակ, նկարիչները պատկանում են այդ տեսակին: Բոլոր նկարիչներն իրենց մեջ բարցնում են երկու հոգի, երկու էություն, նրանց մեջ առկա աստվածայինը և սատանայականը, հայրական և մայրական արյունները, երջանկության ընդունակությունը և տա-

ռապանքի ընդունակությունը հաջորդում ու միաստունվում են իրար նույն բընամանքով ու խառնակ ընթացքով, ինչպես որ գայլը և մարդը Հարրիի մեջ: Եվ այդ մարդիկ, որոնց կյանքը չափազանց անհանգիստ է, իրենց երջանկության հազվադեպ ակնթարթների մեջ երբեմն այնպիսի ուժ ու անասելի գեղեկություն են զգում, երջանկության փոփոխը երբեմն տառապանքի ծովից այնպիսի կուրացուցիչ բարձրության է հասնում, որ այդ կարճատև բռնկման յուրք հասնում է նաև մնացած բոլոր մարդկանց ու կախարդում նրանց: Այդպես՝ իբրև երջանկության քանկարժեք, փախչող փոփոխներ տառապանքի ծովի վրա, ծնվում են այն բոլոր արվեստի գործերը, որոնցում տառապյալ մարդը մեկ ժամով այնքան է բարձրանում իր սեփական ճակատագրից, որ նրա երջանկությունը շողում է ինչպես աստղ, և բոլոր նրանց, ովքեր տեսնում են դա, թվում է հավիտենական ինչ-որ բան, թվում է նման երջանկության մասին իրենց սեփական երազանքին: Այդ բոլոր մարդիկ, ինչպես էլ անվանեն իրենց արարքներն ու գործերը, ըստ էության, կյանք չունեն առհասարակ, այսինքն՝ նրանց կյանքն իրենից չի ներկայացնում լինելիություն, չունի որոշակի կերպարանք, նրանք հերոսներ կամ նկարիչներ, կամ մտածողներ չեն այն իմաստով, ինչ իմաստով մյուսները հանդիսանում են դատավորներ, բժիշկներ, կոշկակարներ կամ ուսուցիչներ, ոչ, նրանց կյանքը հավերժական, տանջալից շարժում է ու ավերախտություն, այն դժբախտ է, ցանկալիորեն բզկաված, զարհուրելի է և անմիա, եթե իմաստ չհաշվենք հենց այն հազվագյուտ իրադարձությունները, արարքները, մտքերը, ստեղծագործությունները, որոնք շողարձակում են այդպիսի կյանքերի խառնաշփոթի վերևում: Նման մարդկանց միջավայրում է առաջ եկել վտանգավոր ու սարսափելի այն միտքը, որ, հավանաբար, ողջ մարդկային կյանքը մի չար մոլորություն է, նախամոր տաքարյուն ու ճախողակ վիժում, բնության վայրի, սոսկալիորեն անհաջող փորձ: Բայց նրանց միջավայրում է ծագել նաև մեկ այլ միտք՝ որ մարդը, գուցե, պարզապես կենդանի չէ՝ օժտված հայտնի բնավորությամբ, այլ աստվածների որդին է և կոչված է անմահության:

Մարդկային յուրաքանչյուր տեսակ ունի իր նշանները, իր տարբերակիչ գծերը, յուրաքանչյուր որ ունի իր առաքինություններն ու արասները, յուրաքանչյուր որ իր մահացու մեղ-

քր: Տափաստանի գայլի նշաններից մեկն այն էր, որ նա զի-
շերվա մարդ էր: Առաջուր նրա համար օրվա վատքար ժա-
մանակն էր, որից նա վախենում էր, և որը նրան ոչ մի լավ բան
չէր բերում: Երբեք իր կյանքում որևէ առափոռով նա իսկապես
չէր տրախացել, երբեք որևէ լավ բան չէր կատարել կեսօրից
առաջ, երբեք չէր ունեցել իրեն և ուրիշներին օգնելու մասին
բարի մտքեր: Միայն կեսօրից հետո էր նա կամաց-կամաց
ջերմանում ու դառնում եռանդուն, և միայն երեկոյան դեմ էր,
իր լավ օրերին, դառնում բեղմնավոր, գործուն, իսկ երբեմն էլ՝
կրակոտ ու զվարթ: Դրա հետ էր կապված մենակության ու
անկախության հանդեպ նրա պահանջը: Երբեք ոչ մեկը չի ու-
նեցել մենակության այնպիսի կրքոտ պահանջ, ինչպես նա:
Էր պատանության տարիներին, երբ նա դեռ աղքատ էր ու
դժվարությամբ էր վաստակում իր հացը, նախընտրում էր լինել
սոված և քայլել քրքրված շորերով, քայց դրանով փրկել իր
փոքրիկ անկախությունը: Նա երբեք չէր ծախվում ոչ դրամին
ու հաճույքներին, ոչ աղջիկներին ու այս աշխարհի եզորներին
և հարյուր անգամ, իր ազատությունը պահպանելու համար,
մերժել ու արհամարհել էր այն, ինչը, բոլորի կարծիքով, կարող
էր լինել նրա բախտն ու երջանկությունը: Ոչ մի բան նրա հա-
մար ավելի ատելի ու զարհուրելի չէր աշխարհում, քան այն, որ
նա պետք է ինչ-որ պաշտոն գրադեցներ, ինչ-որ կերպ անօրի-
ներ օրերն ու տարիները, ենթարկվեր ուրիշների: Աշխատա-
վայրը, գրասենյակը, ծառայողական հաստատությունը նրա
համար մահու չափ ատելի էին, իսկ ամենազարհուրելին, որ
կարող էր երևալ նրան երագում, գորանոցի զերությունն էր:
Այս բոլորից նա կարողանում էր խուսափել, հաճախ՝ մեծ գո-
հողություններով: Այստեղ էր նրա ուժն ու առաքինությունը,
այստեղ նա անդդովելի էր ու անկաշառ, նրա բնավորությունն
այս գործերում ամուր էր ու շիտակ: Միայն քն այդ առաքի-
նության հետ շատ սերտորեն կապված էին նրա տատապանքն
ու ճակատագիրը: Նրա հետ պատահում էր այն, ինչ պատա-
հում է բոլորին, այն, ինչ փնտրում, ինչի ձգտում էր ամենից
համառորեն իր էության ամենախոր մղումներով, փիճակվում
էր նրան, քայց ավելի մեծ չափով, քան դա անհրաժեշտ է բա-
րություն անելու համար: Սկզբնապես դա նրա երագանքն էր
ու երջանկությունը, հետո՝ դառը ճակատագիրը դարձավ: Իշ-
խանասերը կործանվում է իշխանությունից, դրամասերը՝ դրա-

մից, ստրուկը՝ ստրկությունից, զվարճասերը՝ զվարճությունից:
Այդպես էլ Տափաստանի գայլը կործանվեց իր անկախությու-
նից: Նա հասավ իր նպատակին, ավելի ու ավելի անկախ
դարձավ, ոչ որ նրան ոչինչ հրամայել չէր կարող, ոչ մի բանի
նա չպետք է ընտելանար, նա ինքն էր միշտ վճռում իր գոր-
ծերն ու իրավունքները: Քանի որ յուրաքանչյուր ուժեղ մարդ
անպայման հասնում է այն բանին, ինչը որոնելուն կոչում է
նրա իսկական մղումը: Մակայն ձեռք բերած ազատության
մեջ Հարրին հանկարծ զգաց, որ իր ազատությունը մահ է, որ
ինքը մնացել է մենակ, որ աշխարհը ինչ-որ չար կախարդան-
քով իրեն թողել է հանգիստ, որ ինքն այլևս պետք չէ մարդ-
կանց, ինչպես որ ինքն իրեն, որ նա մենակության ու մեկու-
սացման ավելի ու ավելի նոսրացող մթնոլորտում շնչահեղձ է
լինում: Քանզի պարզվեց, որ մենակությունը և անկախու-
թյունն այլևս նրա ցանկությունն ու նպատակը չէին, այլ նրա
բախտը, նրա դատապարտվածությունը, որ կախարդական
բաղձանքն արդեն մտահոգված և այլևս փոփոխման ենթա-
կա չէ, որ նա այլևս ոչինչ չի կարող փոխել, որքան էլ կարոտով
լի ու բարենտորեն պարզի իր թևերը և պատրաստ լինի շփման
ու միասնության. այժմ նրան թողել էին մենակ: Դրանով նա
բոլորովին էլ ատելի չէր ու մարդկանց համար տհաճ: Ընդհա-
կառակը, նա շատ բարեկամներ ուներ: Ծառերն էին նրան սի-
րում: Բայց դա միշտ միայն համակրանք ու բարեկամություն
է, ինչ գտնում էր նա, նրան հրավերքներ էին անում, ընծաներ
տալիս, գրում էին հաճելի նամակներ, սակայն նրան ոչ որ չէր
մոտենում ինչպես հարկն է, ոչ որի հետ կապ չէր ստեղծվում,
նրա կյանքի մասնակիցը լինելուն ոչ համաձայն էին, ոչ էլ
պատրաստ: Այժմ նրան շրջապատում էր միայնության օդը,
այն խաղաղ մթնոլորտը, միջավայրի այն հանդարտ չքացու-
մը, առնչությունների հանդեպ այն անկարողությունը, որի ա-
ռաջ անգոր է որևէ կամք, որևէ կիրք:

Մյուս հատկանշական կողմն այն էր, որ նա պատկանում
էր ինքնասպանների քվին: Պետք է նշել, որ սխալ է ինքնա-
սպան անվանել միայն այն մարդկանց, ովքեր, իրոք, սպանում
են իրենց: Այս վերջինների մեջ անգամ շատերը կան, որոնք
մարդասպան են մեծամասամբ պատահական բերումով, քան-
զի ինքնասպանությունը նրանց էության համար անհրաժեշ-
տություն չէ: Անհատականություն չունեցող մարդկանց շրջա-
պատում, մարդկանց, ովքեր զերծ են ուժեղ հոգեկառուցված-

քից, չունեն ընդզօմած ճակատագիր, դյուժիններով ու հոտա-
յին կյանքով ապրող մարդկանց մեջ թեև կան շատերը, ովքեր
իրենց կյանքն ավարտում են ինքնասպանությամբ, սակայն ի-
րենց հատկանիշներով ու հոգեկառուցվածքով հանդերձ չեն
պատկանում ինքնասպանների տեսակին, մինչդեռ շատերը
նրանցից, ովքեր, ըստ էության, պատկանում են ինքնասպան-
ներին, երբեք իսկապես ձեռք չեն բարձրացնում իրենց վրա:
Ինքնասպանը, իսկ Հարրին այդպիսի մեկն էր, անհրաժեշ-
տությամբ չունի մահվան հետ առանձնապես սերտ առնչու-
թյունների մեջ ապրելու, դա կարելի է անել՝ առանց ինքնա-
սպան լինելու: Բայց ինքնասպանին յուրահանուով է այն, որ
նա իր «ես»-ին նայում է, կարևոր չէ՝ արդարացիորեն, թե ա-
նարդարացի, իրրև բնության ինչ-որ փտանգավոր, անհուսալի
և անպաշտպան սաղմի, որ նա ինքնիրեն բխում է անսովոր չա-
փով անպաշտպան, կարծես կանգնած լինի ժայռի սուր կա-
տարին, որտեղ արտաքին մի փոքրիկ երումը կամ ներքին
աննշան թուլությունը բավական են, որպեսզի ընկնի դատար-
կության մեջ: Այս տեսակի մարդկանց ճակատագիրը հատ-
կանշական է նրանով, որ նրանց համար ամենահավանական
մահը ինքնասպանությունն է, զոհե պատկերացման մեջ: Նա-
խասպայմանն այս տրամադրության, որը նկատվում է դեռևս
վաղ պատանության տարիներից և ուղեկցվում է այդ մարդ-
կանց ողջ կյանքի ընթացքում, կենսական ուժի ինչ-որ առանձ-
նահատուկ չափով պակասը չէ, ընդհակառակը, «ինքնա-
սպանների» մեջ զտնվում են անսովոր համար, ազահ, անզամ
հանդուզն բնավորություններ: Բայց ինչպես որ կան մարդիկ,
որոնք ամենաաննշան հիվանդության դեպքում իսկ հակվում
են քրտնելուն, այդպես էլ այդ բնավորությունները, որոնց ան-
վանում ենք «ինքնասպան», և որոնք մշտապես շատ տպա-
վորվող ու զգայուն են, ամենափոքր ցնցման դեպքում ամբող-
ջությամբ տրվում են ինքնասպանության գաղափարին: Եթե
ունենալիք այնպիսի գիտություն, որը քաջություն և պատաս-
խանատվություն ունենար մարդուն և ոչ թե սոսկ կենսական
երևույթների մեխանիզմները հետազոտելու, երև մենք ունենա-
լիք մարդարանություն, հոգեբանության նման ինչ-որ բան, ա-
պա այս փաստերը հայտնի կլինեին բոլորին:

Ինքնասպանների մասին վերևում մեր ասածը, ինքնին
հասկանալի է, վերաբերում է սոսկ խնդրի արտաքին կողմին,
դա հոգեբանություն է, այսինքն՝ ֆիզիկայի դուրս: Մետաֆիզի-

կայի հայեցակետից խնդիրն այլ, շատ ավելի պարզ տեսք ու-
նի, քանզի նման դիտարկման դեպքում «ինքնասպանները»
մեզ ներկայանում են իրրև իրենց մեկուսացումից ծնված մեղ-
քի գիտակցությամբ համակվածներ, իրրև այն հոգիները, ո-
րոնց համար այլևս կյանքի նպատակ են համարվում ոչ թե
ինքնակատարելությունն ու ինքնակատարելագործումը, այլ
ինքնավերումը, վերադարձը դեպի մայրը, վերադարձը դեպի
Աստված, վերադարձը դեպի համաշխարհը: Այս բնավորու-
թյուններից շատերը բոլորովին անընդունակ են երբևէ ինքնա-
սպանություն կատարելու, քանի որ իրապես գիտակցում են
դրա մեղսականությունը: Այդուհանդերձ, նրանք մեզ համար
ինքնասպաններ են, քանզի մահվան, ոչ թե կյանքի մեջ են
տեսնում փրկությունը, նրանք պատրաստ են զոհել, ընծայա-
րելու, ոչնչացնել իրենց և վերադառնալ սկզբին:

Եթե յուրաքանչյուր ուժ կարող է (առանձին դեպքերում՝
պետք է) վերածվել թուլության, ապա բնույթով ինքնասպանը,
ընդհակառակը, կարող է իր թվացյալ թուլությունը վերածել ու-
ժի ու հենարանի, և այդ էլ անում է արտակարգորեն հաճախ:
Դրա օրինակն է և Հարրին՝ Տափաստանի գայլը: Ինչպես և
հազարավոր իր նմանները, Հարրին այն պատկերացումից, թե
ինքն ազատ է յուրաքանչյուր ժամ կնքելու իր մահկանացուն,
ոչ միայն ստեղծում էր սոսկ պատանեկան-մեղամտորդիկ երևա-
կայության ինչ-որ խաղ, այլ այդպիսի մտքերից կառուցում էր
հույս ու հենարան: Ինչպես իր տեսակի բոլոր մարդկանց, այն-
պես էլ նրա մեջ յուրաքանչյուր ցնցում, յուրաքանչյուր ցավ,
կյանքի յուրաքանչյուր նողկալի իրավիճակ անմիջապես ա-
ռաջ էր բերում դրանցից ազատվելու ցանկություն՝ մահվան
միջոցով: Աստիճանաբար, սակայն, այս հակումներից նա
մշակեց կյանքին պետք եկող փիլիսոփայություն: Անձնական
ժանոթությունն այն մտքին, որ այդ պահեստային ելքը մշտա-
պես բաց է, նրան ուժ էր տալիս, ցավի և գեշ իրավիճակների
հանդեպ օժտում հետաքրքրությամբ, և երբ իսկապես ընկնում
էր շատ նեղ դրության մեջ, սկսում էր երբեմն դաժան ուրա-
խությամբ, ինչ-որ չար հրճվանքով մտածել. «Հետաքրքիր է
տեսնել, թե ինչեր կարող է կրել մարդը: Եթե հասնեմ տառա-
պանքի վերջին սահմանին, այդ ժամանակ բավական է բացեմ
պահեստային դուռը, և հոգիս ազատ կլինի»: Ըստ ինքնա-
սպաններ կան, ովքեր այս գաղափարից անսովոր ուժ են ձեռք
բերում:

Մյուս կողմից՝ բոլոր ինքնասպաններին ծանոթ է կռիվը, որ նրանք ունենում են ինքնասպանությամբ իրենց վերջ տալու գայթակղության դեմ: Յուրաքանչյուրն իր հոգու ինչ-որ անկյունում հասկանում է, որ ինքնասպանությունը թեև երբ է, բայց փոքր-ինչ ստոր և ոչ օրինական պահեստադիւն էր, որ, ըստ էության, ավելի ազնիվ, ավելի զեղեցիկ է հաղթվել ու դիտապաստ ընկնել հենց կյանքից, քան սեփական ձեռքով: Այս գիտակցությունը, այս անհանգիստ խիղճը, որը միևնույն ակունքն ունի, ինչպես, այսպես կոչված, ձեռնամուխ անմարտը խիղճը, «ինքնասպանների» մեծ մասին մղում է տևական կռիվի իրենց գայթակղությունների դեմ: Նրանք պայքարում են այնպես, ինչպես իր արատների դեմ պայքարում է գողամուրը: Տափաստանի գայլին նույնպես այս կռիվը լավ ծանոթ էր: Կռվելով՝ նա անընդհատ փոխում էր իր զենքերը: Վերջապես, ապրելով մինչև քառասունյոթ տարի, նա հանգեց երջանիկ և ծիծաղելի լինելուց ոչ զերծ մի մտքի, որը նրան հաճախ էր ուրախություն պատճառում: Նա վճռեց, որ իր հիսնամյա տարեդարձը լինելու է այն օրը, երբ ինքն իրեն բույլ է տալու ինքնասպան լինել: Այդ օրը, այդպես էր նա պայմանավորվել ինքն իր հետ, նրան ազատ հնարավորություն պետք է տրվեր պահեստային ելքից օգտվելու կամ չէր տրվելու՝ կախված տրամադրությունից: Եվ թող նրա հետ պատահի՝ ինչ հնարավոր է, թող հիվանդանա, աղքատանա, թող նրա զլխին թափվեն տառապանքներն ու աղետները. ամեն ինչ սահմանափակված էր լինելու, ամեն ինչ տեղի էր ունենալու ամենաշատն այդ մի քանի կարճ տարիների, ամիսների, օրերի ընթացքում, որոնց թիվն օրեցօր նվազելու է: Եվ, իսկապես, այժմ նա ավելի թեթև էր տանում ամեն տեսակի տեսությունները, որոնք նախկինում պետք է որ տանջեին նրան ավելի ուժեղ ու ավելի երկար, հնարավոր է նաև ցնցելին՝ թախանցելով մինչև էության խորքը: Երբ նրա գործերն ինչ-որ պատճառով առանձնապես վատթարանում էին, երբ նրա կյանքի ամայությունը, մենակությունը և վայրենությանն ավելանում էին նաև առանձնահատուկ ինչ-որ ցավեր ու կորուստներ, նա կարողանում էր այդ ցավերին ասել. «Մպասեք ևս երկու տարի, և ես կհաղթեմ ձեզ»: Եվ ապա սիրով խորատուզվում էր երևութական այն օրվա մեջ, երբ իր հիսնամյակի տարեդարձին՝ առափոտյան, ստանալու էր նամակներ ու ողջույններ, մինչդեռ ին-

քը, վստահ իր ամելուն, հրաժեշտ կտար բոլոր ցավերին ու իր հետևից կծածկեր դուրս: Այդ ժամանակ ոսկրացավը՝ ոսկորներում, քախիճը, զլխացավը և ստամոքսի ախտերը կարող են գործել, որքան ուզում են:

Մնում է նաև մեկնաբանել Տափաստանի գայլի անհատականության երևույթը և, մասնավորապես, նրա ինքնատիպ վերաբերմունքը քաղբենիությանը՝ երկու երևույթներն էլ հանգեցնելով իրենց հիմնական օրենքներին: Քանի որ խնդիրն ինքնին ծառանում է մեր առաջ, ուստի, իբրև երման կետ, ընդունենք նրա վերաբերմունքը հենց նույն «քաղբենիականի» հանդեպ:

Տափաստանի գայլը, սեփական պատկերացման համաձայն, միանգամայն դուրս էր կանգնած քաղբենիական աշխարհից, քանի որ չէր վարում ընտանեկան կյանք և չէր ճանաչում դասային պատասխանատվություն: Նա իրեն զգում էր սոսկ իբրև անհատ, մեկ՝ իբրև ինքնօրինակ ու հիվանդ մենակյաց, մեկ՝ իբրև զերկանոնավոր, իբրև հանձարեղ օժտվածությամբ մեկը, սովորական կյանքի-մանր չափանիշներից բարձր կանգնած անհատականություն: Նա գիտակցաբար արհամարհում էր քաղբենուն և հպարտանում նրանով, որ ինքն այդպիսին չէ: Այդուհանդերձ, առանձին ստումներով նա ապրում էր միանգամայն իբրև քաղբենի, նա դրան ուներ դրամատանը և օգնում էր աղքատ հարազատներին, թեև հազմվում էր անփույթ, բայց վայելուչ և ոչ աչքի ընկնելու չափ հանդիսավոր, նա փորձում էր ուսովկանության, հարկային ծառայությունների և իշխանական մարմինների հետ բարի դրացիական հարաբերությունների մեջ մնալ: Բացի դրանից, ինչ-որ ուժեղ, խորհրդավոր բաղձանք նրան մշտապես ձգում էր դեպի քաղբենիական մանրուքների աշխարհը, դեպի խաղաղ, վայելուչ ընտանեկան օջախները՝ իրենց մարտը, փոքրաչափ պարտեզներով, մաքրությունից փայլող սանդուղքներով և կարգուկանոնի ու բարեկամության ողջ մթնոլորտով: Նրան դուր էր գալիս մանր արատներ և խենթություններ ունենալ, իրեն զգալ քաղբենիական միջավայրից դուրս, իբրև մենակյաց կամ իբրև հանձար, բայց երբեք մշտապես չէր բնակվում ու ապրում, եթե կարելի է այսպես արտահայտվել, կյանքի արվարձաններում, որտեղ այլևս գոյություն չունեին քաղբենիները: Նա իրեն ազատ չէր զգում ոչ ուժեղ ու բացառիկ մարդկանց միջավայ-

բում, որոնք իրենց հարցերը լուծում են ուժով, ոչ էլ հանցագործների և ավազակների, այլ միշտ մնում էր ապրելու քաղքենիական արվարձաններում, որոնց սովորությունների, որոնց չափանիշների և միջավայրի հետ նա շարունակ կապված էր, երե նույնիսկ այդ կապը դրսևորվում էր ընդդիմությամբ և հեղափոխությամբ: Բացի դրանից, նա մեծացել էր մանրրուրծուական միջավայրում և այնտեղից իր հետ էր բերել բազմաթիվ պատկերացումներ ու վարքի կադապարներ: Տեսականորեն նա ոչինչ չուներ պոռնկության դեմ, սակայն անձամբ անընդունակ էր պոռնիկին ընդունել լրջորեն և իսկապես վերաբերվել իբրև իր նմանի: Բաղարական հանցագործին, ընթացափն կամ հոգևոր կեղծ առաջնորդին, որոնց օրենքից դուրս էին հայտարարում պետությունն ու հասարակությունը, նա ընդունակ էր իբրև եղբոր սիրելի, բայց ավազակի, գողի, մարդասպանի հանդեպ հոգում չէր գտնվի այլ բան, քան բավականին քաղաքենիավարի ցավակցելը:

Այսպիսով՝ իր բնության մի կեսով նա մշտապես ընդունում էր և հաստատում այն, ինչ մյուս կեսով վիճարկում էր ու ժխտում: Հասակ առնելով մշակված քաղաքենիական ընտանիքում, ձևերի և չափանիշների պահպանողական մթնոլորտում, իր հոգու մի մասով կապված էր մնացել այդ աշխարհի կարգուկանոնին, թեև դրանից հետո երկար ժամանակ հնարավոր չափով մեկուսացել էր քաղաքենիությունից և ազատագրվել քաղաքենիական իդեալների ու հավատի գաղափարական բեռից:

«Քաղաքենիությունն» էլ՝ իբրև մշտապես առկա մարդկային վիճակ, այլ բան չէ, քան հավասարակշռություն գտնելու փորձ, քան ձգտում դեպի մարդկային վարքի անթիվ ծայրահեղությունների և բևեռացումների հավասարակշռված միջինը: Եթե, օրինակ, վերցնենք այդ բևեռացում-գոյգերից որևէ մեկը, ասենք՝ սրբինը և անառակինը, ապա մեր համեմատությունը ինքնին հասկանալի կդառնա: Մարդը հնարավորություն ունի ամբողջովին տրվելու հոգևոր կյանքին, մերձենալու Աստծո սրբազան իդեալին: Ընդհակառակը, նա բոլոր հնարավորություններն ունի տրվելու նաև բնագոյական կյանքին, իր զգայական պահանջներին և իր բոլոր ջանքերն ուղղել ակնբարբային հաճույքներ ստանալուն: Ըանապարհներից մեկը տանում է դեպի սուրբը, դեպի հոգու նահատակը, դեպի ինքնամերժումը՝

հանուն Աստծո: Մյուսը տանում է դեպի անառակը, դեպի բնագոյներից տատապողը, դեպի ինքնամերժումը՝ հանուն մարմնի: Ահա, այս երկուսի միջև էլ, չափավոր միջակայքում, փորձում է ապրել քաղքենին: Նա երբեք չի հրաժարվում ինքն իրենից, չի տրվում ոչ արբեցմանը, ոչ անկետականությունը, երբեք չի դառնում նահատակ, չի համաձայնվում իր ոչնչացմանը, ընդհակառակը, նրա իդեալը ոչ թե անձնվիրումն է, այլ ես-ի պահպանությունը, նա չի ձգտում ոչ սրբանալու, ոչ էլ դրա հակոտնյան դառնալու, պարտադրականությունը անտանելի է նրա համար, նա թեև ուզում է ծառայել Աստծուն, բայց նաև մարմնավոր բերկրանքին, թեև ուզում է առաքինի լինել, բայց ուզում է նաև երկրի վրա մի քիչ էլ բարիք ու հարմարություններ ունենալ: Կարճ ասած՝ նա փորձում է տեղավորվել ծայրահեղությունների միջակայքում՝ չափավոր և օգտակար մի տարածքում, առանց փոթորիկների և ամպրոպների, և դա նրան հաջողվում է, թեև ի հաշիվ կյանքի և զգացմունքների այն լիարժեքությանը, որ հաղորդում է պարտադրականության և ծայրահեղության ձգտումը: Լիարժեք ապրել կարելի է միայն ես-ի հաշիվին: Քաղքենին, սակայն, ոչինչ ավելի բարձր չի գնահատում, քան իր ես-ը (անշուշտ, թույլ զարգացած): Այսինքն՝ լիարժեքության հաշիվն նա հասնում է ապահովության և անվտանգության, Աստծով ներշնչվելու փոխարեն ունենում է խղճի հանգստություն, զվարթության փոխարեն՝ վայելք, ազատության փոխարեն՝ հարմարավետություն, մահացու տապի փոխարեն՝ հաճելի ջերմաստիճան: Ուստի քաղքենին, իր էությունը, կյանքի հանդեպ թույլ մղումներ ունեցող արարած է, վեհերոտ, որ վախենում է գոնե ինչ-որ չափով իր ես-ի հույսին մնալ, հեշտությամբ կառավարվում է: Այդ նպատակով էլ իշխանության փոխարեն նա հաստատում է մեծամասնությունը, ուժի փոխարեն՝ օրենքը, պատասխանատվության փոխարեն՝ քվեարկության գործառնությունը:

Պարզ է, որ այդ թույլ ու վեհերոտ էակը, որքան էլ բազմաբանակ լինի, չի կարող պահպանել իրեն, որ նա իր ստանձնահատկությունների շնորհիվ այս աշխարհում այլ դժվարություն չի կարող ունենալ, քան գառնուկների հոտի դեբր՝ արմախում գայլերի միջավայրում: Այդուամենայնիվ, մենք տեսնում ենք, որ չնայած այն ժամանակներում, երբ իշխում են ուժեղ բնավորությունները, քաղքենուն անմիջապես սեղմում են պատին,

նա, միևնույն է, չի ոչնչանում երբեք, իսկ երբեմն էլ, թվում է, իշխում է աշխարհին: Ո՞րն է գաղտնիքը: Ոչ նրա հոտի բազմաբանակությունը, ոչ առաքինությունը, ոչ common sense-ն*, ոչ էլ կազմակերպվածությունը ի վիճակի չէին լինի, թվում է, նրան փրկել կործանումից: Նրան, ում կենսական ուժերը սկզբից էլ շատ բույացած են, ոչ մի բժիշկ էլ չի կարող կյանքի կոչել: Եվ, այդուհանդերձ, քաղբենիությունն ապրում է, հզոր է և ծաղկում: Ինչո՞ւ:

Պատասխանն այս է. Տափաստանի գայլերի շնորհիվ: Իրականում քաղբենիության կենսական ուժերը հիմնված են բոլորովին էլ ոչ նրա կանոնավոր անդամների հատկանիշների վրա, այլ բազմաթիվ ձախողակների, որոնց նա, իր գաղափարների անորոշության և առածգականության շնորհիվ, կարողանում է ընդգրկել իր մեջ: Քաղբենիության ներսում մշտապես առկա են մեծ քանակությամբ ուժեղ և վայրի բնավորություններ: Մեր Տափաստանագայլ Հարրին դրա բնորոշ օրինակն է: Նա, ում անհատականության զարգացումը բավականին զերազանցում էր քաղբենու համար հնարավոր սահմանը, նա, որին ինքնահայեցման վայելքը ծանոթ է այնքան, որքան և ատելության ու ինքնատելության մոռյլ ուրախությունները, նա, ով ասում է օրենքը, բարեգործությունը և common sense-ն, այդուամենայնիվ, քաղբենիության գերյալն է և նրանից ազատվել չի կարող: Այսպիսով՝ քաղբենիության անաղարտ զանգվածը, ինչպես մրջյուկ, օղակված է մարդկության լայն շերտերով, բազմաթիվ կյանքերով և ուղեղներով, որ թեև ներածել են քաղբենիությանը, թեև կոչված են վերապահություններ չընդունելու, վեր սլանալու դեպի բացարձակը, սակայն քաղբենիությանը կապված են մանկական զգացումներով, զգալորեն վարակված են նրա կենսական ուժերի բույությամբ, ուստի քաղբենիության մեջ ինչ-որ կերպ քարացած-մնացած, ինչ-որ կերպ նրան հնազանդ, ինչ-որ չափով երախտապարտ ծառայելու պատրաստ կեցվածքով: Քանզի քաղբենիությունը հավատարիմ է մնում այս աշխարհի հզորների սկզբունքին հակադրվելուն. «Ով իմ դեմ չէ, նա ինձ հեռ է»:

Եթե այս հայեցակետով դիտարկենք Տափաստանի գայլի հոգին, ապա նա իրենից կներկայացնի մարդ, որն իր անհա-

տականության բարձր աստիճանի շնորհիվ կոչված չէ քաղբենի լինել, քանզի յուրաքանչյուր վառ անհատականություն ընդվզում է իր ես-ի դեմ և հակվում նրա ոչնչացմանը: Մենք տեսնում ենք, որ նա օժտված է ուժեղ ազդակներով՝ ինչպես սուրբ, այնպես էլ անատակ դառնալու համար, բայց որոնք ինչ-որ բույությունների կամ ծուլության հետևանքով չեն կարողացել ուսանել, դուրս գալ համաշխարհի վայրի տարածություններ և շարունակում են շղթայված մնալ քաղբենիության մայրական աստղի ծանր ձգողականությամբ: Այդպիսին է աշխարհաստեղծման մեջ նրա տեղը, այդպիսին է նրա շղթայվածությունը: Մտավորականների մեծ մասը, արվեստագետների ճնշող մեծամասնությունը պատկանում են այս տեսակին: Նրանցից միայն ամենաուժեղներն են կարողանում դուրս գալ քաղբենիական երկրի սթնոլորտից և հասնել ափեզերականին, մնացյալ բոլորը համձնվում են կամ հաշտություն կնքում, արհամարհում են քաղբենիությունը և, այդուհանդերձ, պատկանում են նրան, զորացնում և փառավորում են այն, քանի որ վերջիվերջո պարտադրված են հաստատել այն, որպեսզի կարողանան ինչ-որ կերպ պահպանել իրենց գոյությունը: Անթիվ-անհամար այս մարդկանց ուժերից վեր է ողբերգականությունը, բայց տանելի են բավականին չարաբաստիկ ճակատագիրն ու բախար, որի դժոխքում եփվում ու պտղաբերում են նրանց տաղանդները: Քչերը, ովքեր փրկվում են, հասնում բացարձակին և պատվարժանորեն մեռնում, ողբերգական անհատներն են, դրանց թիվն աննշան է: Իսկ մյուսների՝ շղթայված-մնացածների առաջ, որոնց տաղանդը քաղբենիությունը բարձր է գնահատում, բաց է երրորդ արքայությունը, երևակայական, բայց ինքնակա աշխարհը՝ երգիծանքը: Անհանգիստ Տափաստանագայլերը՝ այդ մշտական ու վեհերա տառապյալները, որոնց ողբերգականության՝ դեպի աստղային տարածություններ դուրս գալու համար արված չէ անհրաժեշտ հզորություն, որոնք իրենց զգում են բացարձակի համար կոչված, բայց բացարձակի մեջ ապրել չեն կարող՝ նրանց համար, եթե նրանց հոգին տառապանքից ավելի ուժեղացել է և դարձել ճկուն, երգիծանքի մեջ գտնվում է հաշտարար ելք¹⁷: Երգիծանքը միշտ, ինչ-որ չափով, մնում է քաղբենիական, թեև իսկական քաղբենին ընդունակ չէ այն հասկանալ: Նրա երևակայական ոլորտում իրականացվում են բոլոր Տափաստանագայլ-

* Common sense – ամուղջ բանականություն (անգլ.):

լերի խճճված, հակասական իդեալները. այստեղ կարելի է ոչ միայն քաջալերել սրբին ու անառակին միաժամանակ, միմյանց մոտեցնել բևեռները, այլև քաղերևու վրա տարածել այդ քաջալերանքը: Չէ՞ որ Աստծով ներշնչված մարդը, շատ հնարավոր է, հավանություն տա հանցագործին, և, ընդհակառակը, քայց նրանք երկուսն էլ, բացարձակ, անատարկելի ծայրահեղությունների մարդիկ բոլորն էլ, չեն կարող հավանություն տալ նաև չեզոք, հույլ միջինին՝ քաղրենիությունը: Միմիայն երգիծանքն է հոյակապ հայտնագործությունը նրանց, որոնց ծայրահեղականությունը կաշկանդված է, ով գրեթե արդեն ողբերգական է, ով դժբախտ է և միևնույն ժամանակ չափազանց օժտված, միմիայն երգիծանքն է (մարդկության զուցեև ամենաինքնատիպ և հանճարեղ նվաճումը), որ իրականություն է դարձնում անհնարինը՝ իր պրիզմաների լույսերով ընդգրկելով ու միավորելով մարդկային բնության բոլոր ոլորտները: Ապրել աշխարհում, կարծես թե դա աշխարհ չէ, հարզել օրենքը, քայց, այդուհանդերձ, նրանից վեր կանգնել, տիրել, «ասես թե չտիրելով», հրաժարվել, կարծես թե դա բոլորովին էլ հրաժարում չէ, — կենսական բարձրագույն իմաստության սիրված և հաճախ ձևակերպում ստացած այս բոլոր պահանջները կատարելուն ընդունակ է միմիայն երգիծանքը:

Եվ եթե Տափաստանի գայլը, որը դրա համար ունի և՛ ընդունակություն, և՛ հակում, կարողանար իր դժոխքի հեղձուկ խառնաշփոթից դուրս մղել այդ կախարդական ըմպելիքը, ապա կփրկվեր: Բայց դրա համար նրան շատ բան էր պակասում: Մակայն հնարավորությունը, հույսը կային: Ով նրան սիրում է, ով հաղորդակից է նրան, թող ցանկանա նրա համար այդ փրկությունը: Այդ ժամանակ նա, թեև կխրվեր-կմնար քաղրենիության մեջ, քայց նրա տառապանքները տանելի կլինեին, կլինեին բեղմնավոր: Քաղրենի աշխարհի հետ առնչությունները թե՛ սիրո, թե՛ ատելության մեջ կորցնելու սենսիվենտալությունը և այս աշխարհի հետ կապը՝ իբրև ինչ-որ ամոթալի բան, կդադարեին մշտապես տանջել նրան:

Դրան հասնելու կամ, ի վերջո, զուցեև ախեղերը բռչելու խիզախության համար այդպիսի Տափաստանի գայլին անհրաժեշտ էր մի անգամ ղեմառդեմ հանդիպել ինքնիրեն, խոր հայացք գցել իր հոգու քառսից ներս, և հասնել ամբողջական ինքնագիտակցության: Այդ ժամանակ նրա կասկածելի գոյությունը

նր կբացվեր նրա առաջ իր ողջ անփոփոխելիության մեջ, և հետագայում նա այլևս իր բնագոյների դժոխքից ժամանակ առ ժամանակ չէր փախչի դեպի սենսիվենտալ-իմաստասիրական սփոփանքները, ապա դրանցից վերստին դեպի իր գայլային բնության կույր արբեցումը: Մարդը և գայլը ստիպված կլինեին միմյանց ճանաչել առանց զգացմունքներն ազատադող դիմակների, պարտապարզված կլինեին ուղղակի նայել իրար աչքերի մեջ: Այդ դեպքում նրանք կամ կպայթեին ու կհեռանային միմյանցից ընդմիշտ, կամ էլ երգիծանքի համատարած լույսի տակ կկնքեին իրենց բնական ամուսնությունը:

Բացառված չէ, որ Հարրիին երբևէ կարող է ներկայանալ այս վերջին հնարավորությունը: Հնարավոր է, որ երբևէ նա կարող է ճանաչել ինքնիրեն՝ ստանալով մեր փոքրիկ հայելիներից մեկը¹⁸, հանդիպելով անմահներին¹⁹ կամ, զուցե, մեր մոգական քատրոններից մեկում գտնելով այն, ինչ հարկավոր է նրան՝ իր վայրենացած հոգուց ազատվելու համար: Հազարավոր նման հնարավորություններ սպասում են նրան, նրա ճակատագիրն անհաղթահարելիորեն ձգում է նրանց, քաղրենիության այս բոլոր ոչ լիարժեք անդամներն ապրում են նշված կախարդական հնարավորությունների ոլորտում: Բավական է չնչին մի բան, որպեսզի կայծակը հարվածի:

Եվ այս ամենը շատ լավ ծանոթ է Տափաստանի գայլին, եթե անգամ նրա աչքով երբեք չի ընկնում իր ներքին կենսագրության այս ուրվագիծը: Նա կռահում է իր վիճակը աշխարհաստեղծման մեջ, նա զգում է և զիտի անմահներին, նա զուշակում է նրանց հետ հանդիպման հնարավորությունը և երկյուղ է կրում դրանից, նա զիտի հայելիների գոյության մասին, որոնց մեջ նայելն այնքան շատ պետք կլիներ նրան և որոնց մեջ նայելուց նա սարսափում է մահու չափ:

Մեր քննախոսության ավարտին մնում է լույս սփռել մի վերջին կեղծիքի, մի սկզբունքային խաբեության վրա: Բոլոր «մեկնաբանությունները», ցանկացած հոգեբանություն ըմբռնելու բոլոր փորձերը, անշուշտ, կարիք ունեն օժանդակ միջոցների, տեսությունների, դիցաբանության, ստի, և կարգին հեղինակը փորձ չէր անի հնարավորության սահմաններում այդ սուտը ցրել գրվածքի վերջում: Երբ ես ասում եմ «վերևում» կամ «ներքևում», ապա դա արդեն իսկ վկայություն է, որը պա-

հանջում է մեկնաբանություն, բանգի վերևը և ներքևը գոյություն ունեն միայն մտածողության, միայն վերագականության մեջ: Իսկ աշխարհը, ինքնին, չի ճանաչում ոչ վեր, ոչ էլ վար:

Կարճ ասած՝ «տափաստանի գայլը» նույնպես կեղծիք է: Եթե Հարրին իրեն զգում է մարդագայլ և կարծում է, որ բաղկացած է երկու թշնամական ու հակադիր էություններից, ապա դա ընդամենը պարզեցված դիցաբանություն է: Հարրին բոլորովին էլ մարդագայլ չէ, և եթե մենք ինչ-որ կերպ ընդունում էինք նրա կողմից գտնված և հավատ-ընծայված սուտը և փորձում նրան դիտարկել իրրև, իրոք, երկակի էություն, իբրև տափաստանի գայլ, ապա մեզ հեշտ հասկանալու հույսով օգտվում էինք սափց, որն այժմ անհրաժեշտ է ուղղել:

Գայլի և մարդու, բնագրի և ոգու տարանջատումը, որ Հարրին գործածում է իր ճակատագիրն ավելի հասկանալի դարձնելու համար, խիստ կուպիտ պարզեցում է, դա բռնություն է իրականության վրա՝ հանուն օգտաշահ, բայց անճիշտ մեկնաբանության հակասությունների, որոնք իր մեջ հայտնագործել է այդ մարդը, և որոնք նրան թվում են իր անթիվ տառապանքների ակունքը: Հարրին իր մեջ հայտնագործում է «մարդուն», այսինքն՝ մարերի, զգացմունքների, մշակույթի, սանձահարված ու նրբացված բնության աշխարհ, բայց կողքին, իր մեջ հայտնագործում է նաև «գայլին», այսինքն՝ բնագրային, դաժան, անմշակ բնության աշխարհը: Չնայած դրան, չնայած սեփական բնության՝ արտաքինից այդպիսի պարզ բաժանմանը երկու թշնամական ոլորտների, նա ժամանակ առ ժամանակ նկատում էր, որ գայլը և մարդը ինչ-որ պահի, ինչ-որ երջանիկ մի ակնբարթի ընթացքում, իրար հետ դառնում են հաշտ: Եթե Հարրին ուզենար ճշտել, թե որքան է իր Հարրիի կյանքի յուրաքանչյուր պահի, յուրաքանչյուր արարքի, յուրաքանչյուր զգացողության մեջ մարդու մասնակցության և գայլի մասնակցության աստիճանը, ապա անմիջապես կհայտնվեր փակուղում, և նրա հրապուրիչ գայլային ողջ տեսությունը կփլուզվեր: Բանգի ոչ մի մարդ, անզամ պարզունակ նեզրը, անզամ ապուշը հաճելիորեն այնպես պարզ չէ, որպեսզի հեռավոր լինի նրա էությունը բացատրել իրրև երկու կամ երեք հիմնական տարրերի հանրագումար, և մանավանդ այնպիսի բազմաշերտ անձնավորության, ինչպիսին էր Հարրին, գայլի և մարդու պարզունակ բաժանումով մեկնաբանելը մանկական

անհուսալի փորձ է: Հարրին բաղկացած է ոչ թե երկու, այլ հարյուրավոր, հազարավոր էություններից: Նրա կյանքը (ինչպես և յուրաքանչյուր մարդու կյանք) տարբերվում է ոչ թե միայն երկու բևեռների, ասենք՝ բնագրի և ոգու, կամ սրբի և անառակի, այլև հարյուր-հազարավոր, անթիվ, անհամար բևեռված գույգերի միջև:

Որ այնպիսի գիտակ և խելացի մարդը, ինչպիսին է Հարրին, իրեն կարող է համարել «տափաստանի գայլ», որ նա իր կյանքի հարուստ ու բարդ կառույցը հանգեցնում է այդքան հասարակ բանաձևի, չպետք է մեզ զարմացնի: Մտածելու ընդունակությանը մարդը տիրապետում է միայն մի փոքր չափով, անզամ ամենաեղևոր և ամենակիրթ անձնավորությունն աշխարհն ու ինքնիրեն մշտապես տեսնում է շատ պարզունակ, հասարակ ու խելաթյուրված բանաձևերի ակնոցների միջից, ամենից շատ, սակայն, ինքնիրեն: Չէ՞ որ դա, ինչպես երևում է, յուրաքանչյուր մարդու բնածին պահանջն է, որ գործում է լիովին ինքնաբերաբար՝ ամեն մարդ իր ես-ը պատկերացնում է իրրև մեկ ամբողջություն: Որքան էլ հաճախ և որքան էլ ծանր փորձությունների ենթարկվի այս պատրանքը, միևնույն է, վերստին նորանում է: Դատավորը, որ նստում է մարդասպանի դիմաց և նայում նրա աչքերի մեջ, որոշակի մի պահի լսում է, թե ինչպես է մարդասպանը խոսում իր սեփական (դատավորի) ձայնով, ինչ-որ մի պահի իր մեջ նույնպես գտնում է մարդասպանի բոլոր մղումները, ընդունակությունները, հնարավորությունները, սակայն հաջորդ ակնբարթին արդեն նորից ձեռք է բերում ամբողջականություն, դառնում դատավոր, մտնում իր երևակայելի ես-ի պատյանի մեջ, կատարում իր պարտականությունները և դատապարտում է մարդասպանին մահապատժի: Եվ եթե առանձնահատուկ և նորը կատուցվածք ունեցող մարդկանց հոգիներում առկայծում է իրենց բազմաշերտության զգացումը, եթե նրանք, ինչպես յուրաքանչյուր հանճար, դուրս են գալիս մարդկային միասնության պատրանքից, զգում են իրենց իրրև բազմամաս, իբրև ետերի կծիկ, ապա բավական է, որ նրանք թեթևակիորեն արտահայտվեն այդ մասին, որ մեծամասնությունը փակի նրանց բերանը, օգնության կանչի գիտությանը, արձանագրի մտազարթություն և պաշտպանի մարդկությանը, որպեսզի այս դժբախտների բերանից չլսվի ճշմարտության կանչը: Բայց ին-

չու այստեղ բառեր ծախսել, ինչու խոսել բաների մասին, որոնք բոլորին, ովքեր մտածում են, առանց այդ էլ հայտնի են, սակայն դրանց մասին ընդունված չէ խոսել: Նշանակում է՝ նա, ով իր ես-ի երևակայական միակությունը հասցնում է լայնացնել զոնն մինչև երկատվածության, այս արդեն գրեթե հանճար է, ամեն դեպքում հազվագյուտ և հեռաքրքիր բացառություն: Իսկ իրականում յուրաքանչյուր «ես», անգամ ամենապարզունակը, միակություն չէ, այլ բազմաբարդ աշխարհ, աստղային լայնարձակ երկինք, ձևերի, աստիճանների և վիճակների, ժառանգականության և հնարավորությունների քառս: Իսկ որ յուրաքանչյուրը, առանձին վերցրած, ձգտում է այդ քառսին նայել իբրև միակություն և խոսել իր ես-ի՝ իբրև ինչ-որ պարզ, հաստատուն ձև, պարզորոշ գծագրություն ունեցող երևույթի մասին, այս յուրաքանչյուր (անգամ ամենաբարձր թռչչի ընդունակ) մարդու բնորոշ այդ խաբկանքը, ըստ երևույթին, նույնպիսի անհրաժեշտություն է, կյանքի նույնպիսի պահանջ, ինչպիսին է շնչելը և ուտելը:

Այդ խաբկանքը հիմնված է պարզ փոփոխության վրա: Յուրաքանչյուր մարդու մարմին ամբողջական է, հոգին՝ ոչ: Բանաստեղծությունը՝ նույնպես, անգամ ամենանորը բանաստեղծության մեջ ավանդարար մշտապես գործում են կեղծ ամբողջական, կեղծ միասնական կերպարներ: Մինչև այսօր գոյություն ունեցող բանարվեստի մեջ մասնագետները և գիտակները ամենից բարձր զնահատականը տալիս են դրամային, և արդարև, քանի որ նա ամենամեծ հնարավորությունն ունի (կամ կարող է ունենալ) ես-ը ներկայացնելու իբրև բազմազանություն, եթե միայն չլինի անտղական հակասությունը, որ յուրաքանչյուրիս դրամայի ամեն մի առանձին գործող անձի ներկայացնում է իբրև միակություն, քանի որ նա անառարկեփորեն ներկայանում է եզակի, միասնական, ներփակ մարմնական ձևի մեջ: Պարզունակ գեղագիտությունն ամենից բարձր զնահատում է նույնիսկ, այսպես կոչված, բնավորությունների դրաման, որտեղ յուրաքանչյուր դեմք ներկայանում է իբրև ինչ-որ հստակորեն գծագրված և առանձնացված ամբողջություն: Միայն տարտամորեն և աստիճանաբար ինչ-որ մեկը սկսում է կռահել, որ այդ ամենը, գուցե թե, էժանագին, մակերեսային գեղագիտություն է, որ մենք մոլորվում ենք, երբ մեր մեծ դրամատուրգների նկատմամբ գործածում ենք հոյակապ,

բայց մեզ համար ոչ բնածին, այլ պարտադրված պատկերացումներ գեղեցիկի մասին, պատկերացումներ հնադարի մասին, որը, մշտապես ելնելով տեսանելի մարմնից, ըստ էության, հայտնաբերել է ես-ի, անձի կեղծիքը: Հին Հնդկաստանի բանաստեղծության այդ հասկացությունը բողոքովին անձանոթ է, հնդկական էպոսի հերոսներն անձեր չեն, այլ անձերի կուտակումներ, անձնավորությունների շարքեր: Եվ մեր այդի աշխարհում էլ գոյություն ունեն ստեղծագործություններ, որոնց մեջ անձերի և բնավորությունների խաղի ետևում հեղինակը, գուցե և ամբողջապես գիտակցված ձևով, փորձ է անում ներկայացնել հոգու բազմադիմությունը: Ով ցանկանում է հայտնաբերել դա, պետք է վճռի նման ստեղծագործության հերոսներին նայել ոչ իբրև առանձին էակների, այլ իբրև մասեր, իբրև կողմեր, իբրև ինչ-որ բարձրագույն միակության (եթե հարմար է՝ գրողի հոգու) զանազան հայեցակետեր: Ով այդպես կտեսնի, ասենք, «Ֆաուստը», նրա համար Ֆաուստը, Մեֆիստոֆելը, Վազները և մյուս բոլորը կկազմեն որոշակի միասնություն, որոշակի գերանձ, և միայն այս բարձրագույն միասնության, և ոչ թե առանձին անձերի մեջ, ինչ-որ ակնարկ կա հոգու իսկական էության մասին: Երբ Ֆաուստն արտասանում է խոսքերը, որոնք հայտնի են դպրոցական ուսուցիչներին և հիացնունք են առաջացնում քաղբենիների միջավայրում՝ «Ախ, երկու հոգի են ապրում կրծքիս տակ», նա մոռանում է Մեֆիստոֆելին և մնացած բազմաթիվ հոգիներին, որոնք նույնպես բնակվում են նրա կրծքի տակ: Մեր Տափաստանի գայլը նույնպես հավատացած է, որ իր կրծքի տակ կրում է երկու հոգի (գայլ և մարդ) և զանում, որ դրանով արդեն իր հոգում չափազանց նեղ է: Կործքը, մարմինը միշտ էլ եզակի են, բայց դրանում բնակվող հոգին, սակայն, երկուսը չեն կամ հինգը, այլ անթիվ: Մարդը հարյուրավոր նրբակեղևներից բաղկացած սոխ է, բազմաթիվ թելերից հյուսված գործվածք: Դա հասկանում և լավ գիտեին հին ասիացիները, և բուդդայական յոզան բացահայտել է ամբողջական եղանակներ, որպեսզի մերկացնի անձի ինքնախաբեությունը: Հեռաքրքիր և բազմազան են մարդկության խաղերը, ինքնախաբեությունը, որի մերկացման համար Հնդկաստանը ծիգ էր քափում հազարավոր տարիներ, միևնույն ինքնախաբեությունն է, որի հզորացման և ամրացման համար այնքան ուժեր է ծախսում Արևմուտքը:

Եթե մենք Տափաստանի գայլին նայենք այս հայեցակե-
տից, մեզ համար պարզ կդառնա, թե ինչու է նա այդպես տա-
ռապում իր ծիծաղելի երկակիությունից: Նա, Ֆաուստի պես,
կարծում է, որ երկու հոգին մեկ կրծքի համար արդեն չափա-
զանց շատ է, նրանք պետք է կործրք պատռեն: Իսկ այդ քա-
նակությունը, ընդհակառակը, չափազանց քիչ է, և Հարրին
սարսափելի բռնանում է իր խեղճ հոգու վրա՝ աշխատելով
այդպիսի պարզունակ պատկերացմամբ հասկանալ նրան:
Թեև նա շատ կրթված մարդ է, սակայն վարվում է գրեթե այն-
պես, ինչպես կվարվեր վայրենին, որը զիտի հաշվել միայն
մինչև երկուսը: Նա իր մի մասն անվանում է մարդ, իսկ մյուսը՝
գայլ և գտնում, որ դրանով գործն արդեն ավարտել է, և ինքն
սպառված է: «Մարդը» մեջ նա խցկում է ողջ հոգևորը, նրբաց-
վածք կամ գոնե մշակվածը, ինչ գտնում է իր մեջ, իսկ գայլի
մեջ՝ ողջ բնագոյայինը, վայրեն և քառասյինը: Բայց կյանքում
ամեն ինչ այնպես կոպիտ չէ, ինչպես մեր ողորմելի, ապուշային
լեզվում, և Հարրին կրկնակի է խաբում ինքնիրեն, երբ դիմում է
«գայլի» այս վայրենարարո եղանակին: Հարրին, ի երկյուղս
մեզ, արդեն իսկ մարդուն է հատկացնում իր հոգու ամբողջա-
կան տարածքները, որոնց համար մինչև մարդկայինը դեռևս -
շատ ճանապարհ կա, իսկ գայլին՝ իր բնության այնպիսի մա-
սեր, որոնք վաղուց ի վեր գերազանցել են գայլին:

Ինչպես բոլոր մարդիկ, Հարրին նույնպես կարծում է, որ
բավականին լավ է հասկանում, թե ինչ է մարդը, իսկ իրակա-
նում ոչինչ էլ չի հասկանում, թեև ոչ հազվադեպ երազներում և
զիտակցության դժվար կառավարելի իրավիճակներում դա
կռահում է: Երանի այդ կռահումները նա չմոռանար, երանի,
որքան հնարավոր է, յուրացներ դրանք: Չէ՞ որ մարդն ինչ-որ
քարացած և անփոփոխ կառուցվածք չէ (այդպիսին էր, ի հե-
ճուկս իմաստունների կռահումների, անտիկ դարաշրջանի
նրա իդեալը), այլ ավելի շուտ՝ ինչ-որ փորձ, մարդն այլ բան չէ,
բան նեղ, փտանգավոր կամբջով²⁰ բնության և ոգու միջև ան-
ցում: Դեպի ոգին, դեպի Աստված ձգում է նրա սրբազան կող-
մը, ես՝ դեպի մայր բնությունը՝ խորագույն բնագոյը. այս երկու
ուժերի միջակայքում՝ վախի ու տազնապի մեջ, տարուրերվում
է նրա կյանքը: Այն, ինչ մարդիկ յուրաքանչյուր տվյալ պահի
ներդնում են «մարդ» հասկացության մեջ, մշտապես միայն

անցողիկ, քաղթենիական պայմանավորվածություն է: Այս
պայմանականությունը մերժում և դատապարտում է մի շարք
առանձնապես կոպիտ բնագոյներ, պահանջում է որոշակի զի-
տակցականություն, որոշակի բարեկրթություն և կենդանական
սկզբի հաղթահարում, նա ոչ միայն թույլատրում է, այլև փոք-
րաչափ քանակի ոգին հայտարարում է անհրաժեշտ: Այդ
պայմանականության «մարդը», ինչպես և յուրաքանչյուր
քաղթենու իդեալ, համաձայնություն է, վեհերոտ, պարզունակ,
խորամանկ փորձ՝ խաբելու, մի կողմից՝ չար նախամորթ՝
բնությանը, մյուս կողմից՝ տաղտկայի նախահորթ՝ ոգուն, ի-
րենց տարարյուն պահանջների համար և ապրելու նրանց
գաղջ միջակայքում: Այդ պատճառով էլ քաղթենին թույլատ-
րում է և համբերում այն, ինչ նա անվանում է «անձնավորու-
թյուն», քայց միաժամանակ անձնավորությանը հանձնում է մո-
լորի՝ «պետության» տրամադրությանը, և մշտապես միմյանց
դեմ դուրս բերում երկուսին: Այդ պատճառով էլ քաղթենին հե-
րեափկոսի պես այրում, հանցագործի պես կախում է նրան, ում
վաղը չէ մյուս օրը կանգնեցնելու է հուշարձաններ:

Որ «մարդը» ոչ թե այլևս արդեն արարված ինչ-որ գոյու-
թյուն է, այլ ոգու պահանջ, հեռավոր, որքան ցանկալի, նույն-
բան և սարսափազդու հնարավորություն, և որ դեպի նա տա-
նող ճանապարհով շատ դանդաղ, փոքրաչափ քայլերով, ա-
հավոր տառապանքների ու ոգևորությունների գնով, մշտապես
ընթանում են հենց այն հազվագյուտ անհատները, որոնց այ-
սօր սպասում է կառավարանը, վաղը՝ հուշարձանը: Այս
զգացումն ապրում է նաև Տափաստանի գայլի մեջ: Բայց այն,
ինչ նա, ի հեճուկս իր «գայլի», իր մեջ անվանում է «մարդ», մե-
ծամասամբ այլ բան չէ, բան հենց այդ քաղթենիական պայ-
մանականության mediokre՝ «մարդը»: Հարրին բավականին
լավ հասկանում է, որ գոյություն ունի դեպի ճշմարիտ մարդը
տանող ճանապարհի, ժամանակ առ ժամանակ նույնիսկ քայ-
լում է այդ ճանապարհով՝ առաջ ընթանալով աննշան, վարա-
նոտ քայլերով՝ դրա համար վճարելով ծանր տառապանքով,
հիվանդագին մենակությամբ: Մակայն այդ ամենավերին պա-
հանջներին, այդ անաղարտ, ոգու կողմից փնտրված մարդ-
կայնացմանը կատարելապես հակվելուց և դրան ձգտելուց,

* Mediokre - միջին (լատ.):

դեպի անմահացում տանող միակ նեղ ճանապարհով քայլելուց նա, այնուամենայնիվ, իր հոգու խորքում երկնչում է: Նա հստակորեն զգում է, դա տանելու է ավելի մեծ տառապանքների՝ օրենքից դուրս հայտարարվելուն, վերջին գրկանքների, գուցե՝ կատափնարան: Եվ որքան էլ գայթակղիչ է անմահությունն այդ ճանապարհի վերջում, նա չի կամենում բոլոր այդ տառապանքներով տառապել, այդ բոլոր մահերով մեռնել: Թեև մարդկայնացումը, իբրև նպատակ, նրան հասկանալի է ավելի, քան քաղքենումն, բայց նա փակում է աչքերը և կարծեր չզիտի, որ իր «ես»-ից հուսահատորեն կախվելը, հուսահատորեն կյանքից կառչելը դեպի հավերժական մահ տանող ամենավտան ճանապարհն է, մինչդեռ մեռնել կարողանալը, կադապարը մի կողմ նետելը, հանուն փոփոխությունների «ես»-ը գոհաբերելը տանում են դեպի անմահություն: Երբ նա աստվածացնում է անմահների շարքում գտնվող իր սիրելիներին, օրինակ՝ Մոցարտին, ապա վերջինիս, ընդհանուր առմամբ, նայում է դեռ քաղքենու աչքերով, և իսկական դպրոցական ուսուցչի նման հակված է նրա կատարելությունը բացատրել սուկ նրա մասնագիտական բարձր օժտվածությամբ, այլ ոչ թե անձնվիրումի վեհությամբ, տառապելու պատրաստակամությամբ, քաղքենիական խղեալի հանդեպ նրա անտարբերությամբ: Ծայրաստիճան մենակության ընդունակությամբ, ինչը նոսրացնում, ինչը տիեզերքի սառցային երևի է վերածում ցանկացած քաղքենիական մթնոլորտ նրա շուրջը, ով տառապում է և դառնում մարդ, այն մենակության պատրաստակամությամբ, որ շնորհում է Գեթսեմանի այգին²¹:

Եվ այդուհանդերձ, մեր Տափաստանի գայլն իր մեջ բացահայտեց ֆաուստյան երկատվածությունը, գաավ, որ իր կյանքի միասնության հետևում բոլորովին էլ կանգնած չէ իր հոգու միասնությունը, այլ որ ինքը, լավագույն դեպքում, ընդամենը ճանապարհին է, երկարատև ուխտագնացության մեջ՝ ներդաշնակության այդ իդեալին հասնելու համար: Նա կամ ցանկանում է իր մեջ հաղթահարել գայլին և ամբողջովին դառնալ մարդ, կամ հրաժարվել մարդուց և գոնև իբրև գայլ՝ ապրել ամբողջական, չերկատված կյանքով: Հավանաբար երբեք, ինչպես հարկն է, նա չի հետևել իսկական գայլի, այդ դեպքում, գուցե, կտեսներ, որ կենդանիները նույնպես չունեն ամբողջական հոգի, որ նրանց մարմնի զեղևիկ, ձիգ ձևերի տակ ապ-

րում է ձգտումների և վիճակների բազմազանություն, որ գայլը նույնպես իր ներսում ունի վիճեր, որ գայլը նույնպես տառապում է: Ոչ, «Ես՝ դեպի բնությունը» ասելով՝ մարդը մշտապես քայլում է մի ճանապարհով, որ յի է տառապանքով ու հուսահատությամբ: Հարդիին այլևս երբեք չի հաջողվի դառնալ ամբողջական գայլ, և եթե անգամ դառնար, ապա կտեսներ, որ գայլը նույնպես ինչ-որ պարզ ու նախնական գոյություն չէ, այլ արդեն իսկ շատ բազմազան ու բարդ: Գայլը նույնպես իր գայլային կրծքի տակ կրում է երկու և ավելի հոգի, և ով տենչում է գայլ լինել, մոռացկոտ է այն տղամարդու պես, որ կրգում է. «Երանությունը տրված է լոկ մանուկներին»²²: Համակրելի, սակայն սենսիմենտալ տղամարդը, որը երգում է մանուկների երանության մասին, նույնպես կամենում է վերադառնալ բնությանը, անմեղությանը, նախնական ակունքներին՝ բոլորովին մոռանալով, որ մանուկները նույնպես լիովին երջանիկ չեն, որ նրանք ընդունակ են շատ հակասությունների, շատ երկվությունների, ամեն տեսակի տառապանքների:

Ընդհանրապես, ճանապարհ ես՝ ոչ դեպի գայլը, ոչ դեպի մանուկը, ընդհանրապես, չկա: Իրերի սկզբում չկա անմեղություն, չկա պարզություն: Արարված ամեն ինչ, տեսքով նույնիսկ ամենաանմեղը, արդեն իսկ մեղսավոր է, արդեն իսկ բազմաձև է, նա նետված է կազմավորման անմարտը հասքի՝ մեջ և այլևս երբեք, այլևս երբեք չի կարող լողալ դեպի ես՝ հոսանքին հակառակ: Դեպի անմեղություն, դեպի ոչ արարչություն, դեպի Աստված տանող ճանապարհը տանում է ոչ թե դեպի ես, այլ առաջ, ոչ թե դեպի գայլը կամ մանուկը, այլ դեպի ավելի մեծ մեղքը, ավելի խոր մարդկայնացումը: Եվ քեզ, խեղճ Հարդի, լրջորեն չի օգնի նաև ինքնասպանությունը, դու չես կարող խուսափել մարդկայնացման երկարատև, դժվարին ու տաժանակիր ճանապարհից, դու դեռ ստիպված կլինես ամեն կերպ բազմապատկել քո երկատվածությունը, ամեն կերպ բարդացնել քո բարդությունը: Փոխանակ նեղացնելու քո աշխարհը, պարզեցնելու քո հոգին, դու ստիպված կլինես տանջալիորեն լայնացնել, ավելի ու ավելի բացահայտել այն աշխարհի համար և ապա նրա մեջ առնել ողջ աշխարհը, որպեսզի օրերից մի օր գուցե հասնես ավարտին և անդորրին: Այդ ճանապարհով է քայլել Բուդդան, դրանով են քայլել բոլոր մեծ մարդիկ, գիտակցաբար, թե անգիտակցաբար՝ ով ինչպես կարողացել է

ընթանալ: Յանկացած ծնունդ նշանակում է առանձնացում համաշխարհից, նշանակում է սահմանափակում, մեկուսացում Աստծուց, տանջալից գոյավորում վերատին: Վերադառնալ համաշխարհին, հրաժարվել տանջալից մեկուսացումից, դառնալ Աստված՝ նշանակում է սեփական հոգին այնպես լայնացնել, որ նա կրկին կարողանա ընդգրկել համաշխարհը:

Այս դեպքում խոսքն այն մարդու մասին չէ, որին ի նկատի ունի դպրոցը, տնտեսությունը, վիճակագրությունը, այն մարդու մասին չէ, որը միլիոններով քայլում է փողոցներում և որոնց մասին կարելի է ասել նույնը, ինչ ավագահատիկների՝ ծովափին կամ այերախության ջրացայտերում. մեկ միլիոն ավելի կամ պակաս՝ կարևոր չէ, դրանք ընդամենը նյութ են և ոչ ավելին: Ոչ, մենք այստեղ խոսում ենք մարդու մասին՝ վերին իմաստով, մարդկայնացման երկար ճանապարհի նպատակի մասին, արքայատիպ մարդու մասին, անմահների մասին: Հանճարն այդքան հազվադեպ չէ, որքան մեզ թվում է հաճախ, անշուշտ, նաև ոչ այնքան հաճախադեպ, ինչպես համարում են զրականության պատմաբանները, պատմագիրները և հատկապես՝ թերթերը: Տափաստանի գայլը՝ Հարրին, մեր կարծիքով, բավականին հանճարեղ է, որպեսզի հանդգնի մարդկայնացման փորձին դիմելու՝ փոխանակ ամեն մի դժվարության դեպքում բողոքելով՝ մեղքը զցի իր հիմար տափաստանի գայլի վրա:

Եթե նման հնարավորություն ունեցող մարդիկ հույսը դնում են տափաստանի գայլի և «այս, երկու հոգի» արտահայտության վրա, ապա դա նույնքան զարմանալի և տխուր է, որքան այն, որ նրանք հաճախ այդքան վեհերոս սեր են տաժում քաղերևիության հանդեպ: Մարդը, որն ընդունակ է հասկանալ Բուդդային, պատկերացումներ ունի երկնքի և մարդկային հոգու անդունդների մասին, պետք չէ, որ ապրի մի աշխարհում, որտեղ թագավորում է common sense-ն, ժողովրդավարությունը և քաղերևիական կրթությունը: Նա այնտեղ ապրում է միայն վախկոտությունից, և երբ նրան ճնշում են այդ աշխարհի չափերը, երբ նեղիկ, քաղերևիական սենյակը նրան դարձնում է ավելի ու ավելի նեղ, նա ամեն ինչում մեղադրում է «գայլին» և չի ուզում տեսնել, որ գայլը երբեմն իր լավագույն մասն է: Վայրի ամեն բան իր մեջ նա անվանում է գայլ և դա համարում է չար, վտանգավոր, քաղերևիական տեսակետից՝ սար-

սափելի բան, ու թեև իրեն զգում է իրեն արվեստագետ, թեև համոզված է իր զգացմունքների նրբությանը, ի վիճակի չէ տեսնել, որ գայլից բացի, գայլի ետևում իր մեջ ապրում է ուրիշ շատ բան, և բոլորը չէ, որ գայլ են, այսինքն՝ այնտեղ ապրում են նաև աղվես, հրեշ, վագր, կապիկ և դրախտային թռչուն: Եվ որ այդ ողջ աշխարհը՝ հաճելի և սարսափազդու, մեծ և փոքր, ուժեղ և թույլ արարածների այդ դրախտային այգին, նույն կերպ ճնշված ու շղթայված է գայլի մասին հեքիաթով, ինչպես որ նրա՝ Հարրիի մեջ է ճնշված. քաղերևու՝ կեղծ մարդու կողմից շղթայված է իսկական մարդը:

Պատկերացրեք ձեզ համար այգի, որտեղ կան հարյուրավոր տեսակի ծառեր, հազարավոր տեսակի ծաղիկներ, մրգերի, խոտերի հարյուրավոր տեսակներ: Եթե այդ այգու տերն անգիտակ լինի բուսաբանական զանազանություններին, բացի «ուտելին» և «մոլայտոր» զանազաներուց, ապա այգու ինը տասներորդ մասից նա ոչինչ չի հասկանա, արմատախիլ կանի ամենակախարդական ծաղիկները, կկտրի ամենաազնիվ ծառատեսակները կամ կատի դրանք ու ծուռ կնայի դրանց: Այդպես է վարվում և Տափաստանի գայլը իր հոգու հազարավոր ծաղիկների հետ: Ինչ չի համընկնում «մարդ» կամ «գայլ» անվանմանը, Հարրին դա պարզապես չի տեսնում: Եվ ի՞նչ միայն չի վերագրում «մարդուն»: Ամենայն վեհերոսություն, ամենայն կապկայնություն, ամենայն մանրախնդրություն ու հիմարություն, բանի որ դրանք գայլային չեն, վերագրում է «մարդուն», իսկ ամենայն հզորություն և ազնվականություն վերագրում է իր գայլային սկզբին միայն այն պատճառով, որ ինքը դեռ չի դարձել իր տերը:

Մենք հրաժեշտ ենք տալիս Հարրիին, մենք բողոքում ենք, որ նա իր ճանապարհը գնա մենակ: Եթե նա արդեն անմահների հետ լիներ, եթե լիներ այնտեղ, դեպի ուր, թվում է, տանում է նրա դժվարին ճանապարհը, որքան զարմացած կնայեր այս շրջադարձերին, իր ճանապարհի այս անվճռական, այս կատաղի գիզգզաներին, քաջալերանքով, կշտամբանքով, կարեկցանքով և ուրախությամբ ինչպես կժպտար այդ Տափաստանի գայլին:

Երբ ընթերցեցի, վերջացրի գրքույկը, հիշեցի, որ տարիներ առաջ՝ մի անգամ գիշերը, գրել եմ տարօրինակ մի բանաս-

տեղծություն, որտեղ խոսվում է հենց Տափաստանի գայլի մասին: Թղթերով ծանրաբեռ իմ գրասեղանի վրա փնտրեցի, գտա այն և կարդացի:

Տափաստանի գայլս՝ վազում եմ տանջահար²³,
Երկիրն է քաղվել խոր ձյունների տակ,
Ազոավն է բռնում տանձենուց, ահա,
Բայց ո՞ր եմ կորել եղնիկ, նապաստակ:
Միրահարվել եմ այնպես եղնիկին,
Ի՞նչ կա աշխարհում համեղ ավելի,
Իմ երախի մեջ նրան կառնելի,
Թե հանդիպելի ես գոնե մեկին:
Եվ կլինեի ես բարի, անշուշտ,
Ազդրը ճանկած տենչանքով համակ՝
Կարմիր արյունը կխմեի կուշտ,
Որ գիշերը ողջ ոռնայի մենակ:
Կգոհանայի և նապաստակով,
Գիշերն համեղ է նա էլ անսահման,
Ո՞նց քաղցրացնեմ իմ կյանքը, ինչո՞ւ՞՞,
Ավաղ, փակվել է իմ դեմ ամեն բան:
Իմ մորթու վրա՝ մազս ճերմակել,
Աչքերս արդեն հստակ չեն տեսնում,
Տարիներ առաջ կորցրի կնոջս էլ,
Հիմա վազում եմ, եղնիկ երազում:
Եվ նապաստակ եմ հիմա երազում,
Քանու ոռնոցն եմ գիշերով լսում,
Չյունով հով անում ներսիս կրակին,
Սատանային եմ տանում իմ հոգին:

Եվ ահա ես ձեռքումս ունեի իմ երկու պատկերները, մեկը՝ ինքնանկար, հանգավոր բանաստեղծությամբ, տխուր ու տագնապով լեցուն, ինչպես ես ինքս, մյուսը՝ շատ սառը և, ինչպես երևում է, խիստ ճշմարտացի, զրված օտարի կողմից, որը նայում է ինձ կողքից, վերից վար և գիտի շատ բան, այդուհանդերձ՝ նաև քիչ, քան ես: Եվ այս երկու դիմանկարներն էլ միասին՝ իմ ծանրաթորով ու տխուր բանաստեղծությունը և անծանոթ մեկի իմաստուն ուսումնասիրությունը, ինձ վիշտ էին պատճառում, երկուսն էլ ճշմարտացի էին, երկուսն էլ առանց

գունագարդման պատկերում էին իմ անհույս գոյությունը, ցույց էին տալիս պարզորեն իմ վիճակի անտանելիությունն ու անկայունությունը: Այս Տափաստանի գայլը պետք է մեռներ: Նա պետք է իր սեփական ձեռքերով վերջ դներ իր ատելի գոյությանը կամ էլ պետք է ինքնարժեքավորման նորացման մահացու կրակի մեջ վերածուլվեր, պոկեր իր դիմակը և ընդառաջ գնար նորացող ես-ին: Այս, այդ ճանապարհն ինձ համար նոր չէր և անծանոթ, այն ինձ հայտնի էր, մի քանի անգամ արդեն ես անցել էի նրանով յուրաքանչյուր ամենաժանր հուսահատության օրերում: Յուրաքանչյուր անգամ այդ ծանր խառնաշփոթի ընթացքում ցարուցրիվ էր լինում իմ նախկին ես-ը, յուրաքանչյուր անգամ խորքային ուժերը ցնցում էին այն և ավերում, յուրաքանչյուր անգամ այդ ընթացքում իմ կյանքի որևէ լավ պահպանված և առանձնապես սիրելի հատված դավաճանում էր ինձ և կորստյան մատնվում: Մի անգամ ես կորցրեցի իմ քաղթենիական հռչակը՝ իմ ունեցվածքի հետ միասին, և ստիպված էի ընդունել, որ այլևս չեմ արժանանալու նրանց ուշադրությանը, ովքեր մինչ այդ իմ առաջ միշտ հանում էին զլխարկը: Մեկ այլ անգամ հանկարծակի փուլ եկավ իմ ընտանեկան կյանքը. հոգեկան հիվանդություն ստացած իմ կինը²⁴ ինձ դուրս բշեց տնից ու հաճելի կյանքից, սերը և վստահությունը հանկարծ փոխվեցին ատելության և մահացու թշնամանքի, հարևաններն իմ ետևից նայում էին խղճահարությամբ և արհամարհանքով: Այդ ժամանակ սկիզբ առավ իմ մենակությունը: Իսկ մի քանի տարի անց, մի քանի ծանր, դառնաղի տարիներ անց, երբ լիակատար մենակության մեջ, դաժան ինքնակարգապահության շնորհիվ ստեղծեցի իմ նոր՝ ասկետիկ-հոգևոր կյանքը և իդեալը՝ նվիրվելով մտածողության վերացական վարժություններին և խստորեն կանոնարկված կենտրոնացման, վերստին հասա որոշակի խաղաղության ու բարձունքի: Կյանքի այս ձևը ես փլուզվեց հանկարծ՝ կորցնելով իր ազնիվ, բարձր իմաստը, աշխարհով մեկ վայրի, տենդագին ճանապարհորդություններում ես կրկին ելք էի որդնում, կուտակվում էին նորանոր տառապանքներ ու նոր մեղքեր: Եվ յուրաքանչյուր անգամ դիմակը պոկելու, իդեալի փլուզվելու այս իրադարձություններին նախորդում էին այն նույն սարսափելի դատարկությունն ու անդորրը, այն նույն մահացու կաշկանդվածությունը, մեկուսացումը և օտարացու-



մը, հուսահատության և անտարբերության այն նույն դժոխս-
յին անապատը, որոնց միջով ես անցնում եմ հիմա:

Իմ կյանքի այդպիսի յուրաքանչյուր ցնցման ժամանակ,
վերջիվերջո, ես ինչ-որ բան նաև ձեռք էի բերում, դա անժխան-
լի էր, դառնում էի ավելի ազատ, հոգով ավելի հարուստ, խոր,
բայց և ավելի ու ավելի միայնակ, անհասկանալի, սառը: Քաղ-
քենու նկատառումով իմ կյանքը, ցնցումից ցնցում, ներկայաց-
նում էր մշտական անկում, որ գնալով ավելի էր մեծացնում
կանոնավոր, թույլատրելի և առողջ կյանքից ունեցած տարբե-
րությունը: Տարիներ շարունակ ես չունեի ոչ մի գրադմուցք, ըն-
տանիք, հայրենիք, դորս էի հասարակական բոլոր խավերից,
միայնակ էի, չսիրված ոչ մեկից, շատերի մեջ կասկածներ հա-
րուցող՝ հասարակական կարծիքի, հասարակական բարոյա-
կանության հետ մշտապես գտնվելով դաժան հակադրության
մեջ ու թեև դեռ ապրելով քաղքենիական միջավայրում՝ իմ բո-
լոր մտքերով ու զգացումներով ես օտար էի այդ աշխարհին:
Կրոնը, հայրենիքը, ընտանիքը, պետությունն ինձ համար
կորցրել էին իրենց արժեքը և ոչ մի նշանակություն չունեին,
գիտության, արվեստների, արհեստակցական խմբերի փառա-
սիրությունը առաջ էին բերում իմ զգվանքը, իմ հայացքները,
իմ ճաշակը, իմ ամբողջ մտածողությունը, որոնցով մի ժամա-
նակ, իբրև ընդունակ և սիրված մարդ, ես փայլել էի, այժմ
մատնվել էին անուշադրության, վայրիացել, մարդկանց հա-
մար դարձել կասկածելի: Եթե այս տանջալից փոփոխություն-
ների ընթացքում ես ձեռք էի բերում անտեսանելի և անկշռելի
ինչ-որ բան, բայց դրա համար վճարում էի շատ թանկ, ու ա-
մեն անգամ իմ կյանքը դառնում էր ավելի ծանր, ավելի դա-
ժան, ավելի միայնակ ու ավելի վտանգավոր: Իսկ եթե ուզում
եք ճշմարիտն իմանալ, ես ոչ մի հիմք չունեի ցանկանալու շա-
րունակությունն այն ճանապարհի, որն ինձ մշտապես առաջ-
նորդում էր օդային տարածքներ, նման այն ծխին, որ կա Նից-
շեի աշնանային երգում²⁵:

Անշուշտ, ինձ ծանոթ էին այդ զգացումները, այդ փոփո-
խությունները, որ ճակատագիրը սահմանում է իր դժվար, իմ
ամենամուտք երեխաների համար, շատ լավ ծանոթ էին դրանք
ինձ: Ես դրանց ծանոթ էի, ինչպես պատվախնդիր, սակայն
անհաջողակ որսորդն է ճանաչում որսի բոլոր փուլերը, ինչպես
փորձառու բորսային գործակալը կարող է իմանալ չարաշա-

հուքյան, օգուտ ստանալու, անվստահության, տատանումնե-
րի, սնանկացման բոլոր ձևերը: Մի՞թե ես պետք է նորից անց-
նեմ այս ամենի միջով: Այդ ամբողջ տառապանքի, այդ բոլոր
խելագար դժվարությունների, սեփական ես-ի անփոփոխակա-
նության և ոչնչականության այդ բոլոր վկայությունների, պար-
տությունից ծնվող այդ սարսափելի երկյուղի, մահվան վախի
միջով: Ավելի խելոք, ավելի պարզ չէ՞ր լինի այդքան տառա-
պանքները կանխելը, փախուստ տալը դրանցից: Իհարկե, դա
կլիներ թե ավելի խելոք, թե ավելի պարզ: Տափաստանի գայլի
մասին գրքույկում ինչ էլ որ ասվեր «ինքնասպանների» մասին,
այդուհանդերձ, ոչ ոք ինձ չէր կարող գրկել բավականությու-
նից՝ աժխագազի, ածելու կամ ատրճանակի օգնությամբ ա-
զատվելու կրկնությունից այն գործընթացների, որոնց դառնա-
ղի ցավը ես, իրոք, ճանաչել եմ բավականաչափ հաճախ և բա-
վականաչափ խորը: Ոչ, սատանան տանի, աշխարհում չկա
ոչ մի ուժ, որը կարողանա ստիպել ինձ մի անգամ ևս, հանդի-
պելով նրան, դողալ մահվան սարսուռով, մի անգամ ևս վե-
րածնվել և վերամարմնավորվել, ընդ որում՝ ոչ թե այն նպա-
տակով, որպեսզի վերջապես ձեռք բերեմ հանգիստ և խաղա-
ղություն, այլ մի նոր ինքնասպանություն, նոր վերակերտում:
Ինքնասպանությունը զուցեև հիմար, փոքրոգի և ստոր բան է,
զուցե անփառունակ և ամոթալի ելք է, սակայն տառապանքի
այս ջրադացից յուրաքանչյուր ելք, անգամ ամենամոթալին,
ցանկալի է, այս դեպքում այլևս հարկ չկար հերոսականության
և մեծահոգության ներկայացում տալու, այստեղ ես կանգնում
էի սովորական ընտրության առաջ՝ փոքր, անցողիկ ցա՞վ, թե՞
մտքից դուրս դաժան և անվախճան տառապանք: Իմ այդքան
դժվարին, այդքան խելագար կյանքում բավականին հաճախ
ես եղել էի մեծահոգի Դոն Կիխոտ, պատիվը նախընտրել էի
հարմարավետությունից, հերոսականությունը՝ բանականու-
թյունից: Բավական է, և վերջ այլևս դրան:

Լուսաբացն արդեն հորանցում էր պատուհանից՝ ձմեռվա
անձրևային օրվա կապարե, անիծյալ առավոտը, երբ վերջա-
պես պառկեցի: Ես անկողին մտա՝ հետս վերցնելով իմ վճիռը:
Բայց քուն մտնելու ակնթարթին, գիտակցության վերջին սահ-
մանի վրա, աչքերիս առաջ վայրկենապես փայլատակեց Տա-
փաստանի գայլի մասին գրքույկի այն հիշարժան տեղը, որ-
տեղ խոսք է գնում «անմահների» մասին, և ես աղոտ կերպով

հիշեցի, որ ես ոչ քիչ անգամներ և անգամ բողոքովին վերջերս ինձ այնքան մոտ էի զգացել անմահներին, ինչ երաժշտության մի տակտի մեջ կարողացել էի հասկանալ անմահների սառը, պայծառ, դաժանորեն զվարթ ողջ իմաստությունը: Այն հանկարծ հայտնվեց, փայլատակեց, հանգավ և ծանր, ինչպես լեռ, քուն մտավ ճակատիս վրա:

Կեսօրին մոտ արթնանալով՝ անմիջապես զգացի իրավիճակի պարզությունը, գրքույկն իմ բանաստեղծության հետ զիշերասեղանի վրա էր, և իմ վճիռը, որ հասունացել և ամբացել էր քնիս ընթացքում, իմ կյանքի վերջին խառնաշփոթից ինձ էր նայում մտերիմ-սառը հայացքով: Շտապել պետք չէր, մահվան իմ վճիռը մի ժամվա տրամադրության արդյունք չէր, դա արդեն հասուն, ամուր պտուղ էր, որ այդպիսին էր դարձել դանդաղ աճելով ու ծանրանալով՝ պատրաստ վայր ընկնելու ճակատագրի առաջին իսկ քամու հարվածից, որն առայժմ միայն օրորում էր այն:

Ճանապարհորդական իմ դեղարկղի մեջ ունեի ցավագրկող մի գերազանց միջոց՝ օպիումի ուժեղ պատրաստուկ, որի հաճույքը միայն շատ հազվադեպ էր ինձ թույլ տալիս և հաճախ ամիսներով հեռու էի մնում, սուր, բթացնող այս դեղն ընդունում էի միայն անտանելի ֆիզիկական ցավերի ժամանակ: Ինքնասպանության համար, ցավոք, անպետք էր, շատ տարիներ առաջ այն արդեն փորձել էի: Մի պահի, երբ ինձ վերստին համակել էր հուսահատությունը, բավական մեծ քանակություն խմեցի դրանից, այնքան շատ, որ բավարար էր վեց մարդ սպանելու համար, բայց այն ինձ չսպանեց: Թեև քնեցի խոր քնով և մի քանի ժամ պառկեցի կատարյալ բքության մեջ, բայց հետո, ի խոր հիասթափություն ինձ, արթնացա ստամոքսիս ուժեղ կծկումներից, և ամբողջովին խելքի չգալով՝ ներսիս ողջ թույնը փսխեցի դուրս ու նորից քնեցի, որպեսզի վերջնականապես արթնանամ հաջորդ օրվա կեսօրին՝ զգվելիորեն լուրջ, այրվող, դատարկ ուղեղով և գրեթե գուրկ որևէ հիշողությունից: Որոշ ժամանակ տևած անքնությունից և ստամոքսի տհաճ ցավերից բացի թույնը, առհասարակ, ոչ մի ազդեցություն չբողեց:

Այսպիսով, այդ միջոցի գործածումը դառնում էր ավերող: Այդուհանդերձ, իմ վճիռն ես հետևյալ տեսքը տվեցի. եթե իմ գործերը գնան այնպես, որ ես ստիպված լինեմ դիմելու օպիում-

մին, ուրեմն՝ կարող եմ այդ կարճաժամկետ փրկությունը փոխարինել երկարաժամկետով՝ մահվամբ, ընդ որում՝ սառույց, հուսալի մահվամբ, զնդակից կամ աժեղաց: Դրանով իրավիճակը պարզվեց: Իմ հիսնամյակին սպասելը, ինչպես խորհուրդ էր տվել Տափաստանի գայլի մասին գրքույկի սրամիտ դեղատոմսը, իմ կարծիքով, կտևեր շատ երկար, երկու տարի դեռ կար: Կարևոր չէր, մեկ տարի հետո, թե մեկ ամիս կամ արդեն վաղը՝ դարպասները բաց էին:

Չեմ կարող ասել, թե «վճիռը» արմատապես փոխեց իմ կյանքը: Նա ինձ մի փոքր ավելի անտարբեր դարձրեց դժվարությունների հանդեպ, մի փոքր ավելի անհոգ օպիումի և զինու գործածության մեջ, մի փոքր ավելի հետաքրքրասեր տանելիության սահմանի նկատմամբ, ահա և բողոք: Ավելի ուժեղ ազդեցին այդ երեկոյան մյուս տպավորությունները: Ժամանակ առ ժամանակ ես թերթում էի Տափաստանի գայլի մասին քննախտությունը, մեկ ինքնամոռացությամբ և երախտագիտությամբ՝ ասես ընդունելով, որ ինչ-որ անտեսանելի կախարդ իմաստությամբ ուղղություն է տալիս ճակատագրին, մեկ՝ քննախտության լրջության հանդեպ հեզմանքով ու արհամարհանքով, քանի որ ինձ թվում էր, թե գիրքը չի հասկանում իմ կյանքի առանձնահատուկ լարվածությունն ու տրամադրությունը: Տափաստանի գայլերի և ինքնասպանների մասին այնտեղ ասվածը, հնարավոր է, ամբողջությամբ խելացի է և հոյակապ, բայց դա վերաբերում էր տեսակին, տիպին և շատ խելացի վերացարկում էր, հակառակի պես իմ անձնավորությունը, իմ սեփական հոգին, իմ առանձնահատուկ, մեկ անգամ տրված անհատական ճակատագիրն այդպիսի կոպիտ ցանցերով, թվում է, անհնար էր որսալ:

Մնացյալ ամեն ինչից ավելի խոր իմ միտքը զբաղեցնում էր եկեղեցու պատի վրա երևացած զգայախաբությունը կամ տեսիլքը, պարող լուսատուների բազմախոստում հայտարարությունը, որը համապատասխանում էր գրքույկի ակնարկներին: Այնտեղ ինձ շատ բան էր խոստացվում, իմ հետաքրքրությունը շատ ուժեղ բորբոքեցին այն օտար աշխարհի ձայները, հաճախ ժամեր շարունակ խորատուգված՝ ես խորարդածում էի այդ մասին: Եվ այդ ժամանակ ինձ հետ ավելի պարզորոշ էր խոսում «Ոչ բողոքի համար» և «Միայն խելագարների համար»

խոսքերի նախազգուշացումը: Այսինքն՝ խելագարը և բոլորից շատ հեռացածը պետք է որ ես լինեի, եթե այն ձայները հասել են ինձ, եթե այն աշխարհները խոսում են ինձ հետ: Աստված իմ, մի՞թե ես վաղուց ի վեր չեմ հեռացել բոլորի կյանքից, կանոնավոր մարդկանց կենցաղից ու մտածողությունից, մի՞թե չեմ առանձնացել նրանցից, մի՞թե չեմ խելագարվել: Այդուամենայնիվ, հոգուս խորքում շատ լավ հասկանում էի խելագարվելու այդ պահանջը, բանականությունը, կաշկանդվածությունը, քաղքենիական պայմանականությունները մի կողմ դնելու հորդորները և օրենքներ չճանաչող հոգուն, երևակայության աշխարհին եռանդորեն տրվելը:

Մի օր, այն քանից հետո, երբ փողոցներում և հրապարակներում իզուր փնտրում էի պրակատով մարդուն և մի քանի անգամ անցել էի անտեսանելի դարպասներ ունեցող պատի մոտով, քաղաքի ս. Մարտին արվարձանում հանդիպեցի²⁶ քաղման քափորի: Մինչ ես դիտում էի դեմքերը հուղարկավորների, որ քայլում էին դագաղի ետևից, մտքովս անցավ. «Այս քաղաքում, այս աշխարհում որտե՞ղ է ապրում այն մարդը, որի մահն ինձ համար կորուստ կլիներ: Եվ որտե՞ղ է այն մարդը, որի համար իմ մահը ինչ-որ նշանակություն կունենար: Իհարկե, դա Երիկան էր, իմ սիրեցյալը, բայց երկար ժամանակ է, ինչ մենք ապրում էինք առանձին, տեսնվում էինք շատ հազվադեպ, առանց վիճարանելու, և հիմա ես չգիտեի, թե որտեղ է նա ապրում: Նա երբևէն գալիս էր ինձ մոտ կամ ես էի գնում նրա մոտ, և քանի որ երկուսս էլ մենակյաց ու դժվարահաճ մարդիկ էինք, ինչ-որ տեղ հոգով և հոգու հիվանդությամբ իրար հարազատ, ամեն ինչին հակառակ՝ մեր միջև ինչ-որ կապ մնում էր: Բայց արդյո՞ք ազատ շունչ չի քաշի նա և իրեն շատ թեթևացած չի՞ զգա, երբ լսի իմ մահվան լուրը: Ես դա չգիտեմ, ինչպես որ չգիտեմ նաև իմ զգացումների վստահելիության մասին: Պետք է ապրել կանոնավորության և հնարավորի պայմաններում, որպեսզի կարելի լինի ինչ-որ բան գիտենալ նման քաների մասին»:

Այդ ընթացքում, առաջնորդվելով ինչ-որ արամադրությամբ, ես միացա սգո քափորին և նրա հետևից քայլեցի դեպի գերեզմանատուն, որ արդիական էր, ցեմենտապատ, դիակիզարանով և ամեն տեսակի հարմարություններով: Բայց մեր հանգուցյալին չայրեցին, այլ դագաղը ցած դրեցին անշուք

փռսի կողքին, ես սկսեցի հետևել քահանայի և մյուս գիշակերների՝ թաղման բյուրոյի աշխատակիցների գործողություններին, որոնք աշխատում էին ստեղծել բարձր հանդիսավորության և սգի տպավորություն, սակայն անխառն քատերականության, շփոթմունքի և կեղծիքի հեռևանքով ջանք էին քափում չափից դուրս և ծիծաղ էին հարուցում: Ես տեսնում էի, թե ինչպես էր սև համազգեստը թափահարվում նրանց հագին և թե ինչպես էին նրանք ձգտում հավարվածներին հաղորդել համապատասխան արամադրություն և ծնկի բերել մեծն մահվան առաջ: Դա իզուր աշխատանք էր, ոչ ոք չէր արտասվում, թվում էր, թե հանգուցյալը ոչ մեկին պետք չէ: Ոչ մեկն էլ համակված չէր բարեպաշտության զգացումներով, և երբ քահանան հավարվածներին դիմեց՝ իբրև «սիրելի հավատակից քրիստոնյաներ մեր», բոլոր այդ առևտրականների, հացբոլիների և նրանց կանանց գործարար դեմքերը լուռ, ջղածիզ լրջությամբ հակվեցին ցած՝ շփոթահար, շինծու, սուկ մեկ ցանկությամբ համակված, որ այս տիպի արարողությունը, որքան հնարավոր է՝ շուտ ավարտվի: Դե ինչ, այն ավարտվեց, առջևի կանգնած երկու հավատակից քրիստոնյաները սեղմեցին խոսողի ձեռքը, մոտակա սիգամարգի եզրաքարերի վրա մաքրեցին իրենց կոշիկները, որ պատվել էին խոնավ կավով, ինչի մեջ նրանք տեղավորել էին իրենց հանգուցյալին, նրանց դեմքերն արագորեն վերստին սովորական մարդկային տեսք ստացան, և հանկարծ նրանցից մեկն ինձ թվաց ծանոթ: Դա այն մարդն էր, ինչպես թվաց ինձ, որ այն ժամանակ պրակատ էր տանում և իմ ձեռքն էր խցկել գրքույկը:

Այն պահին, երբ ես հագիվ էի ճանաչել նրան, նա շքվեց, կռացավ, սկսեց զբաղվել իր սև անդրավարտիքով, որ խնամքով տքնել էր կոշիկների վրա և արագորեն հեռացավ՝ թատակին սեղմելով անձրևանոցը: Ես վազեցի նրա հետևից, կանգնեցի, խոնարհվեցի, բայց նա ինձ չճանաչեց:

— Այսօր երեկոյան ներկայացում չկա՞, — հարցրեցի ես և փորձեցի նրան աչքով անել, ինչպես անում են դավադրության մասնակիցները, երբ խոսում են իրենց գաղտնիքների մասին: Բայց այդպիսի դիմախաղերից վաղուց ի վեր ես էի վարժվել, ապրելու իմ կերպի մեջ ես մոտ էի, առհասարակ, լեզուն մոռանալուն, ինքս էլ զգացի, որ ինձ մոտ միայն հիմար ծամածռություն ստացվեց:

– Երեկոյան ներկայացո՞ւմ, – քրքմնջաց մարդը և օտարու-
ախ նայեց իմ դեմքին: – Բարեկամս, եթե նման բանի կարիք ու-
նեք, զնացեք «Ան արծիվ»²⁷:

Ես արդեն համարյա վտահ չէի, որ դա նա է: Հուսախար
քայլեցի առաջ, չիմանալով՝ ուր, ինձ համար չկար նպատակ,
չկային ձգտումներ, պարտականություններ: Կյանքը զգալիու-
թեն դառը համ ունեք, զգում էի, թե ինչպես է վաղուց ի վեր հա-
սունացող սրտխառնուքը հասնում իր զագաթնակետին, թե
ինչպես է կյանքն ինձ դուրս հրում և մի կողմ շարտում: Կա-
տաղած՝ քայլում էի գորշ քաղաքով, ամեն ինչից խոնավ հողի
և քաղման հոտ էի առնում: Ոչ, իմ քաղմանն այդ բվեճներից ոչ
մեկը՝ իր փարաջայով և հավատակից քրիստոնյայի իր բար-
քաշանքներով չպետք է կանգնած լինի: Այս, ո՞ր կարող էի
ուղղել իմ հայացքը, իմ մտքերը, ոչ մի կողմից ինձ չէր սպա-
սում ուրախությունը, ինձ ոչինչ չէր կանչում, չէր հրապուրում,
ամեն ինչից ծույլ մաշվածության, ծույլ կիսաբավարարվա-
ծության հոտ էր վչում, ամեն ինչ գառամած էր, քառամած,
գորշ, մեղկ, սպառված: Աստված իմ, ինչպե՞ս հնարավոր ե-
ղավ այս ամենը: Ինչպե՞ս հասա ես դրան, ես՝ ոգևորված պա-
տանիս, բանաստեղծս, մուսաների բարեկամս, աշխարհով
մեկ թափառելու սիրահարս, կրակոտ իդեալիստ: Ինչպե՞ս
կարողացան այդպես դանդաղորեն, այդպես գաղտագողի ինձ
մոռենալ սրանք, այս անշարժությունը, իմ և բոլորի հանդեպ
այս ատելությունը. բոլոր զգացումների այս քարացումը, այս
չար, խորագնա սրտնեղությունը, հուսահատության և հոգևոր
ամայության այս կեղտոտ դժոխքը:

Երբ անցնում էի գրադարանի կողքով, ինձ հանդիպեց մի
պրոֆեսոր, որի հետ նախկինում ժամանակ առ ժամանակ
գրուցում էի, այս քաղաքում վերջին անգամ զանվելուս օրերին
մի քանի անգամ նույնիսկ այցելեցի նրա բնակարան, որպես-
զի գրուցեմ հետը արևելյան դիցաբանության մասին, մի բնա-
զավառ, որով այն ժամանակ շատ էի գրավվում: Գիտնականը
գալիս էր ինձ ընդառաջ, խստաբարո էր և փոքր-ինչ կարճա-
տես, և ինձ ճանաչեց միայն այն ժամանակ, երբ արդեն մտա-
ծում էի կողքով հենց այնպես անցնելու մասին: Նա մեծ
սրտաբացությամբ նետվեց դեպի ինձ, և ես, գտնվելով այդպի-
սի խղճալի վիճակում, շնորհակալ էի նրան դրա համար: Նա
շատ ուրախ էր, աշխուժացած, հիշեցրեց ինձ մեր նախկին

գրույցներից ինչ-ինչ մանրամասնություններ, հավատացրեց,
որ շատ և շատ բաների համար երախտապարտ է ինձնից
ստացած ոգևորությանը և որ հաճախ է մտածել իմ մասին,
այն ժամանակներից հետո նա շատ հազվադեպ է ունեցել
այդքան հետաքրքիր և օգտակար գրույցներ գործընկերների
հետ: Նա հարցրեց, թե որքան ժամանակ է, ինչ քաղաքում եմ
(ես խաբեցի՝ մի քանի օր) և ինչու իրեն չեմ այցելել: Ես նայում
էի այդ կարգին մարդու բարի, ուսյալ դեմքին, գտնում նրա
հետ հանդիպելը, առհասարակ, ծիծաղաշարժ, բայց իբրև
քաղցած գայլ, ընթռշխնում էի ջերմության փշրանքներ, մի
ունայ սեր, մի կտոր ճանաչում: Տափաստանի գայլ Հարրին
զգացված ժպտում էր՝ ցույց տալով ստամները, նրա չորացած
կոկորդն ի վար վագում էին բերանի ջրերը, սենտիմենտալիզմը
վերստին, հակառակ նրա կամքի, ծռում, խոնարհեցնում էր
նրա մեջքը: Այո, ես խաբում էի, թե եկել եմ այստեղ ոչ երկար
ժամանակով, ուսումնական գործերի բերումով, ինձ այնքան էլ
լավ չեմ զգում, այլապես բնականաբար կայցելեի նրան: Բայց
երբ նա սրտանց ինձ հրավիրեց հենց այս երեկոն անցկացնել
իր հետ, ես այն ընդունեցի շնորհակալությամբ, խնդրեցի հա-
ղորդել իմ ողջույնը իր կնոջը, և այն քանից, որ այդքան շատ
խոսեցի և ուրախացա այդ օրը, այտերս ցավեցին, քանզի սո-
վոր չէին նման լարումների: Ու մինչ ես՝ Հարրի Հայերս, կանգ-
նած էի փողոցում՝ հանկարծակիի եկած ու սիրաշահված, քա-
ղաքավար ու ջանասեր, ժպտալով այս սիրալիր մարդուն և
նայելով նրա բարի, կարճատես աչքերով դեմքին, մյուս Հար-
րին կանգնել էր կողքիս և քթի տակ ծիծաղում էր ու մտածում,
թե որքան տարօրինակ, որքան աղավաղված ու խաբուսիկ
զուգընկեր եմ ես, որ երկու լույս առաջ չարությունից առամ-
ներս էի կրճտացնում ողջ անիծյալ աշխարհի վրա, իսկ հիմա,
պատվարժան մի անձնավորության հենց առաջին կանչից,
հենց առաջին պարզունակ ողջույնից զգացվում եմ և խիստ
ոգևորված ասում այո, տալիս իմ համաձայնությունը և, ինչ-
պես խոճկոր, անձնատուր եմ լինում չնչին բարեհաճության,
հարգանքի և բարեկամության հաճույքին: Այդպես կանգնել
էին երկու Հարրիները, երկու ամենևին ոչ համակրելի կերպար-
ները սիրալիր պրոֆեսորի առաջ, ծաղրում էին միմյանց, ու-
սումնասիրում՝ քթերով իրար ոտքերի առաջ և, ինչպես միշտ
նման պարագաներում, վերստին հարց էին տալիս. արդյո՞ք

դա սովորական մարդկային հիմարություն է և թուլություն, այսինքն՝ մարդկային ընդհանրական արատ է, թե՛ այդ սենտիմենտալ եսասիրությունը, բնավորության այդ բացակայությունը, զգացմունքների այդ անհատականությունն ու երկատվածությունը սոսկ անհատական, Տափաստանի գայլին բնորոշ առանձնահատկություն է: Եթե այդ ստորությունը համամարդկային է, ինչ արած, այդ դեպքում աշխարհի հանդեպ իմ արհամարհանքը կարող էր փլվել նրա գլխին նոր թափով, եթե դա միմիայն իմ անձնական թուլությունն էր, ուրեմն՝ առիթ կտար ինքնարհամարհանքի խրախճանքի: |

Չույզ Հարրիների վեճի ընացքում պրոֆեսորը մատնվել էր մոռացության, հանկարծ նա վերստին դարձավ ձանձրալի, և ես շտապեցի հեռանալ նրանից: Երկար նայում էի նրա հետևից և տեսնում, թե ինչպես է հեռանում մերկ ծառուղիով՝ հավատացյալի, իդեալիստի փոքր-ինչ ծիծաղելի ու բարեեղով ընթացքով: Իմ ներսում բորբոքվում էր կռիվ, և մինչ ես մեքենայարար բացում և փակում էի սառչող մատներս, դիմադրելով քաբուն այրող հողատապին, ստիպված էի ինքս ինձ խստովանել, որ հիմար դրության մեջ եմ, որ ընդունեցի երեկոյան ութն անց կեսին ընթրիքի հրավերը՝ մտնելով ուրիշի ընտանեկան երջանկությունը զննելու, գիտական գազրախոսություններ անելու և քաղաքավարական պարտականություններ ցուցադրելու ծանրության տակ: Չայրացած ուղևորվեցի տուն, իրար խառնեցի կոնյակն ու ջուրը, դրա վրա կուլ տվեցի հողատապիս դեղահաբերը, պատկեցի բազմոցին և փորձեցի կարդալ: Երբ վերջապես ինձ հաջողվեց մի քանի էջ կարդալ «Սոֆիայի ճանապարհորդությունը Մեմելից Մաքսոնիա» գրքույկից, որ տասնութերորդ դարի անարժեք գրքերից ամենագմայելիին է, իմ մտքով վերստին անցավ հրավերը, և այն, որ ստիպված չեմ և ինձ անհրաժեշտ է հազնվել: Աստված գիտի, թե ինչի համար ես այդ հոգսը պատճառեցի ինձ: Դե ինչ, Հարրի, վեր կաց, գիրքդ մի կողմ դիր, օճառվիր, արյունոտվելու աստիճան քերիք կզակդ, հազնվիր և մտիր մարդկանց տրամադրության տակ: Եվ օճառվելով՝ ես մտածում էի գերեզմանատան կավահողի տհաճ փոսի մասին, որի մեջ այսօր պարաններով իջեցրել էին անձանոթ հանգուցյալին, և ձանձրացող քրիստոնյա եղբայրակիցների՝ քմծիծաղով ծամածոված դեմքերի մասին, և չկարողացա անգամ ծիծաղել այդ ամենի

վրա: Այնտեղ, այն կեղտոտ կավեղեն փոսի մոտ, ինչպես պատկերանում էր ինձ, քահանայի հիմարավուն խոսքերի ներքո, սգո մասնակիցների հիմարավուն, շինծու կերպարանքների ներկայությամբ, այդ բոլոր խաչերի և թիթեղյա ու մարմարյա տախտակների տխուր պատկերի առկայությամբ, այդ բոլոր արհեստական ծաղիկների միջավայրում, որ պատրաստված են ապակուց և մետաղալարից, ահա այդտեղ ավարտվում է ոչ միայն անձանոթը, այդտեղ, եթե ոչ վաղը, ապա վաղը չէ մյուս օրը ինքս նույնպես կավարտվեմ՝ թաղվելով հողի մեջ՝ սգո մասնակիցների շփոթության ու երեսպաշտության ներքո արվելով հող ու ցեխին, ոչ, այդպես կավարտվի ամեն բան, մեր բոլոր ձգտումները, մեր ողջ մշակույթը, մեր ողջ հավատը, կյանքի մեր ողջ ուրախությունն ու բերկրանքը, որ այդպես հիվանդ էր և շուտով թաղվելու է այնտեղ: Մի գերեզմանոց էր մեր մշակութային աշխարհը, այնտեղ Հիսուս Քրիստոսը և Սուկրատեսը, Մոցարտը և Հայդնը, Գանտեն և Գյոթեն սոսկ խունացած անուններ էին թիթեղյա ժանգոտված տախտակների վրա՝ շրջապատված շփոթահար ու երեսպաշտ սզացողներով, որ շատ բան կտային նրա համար, որպեսզի դեռ կարողանային հավատալ թիթեղյա տախտակներին, որ մի ժամանակ նրանց համար սրբազան են եղել, որ շատ բան կտային նրա համար, որպեսզի կարողանային զոնել վշտի, հուսահատության ինչ-որ ազնիվ, լրջմիտ խոսք ասել այդ անցյալ կյանքի մասին և ոչ թե սոսկ շփոթահար քմծիծաղով կանգնել գերեզմանի մոտ: Ես չարությունից կարեցի կզակիս այն տեղը, որը միշտ կարում եմ, վերքը դաղեցի մի քանի լոպե, այդուհանդերձ, ստիպված էի փոխել հենց նոր հագած թարմ օձիքս, թեև բոլորովին չէի հասկանում, թե ինչի համար եմ անում այդ բոլորը, քանզի ամենափոքր ուրախություն իսկ չէի զգում հրավերքի գնալու համար: Մակայն Հարրիի մի ինչ-որ մասը նորից ներկայացում էր խաղում, նրան անվանում էր պատվարժան մարդ, երագում էր մի փոքր մարդկային միջավայր, շաղակրատանք ու շփում, հիշում էր պրոֆեսորի գեղեցիկ կնոջը, սրտաբաց հյուրընկալողների հարկի տակ երեկո անցկացնելու միտքը համարում էր, հիմնականում, շատ ոգևորիչ, նա օգնեց, որպեսզի կզակիս փակցնեմ անզլիական սպեղանի, օգնեց ինձ հազնվել և կապել պատշաճ փողկապ ու նրբորեն ինձ համոզում էր ետ կանգնել սեփական ցանկությունից և տանը չմնալ:

Միաժամանակ մտածում էի. այնպես, ինչպես հիմա ես եմ հազնվում ու դուրս գալիս, զնում եմ պրոֆեսորի մոտ, գրուցում նրա հետ ավելի կամ պակաս շինծու քաղաքավարությամբ, ըստ էության, չկամենալով այդ բոլորը, նույն այդ կերպ է վարվում, ապրում ու գործում մարդկանց մեծ մասն ամեն օր, ամեն ժամ, պարտադրաբար և չկամենալով այդ բանը՝ նրանք կատարում են այցելություններ, վարում են գրույցներ, անցկացնում են աշխատանքային ժամերը, ամեն ինչ պարտադրաբար, մեքենայորեն, անկամ, այդ ամենը կարող էր կատարվել և մեքենաների կողմից կամ ընդհանրապես չկատարվել, և այս հավերժորեն չընդհատվող մեխանիկան այն է, ինչը խանգարում է մարդկանց քննադատաբար նայել, ինչպես ես եմ նայում, սեփական կյանքին, սեփական հիմարությանը և դատարկությանը, ճանաչել սեփական ստոր կասկածամտությունն ու քննիծաղը և զգալ սեփական անհույս տխրությունն ու մերկությունը: Օ՛, և նրանք ճշմարիտ են, անսահման ճշմարիտ են մարդիկ, որ այդպես են ապրում, որ խաղում են իրենց մանր խաղերը և վազ տալիս իրենց արժեքների հետևից, փոխանակ դիմադրելու այդ բթացնող մեխանիկային և հուսահատորեն նայելու դեպի դատարկությունը, ինչպես ես եմ անում՝ ճանապարհից շեղված: Երբ այս էջերում երբևէն արհամարհում եմ մարդկանց և ծաղրում, ապա թող ոչ մեկը մտքով չանցկացնի, որ նրանց վրա եմ ուզում զցել մեղքը, մեղադրել նրանց, ուրիշների վրա բարդել իմ անձնական դժբախտության պատասխանատվությունը: Բայց ես, ես, որ այդքան հեռուն եմ գնացել և կանգնած եմ կյանքի սահմանագծին, որտեղից այն կողմ այլևս անհատակ խավարն է, անիրավացի եմ վարվում և ստում եմ, երբ փորձում եմ ինքս իմ և մյուսների առաջ ձևացնել, թե իբր այդ մեխանիկան շարունակվում է ինձ համար նույնպես, իբր թե ես նույնպես դեռ պատկանում եմ այդ հրաշալի, մանկամիտ աշխարհի հավերժական խաղին:

Երեկոն, իսկապես, զարմանալի ընթացք էր ստանում: Իմ բարեկամի տան առաջ մի պահ կանգ առա և նայեցի վեր՝ նրա պատուհանին: Ահա այստեղ է ապրում այդ մարդը, մտածեցի ես, և տարեցտարի առաջ է տանում իր աշխատանքը, կարդում է և ծանոթագրում տեքստեր, փնտրում կապեր առաջափորասիական և հնդկական դիցաբանությունների միջև և գոհ է նրանով, որ հավատում է իր գործի արժեքին, նա հավատում է

գիտությանը, որի սպասավորն է, հավատում է մարդու զիսելիքի արժեքին, փաստերի ուժին, քանզի հավատում է առաջընթացին, զարգացմանը: Նա պատերազմ չի ապրել, ոչ էլ ժամանակակից մտածողության հիմքերի այն ցնցումը, որ առաջ բերեց Էյնշտեյնը (նրա կարծիքով՝ դա վերաբերում է միայն մաթեմատիկոսներին), նա չի տեսնում, թե ինչպես է իր շուրջը նախապատրաստվում նոր պատերազմ, նա հրեաներին և կոմունիստներին համարում է ատելության արժանի, նա բարի, անմիտ, բավարարված, իրեն կարգին պահող երեխա է, նրան կարելի է միայն նախանձել: Ես գոտեպնդվեցի և ներս մտա:

Ինձ դիմավորեց սպիտակ գոգնոց հագած սպասուհին, ինչոր մի նախազգացմամբ ես ճշգրտորեն մտապահեցի այն տեղը, ուր նա տարավ իմ գլխարկը և վերարկուն, ապա առաջնորդեց տաք, լուսավոր մի սենյակ, խնդրեց սպասել և փոխանակ աղոթք անելու կամ փաքր-ինչ ննջելու, ենթարկվելով ականա ինչ-որ մղման, ձեռքս առա առաջին պատահած առարկան, որ ընկավ աչքովս: Դա շրջանակի մեջ առնված փոքրաչափ նկար էր, դրված կլոր սեղանի վրա, թեք կանգնելու համար նա ուներ ամուր, ստվարաթղթե ռոնակ: Դա փորագրություն էր և ներկայացնում էր բանաստեղծ Գյոթեին, խտտաբար, հանճարեղորեն սանրված ծերունուն՝ գեղեցիկ գծված դեմքով, որի վրա ոչ հանրահայտ հրավառ աչքն էր բացակայում, ոչ պալատականությամբ թեթևակիորեն շղարշված ողբերգականության ու մեռնակության տրամադրությունը, որի վրա նկարիչը առանձնահատուկ ջանքեր էր թափել: Նրան հաջողվել էր այդ դիվային ծերունուն, առանց վնաս հասցնելու նրա խորությանը, հաղորդել պրոֆեսորական կամ նույնիսկ դերասանական հանգստության ու ազնվականության ինչ-որ արտահայտություն և նրանից, ընդհանուր առմամբ, դուրս բերել արդարև գեղեցկատես, ծեր մի պարոնի, որը կարող էր զարդարել ուզած բյուրգերական տուն: Այս նկարը, հավանաբար, ավելի վատը չէր, քան մմանատիպ մյուս նկարները, քան բոլոր այդ ընտիր-ընտիր փրկիչները, առաքյալները, հերոսական ոգու կտրիճները և պետական այրերը՝ պատրաստված ջանասեր արհեստավորների ձեռքերով, հավանաբար այն ինձ վրա ազդում էր սոսկ անսովոր վարպետությամբ:

Ինչպիսին էլ այն լիներ, ծեր Գյոթեի այդ մեծամիտ ու ինքնագոհ նկարը, ամեն դեպքում, ուղղակի ճշում էր իմ դեմքին

իրբև տեհաճ աններդաշնակություն, իսկ ես արդեն իսկ բավականաչափ զրգոված էի ու լցված, որ այստեղ իմ գտնվելը քյուրիմացություն է: Այստեղ իրենց տեղում էին գեղեցիկ ոճով արված արվեստի ականավոր դեմքերն ու ազգային արժեքները, բայց ոչ Տափաստանի գայլերը:

Եթե հիմա տանտերը ներս մտներ, հավանաբար, ինձ կհաջողվեր խոսք բացել ինչ-որ մի պատրվակով այստեղից ծլկելու մասին, բայց ներս մտավ նրա տիկինը, և ես ենթարկվեցի ճակատագրի քմահաճույթին, թեև նախագգում էի աղեսար: Մենք ողջունեցինք միմյանց, և առաջին աններդաշնակությանը հաջորդեցին նորերը: Տիկինն ինձ շնորհավորեց լավ տեսքիս համար, մինչդեռ ես լավ գիտեի, թե որքան եմ ծերացել մեր վերջին հանդիպումից հետո, արդեն իմ ձեռքերդմումի ժամանակ ցավով վերքիչեցի մատներիս անդուր հողատապը: Այո, իսկ հետո նա հարցրեց, թե ինչպես է զգում իմ սիրելի տիկինը, և ես ստիպված էի նրան հայտնել, որ նա լքել է ինձ, և մեր ընտանիքն այլևս գոյություն չունի: Մենք շատ ուրախացանք, երբ պրոֆեսորը ներս մտավ: Նա նույնպես սրտանց ողջունեց ինձ, և իրավիճակի կեղծությունն ու ծիծաղելիությունը շուտով ստացավ ամենակատարյալ արտահայտություն: Նրա ձեռքին թերթ կար, որի բաժանորդն էր ինքը, ռազմաշունչ, պատերազմ սանձազերծող կուսակցության պաշտոնաթերթը, և ձեռքս սեղմելուց հետո պրոֆեսորը ուշադրություն հրավիրեց թերթի վրա և պատմեց, որ այնտեղ հողված կա իմ մի ազգանվանակցի՝ հրապարակախոս Հալլերի մասին, որը պետք է որ սովորական մի ողորմելու ու անհայրենիք անարգի մեկը լինի, նա ձեռ է առել կայզերին և այն կարծիքը հայտնել, թե իր հայրենիքը պատերազմ սկսելու մեջ մեղավոր է նույնքան, որքան քչամական երկրները: Ահա թե ինչպիսի ստորն նա: Բայց այստեղ այդ ստահակի հախից եկել են, խմբագրությունն այդ վնասարարին խայտառակել է և ինչպես հարկն է, իր տեղը դրել: Բայց մենք անցանք այլ թեմայի, երբ նա տեսավ, որ այդ խնդիրն ինձ չի հետաքրքրում, և տանտերերից ոչ մեկի մտքով իսկ չէր անցնում, որ իրենց դեմ դիմաց կարող է նստած լինել այդ ստահակը, իսկ բանը հենց այդպես էլ կար, և ստահակը ես ինքս էի: Դե, ինչ կարիք կա, արդարև, աղմուկ անել և մարդկանց անհանգստություն պատճառել: Ինքս իմ մեջ ծիծաղեցի, կորցրեցի ամեն հույս, որ այս երկոյից որևէ բավական

նություն եմ ստանալու: Լավ հիշում եմ այդ պահը: Հենց այդ պահին, երբ պրոֆեսորը խոսում էր հայրենիքի դավաճան Հալլերի մասին, իմ ներսում քանձրանում էր հուսահատության և ընկճվածության նողկալի զգացումը, որ աճում ու զորանում էր թաղումից հետո անընդհատ՝ դառնալով վայրենի մի ծանրություն, մարմնապես (որովայնիս ներքևի մասում) զգալի ցավ, ճակատագրի ճնշող, տազնապեցնող զգացում: Ինչ-որ բան, ես դա զգում էի, սպառնում էր ինձ, ինչ-որ վտանգ գաղտագողի մոտենում էր ինձ փկունքից: Բարեբախտաբար, հայտնեցին, որ ընթրիքը պատրաստ է: Մենք անցանք ճաշատենյակ, և մինչդեռ ես ինքս ինձ անընդհատ ստիպում էի ասել կամ հարցնել բարեհոգի ինչ-որ բան, կերա ավելի, քան սովոր էի, և վիճակս ակնթարթից ակնթարթ ավելի ողորմելի էր դառնում: Աստված իմ, մտածում էի շարունակ, ինչու ենք այդպես լարվում: Ես պարզորոշ զգում էի, որ իմ հյուրընկալողները նույնպես իրենց բուրբուլին լավ չեն զգում, և որ աշխուժությունը նրանց էլ հեշտ չէր հաջողվում, գուցե դա նրանից էր, որ ես կաշկանդող ազդեցություն էի թողնում, գուցե և նրանից, որ տանն ինչ-որ տեհաճ տրամադրություն կար: Նրանք ինձ հարցնում էին այնպիսի բաներից միայն, որոնց հնարավոր չէր ոչ մի կերպ որոշակի պատասխան տալ, շուտով ես ամբողջովին խճճվեցի ստի մեջ և նողկանքով կռիվս էի տալիս յուրաքանչյուր բառ արտաբերելիս: Վերջապես, որպեսզի նրանց միտքը շեղեմ, սկսեցի պատմել թաղման մասին, որի ականատեսն էի եղել այսօր, բայց ինձ չհաջողվեց գտնել ճիշտ հնչերանգը, հումորին դիմելու իմ ձեռնարկները տեհաճ ազդեցություն էին թողնում, մենք ավելի ու ավելի հեռանում էինք միմյանցից դեպի հակառակ կողմեր, իմ ներսում, ատամները մերկացնելով, քմծիծաղ էր տալիս Տափաստանի գայլը, իսկ վերջում, աղանդերի հետ, երեքովս էլ ավելի շատ լռում էինք:

Մենք ետ եկանք այն սենյակ, որտեղ սկզբում էինք եղել, սուրճ ու օղի խմելու, հավանաբար, դա մեզ փոքր-ինչ կօզներ: Բայց այդ ժամանակ բանաստեղծների արքան կրկին ընկավ աչքովս, թեև այն արդեն առանձնացված ու դրված էր կոմունդին: Ես նրանից հանգիստ չունեի, և ոչ առանց անսալու իմ ներսի զգաստացնող ձայներին՝ կրկին ձեռքս առա նկարը և սկսեցի գրուցել հետը: Ես կարծես համակված էի այն զգացմամբ, որ դրությունն անտանելի է, որ հիմա պետք է կամ ջեր-

մացնեմ իմ տանտերերին, ընթանամ նրանց հետ միևնույն ճանապարհով և նրանց համակեմ իմ տրամադրությամբ, կամ գործը հասցնեմ կատարյալ պայթյունի:

– Հուսանք, – ասացի ես, – որ Գյոթեն իրականում այդպիսի տեսք չի ունեցել: Այս սնամասությունը և ազնվաշուք կեցվածքը, դիտողի հետ աչքունքով սիրախաղ անող այս մեծարված արժանապատվությունը և ամենաքաղցր սենտիմենտալության այս աշխարհը՝ ծածկված այրականության բողի տակ: Անշուշտ, կարելի է շատ բան ունենալ Գյոթեի դեմ, ես էլ հաճախ շատ եմ ընդդիմացել այս ծեր սնամարծին, բայց այսպես պատկերել նրան՝ ոչ, դա արդեն չափից դուրս է:

Դեմքին խոր տազնապի դրոշմը՝ տանտիրուհին լցրեց սուրճը, ասլա շտապեց դուրս գալ սենյակից, իսկ ամուսինը, շփոթահար, կես կշտամբանքով բացատրեց, որ Գյոթեի այդ նկարը պատկանում է կնոջը և նրա կողմից սիրվում է առանձնապես:

– Եվ եթե անգամ օբյեկտիվորեն ճիշտ եք, ինչը ես առհասարակ բացառում եմ, Դուք իրավունք չունեիք այդքան խստորեն արտահայտվել:

– Դուք իրավացի եք, – պատասխանեցի ես: – Ցավոք, դա իմ սովորությունն է, իմ արատը՝ ամեն անգամ ընտրել հնարավոր ամենախիստ արտահայտությունը, ինչը, ի դեպ, Գյոթենն ունյալես, իր լավագույն ժամանակներում, անում էր: Այս քաղցրավուն, քաղքենի, սալոնային Գյոթեն, անշուշտ, երբեք չէր գործածի կտրուկ, ճշմարիտ, անմիջական արտահայտություններ: Ես խնդրում եմ Ձեր և Ձեր տիկնոջ ներողամտությունը, ասեք նրան, որ ես մտազար եմ: Միաժամանակ խնդրում եմ թույլատրեք հրաժեշտ տալ:

Հուզված տանտերը թևե փորձեց առարկել, նորից խոսեց այն մասին, թե որքան գեղեցիկ ու հետաքրքիր էին մեր նախորդ գրույցները, և որ, այո, Միքայի ու Կրիշնայի վերաբերյալ իմ դատողությունները նրա վրա այն ժամանակ թողել են խոր ապավորություն, և որ նա հույս ուներ այսօր նորից... և այլն: Ես շնորհակալություն հայտնեցի նրան և ասացի, որ դրանք շատ մտերիմ խոսքեր են, սակայն իմ հետաքրքրությունը, ցավոք, Կրիշնայի, ինչպես նաև առհասարակ գիտական գրույցների նկատմամբ կորել է ամբողջովին, և այսօր ես խաբել եմ նրան զանազան, բազմաթիվ առիթներով, օրինակ, այս

քաղաքում եմ ոչ թե մի քանի օր, այլ մի քանի ամիս, բայց ապրում եմ ինձ համար առանձին և այլևս չեմ կարողանում շփվել լավագույն ընտանիքների հետ, քանի որ, ամենից առաջ, շարունակ փստ տրամադրության մեջ եմ, ինձ տանջում է հողատապը, և երկրորդ՝ մեծ մասամբ հարբած եմ լինում: Այնուհետև, որպեսզի վերջ տայի այս ամենին և գոնե չհեռանայի իբրև ստախոս, պետք է հարգաբժան պարունին հայտնելի, որ նա այսօր, ճիշտն ասած, խոր վիրավորանք հասցրեց ինձ: Հայլերի հայացքների առնչությամբ նա պաշտպանում էր հետադիմական ինչ-որ թերթոնի կարծիքը, որը սազական կլիներ որևէ հիմար, պնդաճակատ, անբան սպայի, բայց ոչ գիտնականին: Իսկ այդ «ստահակը» և անհայրենիք տղայամիտը ես ինքս եմ, որ կամ, և մեր երկրի ու ողջ աշխարհի գործերը շատ ավելի լավ ընթացք կունենային, եթե թեկուզև մի քանի մարդ, ովքեր ընդունակ են մտածելու, ճանաչեն բանականությունը և սերը՝ փոխանակ, կուրորեն և խելացնորությամբ համակված, նոր պատերազմի ձգտելու: Այսպես, ահա, և Աստված մեզ օգնական:

Դրանից հետո վեր կացա, հրաժեշտ տվեցի Գյոթեին և պրոֆեսորին, կախիչից պոկեցի իմ իրերը և վազեցի դուրս: Իմ հոգում բարձրաձայն ոռնում էր չարախիհնդ գայլը, մեծ պատերազմ էր ընթանում երկու Հարրիսների միջև: Ինձ համար ողորակի պարզ էր, որ այս անհաճո երեկոն շատ ավելի մեծ նշանակություն ուներ ինձ համար, քան վրդովված պրոֆեսորի, նրա համար այն հուսախաբություն էր և աննշան գայլույթ, բայց ինձ համար՝ վերջնական տապալում ու փախուստ, հրաժեշտ բյուրգերական, բարոյական, գիտական աշխարհի հետ, դա կատարյալ հաղթանակն էր Տափաստանի գայլի: Եվ ես հրաժեշտ տվեցի իբրև փախստական և պարտություն կրած՝ ընդունելով իմ ձախողումը, ես հրաժեշտ տվեցի՝ առանց սփոփանքի հույսի, առանց գերազանցության որևէ զգացման, առանց հումորի: Ես չէի կարող իմ այն ժամանակվա աշխարհից ու հայրենիքից, բյուրգերականությունից, բարոյականությունից, գիտնականությունից բաժանվել այլ կերպ, քան այն մարդու պես, որը հիվանդացել է ստամոքսի խոցով և պետք է հրաժարվի խոզի տապակած մսից: Ես կատաղած վազում էի լրպտերների տակով, կատաղած և մեռնելու չափ տխուր: Այս ինչ անուրախ, ամոթալի, չար օր էր՝ առավոտից մինչև երեկո,

գերեզմանոցից մինչև պրոֆետրի հետ ունեցած պատմությունը: Ինչի՞ համար: Ո՞րն է նպատակը: Իմաստ ունի՞ նորից մտնել նման օրերի ծանրության տակ, շարունակել ճաշակել նման դառնապատուղ: Ոչ: Եվ հենց այս գիշեր ես վերջ կտամ այս կատակերգությանը: Տուն գնա, Հարրի և կտրիր կոկորդո: Բավական սպասել ես դու դրան:

Աղետից հալածված՝ փողոցներում խփվում էի այս ու այն կողմ: Բնականաբար, հիմարություն էր իմ կողմից բարի մարդկանց տան մեջ թուր ու մուր քսել տան զարդարանքին, դա հիմարություն էր և անարգանք, բայց ես չէի կարող, չէի կարող այլ կերպ, չէի կարող այլևս տանել այդ զարդարուն, կեղծ, քաղցր-մեղր կյանքը: Եվ քանի որ, ինչպես երևաց, մեծակությունը նույնպես չէի կարող տանել այլևս, քանի որ իմ սեփական հասարակությունը այդպես անասելի ատում էր ինձ և ինձ համար դարձել էր նողկալի, քանի որ իմ սեփական դժոխքի անօդ տարածության մեջ ես խեղդվում էի և պատեպատ խփվում, էլ ի՞նչ էր մնում ինձ անել: Օ՛, հայր և մայր, օ՛, հեռավոր պատանության սրբազան կրակ, օ՛, դուք՝ հազարավոր ուրախություններ, զործեր և նպատակներ իմ կյանքի: Այդ ամենից ոչինչ չմնաց ինձ, անգամ զոջում, մնաց միայն զարշանք ու ցավ: Դեռ երբեք, այդպես էր թվում ինձ, ապրելու անհրաժեշտությունն ինքնին չէր պատճառել ցավ այնքան, որքան այս ժամին:

Ես մի փոքր հանգիստ առա՝ արվարձանային մի տխուր գինետանը, խմեցի ջուր՝ կռնյակով և սատանայից հալածված՝ շարունակեցի վերովար անել հին քաղաքի գառիվեր, ծուռ փողոցներով, ծառուղիներով, կայարանամերձ հրապարակով: «Մեկնել»,— անցավ մտքովս, մտա կայարան, պատերի վրա կարդացի չվացուցակները, մի քիչ զինի խմեցի, փորձեցի մտքերս հավաքել: Ավելի ու ավելի մոտիկից, ավելի պարզորոշ սկսում էի տեսնել այն ուրվականը, որից սարսափում էի: Դատուն վերադառնալն էր, վերադարձը իմ սենյակ, որ նշանակում էր հուսահատության հետ հաշտվելու անհրաժեշտություն: Դրանից ազատվել չէի կարող, որքան էլ այս ու այն կողմ վագեի՝ անհնար էր խուսափել վերադարձից դեպի իմ դուռը, իմ սեղանը՝ գրքերով, իմ բազմոցը՝ վերևում սիրեցյալիս նկարով, խուսափել այն ակնթարթից, երբ հարկ կլինի հանել ածելին և կտրել սեփական կոկորդո: Իմ առաջ ավելի ու ավելի

պարզորոշ էին բացվում այս պատկերները, արագ-արագ տրոփող սրտով ես զգում էի բոլոր վախերի վախը՝ մահվան վախը: Այո, մահվան հանդեպ ունեի մեծ երկյուղ: Թեև չէի տեսնում ոչ մի ելք, թեև զզվանքը, տանջանքը և հուսահատությունը կանգնած էին կողքիս՝ իրենց մեջ առած ինձ, թեև այլևս ոչինչ ի վիճակի չէր հրապարել ինձ ուրախություն և հույս պարզելու համար, ես անասելի վախենում էի մահապատժից, վերջին ակնթարթից, սեփական մարմինը սառնասրտորեն կտրտելուց:

Ես ոչ մի ճանապարհ չէի տեսնում՝ սարսափելիից փախուստ տալու համար: Եթե անգամ այսօր հուսահատության և վախկոտության միջև հաղթանակ տաներ վախկոտությունը, վաղը կամ մնացյալ բոլոր օրերին իմ դեմ դիմաց էր կանգնելու հուսահատությունը վերստին՝ էլ ավելի խորացված ինքնատելությամբ: Այդպես ես կրկին ձեռքս էի վերցնելու դանակը և կրկին մի կողմ էի դնելու այնքան ժամանակ, մինչև որ, ի վերջո, կատարվեր դա: Ուրեմն, ավելի լավ է՝ հենց այսօր: Ես համոզում էի ինքս ինձ, ինչպես վախեցած երեխայի, և համոզում էի լուրջ խոսքերով, բայց երեխան չէր լսում, նա փախչում էր, նա ուզում էր ապրել: Կրկին մեծ ցանկություն ունեցա քաղաքով քայլելու, լայն շրջանով պտտվեցի իմ տան շուրջը՝ շարունակ մտածելով վերադարձի մասին, շարունակ վարանելով դա անել: Ժամանակ առ ժամանակ ես ոտքս կախ էի զգում որևէ զինետանը, խմելով առաջին գավաթ զինին, ապա երկրորդը, ապա վերստին տրվում քաղաքի փողոցներին՝ մեծ շրջան գծելով իմ նպատակի, ածելու և մահվան շուրջը: Մահացու հոգնած՝ ժամանակ առ ժամանակ դադար էի առնում որևէ նստարանի վրա կամ պատվանդանի մոտ, շատրվանի եզրին, լսում էի, թե ինչպես է խփում իմ սիրտը, մաքրում էի ճակատիս քրտինքը և մահվան վախով, կյանքի հանդեպ առկայծող բաղձանքով լի նորից ընթանում առաջ:

Այդպես, ուշ գիշերով, ես մտա արվարձանային, հեռու ընկած և ինձ քիչ ծանոթ մի ռեստորան, որի պատուհաններից այն կողմ բարձր հնչում էր պարի երաժշտություն: Ներս մտնելիս՝ դռան վրայի հին ցուցանակի վրա կարդացի՝ «ՄԼ արժիվ»: Ներսում գիշերային ռեստորանի կյանք էր, մարդկային իրարանցում, ծուխ, զինու հոտ և ադմուկ, ռեստորանի ետնամասում պարում էին, այնտեղ մոլեզմում էր պարի երաժշտությունը: Ես մնացի առջևի սրահում, որտեղ բոլորը սովորական,

անգամ խղճուկ հագնված մարդիկ էին, մինչդեռ պարահանդեսային դահլիճում երևում էին նաև պճնասերներ: Հրմշտագից բշված՝ առանձնացա դահլիճի մի անկյունում, բուֆետի կողքի սեղանի մոտ, որտեղ պատի տակ դրված նստարանին նստած էր գունատ, զեղեցկատես մի աղջիկ՝ հագած նուրբ, պարահանդեսային խոր կտրվածք ունեցող շրջագգեստ, մազերին՝ քառամած ծաղիկ: Երբ տեսավ, որ մոտենում եմ, աղջիկը ինձ նայեց ուշադիր ու մտերիմ հայացքով, ժպտալով մի կողմ քաշվեց՝ տեղ տալով ինձ:

– Կարելի՞ է, – հարցրի ես և նստեցի կողքին:

– Իհարկե, քեզ կարելի է, – ասաց նա, – ո՞վ ես դու:

– Շնորհակալություն, – ասացի ես, – ոչ մի կերպ չեմ կարող տուն գնալ, չեմ կարող, չեմ կարող, ուզում եմ այստեղ մնալ, Չեր կողքին, եթե թույլ տաք: Ոչ, ես տուն գնալ չեմ կարող:

Նա զլխով արեց, ասես, հասկանալով ինձ, և երբ զլխով էր անում, ուշադրությունս գրավեց նրա խոսույթը, որ ճակատից գնում էր դեպի ականջը, և ես տեսա, որ դա քառամած կամեկիա է: Մյուս դահլիճից լավում էր երաժշտության աղմուկը, բուֆետի մոտ մատուցողուհիները բարձրաձայն և արագ-արագ ենչեցնում էին իրենց պատվերները:

– Մնա այստեղ, – ասաց աղջիկը մի ձայնով, որը բարի ներգործություն ունեցավ վրաս: – Ինչո՞ւ չես կարող տուն գնալ:

– Չեմ կարող: Տանը ինձ սպասում է ինչ-որ բան, ոչ, չեմ կարող, դա շատ սարսափելի է:

– Ուրեմն՝ սպասիր և մնա այստեղ: Բայց նախ մաքրիր ակնոցդ, ավար, դրանով դու բան չես տեսնի: Այսպես, ասուր ինձ քո թաշկիմակը: Ի՞նչ ենք խմելու: Բուրգունդակա՞ն:

Նա մաքրեց իմ ակնոցը, միայն այդ ժամանակ պարզորոշ տեսա նրան՝ գունատ, ընդգծված դեմքը՝ արնակարմիր շրթունքներով, պայծառ, գործ աչքերով, հարթ, սառը ճակատով, ականջակողքերի կարճ, ձիգ խոսույթներով: Բարեհոգաբար և փոքր-ինչ հեզմանքով նա սկսեց ինձ խնամել, պատվիրեց գինի, բաժակը խփեց իմ բաժակին և այդ պնդելով՝ նայեց ցած՝ իմ կոշիկներին:

– Աստված իմ, այդ որտեղի՞ց ես գալիս: Դու այնպիսի տեսք ունես, կարծես՝ ուռքով եկել ես Փարիզից: Ախր, այդ տեսքով պարահանդես չեմ գնում:

Անորոշ պատասխաններ տալով՝ ես փոքր-ինչ ծիծաղեցի և թույլ տվեցի, որ նա խոսի: Նա ինձ շատ էր դուր գալիս, և ան-

չափ զարմացել էի, որ այդպիսի ջահել աղջիկներից մինչև օրս խուսափել էի ու կասկածանքով նայել: Եվ նա էլ ինձ հետ վարվում էր հենց այնպես, ինչպես որ պետք էր ինձ հետ վարվել այս պահին. օհ, նա այդ օրվանից միշտ էլ հասկացավ, թե ինչպես պետք է վարվել ինձ հետ: Նա այնքան հոգատար էր իմ նկատմամբ, որքան որ ես էի կամենում, և հեզմում էր այնչափ, որչափ անհրաժեշտ էր: Նա պատվիրեց բուտերբրոդ և ստիպեց, որ ուտեմ: Գինի լցրեց ինձ համար և հրամայեց խմել, բայց ոչ շատ արագ: Ապա զովեց իմ հնազանդությունը:

– Կեցցես դու, – ոգևորեց նա ինձ, – ծանրություն չես դառնում մարդկանց զլխին: Գրագ կգամ, որ երկար ժամանակ է՝ ինչ որևէ մեկին չես լսել:

– Այո, Դուք գրագը շահեցիք: Բայց որտեղի՞ց գիտեք դա:

– Դժվար չէ հասկանալ: Հնազանդվելը ուտելու և խմելու պես է՝ ով երկար ժամանակ չի կերել և չի խմել, նրա համար աշխարհում ամենաթանկ բանը ուտելիքն է և խմելիքը: Քեզ դուր է գալիս ինձ լսելը, այդպես չէ՞:

– Շատ: Դուք ամեն ինչ գիտեք:

– Քեզ հետ հեշտ է: Բարեկամ, հավանաբար, ես կարող եմ նաև ասել, թե ինչ է քեզ տանը սպասում և ինչից ես դու այդքան վախենում: Բայց դու ինքդ էլ դա գիտես, մենք դրա մասին խոսելու կարիք չունենք, ճի՞շտ է: Հիմարություն: Կամ դու կախվում ես, դե ինչ, ուրեմն՝ կախվիր, ուրեմն՝ դրա համար ունեիր պատճառ, կամ շարունակում ես ապրել, և այդ ժամանակ պետք է հոգալ ապրելու մասին: Սրանից ավելի պարզ բան չկա:

– Օհ, – բացականչեցի ես, – եթե դա այդքան պարզ լիներ: Ես բավականաչափ հոգացել եմ ապրելու մասին, Աստված վկա, բայց դա չի օգնել: Կախվելը, հավանաբար, դժվար է, չգիտեմ: Մակայն ապրելը շատ, շատ ավելի ծանր է: Աստված ինքն է տեսնում, թե որքան ծանր է դա:

– Դու կտեսնես, թե որքան մանկականորեն հեշտ է դա: Սկիզբը մենք արդեն դրել ենք, դու մաքրել ես քո ակնոցը, կերել ես, խմել: Այժմ մենք կգնանք և փոքր-ինչ կմաքրենք քո անդրապարտիքը և կոշիկները: Դրա կարիքը կա: Եվ հետո դու ինձ հետ կպարես շիմմի*:

* Շիմմի – հյուսիսամերիկյան խմբային պար:

– Ահա, տեսնում եք, – գրգռված բացականչեցի ես, – այդու-
ամենայնիվ, ես իրավացի էի: Ինձ համար ոչինչ այնքան
դժվար չէ, որքան Ձեր որևէ պատվերը չկատարելը: Բայց դա
ես չեմ կարող կատարել: Ես շիմմի չեմ կարող պարել և ոչ
վալս, ոչ էլ պոլկա կամ դրանց նման պարերը, կյանքումս պա-
րել չեմ սովորել: Տեսնո՞ւմ եք հիմա, որ ամեն ինչ այդքան էլ
պարզ չէ, այդպես չե՞ք կարծում:

Գեղեցիկ աղջիկը ժպտաց կարմիր շրթունքներով և օրորեց
մանկան պես սանրած գլուխը: Երբ նայեցի նրան, ինձ թվաց,
որ նա նման է Ռոզա Կրեյսլերին, առաջին աղջկան, որին ես
մի ժամանակ, երբ երեխա էի, սիրահարված էի, բայց նա թուխ
էր ու սևամազ: Ոչ, ես չգիտեի, թե ում էր հիշեցնում այս օտար
աղջիկը, միայն գիտեի, որ այդ հիշողությունը վերաբերում էր
շատ վաղ պատանությանս, մանկությանս տարիներին:

– Հանգիստ, – կանչեց նա, – հանգիստ: Ուրեմն՝ դու չե՞ս կա-
րող պարել: Առհասարակ չես կարող: Նույնիսկ ուանստե՞ս*:
Եվ դրա հետ միաժամանակ հաստատում ես, որ հոգ ես տարել
ապրելու մասին: Մտում ես: Բո հասակի մարդուն սագական չէ
սուտ խոսելը, ջահել: Ինչպես ես ասում, թե հոգ ես տարել
կյանքի մասին, երբ անգամ պարել չես ցանկանում:

– Իսկ եթե չեմ կարողանո՞ւմ: Ես պարել չեմ սովորել:

Աղջիկը ծիծաղեց:

– Բայց կարողա՞յ ու գրել սովորել ես, ճի՞շտ է, և հաշվել ու,
հավանաբար, նաև լատիներեն և ֆրանսերեն և նման զանա-
զան բաներ: Գրագ կգամ, որ դու դպրոցն ավարտել ես տասը
կամ տասներկու տարում, իսկ հետո էլ համալսարանը և նույ-
նիսկ հնարավոր է, որ դոկտոր լինես, գիտենաս չինարեն կամ
խապաներեն: Թե՞ ոչ: Այդպես: Մի փոքրիկ ժամանակ և դրան
մի քանի ժամ պարելու վրա ծախսելու համար դու չկարողա-
ցար ճարել:

– Դա ծնողներին մեղքն է, – արդարացա ես, – նրանք ինձ
ստիպում էին սովորել լատիներեն ու հունարեն և նման այլ բա-
ներ: Բայց պարել չսովորեցրին: Մեզ մոտ դա սովորություն չէր,
իմ ծնողներն իրենք էլ չէին պարում:

Աղջիկը շատ սառը, արհամարհանքով լի հայացքով նայեց
ինձ, և նրա դեմքի մեջ ինչ-որ բան ինձ հիշեցրեց իմ վաղ պա-
տանության տարիները:

* Ուանստեպ – արագ խմբային պար:

– Ուրեմն՝ քո ծնողնե՞րն են մեղավոր: Դու նրանց հարցրե՞լ
ես, թե այսօր երեկոյան իրավունք ունես «Սև արծիվ» ռեստո-
րան գնալու: Հարցրե՞լ ես: Նրանք արդեն վաղուց մեռա՞ծ են,
ասում ես: Ահա, թե ինչ: Եթե դու գուտ հնազանդ լինելու պատ-
ճառով պատանությանդ տարիներին չես ցանկացել պարել սո-
վորել, չեմ առարկում: Թեև չեմ հավատում, որ դու այն ժամա-
նակ հնազանդ տղա ես եղել: Բայց դրանից հետո, ինչ էիր ա-
նում դու դրանից հետո՝ երկար տարիների ընթացքում:

– Այլ, – խոստովանեցի ես, – ինքս էլ չգիտեմ: Ուսումնում էի,
երաժշտություն էի գրում, գրքեր էի կարդում, գրքեր էի գրում,
ճանապարհորդում...

– Կյանքի մասին տարօրինակ հայացքներ ունես: Այսինքն՝
դու միշտ գրադվել ես դժվար և բարդ գործերով, իսկ պարզերը
չես յուրացրել: Ժամանակ չի եղել: Տրամադրություն չես ու-
նեցել: Գե, ինչ, փառք Աստծո՞ւ ես քո մայրը չեմ: Բայց ինչպես
կարելի է դրանից հետո կեցվածք ընդունել, թե ճաշակել ես
կյանքը և նրա մեջ ոչինչ չես գտել, ոչ, այդպես չի կարելի:

– Մի կշտամբեք, – խնդրեցի ես, – արդեն գիտեմ, որ խելա-
գար եմ:

– Ահա թե ինչ, այ, թե ինչ երգ ես երգում: Դու բողբոջին էլ
խելագար չես, պարոն պրոֆեսոր, դու նույնիսկ շատ ու շատ
հեռու ես խելագար լինելուց: Դու, ինձ թվում է, ինչ-որ հիմար
ձևով ես դատողություններ անում, անց որ իսկական պրոֆե-
սոր: Արի, մի բուտերբրոդ էլ կեր: Դրանից հետո կշարունակես
պատմությունդ:

Նա ինձ համար պատվիրեց մի բուտերբրոդ ևս, աղ ցանեց,
մանանեխ քսեց վրան, մի կտոր կտրեց իր համար և հորդորեց,
որ ուտեմ: Ես կերա: Ամեն ինչ կանեի, ինչ պատվիրեր նա,
միայն ոչ պարել: Անչափ հաճելի բան էր՝ հնազանդորեն լսել
ինչ-որ մեկին, նստել մեկի կողքին, ով քեզ հարցուփորձ է ա-
նում, հրամաններ տալիս, հայեցում: Եթե մի քանի ժամ առաջ
պրոֆեսորը կամ նրա կինն անեին միևնույն բանը, շատ հոգսե-
րից ինձ ազատած կլինեի: Բայց՝ ոչ, լավ է, որ այդպես եղավ,
թե չէ ես շատ բան կկորցնեի:

– Իսկապես, ի՞նչ է անումը, – հարցրեց նա հանկարծ:

– Հարրի:

– Հարրի՞: Տղայի անուն է: Դու ինքդ էլ տղա ես, Հարրի,
թեև մազերիդ մեջ արդեն սպիտակ կա: Տղա ես դու, և պետք է

մեկնումեկին ունենա, որ մի քիչ նայի քեզ: Պարելու մասին այլև չեմ խոսի: Բայց ինչպես ես դու տանրված: Սի՞քե դու կին չունես կամ սիրած աղջիկ:

– Ես արդեն կին չունեմ, մենք բաժանվել ենք: Սիրած աղջիկ ունեմ, բայց նա այստեղ չի ապրում, ես նրան տեսնում եմ շատ հազվադեպ, մեր գործերն այնքան էլ լավ չեն:

Ատամների արանքից նա ցածր սուլեց:

– Դու, ինչպես երևում է, բավական դժվարահաճ պարոն ես, եթե բոլորը քեզ լքում են: Բայց ասա հիմա, թե այսօր երեկոյան արտառոց ի՞նչ է պատահել, որ ամբողջ աշխարհի վրա զայրացած՝ այս ու այն կողմ ես խփվում: Վիճե՞լ ես մեկնումեկի հետ: Դրա՞ն ես կորցրել:

Դա դժվար էր ասել:

– Գիտե՞ք ինչ,– սկսեցի ես,– պատճառը, ըստ էության, մի մանրուք էր: Ես հրավիրվել էի մի պրոֆեսորի առև, ինքս, ի դեպ, պրոֆեսոր չեմ, և, ճիշտն ասած, պետք էլ չէր, որ գնայի այնտեղ, ինձ համար այլև անսովոր է մարդկանց հետ նստելն ու շատախոսելը, ես դա մոռացել եմ: Եվ նրանց տուն մտա արդեն այն զգացումով, որ ինչ-որ վատ բան է տեղի ունենալու, երբ ես կախեցի գլխարկս, որ, հավանաբար, այն ինձ քիչ անց նորից պետք է գալու: Այո, իսկ պրոֆեսորի տանը, ուրեմն, սեղանի վրա դրված էր մի նկար, մի հիմար նկար, որն ինձ զայրացրեց...

– Ի՞նչ նկար: Ինչո՞ւ զայրացրեց,– ընդհատեց նա ինձ:

– Դե, նկարը ներկայացնում էր Գյոթեին, գիտեք, բանաստեղծ Գյոթեին: Բայց նկարում նա բոլորովին այնպիսին չէր, ինչ եղել էր իրականում, այսինքն՝ դա ոչ մեկն էլ ճշգրտորեն չգիտի ընդհանրապես, արդեն հարյուր տարի է, ինչ նա մահացել է: Պարզապես, ժամականակից ինչ-որ նկարիչ Գյոթեին տվել է այն տեսքը, ինչպիսին պատկերացրել է ինքը, և հենց այդ նկարն ինձ զայրացրեց ու ինձ համար զգվելիորեն ասելի էր, չգիտեմ, Դուք հասկանո՞ւմ եք դա:

– Անհոգ մնա, շատ լավ էլ հասկանում եմ: Ծարունակիք:

– Դրանից առաջ էլ պրոֆեսորի հետ անհամաձայնություն ունեի, նա, ինչպես բոլոր պրոֆեսորները գրեթե, մեծ հայրենասեր է և պատերազմի ժամանակ կարգին օգնում էր՝ խարելու ժողովրդին, իհարկե՛ բարի մտքով: Իսկ ես պատերազմին հա-

կառակ եմ: Սի խոսքով: Գնանք առաջ: Ինձ բոլորովին էլ պետք չէր նայել այդ նկարին...

– Իսկապես, պետք չէր նայել:

– Բայց, նախ՝ ես խղճացի Գյոթեին, ես նրան շատ, շատ եմ սիրում, իսկ դրանից բացի հանկարծ մտածեցի... դե, ես մտածեցի կամ զգացի մոտավորապես այսպիսի մի բան՝ ես, ահա, նստած եմ մարդկանց հետ, որոնց համարում էի ինձ մնան և որոնց մասին կարծում էի, թե նրանք նույնպես պետք է, որ սիրեն Գյոթեին, ինչպես ես և տեսնեմ նրան նույն կերպ, ինչպես ես եմ տեսնում, բայց նրանց սեղանին դրված է այդ անճաշակ, շինձու, քաղցր-մեղր նկարը, որը զանում եմ հրաշալի արված և բոլորովին չեմ նկատում, որ այդ նկարի ոգին Գյոթեի ոգու ճիշտ հակառակն է: Նրանց համար դա փառավոր նկար է, իմ կարծիքով, դա նրանց իրավունքն է, բայց ես այլևս ոչ մի վստահություն չունեմ նրանց հանդեպ, նրանց հետ բարեկամ լինելու, մտերմության և ընդհանրության որևէ զգացում այլևս չկա: Առանց դրա էլ, առհասարակ, մտերմությունը մեծ չէր: Եվ այդտեղ ես զայրացա, տխրեցի և տեսա, որ բոլորովին միայնակ եմ, և ոչ ոք չի կռահում միտքս: Հասկանո՞ւմ եք:

– Դժվար չէ հասկանալ, Հարրի: Հետո՞: Դու նրանց գլխովը ավեցիր նկարը:

– Ոչ, վիրավորեցի, հետո դուրս փախա, ես տուն էի ուզում, բայց...

– Բայց այնտեղ չէր լինի մայրիկը, որպեսզի սփոփեր հիմար տղային կամ նախատեր: Հարրի, ես համարյա խղճում եմ քեզ, դու մնանը չունեցող երեխա ես:

Անշուշտ, իմ կարծիքով էլ ես այդպիսին էի:

Նա մի զավաթ զինի ավեց, որ խմեմ: Նա ինձ հետ, իրոք, վարվում էր մոր պես: Բայց ժամանակ առ ժամանակ ես նայում ու տեսնում էի, թե որքան ջահել ու գեղեցիկ է նա:

– Ուրեմն,– խոսքը նորից շարունակեց նա,– ուրեմն՝ Գյոթեն մահացել է հարյուր տարի առաջ, և Հարրին շատ սիրում է նրան և հրաշալիորեն պատկերացնում, թե ինչպիսի տեսք կարող էր ունենալ նա, և դրա իրավունքը ունի Հարրին, այնպես չէ՞: Բայց նկարիչը, որը նույնպես Գյոթեով սրանչափում է և իր համար ստեղծում նրա նկարը, նա չունի ոչ մի իրավունք, և պրոֆեսորը նույնպես չունի, և, առհասարակ, ոչ մեկը, քանզի դա Հարրիի սրտով չէ, նա չի կարող դա տանել, նա կարող է

հայտնաբերելու դուրս տալ և փախչել: Եթե նա խելոք լիներ, պարզապես կծիծաղեր նկարիչի և պրոֆեսորի վրա: Եթե խելագար լիներ, նրանց դեմքին կշարտեր իրենց Գյոթեին: Բայց քանի որ փոքրիկ տղա է ընդամենը, փախչում է տուն և ուզում է կախվել... Ես ճիշտ հասկացա քո պատմությունը, Հարրի: Ծիծաղելի պատմություն է դա: Այն իմ ծիծաղն է շարժում: Սպասիր, այդքան արագ մի խմիր: Բուրգունդականը խմում են դանդաղ, թե չէ քրտնացնում է: Բայց քեզ պետք է ամեն ինչ ասել, փոքրիկ տղա:

Նրա՝ ինչպես տասնվեցամյա տնային դաստիարակչուհու հայացքը խիստ էր ու խրատոտ:

– Օ՛, այո,– խնդրեցի ես երախտագիտությամբ,– ասեք ինձ ամեն ինչ:

– Ի՞նչ պետք է ես ասեմ քեզ:

– Ամեն ինչ, ինչ ուզում եք:

– Լավ, ես քեզ ինչ-որ բան կասեմ: Արդեն մեկ ժամ է՝ լսում ես, որ ես քեզ «դու» եմ ասում, իսկ դու ինձ շարունակ դիմում ես «դուք»-ով: Անվերջ լատիներեն և հունարեն ես բանեցնում, միայն թե բարդացնես խոսքդ: Եթե որևէ աղջիկ քեզ դիմում է «դու»-ով, և տեսնում եմ քեզ համար, ապա դու նույնպես նրան պետք է դիմես նույն կերպ: Ահա, դու ինչ-որ բան սովորեցիր: Եվ երկրորդը՝ կես ժամ է արդեն, ինչ ես գիտեմ, որ քո անունը Հարրի է: Ես գիտեմ դա, քանի որ հարցրել եմ քեզ: Բայց դու չես ուզում իմանալ, թե ինչ է իմ անունը:

– Օ՛, ոչ, շատ եմ ուզում:

– Ուշ է, փոքրիկ: Եթե մենք կրկին հանդիպենք, կարող ես հարցնել նորից: Ես այսօր այն չեմ ասի քեզ: Այսպես, իսկ հիմա ուզում եմ պարել:

Զանի որ նրա դեմքը վեր կենալու արտահայտություն ստացավ, հանկարծ իմ արամադրությունը խիստ ընկավ, ես վախեցա, որ նա կզնա և կթողնի ինձ մենակ, այդ դեպքում ամեն ինչ կլինի այնպես, ինչպես նախկինում էր: Ինչպես որ անսպասելի վերադառնում է ատամնացավը և այդուհետ կրակի պես, ճիշտ այդպես մի ակնթարթում վերադարձան իմ վախը և սարսափը: Օ՛, Աստված իմ, մի՞թե ես մոռացության էի տվել, թե ինչ է սպասում ինձ: Մի՞թե փոխվել է որևէ բան:

– Սպասիր,– խոսեցի ես պաղատանքով,– մի հեռանա, իհարկե, դու կարող ես պարել, որքան սիրող կամենում է, բայց երկար մի մնա, վերադարձիր, վերադարձիր:

Նա ժպտալով վեր կացավ: Ես նրան կանգնած ավելի բարձրահասակ էի պատկերացնում, նա սլացիկ հասակ ուներ, բայց ոչ շատ բարձր: Նա ինձ նորից հիշեցրեց ինչ-որ մեկին, ո՞ւմ: Դա մնում էր գաղտնիք:

– Դու նորից կգա՞ս:

– Ես նորից կգամ, բայց դա կարող է որոշ ժամանակ տևել, կես կամ մի ամբողջ ժամ: Ի՞նչ եմ ուզում ասել քեզ՝ փակիր աչքերդ և բնիր, դա այն է, ինչ անհրաժեշտ է քեզ:

Ես նրան ճանապարհ տվեցի, և նա գնաց, նրա շրջագետուրը քավեց իմ ծնկներին, գնալիս նայում էր գրպանի փոքրիկ, կլոր հայելու մեջ, բարձրացնելով հոնքերը՝ փոքրիկ խավափնջիկով պուրքա քսեց կզակին ու անհետացավ պարադանիլոնում: Ես նայեցի շուրջս՝ օտար դեմքեր, ծխող տղամարդիկ, մարմարյա սեղանի վրա թափված գարեջուր, աղմուկ և իրարանցում ամենուրեք, կողքի հետ՝ պարային երաժշտություն: Ես պարտավոր եմ քնել, ինչպես ասաց աղջիկը: Այս, բարի մանկիկ, եթե կռահեիր, որ իմ բունը ավելի վախկոտ է, քան աքիսը: Զնել այս տոնավաճառի մեջ, նստած սեղանի մոտ, գարեջրի գավաթների չխկոցների տակ: Ես գիմուց մի կույն առա, գրպանիցս հանեցի ծխախոտը, հայացքով փնտրեցի լուցկի, բայց, արդարև, ծխել չէի ուզում, ծխախոտս դրեցի սեղանին: «Փակիր աչքերդ», ասաց նա ինձ: Աստված գիտի, թե այդ աղջկան որտեղից այդպիսի ձայն, այդ խոր, բարի ձայնը, որ մայրական էր: Լավ էր այդ ձայնին հնազանդվելը, ես դա հասկացա: Հնազանդորեն փակեցի աչքերս, գլուխս հենեցի պատին, ականջներիս մեջ՝ հարյուրավոր ուժեղ ձայներ, որ աղմկում էին իմ շուրջը, ծիծաղեցի այստեղ քնելու գաղափարի վրա, վճռեցի զնալ դահլիճի դռան մոտ և նայել ներս՝ չէ՞ որ ես պարտավոր էի տեսնել իմ գեղեցիկ աղջկա պարը, աթոռի տակ շարժեցի ոտքերս, միայն հիմա զգացի, թե որքան անսելիորեն հոգնած եմ ժամերով այս ու այն կողմ թափառելուց և մնացի նստած: Եվ ահա ես արդեն քնած էի, մայրական պատվերին հավատարիմ, քնած էի ազահորեն և երախտագիտությամբ, տեսնում էի երազ, պարզ ու հրաշալի երազ, այնպիսին, որ վաղուց չէի տեսել: Երազում տեսնում էի.

Ես նստել և սպասում էի հնաճ մի ընդունարանում: Սկզբում միայն գիտելի, որ իմ մասին հայտնվել է Նորին Գերագանցությանը, հետո մաքուր անցավ, որ դա հենց պարոն

Ֆոն Գյոթեն է, որն ինձ ընդունելու է: Ցավոք, ես այստեղ էի ոչ իբրև մասնավոր անձ, այլ իբրև մի քերթի քոթակից, այդ հանգամանքն ինձ շատ խանգարում էր, և ես չէի կարողանում հասկանալ, թե որ սատանան է այդ գործի մեջ ինձ խցկել: Բացի այդ՝ ինձ անհանգստացնում էր մի կարիճ²⁸, որը երևաց միայն հենց նոր և փորձում էր բարձրանալ իմ ոտքն ի վեր: Ես, ճիշտ է, այդ սև սողունից պաշտպանվում էի և թափ ավեցի նրան, բայց չգիտեի, թե հիմա ուր մտավ, և երկյուղից չէի կարողանում ոչ մի տեղս շոշափել:

Նաև լիովին վստահ չէի, որ իմ մասին սխալմամբ Գյոթեի փոխարեն չեն հայտնել Մատիստին²⁹, որին, սակայն, քնիս մեջ շփոթելով Բյուրգերի³⁰ հետ, վերագրում էի Մոլլիին³¹ ուղղված բանաստեղծությունները: Առհասարակ, ես շատ կկամենայի հանդիպել Մոլլիի հետ, նրան պատկերացնում էի հրաշալի, նրբագեղ, երաժշտական, երեկոյան կին: Եթե միայն այստեղ նստած չլինեի այդ անիծյալ խմբագրության պահանջով: Իմ անբավականությունը գնալով մեծանում էր և աստիճանաբար փոխանցվեց Գյոթեին, որի դեմ հանկարծ իմ մեջ ծագեցին հնարավոր ամեն տեսակի կասկածներ և կշտամբանքներ: Շատ հրաշալի ընդունելություն էր ստացվելու: Իսկ կարիճը թեև վտանգավոր էր և, հավանաբար, թաքնվել էր մոտերքում, ինձնից ոչ հեռու, այնքան էլ վատը չէր: Նա կարող էր, ինչպես ինձ թվաց, նույնպես ինչ-որ հաճելի բան նշանակել, միանգամայն հնարավոր է, որ նա ինչ-որ տեղ կապ ունի Մոլլիի հետ, կարիճը, կարծես թե, նրա սուրհանդակը լինի կամ նրա զինանշանային կենդանին, կանացիության և մեղքի գեղեցիկ, վտանգավոր զինանշանային կենդանին: Հնարավոր է, որ այդ կենդանին կոչվի Վուլպիոս³²: Բայց ծառայողներից մեկը բացեց դուռը, ես բարձրացա և մտա ներս:

Այնտեղ կանգնած էր ծեր Գյոթեն՝ փոքրամարմին և շատ խստաբարո, և դասականի իր կրծքին, իրոք, ուներ հաստ շքանշան՝ աստղ: Թվում էր, որ նա շարունակում էր իր վայմաբյան թանգարանից նախկինի պես վերահսկել աշխարհը, նախկինի պես ընդունելություններ տալ, նախկինի պես կառավարել: Բանգի, հագիվ ինձ տեսած, ծեր ագռավի պես օրորեց գլուխը և հանդիսավոր ասաց.

– Դե, երիտասարդներ, դուք, ինչպես երևում է, այնքան էլ համամիտ չեք մեզ և մեր ջանքերին:

– Միանգամայն ճիշտ է, – ասացի ես՝ սառչելով նախարարական նրա հայացքից: – Մենք՝ երիտասարդներս, իրականում համաձայն չենք Ձեզ հետ՝ ծեր պարոնիդ: Մեր կարծիքով՝ Դուք շատ հանդիսավոր եք, Ձերդ Գերագանցություն, շատ սնափառ ու գոռոզ և չափից դուրս ոչ անկեղծ: Մա, թերևս, ամենակարևորն է՝ չափից դուրս ոչ անկեղծ:

Փոքրամարմին ծերունին փոքր-ինչ առաջ շարժեց իր ազդեցիկ գլուխը, և այդ ընթացքում նրա՝ պաշտոնապես ամուր սեղմած բերանը ժպտալով բացվեց և դարձավ զմայլելիորեն կենդանի, իմ սիրտը հանկարծ սկսեց խփել, քանզի հիշեցի «Մթնշաղն է իջնում երկնքից» բանաստեղծությունը, և որ այս մարդն ու այս բերանն է, որից առաջ են եկել այդ բանաստեղծության բառերը: Ճիշտն ասած, այդ պահին ես արդեն ամբողջովին զինաթափվել ու պարտվել էի և սիրով կնետվեի նրա ոտքերի առաջ: Բայց ինձ պահում էի ձիգ և նրա ժպտացող բերանից լսում այս բառերը.

– Այդպես, ուրեմն, դուք ինձ համարում եք ոչ անկեղծ: Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը: Չե՞ք ուզում ավելի մանրամասնորեն մեկնաբանել:

Միքով ուզում էի ես դա անել, շատ սիրով:

– Դուք, պարոն ֆոն Գյոթե, ինչպես բոլոր մեծ մարի տեր մարդիկ, հստակ ըմբռնել և հասկացել եք մարդկային կյանքի կասկածելիությունն ու անհուսությունը. ակնթաքթի փառափառությունը և նրա թառամած, խղճալի անկումը, զգացմունքների վստեղության դիմաց հատուցման անհնարինությունն այլ կերպ, քան առօրեականության բանտով, ոգու արքայության այրող բաղձանքով, որը նույնչափ այրող և նույնչափ սրբազան սիրով հավիտյանս մահացու կովի մեջ է բնության կորուսյալ ամենությունների համար: Բոլոր այս սարսափելի տարուրերումները դատարկության և անորոշության միջև, անցողիկ լինելուն այս դատապարտվածությունը, մշտական անլիարժեքությունը, հավերժական փորձարար լինելն ու մակերեսային միտք ունենալը, կարճ ասած՝ մարդկային կեցության ողջ անելանելիությունը, արհեստականությունը և այրող հիասթափությունը: Այս ամենը Դուք գիտեիք, երբեմն նույնիսկ ընդունում էիք և, այդուհանդերձ, Ձեր ողջ կյանքով քարոզել եք հակառակը, արտահայտել եք հավատ և լավատեսություն, Ձեզ և ուրիշների համար ներկայացրել եք մեր հոգևոր ձգտումներին իբրև թե յու-

րահատուկ տևականությունն ու խորհուրդը: Դուք մերժում էիք խորությունը ճանաչողներին, ճնշում ճշմարտության հուսահատ ձայները ինչպես ինքներդ Ձեր, այնպես էլ Քրիստոսի և Բեթհովենի մեջ: Տասնամյակներ շարունակ վարվում էիք այնպես, կարծես գիտելիքների կուտակումը, հավաքածուներ ստեղծելը, նամակներ գրելն ու ստանալը, Վայմարի՝ Ձեր ծերունական ողջ կենցաղը իսկապես ակնթարթը հավերժացնելու ճանապարհ են, բայց դրանով Դուք միայն ստեղծում էիք նրա մումիան, կարծես բնությունը ոգեշնչելու իսկապես ճանապարհն են, բայց դրանով Դուք միայն ոճավորում էիք այն, դիմակ հագցնում: Դա էլ հենց այն անկեղծությունն է, որի համար Ձեզ հանդիմանում ենք:

Ձեր գաղտնի խորհրդականը մտախտի նայեց իմ աչքերին, նրա բերանը շարունակում էր ժպտալ:

Ապա, ի գարմանս ինձ, հարցրեց.

– Այդ դեպքում Մոցարտի «Կախարդական սրինգը» պետք է որ ձեզ համար շատ տեղի լինի:

Եվ մինչ ես կկարողանայի հակառակվել, նա շարունակեց.

– «Կախարդական սրինգը» պատկերում է կյանքն իբրև հրաշալի երգ, նա փառաբանում է մեր զգացմունքները, որոնք քեզ անցողիկ, սակայն ինչ-որ հավերժական ու աստվածային երևույթներ են, նա չի համաձայնվում ոչ պարոն Քրիստոսի և ոչ էլ պարոն Բեթհովենի հետ, այլ քարոզում է լավատեսություն և հավատ:

– Ես դա գիտեմ, գիտեմ, – բացականչեցի չարացած, – Աստված գիտի, թե Դուք ինչպես հիշեցիք հենց «Կախարդական սրինգը», որն ամենասիրելին է ինձ համար աշխարհում: Բայց Մոցարտը չի ապրել ութսուներկու տարի և իր անձնական կյանքում չի ներկայացրել ո՛չ մշտականության, ո՛չ կարգուկանոնի, ո՛չ խստաբարո արժանապատվության պահանջ, ինչպես Դուք: Նա իրեն այդքան կարևոր տեսք չէր տալիս: Նա երգում էր իր աստվածային մեղեդիները, աղքատ էր, մահացավ վաղ և աղքատության մեջ...

Իմ շունչը կտրվում էր: Հազարավոր բաներ այժմ պետք էր ասել մի տասը բառով, ճակատս սկսեց քրտնել:

Գոթեն, սակայն, շատ բարեկամաբար ասաց.

– Այն, որ ես ապրել եմ ութսուներկու տարի, գոցե՛ս աննեղելի է: Բայց դա ինձ պատճառել է ավելի քիչ բավականութ-

յուն, քան կարծում եք: Դուք իրավացի եք՝ ես շարունակ ունեցել եմ մշտականության պահանջ, շարունակ երկյուղել եմ մահվանից և կռվել նրա դեմ: Իմ կարծիքով՝ մահվան դեմ կռիվը, ապրելու արարատիքը և համառ կամքը այն մղումն են, որից գործելու և ապրելու ուժ են առնում ճանաչված բոլոր մարդիկ: Բայց որ պետք է վերջիվերջո մեռնել, ես դա, իմ երիտասարդ բարեկամ, ապացուցել եմ ութսուներկու տարեկան հասակում նույնքան համոզիչ, ինչպես որ եթե մեռած լինեի դպրոցական տարիքում: Եթե դա կարող է ծառայել իմ արդարացմանը, ահա թե ինչ կավելացնեմ ես. իմ բնավորության մեջ շատ էր մանկականությունը, հետաքրքրասիրությունը, խաղեր սիրելու մղումը, ժամանակը հենց այնպես վատնելու ուրախությունը: Այդ պատճառով էլ ինձ անհրաժեշտ եղավ մի փոքր ավելի երկար ժամանակ, մինչև հասկացա, որ բավական է այլևս խաղալը:

Այս ասելիս նա խորամանկ, նույնիսկ աներեսաբար ժպտում էր: Նրա հասակն ավելի մեծացավ, ձիգ կեցվածքը և դեմքի լարված արժանապատվությունը անհետացան: Եվ մեր շուրջբոլորը օղբ այժմ լեփեցուն էր երաժշտությանը, Գոթեի երգերով, ես պարզ լսում էի Մոցարտի «Մանուշակը» և Շուբերտի «Ճածկում ես կրկին ամուսնու հովիտը»: Եվ Գոթեի դեմքը հիմա դարձել էր վարդագույն ու ջահել և ժպտում էր, և շուտով նմանվեց մեկ Մոցարտին, մեկ Շուբերտին, կարծես նրանք եղբայրներ լինեին, և նրա կրծքի աստղը կազմված էր գուտ մարգագետնային ծաղիկներից, նրա կենտրոնում ուրախ և փարթսամ բարձրանում էր դեղին զինարբուկի ծաղկեբաժակը:

Ինձ բոլորովին չէր բավարարում, որ ծերունին իմ հարցերից և մեղադրանքներից ցանկանում էր խուսափել այդպես կատակի տարով, և ես նայեցի նրան կշտամբանքով: Այդ ժամանակ նա կոացավ և իր բերանը, բոլորովին մանկական դարձած իր բերանը մոտեցրեց իմ ականջին և ցածր շշուշաց.

– Պատանյակ իմ, դու շատ լուրջ ես ընդունում ծերունի Գոթեին: Ձեր մարդկանց, ովքեր արդեն մահացել են, չպետք է լուրջ ընդունել, այլապես անարդարացի կվարվեն նրանց հետ: Մենք՝ անմահներս, չենք սիրում, երբ մարդիկ լրջանում են, մենք սիրում ենք կատակը: Լրջությունը, պատանյակ իմ, ժամանակի գործն է: Այն ծնվում է, ասեմ քեզ, ժամանակը գերազանահատելիս: Ես էլ մի ժամանակ գերազանահատում էի ժա-

մանակը, այդ նպատակով ուզում եմ ապրել հարյուր տարի: Հավերժության մեջ, սակայն, հասկանում ես, ժամանակ չկա, հավերժությունը սուկ մի ակնթաթ է, որը բավական է հենց մի կատակի համար:

Այդ մարդու հետ, իսկապես, հնարավոր չէր այլևս լրջորեն խոսել, նա ուրախ և ճարպկորեն պարում էր, նրա շքանշանի աստղի միջից, ինչպես հրթիռ, շուտով մեկ դուրս էր ցցվում գինարբուկը, մեկ փոքրանում էր ու անհետանում: Մինչ Գյոթեն փայլում էր իր պարաբայլերով ու շարժումներով, ես մտածեցի, որ այս մարդը, համենայն դեպս, բաց չի թողել պարել սովորելու հնարավորությունը: Նա հրաշալի էր ախրապետում պարին: Այստեղ ես նորից հիշեցի կարիճին կամ, ավելի ճիշտ, Մոլլին, և ձայն տվեցի Գյոթեին:

– Ասացեք, այստե՞ղ է Մոլլին:

Գյոթեն հռեռաց: Նա մոտեցավ իր սեղանին, բացեց զգրոցներից մեկը, հանեց ոչ այն է՝ կաշվե, որ այն է՝ թավշե մի արկղիկ, բացեց և մոտեցրեց իմ աչքերին: Այնտեղ, մուգ թավշի վրա դրված էր փոքրիկ, անթերի և աղոտ լույս արձակող, հագիվ տեսանելի կանացի մի ոտք, մի հրաշագեղ ոտք, ծնկի մոտ փոքր-ինչ ծավված, դեպի ցած պարզած ոտնաթաթով, մատների ամենամուրթ ու աչքի ընկնող գծերով:

Ես ձեռքս պարզեցի, որպեսզի վերցնեմ ոտքը, որն ամբողջովին գայթակղել էր ինձ, բայց երբ ուզում էի վերցնել այն երկու մատներով, թվաց, որ խաղալիքը աննշան չափով շարժվեց, և մտքովս անցավ, որ դա գուցեև կարիճն է: Թվաց, որ Գյոթեն հասկացավ դա, թվաց նույնիսկ, որ նա հենց ուզում էր և նպատակ ունենալ հասնել այդ խոր շփոթմունքին, ցանկության ու վախի միջև այդ տանջահարույց երկպառակությանը: Փոքրիկ, հրապուրիչ կարիճը նա ընդհուպ մոտեցրեց իմ դեմքին, տեսավ իմ թուլանքը դրա հանդեպ, տեսավ դրանից սարսափով իմ ետ քաշվելը, և թվաց, որ դա նրան մեծ բավականություն պատճառեց: Մինչ նա ինձ նյարդայնացնում էր իր հրապուրիչ և վտանգավոր առարկայով, նորից դարձավ բոլորովին ձեռք, վաղմջական, հագար տարեկան, ձյունասալիտակ մազերով, և ծերունական նրա գունատ դեմքը ծիծաղում էր հանդարտ, անձայն, ծիծաղում էր ինքն իր մեջ կտրուկ, ծերունական անդնդախոր հումորով:

Երբ արթնացա, երազս մոռացա, միայն հետո այն կարողացա վերհիշել: Ես, հավանաբար, քնել էի մեկ ժամի չափ, երաժշտության և իրարանցումի տակ, ռեստորանի սեղանին, երբեք չէի կարող մտածել, որ ես ընդունակ եմ դրան: Իմ սիրելի աղջիկը կանգնած էր իմ դեմ, մի ձեռքը ուսիս:

– Ինձ երկու կամ երեք մարկ տուր, – ասաց նա, – այնտեղ ես ինչ-որ բան կերա:

Նրան տվեցի իմ դրամապանակը, նա գնաց՝ դրամապանակը ձեռքին և շուտով ետ եկավ:

– Այսպես, այժմ կարող եմ մի փոքր էլ նստել քո կողքին, հետո պետք է գնամ, ժամադրություն ունեմ:

Ես սարսափեցի:

– Այդ ո՞ւմ հետ, – արագ հարցրի ես:

– Մի պարոնի, փոքրիկ Հարրի: Նա ինձ հրավիրել է «Օդեոն» սրճարան:

– Օհ, ես կարծում եմ՝ դու ինձ մենակ չես թողնի:

– Էհ, թող հրավիրելիք ինձ: Բայց մեկը քեզանից առաջ է անցել: Դրա փոխարեն կարգին դրամ կխնայես: «Օդեոնը» ծանոթ է: Կեսգիշերից հետո՝ միայն շամպայն: Փավուկ բազմոցներ: Նեգրական երգչախումբ, շատ ընտիր է:

Ես այդ բոլորը հաշվի չէի առել:

– Ախ, – ասացի խնդրելով, – թույլ տուր ինքն քեզ հրավիրեմ: Ես կարծում էի, թե դա ինքնին հասկանալի բան է, չէ՞ որ մենք արդեն ընկերներ ենք: Թույլ տուր հրավիրեմ քեզ՝ ուր ուզում ես, խնդրում եմ:

– Դու շատ սիրալիր ես: Բայց զիտես՝ խոսքը խոսք է, համաձայնել եմ, պետք է գնամ: Էլ քեզ մի տանջիր: Ավելի լավ է՝ մոտեցիր, խմիր մի կում էլ, մենք դեռ զինի ունենք շշի մեջ: Դու դա կխմես, հանգիստ կգնաս տուն և կքնես: Խոստացիր:

– Ոչ, տուն գնալ չեմ կարող:

– Ախ, հա, քո պատմությունները: Դու դեռ չես վերջացրել Գյոթեի հետ քո գործերը (այդ պահին հիշեցի Գյոթեի մասին երազս): Բայց եթե, իրոք, չես կարող տուն գնալ, ապա մնա այստեղ, սրանք սենյակներուն են օտարների համար: Պատվիրե՞մ քեզ համար:

Դա ինձ ուրախացրեց, ես հարցրեցի, թե որտեղ կարող եմ նրան տեսնել նորից: Որտե՞ղ է նա ապրում: Նա այդ չասաց ինձ: Ես պետք է միայն մի քիչ փնտրեմ, այդ դեպքում կգտնեմ:

– Իսկ քեզ չի՞ կարելի հրավիրել:

– Ո՞ր:

– Ուր ցանկանում ես և երբ ցանկանում ես:

– Բարի: Երեքշաբթի կրնորենք միասին «Ծեր ֆրանցիսկանցի» ռեստորանում՝ երկրորդ հարկում: Ցտեսություն:

Նա ձեռքը պարզեց ինձ, և միայն այդ ժամանակ ես ուշադրություն դարձրեցի այդ ձեռքի վրա, ձեռք, որ ամբողջովին սազում էր նրա ձայնին, գեղեցիկ ու առողջ, խելացի և բարի: Նա հեզանքով ծիծաղեց, երբ նրա ձեռքը համբուրեցի:

Եվ վերջին պահին նա նորից շրջվեց իմ կողմը և ասաց.

– Ես ուզում եմ քեզ էլի մի քան ասել Գյոթեի հետ կապված: Հասկանում ես, նույն բանը, ինչ պատահել է քեզ Գյոթեի հետ, երբ չես կարողացել տանել նրա նկարը, ինձ հետ երբեմն պատահում է սրբերի առնչությամբ:

– Սրբերի՞: Դու այդքան բարեպա՞շտ ես:

– Ոչ, ես բարեպաշտ չեմ, ցավոք, բայց ինչ-որ ժամանակ եղել եմ և ինչ-որ ժամանակ լինելու եմ նորից: Ախր, բարեպաշտության ժամանակ չկա:

– Ժամանա՞կ: Դրա համար ժամանա՞կ է պետք:

– Օ՛, այո: Բարեպաշտ լինելու համար ժամանակ է պետք, ավելին՝ անկախություն ժամանակից: Դու չես կարող լուրջ բարեպաշտ լինել և միաժամանակ ապրել իրականության մեջ ու քեզ նաև բարեպաշտ պահես. ժամանակ, դրամ, «Օդեոն» սրճարան և նման բաներ:

– Հասկանում եմ: Բայց դու ի՞նչ ունես սրբերի հետ:

– Այո, կան սրբեր, որոնց առանձնապես սիրում եմ՝ Աբել-ֆանը, սուրբ Ֆրանցիսկը և ուրիշներ: Երբեմն տեսնում եմ նրանց նկարները, նաև Փրկչի ու Աստվածամոր, այնքան կեղծ, արհեստական, հիմար նկարներ, որ տանել չեմ կարող այնպես, ինչպես դու՝ Գյոթեի նկարը: Երբ տեսնում եմ նման քաղցր-մեղոց, նման հիմար Փրկչի կամ հիմար Ֆրանցիսկի և տեսնում եմ, թե ինչպես են ուրիշները այդ նկարները համարում գեղեցիկ և ուսանելի, դա ընդունում եմ իբրև վիրավորանք ճշմարիտ Փրկչին և մտածում եմ. ախ, ինչի համար նա ապրեց ու այդքան դաժան տառապանքներ տեսավ, եթե մարդկանց պիտի բավարարեր նաև նրա այդպիսի հիմար պատկերը: Չնայած դրան, ես գիտեմ, որ Փրկչի կամ սուրբ Ֆրանցիսկի իմ կերպարն ընդամենը ինչ-որ մարդու կերպար է և հեռու է բնօ-

րինակից, որ իրեն՝ Փրկչին, իմ ներաշխարհում զանվող նրա պատկերը կարող էր թվալ նույնչափ հիմար ու պակասավոր, որչափ ինձ այդ քաղցր-մեղոց նկարները: Ես դա քեզ ասում եմ ոչ թե նրա համար, որ արդարացնեմ քո զայրույթը և վիրավորանքը այն նկարի առնչությամբ, ոչ, այդտեղ դու իրավացի չես: Դա ասում եմ միայն ցույց տալու քեզ, որ ընդունակ եմ քեզ հասկանալ: Դուք՝ գիտնականներդ և արվեստագետներդ, ձեր գլուխներում լիքը ամեն տեսակ առանձնահատուկ բաներ ունեք, բայց դուք, ինչպես և բոլորը, մարդիկ եք, և մենք՝ մյուսներս, նույնպես ունենք մեր երազանքները և խաղերը մեր գլուխների մեջ: Ես այսր նկատեցի, գիտնական պարոն, որ դու փոքր-ինչ շփոթության մեջ ընկար, թե ինչպես պետք է պատմես ինձ Գյոթեի հետ պատմությունը, դու պետք է աշխատելիք քո բարձր գաղափարները հասարակ աղջկա համար դարձնել հասկանալի: Դե, ես էլ ուզում եմ քեզ ցույց տալ, որ դու այդքան էլ շատ չարչարվելու կարիք չունեիր: Ես արդեն հասկանում եմ քեզ: Իսկ այժմ՝ վերջացնենք: Քեզ անհրաժեշտ է անկողին մտնել:

Աղջիկը, զնաց, իսկ ինձ մի ծեր սպասավոր առաջնորդեց երրորդ հարկ, ավելի ճիշտ, սկզբում նա հարցրեց ծանրոցի մասին, և երբ տեղեկացավ, որ ծանրոց չունեմ, ասաց, որ նախապես պետք է վճարեմ, ինչպես ինքն ասաց՝ գիշերավարձ: Այնուհետև, մութ, հիմ սանդուղքներով բարձրանալով, ինձ տարավ մի սենյակ և թողեց մենակ: Այնտեղ դրված էր չոր, փայտե մի մահճակալ, շատ կարճ ու կոպիտ, իսկ պատին կախված էին սուր և Գարիբալդիի գունավոր նկարը, ինչպես նաև ինչ-որ ընկերության տոնահանդեսից մնացած թառամած մի ծաղկեպսակ: Ես շատ բան կտայի մի գիշերաշապկի համար: Գոնե ջուր կար և փոքրիկ սրբիչ, ես լվացվեցի և շորերով պառկեցի մահճակալին, լույսը թողեցի վառված և ազատ ժամանակ ունենալով՝ տրվեցի խորհրդածություններիս: Այսպես, ուրեմն, Գյոթեի հետ հաշիվներս կարգավորվեցին: Հրաշալի է, որ նա երազում ինձ հայտնվեց: Եվ հետո այս անմասն աղջիկը՝ եթե միայն իմանայի նրա անունը: Անսպասելի մարդ, կենդանի մարդ, որ ջարդեց մեռյալիս անթափանց ապակին և ինձ պարզեց իր ձեռքը, բարի, գեղեցիկ, տաք ձեռքը: Հանկարծ նորից կյանք առան երևույթներ, որոնք ինչ-որ կապ ունենին ինձ հետ և որոնց մասին ես կարող էի ուրախությամբ, հոգառու-

րությամբ, ուշադրությամբ մտածել: Հանկարծ քացվել էր մի դուռ, որի միջով կյանքն էր գալիս դեպի ինձ: Հավանաբար, ես նորից կարող եմ ապրել, հավանաբար, նորից կարող եմ մարդ լինել: Հոգիս, որ սառնության մեջ քնած էր, գրեթե սառած, շնչում էր նորից՝ քնեամ քափահարելով փոքրիկ, քույլ քեները: Գլուխն ինձ մոտ է եղել: Աղջիկը պատվիրեց ինձ ուտել, խմել, քնել, ցույց տվեց իր մտերմությունը, ծիծաղեց ինձ վրա, ինձ անվանեց փոքրիկ, հիմար տղա: Եվ նա՝ հրաշալի իմ ընկերուհին, պատմեց նաև սրբերի մասին և ցույց տվեց ինձ, որ անզամ ամենասանուկոր խելագարություններիս մեջ ես մենակ ու չհասկացված չեմ, հիվանդագին բացառություն չեմ, որ ես քույրեր ու եղբայրներ ունեմ, որոնք ինձ հասկանում են: Արդյոք կատենե՞մ նրան նորից: Այո, իհարկե, նա վստահելի էր: «Խոսքը խոսք է»:

Եվ նորից ահա ես քնեցի, քնեցի չորս, հինգ ժամ: Ժամը տասի մոտ էր, երբ արթնացա՝ շորերս ճմռված, հալից ընկած, հոգնատանջ, գլուխս նախորդ օրը տեղի ունեցած ինչ-որ սարսափելի հիշողությամբ ծանրաբեռ, բայց աշխույժ, հույսով լի, փառավոր մտքերով համակված: Երբ վերադառնում էի տուն, բնավ չզգացի այն սարսափների շունչը, որ երեկ զգում էի վերադարձիս:

Մանդուղքների վրա, արամկարիայից վերև, հանդիպեցի «մորաբորջը», իմ տանտիրուհուն, որին շատ հազվադեպ էի տեսնում, որի մտերիմ բնավորությունն ինձ շատ էր դուր գալիս: Հանդիպումը հաճելի չէր ինձ համար, ինչ էլ լիներ, իմ տեսքը մի քիչ քափոփված էր ու հոգնած, ես չսափրված էի, չսանրված: Ես ողջունեցի և ուզում էի անցնել: Այլ դեպքերում նա միշտ հաշվի էր առնում մենալ և աննկատ մնալու իմ ցանկությունը, բայց այսօր թվաց, որ իմ և շրջակա աշխարհի միջև վարագույրը, փաստորեն, պատռվել է, արգելափակոցը ընկել, նա ծիծաղեց ու մնաց կանգնած:

– Այ թե լավ շրջեցիք, պարոն Հալլեր, այս գիշեր նույնիսկ տանը չէիք: Պետք է որ հոգնած լինեք շատ:

– Այո, – սասցի և ինքս էլ ժպտացի, – այս գիշեր մի քիչ աշխույժ անցավ, և քանի որ ես չէի ուզում Ձեր տան հանգիստը խանգարել, քնեցի հյուրանոցում: Ձեր տան հանգստի և կարգուկանոնի հանդեպ իմ հարգանքը մեծ է, այստեղ գտնվելով՝ ես երբեմն ինձ զգում եմ իբրև օտար մարմին:

– Մի ծիծաղեք, – պարոն Հալլեր:

– Օ՛, ես ծիծաղում եմ միմիայն ինձ վրա:

– Հենց դա Դուք չպետք է անեք: Դուք իմ տանը չպետք է Ձեզ զգաք իբրև «օտար մարմին»: Ապրեք, ինչպես Ձեր սիրտն է կամենում, և արեք այն, ինչ ուզում եք: Ես արդեն ունեցել եմ շատ, շատ կարգին կենվորներ, պարկեշտության տիպարներ, բայց ոչ մեկն ավելի հանգիստ չէր, քան Դուք և չէր խանգարում մեզ ավելի քիչ, քան Դուք: Իսկ հիմա՝ թեյ, ուզո՞ւմ եք:

Ես չհակառակվեցի: Հյուրասենյակում, որը զարդարված էր նրա պապի գեղեցիկ նկարներով ու կահույքով, ինձ թեյ տվեցին, և մենք մի փոքր շատախոսեցինք, սիրալիք տիկիներ, ուղղակի հարցեր չտալով, իմացավ իմ կյանքի և մտքերի մասին ինչ-որ բաներ, նա ինձ լսում էր ուշադրության և մայրական Ոչ – շատ – լուրջ լսելու խառնուրդով, որով խելացի կանայք վերաբերվում են տղամարդկանց խենթություններին: Խոսք գնաց նաև նրա զարմիկի մասին, և նա կողքի սենյակներից մեկում ցույց տվեց նրա սիրողական աշխատանքներից մեկը՝ ուղիորդումսի: Ահա այստեղ նստում էր ջանասեր երիտասարդը իր ազատ երեկոներին և գլուխ բերում նման մի մեքենա՝ հրապուրված անլար կապի գաղափարով՝ բարեպաշտորեն ծնկի իջած տեխնիկայի աստծո առաջ, որին անհրաժեշտ եղան հազարավոր տարիներ, որպեսզի հայտնագործի և բոլորովին անկատար տեսքով ներկայացնի այն, ինչը մշտապես գիտեր և ավելի խելոք ձևով օգտվում էր յուրաքանչյուր մտածող մարդ: Մենք խոսեցինք այդ մասին, քանզի մորաքույրը փոքր-ինչ հակված էր դեպի բարեպաշտությունը, և կրոնական գրույցները տե՛ս չէին նրա համար: Ես սասցի նրան, որ բոլոր ուժերի և շարժումների ամենուրեք առկայությունը շատ լավ հայտնի էին հին հնդիկներին, և տեխնիկան համընդհանուր գիտակցության է հասցրել այդ երևույթի սուկ մի փոքր մասը՝ կառուցելով նրա, այսինքն՝ ձայնային ալիքների համար առաջին դեռ հրեշավոր չափով անկատար ընդունիչ և հաղորդիչ: Իսկ այդ վաղնջական գիտակցության էությունը՝ ժամանակի անորոշությունը, առ այսօր տեխնիկայի կողմից դեռևս նկատված չէ, բայց, հասկանալի է, դա նույնպես «կհայտնագործվի» և կընկնի գործարար ճարտարագետների ձեռքը: Հավանաբար, շատ շուտով կհայտնագործեն նաև, որ մեզ մշտապես շրջապատում են ոչ միայն այսօրվա, այս վայրկյանի նկարներն ու

իրադարձությունները, նման այն բանին, ինչպես որ երաժշտությունը Փարիզից ու Բեռլինից այս պահին լսելի է դառնում Ֆարնկֆուրտում կամ Յյուրիխում, այլև երբևիցե տեղի ունեցած ամեն ինչ արձանագրվում է նույն կարգով ու ձևերի տակ մնում, և որ մենք մեկ օր, լարով կամ առանց լարի, ձայնային աղմուկների ուղեկցությամբ կամ առանց դրա կլանք Սողոմոն քաղաքին կամ Վալտեր ֆոն Ֆոգելվեյդեին³³ խոսելիս: Եվ որ այդ ամենը, ինչպես որ այսօր ռադիոյի սաղմերը, ծառայելու են մարդկանց նրա համար, որպեսզի նա կարողանա փախչել ինքն իրենից և իր նպատակից՝ ավելի ու ավելի խճճվելով անօգուտ զբաղմունքների և զվարճությունների խիստ ցանցում: Բայց ինձ քաջ ծանոթ այդ ամենը ասացի ոչ թե սովորական դառնությամբ, ժամանակի ու տեխնիկայի հանդեպ ծաղրանքով, այլ կատակով ու թեթև, և մոռաբույր ծիծաղում էր, մենք միասին նստեցինք մոտ մեկ ժամ, թեյ խմեցինք և ուրախ էինք:

Երեքշաբթի երեկոյան ես այն գեղեցիկ, զարմանահարաշ աղջկան հրավիրել էի «Սև արծիվ», և մնացած ժամանակը սպանելը ինձնից քիչ ջանքեր չպահանջեց: Ու երբ վերջապես երեքշաբթին եկավ, անժամոթուհու հետ իմ հարաբերությունների կարևորությունը սարսափելիության աստիճան դարձավ պարզ: Ես մտածում էի միայն նրա մասին, ես նրանից սպասում էի ամեն ինչ, ես պատրաստ էի նրա համար գոհաբերել ամեն ինչ և ընկնել նրա ոտքերը՝ առանց նվագագույն չափով սիրահարված լինելու: Բավական էր պատկերացնել, որ նա խախտել է մեր ժամադրությունը կամ մոռացել այդ մասին, որպեսզի հստակ տեսնեի, թե ինչ էր լինելու ինձ հետ այդ դեպքում: Այդ դեպքում աշխարհը վերստին դատարկվելու էր, մոայլ ու անարժեք օրեր էին հաջորդելու միմյանց, կրկին վերադառնալու էր ինձ շրջապատող լուսնային և մահվան ամբողջ սարսափը, և ոչ մի ելք չէր լինելու այդ համր դժոխքից ազատվելու՝ բացի ամեղուց: Եվ այդ մի քանի օրերի ընթացքում ամեն ինձ համար չդարձավ սիրելի, նա ոչինչ չէր կորցրել իր ահագու ևսությունից: Եվ հենց դա էլ ասելի էր. ես խոր, սիրտս ճնշող վախ էի զգում կոկորդս կտրելուց: Վախեցնում էի մեռնելուց, դիմադրում էի այնպիսի կատաղի, համառ, ըմբոստացող ուժով, կարծես թե ամենաառույզ մարդն էի աշխարհի, և իմ կյանքը իսկական դրախտ էր: Ամբողջական, հաշվենկատ

պարզությամբ ես հասկանում էի իմ վիճակը, այն է՝ անհաշտ լարվածություն ապրել չկարողանալու և մեռնել չկարողանալու միջև, ինչն ինձ համար «Սև արծիվ» ռեստորանի անձանոթ, փոքրամարմին ու գեղանի պարուհուն դարձնում էր այդքան կարևոր: Նա փոքրիկ պատուհան էր, լույսի աննշան ճեղք սարսափի դժոխքում: Նա էր փրկությունը, ելքը դեպի ազատությունը: Նա պետք է ինձ սովորեցներ ապրել կամ սովորեցնեք մեռնել, նա պետք է իր ամուր ու գեղեցիկ ձեռքերով հպվեր իմ քարացած սրտին, որպեսզի այն կամ ծաղկեր, կամ կյանքի հպումից փոշիանար: Որտեղի՞ց էր նա վերցնում այդ եռանդը, որտեղի՞ց էր գալիս կախարդանքը, ի՞նչ գաղտնի պատճառներ էին ընկած ինձ համար նրա խոր իմաստի մեջ՝ դրա մասին ես չէի մտածում, և դա այնքան էլ կարևոր չէր, ինձ համար ոչ մի նշանակություն չուներ դա իմանալը: Ոչ մի իմացություն, ոչ մի գիտակցություն ինձ համար այլևս որևէ նշանակություն չուներ, չէ՞ որ հենց դրանից էի ես կշտացած, և հենց այն էր ինձ համար ամենաաուր, ամենաստորացուցիչ և ամենաամոքալի տատապանքը, որ ամենայն պարզությամբ հասկանում էի իմ իրավիճակը: Ես իմ առաջ տեսնում էի այդ ողորմելուն, այդ անասուն Տափաստանի գայլին ինչպես ճանճ՝ սարդոստայնի մեջ, տեսնում էի, թե ինչպես էր վճռվում նրա ճակատագիրը, ինչպես էր նա խճճվել և որքան անպաշտպան էր, ինչպես էր պատրաստվում սարդը խմել նրա արյունը և ինչպես փրկիչ մի ձեռք երևաց մոտերքում: Իմ տատապանքի պատճառների և առնչությունների, իմ հոգեկան հիվանդության և կախարդվածության ու նյարդայնության մասին ես կարող էի ամենախելալուք, շրջահայաց բաներ ասել, դրա գաղտնիքները ինձ ծանոթ էին: Սակայն ինձ հարկավոր էին ոչ թե գիտելիքներ, ոչ թե իմացություններ, դրանց կարիքը չէի զգում այդպես հուսահատորեն, այլ տպավորությունների, վճռի, հրման և թռիչքի:

Թեև սպասման այդ մի քանի օրերին ես ոչ մի անգամ չէի կասկածել, որ իմ մտերմուհին պահելու էր իր խոսքը, վերջին օրը շատ տազնապաճ էի և անվստահ. կյանքումս ոչ մի անգամ այդքան անհամբերությամբ չէի սպասել երեկոյի մոտենալուն: Եվ մինչ լարվածությունն ու անհամբերությունն ինձ համար դառնում էին զրեթե անտանելի, միևնույն ժամանակ դրանք զարմանալի բարերար ազդեցություն էին թողնում վրաս. աներևակայելի գեղեցիկ ու նոր էր ինձ՝ հուսահատվա-

ծիս համար, որ երկար ժամանակ ոչնչի չէի սպասել և ոչնչով չէի ուրախացել, հրաշալի էր դա՝ ամբողջ օրը անհանգստությամբ, երկյուղով լի ու սպասումով լի նեավել այս ու այն կողմ, նախապես պատկերացնել երեկոյան հանդիպումը, խոսակցությունները, արդյունքները, սափրվել դրա համար և հագնվել (առանձին հոգատարությամբ, նոր վերնաշապիկ, նոր փողկապ, կոշիկի նոր քողեր): Ինչպիսին էլ լինեի այդ խելացի և խորհրդավոր փոքրիկ աղջիկը, իմ նկատմամբ ինչ վերաբերմունք էլ ունենար, միևնույն էր ինձ համար. նա կար, հրաշքը կատարվել էր, քանի որ ես վերստին գտել էի նոր մարդ և կյանքի հանդեպ նոր հետաքրքրություն: Կարևորը միայն այն էր, որ դա շարունակվեր, որ ես տրվեի այդ գրավչությանը, հետևեի այդ աստղին:

Անմոռանալի ակնթարթ էր, երբ նրան նորից տեսա: Հին, հարմարավետ ռեստորանում նստած էի փոքրիկ մի սեղանի մոտ, տեղը պատվիրել էի նախապես հեռախոսով, թեև դրա կարիքը չկար, տեղեկացել էի կերակրացանկի մասին, և ջրով լի բաժակի մեջ դրել էի երկու գեղեցկատես արխիդեա, որ գնել էի նրա համար: Մտխաված էի նրան երկար սպասել, թեև վստահ էի նրա գալուստ և ոչ պակաս՝ հուզված: Եվ ահա նա եկավ, կանգ առավ հանդերձարանի մոտ և ողջունեց ինձ միայն իր բաց գորշավուն աչքերի ուշադիր, քննող հայացքով: Անվստահության զգացումով ես հետևում էի, թե ինչպես էր նրան վերաբերվում սպասավորը: Ոչ, փառք Աստծո, որ մի անավարություն, ընդունված պաշտածության ոչ մի պակաս, նա անառարկելիորեն քաղաքավարի էր: Եվ, այդուամենայնիվ, նրանք ծանոթներ էին, Էմիլ էր սպասավորի անունը:

Երբ նրան պարզեցի արխիդեաները, ուրախացավ և ծիծաղեց:

– Դու շատ սիրալիր ես, Հարրի: Ուզում էիր ինձ մի բան նվիրել, ճի՞շտ է, և չգիտեիր, թե ինչ, լավ չգիտեիր, ինչ ընտրես՝ այնքանով, որքանով, ըստ էության, իրավունք ունես ինձ ինչ-որ բան նվիրել, որպեսզի չվիրավորվեմ, և ահա գնել ես արխիդեաներ, դրանք ընդամենը ծաղիկներ են, սակայն թանկ արժեն: Շատ շնորհակալ եմ: Ընդհանրապես, կասեմ քեզ հետևյալը՝ չեմ ուզում, որ դու ինձ ինչ-որ բան նվիրես: Ես սպասում եմ տղամարդկանց նվերներով, բայց քո հաշվին չեմ ուզում ապրել: Բայց դու որքան ես փոխվել: Քեզ ճանաչել չի լի-

նի: Վերջին անգամ այնպիսի տեսք ունեիր, կարծես հենց նոր էին քեզ փրկել կախվելուց, իսկ այսօր արդեն համարյա մարդու նման ես: Հետաքրքիր է, իմ սպասվերը կատարեցի՞ր:

– Ո՞ր պատվերը:

– Այդքան մոռացկո՞տ ես: Ուզում եմ հարցնել, թե հիմա կարո՞ղ ես ֆոքստրոտ պարել: Դու ինձ ասում էիր, որ ոչինչ այնպես չես ցանկանում, ինչպես ինձնից հրամաններ ստանալը, որ իմ հրամանները քեզ համար ամենասիրելիին են: Հիշո՞ւմ ես:

– Օ՛, իհարկե: Եվ դա մնում է անփոփոխ: – Ես դա ասում էի լրջորեն:

– Եվ, այդուամենայնիվ, դու պարել չես սովորել:

– Մի՞թե հնարավոր է այդքան շուտ, մի քանի օրվա մեջ:

– Իհարկե: Ֆոքս պարել կարելի է սովորել մեկ ժամվա մեջ: Բոստոնը՝ երկու: Տանգոն տևում է ավելի երկար, բայց դու դրա կարիքը բնավ չունես:

– Բայց հիմա, վերջապես, ես կարո՞ղ եմ իմանալ քո անունը:

Նա մի պահ լուռ նայեց ինձ:

– Գուցե դու այն գուշակե՞ս: Ինձ համար շատ հաճելի կլինի, եթե դու գուշակես այն: Ուշադիր եղիր և լավ նայիր ինձ: Դու արդեն չե՞ս նկատել, որ իմ դեմքը հանկարծ մանկական տեսք է ստանում: Օրինակ՝ հիմա:

Այո, այդ պահին ուշադիր նայելով նրա դեմքին, գտա, որ նա իրավացի է, նրա դեմքը մանկական էր: Եվ երբ մեկ րոպեի չափ ես լուռ էի, այդ դեմքը սկսեց խոսել ինձ հետ և հիշեցրեց ինձ իմ մանկական տարիների մասին և այն ժամանակվա իմ մանկական ընկերոջը, որի անունն էր Հերման: Մի պահ նա ամբողջովին փոխվեց, դարձավ այն Հերմանը:

– Եթե դու տղա լինեիր, – ասացի զարմացած, – Հերման կկոչվեիր:

– Ո՞վ իմանա, գուցեև տղա եմ և պարզապես փոխել եմ շոքերս, – ասաց նա աշխուժորեն:

– Հերմինե՞ն է քո անունը³⁴:

Նա գլխով արեց պայծառացած, ուրախ, որ գուշակել եմ: Այդ պահին հենց մատուցեցին ապուրը, և մենք սկսեցինք ուտել, ու նա մանկան պես զվարթ էր: Նրա մեջ դուրեկան և կախարդիչ գծերից ամենահրաշալիին և ինքնատիպը ինձ համար այն էր, որ անսպասելիորեն խոր լրջությունից կարող էր անց-

նել ամենատրախ զվարթության և ընդհակառակը, ընդ որում՝ չփոխվելով և չաղավաղվելով, ինչպես դա լինում է շնորհալի երեխաների մոտ: Այժմ մի պահ նա ուրախանում էր, փորձում էր ինձ հրապուրել ֆոքսարուտով, մույնիսկ ոտքերով մի երկու անգամ բոքեց ինձ, եռանդով գովում էր ուտելիքը, նկատեց, որ ես ջանք չեմ խնայել լավ հագնվելու համար, սակայն մի բանի քերթյուններն նկատեց իմ արտաքինի մեջ:

Նրանից, իմիջիայրոց, հարցրեցի.

– Ինչպե՞ս հաջողվեց քեզ, որ հանկարծ երեխայի տեսք ստացար, և ես գուշակեցի քո անունը:

– Օհ, այդ ամենը հաջողեցրիք դու ինքդ: Ինչպես դու՝ գիտնական այրդ, չես հասկանում, որ ես քեզ դուր եմ գալիս և կարևոր եմ նրա համար, քանի որ մի տեսակ քո հայելին եմ, քանի որ իմ ներսում ինչ-որ բան կա, ինքը քեզ պատասխան է տալիս և հասկանում քեզ: Ըստ էության, բոլոր մարդիկ միմյանց համար պետք է նման հայելիներ լինեն, այդպես պատասխանեն և ներդաշնակեն իրար, սակայն այդպիսի խենթերը, ինչպիսին դու ես, հազվագյուտ են և հեշտությամբ շեղվում են՝ ենթարկվելով հրապուրանքի այնպես, որ այլ մարդկանց աչքերում այլևս ոչինչ չեն կարողանում տեսնել ու կարդալ, նրանց այլևս դա չի հետաքրքրում: Եվ հետո, երբ այդ խենթը հանկարծ գտնում է դեմք, որը, իրոք, նայում է նրան, և որի մեջ նա զգում է պատասխանի և հարազատության նման մի բան, այո, այդ պահին, անշուշտ, ուրախանում է:

– Դու ամեն ինչ գիտես, Հերմիներ, – զարմացած բացականչեցի ես: – Ամեն ինչ ճիշտ այնպես է, ինչպես ասում ես: Եվ, այդուամենայնիվ, դու բոլորովին այլ ես, քան ինքս: Դու իմ հակադրությունն ես, դու ունես այն ամենը, ինչ ես չունեմ:

Այդպես թվում է քեզ, – կարճ ասաց նա, – և դա լավ է:

Եվ այդ պահին նրա դեմքի վրայով, որն ինձ համար, իրոք, ինչ-որ խորհրդավոր հայելու պես էր, անցավ լրջության ծանրածանր ամպը, այդ պահին նրա դեմքը արտահայտում էր միմիայն լրջություն, միմիայն ողբերգականություն՝ առհասարակ, ինչպես դիմակի աչքերը: Դանդաղ, կարծես ուժով արտաբերելով բառ բառի հետևից, նա ասաց.

– Լսիր, մի մոռանա, քե ինչ ասացիր ինձ: Դու ասացիր, որ ես պետք է քեզ հրամայեմ և որ քեզ համար ուրախություն է լինելու՝ իմ բոլոր հրամաններին ենթարկվելը: Մի մոռանա: Դու

պետք է իմանաս, փոքրիկ Հարրի. ինչպես որ ես ինքս եմ ներգործում քեզ վրա, որ իմ տեսքը քեզ պատասխան է տալիս, որ ինչ-որ բան իմ ներսում ընդառաջ է գալիս քեզ և հավասարակշռում, մույն կերպ էլ դու ներգործում ես ինձ վրա: Երբ վերջին անգամ քեզ տեսա «Մե արծիվ» մտնելիս, հոգնած, բացակա, և այլևս ոչ այս աշխարհից, անմիջապես զգացի՝ սա ինձ լսելու է, սա կարիք ունի, որ ես հրամայեմ իրեն: Եվ ես հրամայելու եմ նրան: Այդ պատճառով էլ խոսեցի քեզ հետ, և այդ պատճառով մենք բարեկամներ դարձանք: ,

Նա խոսում էր ծանր լրջությամբ այնպես լեցուն, հոգու այնպիսի ճնշվածությամբ, որ նրան կարգին չհասկանալով՝ փորձեցի հանգստացնել և խոսակցությունը փոխել: Նա միայն հոնքերի շարժումով ատիպեց ինձ ետ կանգնել այդ մտքից, և սառը ձայնով շարունակեց.

– Դու պետք է քո խոսքը պահես, փոքրիկ, հիշիր, այլապես կզոջաս: Ինձնից դու կստանաս շատ հրամաններ և կհետևես դրանց, հրաշալի հրամաններ, հաճելի հրամաններ, քեզ համար ուրախալի կլինի դրանք կատարելը: Իսկ վերջում դու կկատարես իմ վերջին հրամանը, Հարրի:

– Կկատարեմ, – ասացի ես տարտամ: – Ո՞րն է լինելու քո վերջին հրամանը:

Բայց ես արդեն, Աստված գիտի, քե ինչպես՝ գլխի էի ընկնում, քե որն է դա լինելու: Նա թափ տվեց իրեն, կարծես թեքև, տենդային դող անցավ վրայով և թվաց, որ դանդաղորեն դուրս եկավ իր ներամփոփումից: Նրա աչքերը ինձ հանգիստ չէին տալիս: Հանկարծ ավելի մոայլվեց:

– Իմ կողմից ավելի խելոք կլինեք, եթե չասեի դա քեզ: Բայց ես չեմ ուզում խելոք լինել, Հարրի, այս անգամ չեմ ուզում: Ինչ-որ բոլորովին այլ բան եմ ուզում: Ուշադիր եղիր, լսիր: Դու դա կլես, մոռացության կտաս, կծիծաղես դրա վրա, լաց կլինես: Ուշադիր եղիր, փոքրիկ: Եղբայր իմ, ես ուզում եմ քեզ հետ կյանքի ու մահվան խաղ խաղալ և ուզում եմ, մինչև կսկսենք մեր խաղը, բացել քո առաջ իմ խաղաթղթերը:

Որքան գեղեցիկ էր նրա դեմքը, որքան վերերկրային, երբ ասում էր դա: Նրա աչքերում՝ սառը և պայծառ, շողում էր իմացական թախիծը, այդ աչքերը, թվում էր, տառապել էին երկրային բոլոր մտածելի տառապանքներով և դրանց ասել էին՝ այո: Բերանը խոսում էր դժվարությամբ և ինչ-որ բանից խան-

գարված, կարծես՝ խոսեր ուժեղ սառնամանիքի մեջ զտնվող մեկը, երբ սառչում է դեմքը, սակայն շրթունքների արանքում, քերանի անկյուններում հազիվ երևացող լեզվակի շարժումների մեջ, հայացքին և ձայնին հակառակ, պարզ գծագրվում էր քաղցր, խաղացկուն ինչ-որ զգայականություն, ներքին ուրախության ինչ-որ պահանջ: Խաղաղ, հարթոդորկ ճակատի վրա կախված էր մի կարճ խոպոպ, և հենց նույն սեղից, ճակատի նույն անկյունից, որտեղ ցած էր կախված խոպոպը, ժամանակ առ ժամանակ ճառագում էր, ինչպես կենդանի շնչառություն, աղայանմանության, երկսեռության կախարդանքի այլ-քր: Ուշադիր լսում էի նրան՝ երկյուղած, սակայն, միևնույն է, կարծես՝ քրացած, կարծես՝ կիսով չափ բացակա:

– Ես քեզ համար դուրեկան եմ, – շարունակեց նա, – դրա պատճառն այն է, ինչի մասին քեզ արդեն ասել եմ. ես խափանեցի քո մենակությունը, քեզ բռնեցի հենց դժոխքի դարպասների առաջ և վերադարձրի կյանք: Բայց ես քեզանից պահանջում եմ ավելին, շատ ավելին: Ես ուզում եմ ստիպել քեզ, որ սիրահարվես ինձ: Ոչ, մի առարկիր, քույր տուր խոսեմ: Ես քեզ շատ եմ դուրս գալիս, դա զգում եմ, և դու երախտապարտ ես ինձ, սակայն ինձ սիրահարված չես: Ուզում եմ ստիպել, որ սիրահարվես ինձ, դա իմ մասնագիտությունն է, ես չե՞մ որ ասքում եմ այն բանի հաշվին, որ ստիպում եմ աղամարդկանց սիրահարվել ինձ: Բայց լավ լսիր, ես դա չեմ անում այն բանի համար, քանի որ քեզ այդքան գրավիչ եմ գտնում: Ես սիրահարված չեմ քեզ, Հարրի, ինչպես որ սիրահարված չես դու ինձ: Բայց ես քո կարիքը զգում եմ, ինչպես որ դու ես իմ կարիքը զգում: Դու իմ կարիքը զգում ես հիմա, հենց այս պահին, քանի որ հուսահատված ես և սպասում ես ցնցումի, որը քեզ կնետի ջուրը և կրկին կենդանություն կտա: Դու իմ կարիքն ունես, որպեսզի սովորես պարել, սովորես ծիծաղել, ասարել սովորես: Բայց ես քո կարիքը կունենամ, ոչ այսօր, ավելի ուշ, նույնպես զեղեցիկ ու կարևոր մի բանի համար: Երբ դու սիրահարված կլինես ինձ, կտամ իմ վերջին հրամանը քեզ, դու կենթարկվես նրան, և դա քեզ ու ինձ համար լավ կլինի:

Եվ նա բաժակի միջից փոքր-ինչ բարձրացրեց գորշամանուշակագույն, կանաչ միջներակներով արխիդեան, մի պահ դեմքը քերեց դեպի նա և հայացքը սառեցրեց ծաղկի վրա:

– Քեզ համար շատ դժվար կլինի, բայց դու կկատարես այն: Դու կկատարես իմ հրամանը և կսպանես ինձ: Մա է: Ուրիշ բան մի հարցրու:

Շարունակելով նայել արխիդեային՝ նա լռեց, հայացքը խաղաղվել էր, ինչպես բացված ծաղկեբաժակ, պարզվել էր լարվածությունից ու ճնշումից, և հանկարծ գնայելի ժպիտ երևաց նրա շրթունքներին, մինչ այքերը շարունակում էին մի ակնթարթ մնալ սառը և կաշկանդված: Իսկ հետո թափահարեց մանկական փոքրիկ խոպոպներով գլուխը, մի կում ջուր խմեց, կրկին հիշեց, որ մենք ընթրիքի ենք նստած և մեծ ախորժակով անցավ ուտելուն:

Ես բառ առ բառ հստակորեն լսել էի նրա տագնապալի խոսքերը, գուշակել անգամ նրա վերջին հրամանը՝ մինչ այդ կհայտնեի ինքը, և «Դու կսպանես ինձ» բառերից այլևս չվախեցա: Այն ամենը, ինչ ասում էր նա, ինձ համար հնչում էր համոզիչ ու անխոսափելի, ինչպես ճակատագիր, ես ընդունում էի դրանք և չէի ընդդիմանում, և, այդուամենայնիվ, չնայած սարսափի լրջությանը, որով խոսում էր նա, այդ ամենը զրկվում էր լիակատար իսկությունից ու կարևորությունից: Իմ հոգու մի մասը ներծծում էր նրա խոսքերը և հավատում դրանց, մյուս մասը հավանությամբ գլխով էր անում և ընդունում ի գիտություն, որ այդ խելոք, առողջ և ինքնավստահ Հերմիենն էլ ունի իր քմայքներն ու մտքի աղոտության պահերը: Հազիվ էի լսել նրա վերջին բառերը, երբ այս ամբողջ պատկերը ծածկվեց անիրական և անազդեցիկ լինելու տպավորությամբ:

Այդուհանդերձ, ես չէի կարող լարախաղացի թեթևությամբ, ինչպես Հերմիենն, թոչիք կատարել ետ՝ դեպի իրականություն և հավանականություն:

– Ուրեմն, օրերից մի օր ես սպանելո՞ւ եմ քեզ, – հարցրեցի ես՝ հանդարտ երագելով, մինչդեռ նա նորից ծիծաղեց՝ եռանդով մաս-մաս անելով թռչնի միսը:

– Իհարկե, – անհոգ գլխով արեց նա, – այդ մասին հերիք է, հիմա ուտենք: Հարրի, բարի եղիր և ինձ համար էլի մի փոքր կանաչ սալաք պատվիրիր: Դու ախորժակ չունե՞ս: Ես կարծում եմ, որ դու պետք է սովորես այն ամենին, ինչ ուրիշների մոտ ստացվում է ինքնին, անգամ ուտելիս ուրախ լինելը: Ահա, աես, փոքրիկ, սա բաղի ոտք է, և երբ այս սպիտակ, հրաշալի

միսը առանձնացնում ենք ոսկորից, ապա դա տոն է, և այդ պահին մարդը պետք է զգա, թե ինչպես է բացվում ախորժակը, թե ինչպես է ինքը լարվում և լցվում երախտագիտությամբ իր սրտի մեջ, ինչպես սիրահարվածը, երբ առաջին անգամ իր սիրած աղջկան օգնում է հանել բաճկոնը: Հասկացա՞ր: Ո՞չ: Դու ոչխար ես: Սպասիր, ես քեզ մի կտոր կտամ այս հրաշալի բաղի ոտքից, և դու կհամոզվես: Այդպես, բերանդ բաց արա... Օհ, ինչ հրեշն ես դու: Աստված իմ, հիմա ծուռ աչքով կնայի մյուսներին՝ եթե հանկարծ տեսնեն, թե ինչպես մի կտոր կերակ իմ պատառաբաղից: Հոգ մի արա, կորուսյալ որդի, ես քեզ ամոքանք չեմ բերի: Բայց եթե քեզ, քո իսկ բավականության համար, անհրաժեշտ է ուրիշների թույլտվությունը, ապա դու, իսկապես, ողորմելի մարդ ես:

Նախկին պատկերը ավելի ու ավելի անհրաժեշտ էր դառնում, ավելի անհավատալի, որ այդ աչքերը դեռ մի քանի րոպես առաջ այնպես ծանրորեն սևեռված ու մռայլությամբ էին լցված: Օհ, հենց դա էր Հերմիներն, ինչպես և ինքը՝ կյանքը, մշտապես միայն ակնբարթ, որը չես կարող նախապես կշռադատել: Այժմ նա ուտում էր, և բաղի ոտքը, սալաքը, տորթը և լիկյորն ընդունվում էին լրջորեն, դառնում էին նյութ ուրախության և դատողությունների, խոսակցության և երևակայության: Հենց որ ափսե՛ն վերցնում էին, սկսվում էր մի նոր գրուխ: Այս կինը, որ այսպես խորությամբ նայեց իմ ներսը, որ, թվում է, կյանքի մասին ավելի շատ բան գիտի, քան բոլոր իմաստունները, տրվում էր մանկականության, ակնբարթի փոքրիկ խաղին այնպիսի արվեստով, որն ինձ անմիջապես դարձնում էր սան՝ նրա առաջ: Գուցե դա բարձրագույն իմաստություն էր, թե պարզագույն դյուրահավատություն, բայց ով կարող էր այդ աստիճան ապրել ակնբարթով, ով այդպես ապրում էր ներկայով, այդպես մտերմորեն-սիրալիք գիտեր գնահատել ճանապարհի յուրաքանչյուր ծաղիկ, զվարթության նվազագույն հնարավորություն, որ դրված է ակնբարթի մեջ, կարող էր կյանքից վախենալու ոչինչ չունենալ: Եվ այս ուրախ երեխան՝ իր լավ ախորժակով, իր ժիր, համադամ կերակրասիրությամբ, միաժամանակ թե՛ երագող էր, թե՛ ջղային կին, որն իր մահն է տենչում կամ հաշվենկատ գրավչուհի, որը գիտակցաբար և սառը սրտով կամենում է հասնել նրան, որ ես սիրահարվեմ իրեն և դառնամ իր ստորուկը: Դա հավանական չէր: Ոչ, նա

ուղղակի ամբողջությամբ այնպես էր տրվում ակնբարթին, որ նույն այդ պատրաստականությամբ, յուրաքանչյուր զվարթ մտքի նման, իր ներսում տեղ կտար և կվերապրեր ցանկացած մութ սարսափ, որ կարող էր առկայծել նրա հոգու հեռավոր խորքերում:

Հերմիներն, որին ես այսօր տեսնում էի երկրորդ անգամ, իմ մասին գիտեր ամեն ինչ և ինձ անհնար էր թվում նրանից որևէ բան քաքցնել: Հնարավոր է, նա ոչ ամբողջությամբ էր պատկերացնում իմ հոգևոր կյանքը, երաժշտության, Գյոթեի, Նոփալիսի կամ Բողլերի հետ ունեցած իմ կապերի մեջ նա, հնարավոր է, չէր կարող ներթափանցել, բայց դա ևս շատ կասկածելի էր, հավանաբար դա ևս կհաջողվեր նրանց առանց դժվարության: Իսկ եթե չհաջողվեր, այդ դեպքում ինչ կմնար իմ «հոգևոր կյանքից»: Մի՞թե այդ ամենը փուլ չէր զա և չէր կորցնի իր իմաստը: Բայց իմ մյուս, ամենաանձնական խնդիրները և հոգսերը, դրանք բոլորն էլ նա կհասկանար, դրա համար ես կասկած չունեի: Շուտով ես նրա հետ կխոսեմ Տափաստանի գայլի մասին, քննախտության մասին, ամեն, ամեն բանի մասին, ինչ գոյություն ունի միմիայն ինձ համար, ինչի մասին ես դեռևս ոչ մեկի հետ չեմ խոսել: Ես չէի կարող համբերել և խոսակցություն չսկսել հենց հիմա:

– Հերմիներ, – ասացի, – վերջերս ինձ զարմանալի մի բան պատահեց: Անձանոթ մի մարդ ինձ ավեց փոքրիկ մի գրքույկ, տոնավաճառային գրքույկների նման մի բան, և այնտեղ գրված էր իմ ողջ կյանքի պատմությունը, այն ամենը, ինչ վերաբերում է ինձ, գրված էր ճշգրտությամբ: Չգիտեմ, տարօրինակ չէ՞ դա:

– Ինչպես է կոչվում գրքույկը, – հարցրեց նա հարևանցի:

– «Քննախտություն Տափաստանի գայլի մասին»:

– Օհ, Տափաստանի գայլ՝ դա հոյակապ է: Եվ Տափաստանի գայլը դո՞ւ ես: Դա պետք է որ դու լինես:

– Այո, ես եմ: Ես մեկն եմ, ով կիսով չափ մարդ է, կիսով չափ՝ գայլ, կամ մեկը, ով իրեն այդպես է պատկերացնում:

Նա ոչ մի պատասխան չտվեց: Նայում էր ինձ՝ աչքերում քննախտյալ ուշադրություն, նայում էր իմ ձեռքերին, և մի պահ նրա հայացքում և դեմքին առաջվա պես նորից հայտնվեցին լրջություն և մռայլ կրքառություն: Եթե ճիշտ էի գուշակում նրա մտքերը, նա մտածում էր, որ, արդյոք, բավարար չափով ես գայլ եմ, որպեսզի կատարեմ նրա «վերջին հրամանը»:

– Դա, իհարկե, քո երևակայությունն է,– ասաց նա՝ վերստին զվարթանալով,– կամ, եթե ուզում ես, բանաստեղծական մտահղացումը: Բայց այդտեղ ինչ-որ բան կա: Այսօր դու գայլ չես, բայց վերջերս, երբ մտար այս դահլիճը, ոնց որ լուսնից ընկած, քո մեջ, իրոք, ինչ-որ բան կար գազանից, հենց դա էլ ինձ դուր եկավ:

Հանկարծակի ծագած մի մտքից նա անսպասելիորեն խոսքը կտրեց և ասաց, կարծես, շփոթահար.

– Ինչ էիմար են հնչում «գազան» կամ «գիշատիչ» բառերը: Այդպես չի կարելի խոսել կենդանիների մասին: Իհարկե, նրանք հաճախ են լինում սարսափելի, բայց շատ ավելի իսկական են, քան մարդիկ:

– Ինչ է նշանակում «ավելի իսկական»: Դու ինչպես ես հասկանում դա:

– Դե, նայիր որևէ կենդանու՝ կատվի, շան, քոչուրի կամ մեծ, գեղեցիկ կենդանիներից որևէ մեկին կենդանաբանականում՝ կատվառյուծին կամ ընձուղտին: Դու կտեսնես, որ նրանք բոլորը անկեղծ են, որ ոչ մի կենդանի շփոթված չէ կամ չգիտի, թե ինչ է անում և ինչպես պետք է իրեն պահի: Նրանք չեն ուզում թեզ դուր գալ: Թատրոն չկա: Նրանք այնպիսին են, ինչպիսին կան, ինչպես քարերը և ծաղիկները կամ աստղերը երկնքում: Հասկանո՞ւմ ես:

Ես հասկանում էի:

– Կենդանիները մեծ մասամբ տխուր են,– շարունակեց նա:– Եվ երբ մարդը շատ տխուր է, տխուր է ոչ թե նրա համար, որ ցավում է նրա ատամը կամ դրամ է կորցրել, այլ որ հանկարծ զգում է, թե ինչ է այս ամենը, ամբողջ այս կյանքը, և նրա թախիծը անկեղծ է, այդ ժամանակ նա մի փոքր նման է կենդանու, այդ ժամանակ նա տխուր տեսք ունի, բայց նրա մեջ ավելի շատ է անկեղծությունը և գեղեցկությունը, քան այլ պարագայում: Դա այդպես է, և այդպիսին էր քո տեսքը, Տափաստանի գայլ, երբ թեզ առաջին անգամ տեսա:

– Հերմիտե, իսկ ի՞նչ ես մտածում գրքույկի մասին, որտեղ նկարագրված եմ ես:

– Ախ, գիտե՞ս, ես չեմ սիրում մտածել մշտապես: Այդ մասին մենք կխոսենք մեկ ուրիշ անգամ: Կարող ես այն բերել ինձ՝ կարդալու: Կամ էլ՝ ոչ, եթե պետք է դիմեմ կարդալուն, ապա ամբողջ ինձ մեկն այն գրքերից, որ դու ես գրել:

Նա սուրճ խնդրեց և մի պահ թվաց անուշադիր ու ցրված, ապա հանկարծ պայծառացավ և իր խորհրդածություններում հասավ ինչ-որ արդյունքի:

– Էհե՞՛յ,– կանչեց նա ուրախ,– վերջապես հասկացա:

– Ի՞նչը հասկացար:

– Ֆոքստորտը, ես ամբողջ ժամանակս ծախսում էի դրա վրա մտածելով: Ասա ինձ, դու սենյակ ունե՞ս, որտեղ մենք մի երկու ժամ կարող էինք պարել: Այն կարող է փոքր լինել՝ դա չի խանգարում, միայն թե ուղիղ ներքևում ոչ մեկը չբնակվի, որպեսզի ներս չմտնի և աղմուկ չբարձրացնի, եթե առաստաղը նրա զլխավերևում մի փոքր ճոճվի: Լավ կլինի, շատ լավ: Այդ դեպքում դու տանը կարող ես պարել սովորել:

– Այո,– ասացի ես երկյուղած,– ավելի լավ: Բայց իմ կարծիքով՝ դրա համար նաև երաժշտություն է պետք:

– Իհարկե, պետք է: Ուրեմն, լսիր, երաժշտությունը կզենես ինքդ թեզ համար, դա արժե ամենաշատը այնքան, որքան պարի դասընթացը որևէ ուսուցչուհու մոտ: Ուսուցչուհու վարձը կխնայես, քանի որ գործը ես ինքս կանեմ: Այդպիսով, մենք կունենանք երաժշտություն, երբ կամենանք, դրան ավելացրած նաև, որ կունենանք գրամոֆոն:

– Գրամոֆոն՞:

– Ինքնին հասկանալի է: Դու կզենես փոքրը և մի քանի ձայնակալափառակ...

– Հրաշալի է,– բացականչեցի ես,– և եթե թեզ հաջողվի իսկապես պարել սովորեցնել ինձ, այդ դեպքում կատանաս գրամոֆոնը՝ իբրև հոնորար: Համաձայն ես:

Ես դա ասացի շատ հախտուն, սակայն ի սրտե: Իմ փոքր սեղանի վրա, գրքերի հետ, ես չէի կարող պատկերացնել նման օտարոտի մի սարք, պարելու դեմ նույնպես շատ առարկություններ ունեի: Առիթի դեպքում, մտածում էի, դա կարելի էր փորձել, թեև համոզված էի, որ շատ ծեր եմ, ոչ ճկուն ու այլևս չեմ կարող պարել սովորել: Բայց այդպես, հանապատրաստից՝ ինձ համար դա շատ հապճեպ էր, շեշտակի, և զգում էի իմ ներաշխարհի ողջ դիմադրությունը, որ ես, իբրև հին, փորձառու երաժշտագետ, ունեի գրամոֆոնի, ջազի և ժամանակի պարային երաժշտության նկատմամբ: Այն, որ այժմ իմ սենյակում Նովայիսի և Ժան Պոլի կողքին, խորհրդածությունների իմ ճգնարանում և ապաստարանում պետք է հնչեին ամերիկյան

պարային, մոդայիկ նվագներ, և ես դրանց տակ պետք է պարեի, ըստ էության, ավելին էր, քան կարող էին մարդիկ պահանջել ինձնից: Բայց պահանջողը ուրիշ մեկը չէր, այլ Հերմինեն, իսկ նա իրավունք ուներ հրամայելու: Ես հնազանդվեցի: Բնականաբար՝ հնազանդվեցի:

Մենք հաջորդ օրը՝ կեծօրից հետո, հանդիպեցինք մի սրճարանում: Հերմինեն արդեն այնտեղ նստած էր, երբ ես եկա, թեյ էր խմում և ժպտալով ինձ ցույց տվեց մի թերթ, որտեղ գտել էր իմ անունը: Դա իմ հայրենիքի հետադիմական թերթերից մեկն էր, որը կանոնավոր կերպով, ժամանակ առ ժամանակ, պարսավելի հոդվածներ էր տպագրում իմ դեմ: Ես պատերազմի ժամանակ եղել էի պատերազմին դեմ, պատերազմից հետո կոչ էի անում հանգստության, համբերության, մարդկայնության և ինքնաբնադատության՝ ինձ ենթարկելով օրեցօր ավելի սուր, հիմար և վայրենի դարձող ազգայնամոլության հալածանքին: Ահա, այս անգամ էլ այնտեղ տպագրված էր նման մի ելույթ՝ վատ գրված, կիսով չափ սարքված խմբագրի ձեռքով, կիսով չափ թոցրած նմանատիպ թերթերի բազմաթիվ հոդվածներից: Ոչ ոք, ինչպես հայտնի է, չի գրում ավելի վատ, քան հնացող գաղափարախոսության պաշտպանները, ոչ ոք իր գործի մեջ չի դրսևորում ավելի մաքրամոլություն ու հոգատարություն, ինչպես նրանք: Հերմինեն կարդացել էր հոդվածը և դրանից տեղեկացել, որ Հարրի Հալլերը վնասարար և անհայրենիք անձնավորություն է, և որ հայրենիքի գործերը, բնականաբար, չեն կարող վատ չլինել, քանի դեռ հանդուրժում ենք նման մարդկանց ու նման գաղափարները և երիտասարդությանը դաստիարակում միասնական մարդկության սենտիմենտալ ոգով՝ փոխանակ դաստիարակելու երդվյալ թշնամու նկատմամբ անհաշտ վրեժով:

– Սա դո՞ւ ես, – հարցրեց Հերմինեն և ցույց տվեց իմ անունը: – Զեղ համար կարգին թշնամիներ ես աճեցրել, Հարրի: Դա քեզ գայրացնո՞ւմ է:

Ես կարդացի մի քանի առդ, ամեն ինչ սովորական էր այնտեղ, յուրաքանչյուր առանձին պատճենած հայեության ինձ վաղուց ի վեր ծանոթ էր զզվանք պատճառելու աստիճանի:

– Ոչ, – ասացի, – դա ինձ չի գայրացնում, ես արդեն դրան սովոր եմ: Մի քանի անգամ արտահայտել եմ այն կարծիքը, որ յուրաքանչյուր ազգ, անգամ յուրաքանչյուր անհատ, փոխա-

նակ իրեն խաբելու՝ «Ով է մեղավոր» քաղաքական կեղծ հարցադրամով, պետք է մեղավորին փնտրի իր մեջ, հասկանա, թե որքանով է ինքը իր սեփական սխալների, բացթողումների և զեշ սովորությունների պատճառով մեղավոր պատերազմի և աշխարհի մնացած աղետների մեջ, որ դա միակ ճանապարհն է՝ հաջորդ հավանական պատերազմից խուսափել կարողանալու համար: Դա նրանք ինձ չեն ներում, քանզի իրենք անձամբ, բնականաբար, կատարելապես անմեղ են՝ կայգերը, գեներալները, խոշոր արդյունաբերողները, քաղաքագետները, ոչ ոք իրեն չնչին չափով անգամ չի մեղադրում, որ ոք որևէ մեղք չունի: Կարելի է կարծել, որ աշխարհում ամեն ինչ հրաշալի է ընթանում, միայն թե, ահա, տասնյակ միլիոնավոր սպանված մարդիկ են քաղվել հողում: Եվ հասկանո՞ւմ ես, Հերմինե, եթե այս հայեության հոդվածները ինձ չեն կարող գայրացնել, ապա երբեմն տխրեցնում են: Իմ հայրենակիցների երկու երրորդը կարդում է նման կարգի թերթերը, յուրաքանչյուր առավոտյան և երեկոյան կարդում է այդ խոսքերը, ամեն օր այդ մարդիկ ենթարկվում են մշակման, նրանց սովորեցնում, հետապնդում, դարձնում են դժգոհ ու չար, և բոլորի նպատակն ու վախճանը վերստին պատերազմն է, հաջորդ, եկող պատերազմը, որն ավելի տարասփելի է լինելու, քան սա էր: Այս ամենը պարզ ու հասկանալի է, ցանկացած մարդ կարող էր դա ըմբռնել, կարող էր, մտածելով փոքր-ինչ, հանգել նույն եզրակացության: Բայց ոչ ոք դա անել չի ուզում, ոչ ոք չի ուզում խուսափել հաջորդ պատերազմից, ոչ ոք չի ուզում իրեն և իր երեխաներին պաշտպանել կոտորածից, եթե դա ավելի էժան չէ: Մտածել մեկ ժամ, մի փոքր խորասուզվել ինքդ քո մեջ և հարց տալ ինքդ քեզ՝ որքանով ես դու մասնակից ու մեղավոր աշխարհում տեղի ունեցող անկարգություններին ու չարությանը, հասկանո՞ւմ ես, ոչ ոք դա չի ուզում: Եվ, ուրեմն, այդպես էլ շարունակվելու է, և հաջորդ պատերազմը օրեցօր մեծ եռանդով նախապատրաստվելու է հարյուրավոր մարդկանց կողմից: Այն օրվանից, երբ սա հասկացել էմ, դա ինձ ճնշում է, մատնում հուսահատության, այլևս ինձ համար գոյություն չունի ո՛չ «հայրենիք» և ո՛չ էլ որևէ իդեալ, դրանք սոսկ քեմական գարդարանքներ են ինտերիերի համար, որոնք նախապատրաստում են հաջորդ պատերազմը: Անիմաստ է մարդկայնորեն մտածելը, խոսելը, գրելը, անիմաստ է բարի մտքեր ունե-

նալը: Մի երկու, երեք մարդուն, որ անուն են դա, ամեն օր բաժին են հասնում հազարավոր թերթեր, ամսագրեր, ճառեր, բայց կամ զաղտնի նիստեր, որոնք բոլորն էլ հակառակ նպատակն ունեն և հասնում են դրանց:

Հերմիներն լսում էր կարեկցանքով:

– Այո,– ասաց նա,– այստեղ դու իրավացի ես: Իհարկե, պատերազմ նորից կլինի, կարիք չկա թերթ կարդալ դա հասկանալու համար: Գրա համար, բնականաբար, կարելի է տխրել, սակայն տխրելը ոչ մի արժեք չունի: Դա նման է այն բանին, որ մեկը ախրի մահվան պատճառով, այսինքն՝ հակառակ այն ամենի, ինչ ձեռնարկել ես նրա դեմ, միևնույն է, մի օր անխուսափելիորեն մեռնելու ես: Մահվան դեմ կռիվը, սիրելի Հարրի, միշտ էլ զեղեցիկ, ազնիվ, հրաշալի և պատվարժան գործ է, այդպես նաև պատերազմի դեմ կռիվը: Բայց դա նաև անհուսալի դրնկիխտություն է:

– Դա զուցեն ճիշտ է,– խոսեցի ես կարուկ,– բայց այդպիսի ճշմարտությունները, ինչպիսին դա է, որ բոլորս շուտով մեռնելու ենք, և ուստի՝ ամեն ինչի վրա թքած, մարդկային ամբողջ կյանքը դարձնում են տափակ ու հիմար: Դուրս է գալիս, որ մենք պետք է մի կողմ նետենք ամեն ինչ, ամենայն հոգևոր արժեք, ամենայն ձգտում, ամենայն մարդկային, հաշտվենք փառասիրության և դրամի հաղթարշավի հետ և մի բաժակ զարեջրի մոտ նստած՝ սպասենք հաջորդ գորահավաքին:

Չարմանալի էր հայացքը, որով Հերմիներն նայեց ինձ, հայացք, որ լի էր չարաճճությամբ, ծաղրանքով ու խորամանկությամբ, լրջմիտ ընկերականությամբ, միաժամանակ և ծանրությամբ, իմացությամբ և խորախոր լրջությամբ:

– Այդպես չի լինի,– ասաց նա միանգամայն մայրական ձայնով:– Քո կյանքը տափակ ու հիմար չի լինի, եթե անգամ իմանաս, որ քո կռիվը անօգուտ է լինելու: Շատ ավելի տափակ բան է, Հարրի, երբ կռվում ես ինչ-որ բարի գործի համար, ինչ-որ խղեալի համար և մտածում, որ դու պարտավոր ես հասնել դրան: Մի՞թե իղեալները նրա համար են, որ մվաճվեն: Մի՞թե մենք՝ մարդիկս, ապրում ենք նրա համար, որ վերացնենք մահը: Ոչ, մենք ապրում ենք, որպեսզի սարսափենք նրանից և ապա նորից սիրենք, և հենց այդ պատճառով էլ կյանքը երբեմն, առանձին ժամերի, այդպես զեղեցկանում է: Գու երեխա ես, Հարրի: Այժմ լսիր ինձ և արի ինձ հետ, այսօր

մենք շատ բան ունենք անելու: Ես այսօր այլևս միտք չունեմ ախրելու ո՛չ պատերազմի, ո՛չ էլ թերթերի պատճառով: Իսկ դո՞ւ:

Օ՛, ոչ, ես նույնպես պատրաստ էի դրան:

Մենք միասին, դա մեր առաջին գրոսանքն էր քաղաքում միասին, գնացինք երաժշտական սարքերի խանութ և սկսեցինք նայել գրամոֆոնները, բացում և փակում էինք դրանք, միացնում, երգել տալիս: Եվ երբ դրանցից մեկը շատ հարմար և էժան գտանք, պատրաստվեցի այն զնել, բայց Հերմիներն չէր շտապում: Նա ինձ ետ պահեց, և ես ստիպված էի նրա հետ այլ խանութներում շարունակել գրամոֆոն որոնելը, այնտեղ նույնպես փորձեցինք ու լսեցինք բոլոր տեսակների ու չափսերի գրամոֆոնները, ամենաէժանից մինչև ամենաթանկը, և միայն այդ ժամանակ նա համաձայնեց վերադառնալ առաջին խանութը և զնել այնտեղ ընտրած օրինակը:

– Տեսնում ես,– ասացի ես,– մենք դա կարող էինք անել ավելի պարզ ճանապարհով:

– Այդպե՞ս ես կարծում: Իսկ եթե, ասենք վաղը, այդ նույն սարքը մեկ ուրիշ խանութում տեսնեինք դրված քսան ֆրանկով էժան: Բացի դրանից, գնումները մարդուն ուրախացնում են, իսկ ինչ ուրախացնում է, պետք է այն ճաշակել ամբողջությամբ: Դու սովորելու դեռ շատ բան ունես:

Մի չորեքշաբթի մեր զնածը բերեցինք իմ բնակարան:

Հերմիներն ուշադիր ուսումնասիրեց իմ սենյակը, զովեց վառարանը և քազմոցը, փորձեց արոնները, գրքերը ձեռքն առավ, երկար կանգնած մնաց իմ սիրեցյալի լուսանկարի առաջ: Գրամոֆոնը մենք դրեցինք կոմոդի վրա, գրքերի երկու կույտերի միջև: Եվ ահա սկսվեց իմ պարսպմունքը: Նա ֆոքստրոտ դրեց, իմ առաջ ցույց տվեց առաջին քայլերը, վերցրեց իմ ձեռքը և սկսեց ինձ սովորեցնել: Ես հնազանդորեն շարժվում էի նրա հետ, խփվում էի արոններին, լսում էի նրա հրամանները, չէի հասկանում դրանք, արդրում էի նրա ոտքերը և նույնքան անկարող էի, որքան պարտաճանաչ: Երկրորդ պարից հետոնա իրեն նետեց քազմոցի վրա և ծիծաղեց երեխայի նման:

– Աստված իմ, որքան դժվարաշարժ ես դու: Քայլիդ պարզապես, ասես թե գրոսնում ես: Լարվել բոլորովին պետք չէ: Իմ կարծիքով՝ դու նույնիսկ քրտնել ես: Լավ, մի հինգ քոպես հանգիստ շունչ առնենք: Հասկացիր, պարելը, եթե կարողանում

ես, նույնչափ պարզ է, որքան մտածելը, իսկ սովորելը՝ շատ ավելի հեշտ: Այդժամ դու ավելի համբերատար կլինես այն բանի հանդեպ, որ մարդիկ չեն սովորում մտածել, այլ նախընտրում են պարոն Հայերին անվանել հայրենիքի դավաճան և հանգիստ սպասել մյուս պատերազմին:

Մեկ ժամ հետո նա գնաց՝ հավատացնելով ինձ, որ հաջորդ անգամ գործերն ավելի լավ կգնան: Ես այլ կարծիքի էի և շատ էի հուսահատված իմ հիմարությունից ու ծանրաշարժությունից: Այդ ամբողջ ժամի ընթացքում, ինչպես թվում էր ինձ, ես առհասարակ ոչինչ չէի սովորել և հույս էլ չունեի, թե գործերը հաջորդ անգամ ավելի լավ են գնալու: Ոչ, պարելու համար անհրաժեշտ են ընդունակություններ, որոնք ես չունեմ. զվարթություն, անմեղություն, թեթևամտություն, եռանդ: Դ-ե, ես այդ կարծիքին էի արդեն վաղուց:

Բայց տես՝ որ հաջորդ անգամ գործերը, իսկապես, գնացին ավելի լավ, փոխվեց իմ տրամադրությունը, և դասի ավարտին Հերմինեն հայտարարեց, որ ֆոքստրոտ ես արդեն կարող եմ պարել: Բայց երբ դրանից հետևեցրեց, որ ես վաղը պետք է գնամ որևէ ռեստորան՝ պարելու իր հետ, կարգին վախեցա և կրքոտ պաշտպանվեցի: Նա սառնությամբ հիշեցրեց ինձ հնազանդ լինելու մասին իմ հանդիսավոր խոստումը և պատվիրեց վաղը թեյի ներկայանալ «Բալանս» հյուրանոց:

Այդ երեկոյան ես մտած էի տանը, ցանկություն ունեի կարդալու, բայց չէի կարողանում: Երկյուղ ունեի վաղվա հանդեպ, ինձ համար զարհուրելի էր այն միտքը, որ ես՝ ծեր, երկչոտ և զգայուն անմարդամոտ, ոչ միայն այցելում եմ ժամանակակից ձանձրալի վայրերից մեկը, որտեղ խմում եմ թեյ, պարում և լսում ջազ, այլև այնտեղ՝ այլ մարդկանց միջավայրում, ինձ ցույց եմ տալիս իբրև պարող՝ դեռևս ոչինչ չկարողանալով հանդերձ: Եվ ընդունում եմ, որ ծիծաղեցի ինքս ինձ վրա և ամաչեցի ինքս ինձնից, երբ մենակ, իմ խաղաղ աշխատասենյակում գործի գցեցի սարքը, միացրեցի և հանգիստ, ոտնաթափերիս վրա փորձեցի ֆոքստրոտի քայլերը:

«Բալանս» հյուրանոցում հաջորդ օրը նվագում էր մի փոքրիկ նվագախումբ, մատուցվել էր թեյ և վիսկի: Ես փորձում էի կաշառել Հերմինեին, առաջն էի դնում թիվածքներ, փորձում էի նրան հյուրասիրել լավ զինով, բայց նա մնում էր անդրդվելի:

– Դու այստեղ եկել ես ոչ միայն հաճելի կերուխումի համար: Մա պարի դաս է:

Ես ստիպված էի նրա հետ պարել երկու-երեք անգամ և այդ ընթացքում նա ինձ ծանոթացրեց սաքսոֆոնահարի՝ իսպանական կամ հարավամերիկյան ծագման բուխ, գեղեցիկ, ջահել մի մարդու հետ, որը, ինչպես Հերմինեն ասաց, կարողանում էր նվագել բոլոր գործիքների վրա և խոսել աշխարհի բոլոր լեզուներով: Այդ սինյորը, թվաց, լավ ծանոթ է Հերմինեին և մտերիմ, նա իր առջևում դրած ուներ երկու տարբեր մեծության սաքսոֆոններ, որոնք օգտագործում էր՝ փոխարինելով մեկը մյուսով և իր սև, փայլուն աչքերով ուշադիր և բավականությամբ ուսումնասիրելով պարողներին: Ի զարմանս ինձ՝ այդ բարեեռու, հրաշալի երաժշտի հանդեպ զգում էի խանդի պես մի բան, ոչ սիրո խանդ, քանզի իմ և Հերմինեի միջև սիրո մասին խոսք չէր կարող լինել, այլ ինչ-որ հոգևոր, ընկերական խանդի, որովհետև նա ինձ թվում էր ոչ արժանի այն հետաքրքրությանն ու աչք ծակող ուշադրությանը, նույնիսկ՝ մեծարանքին, որ Հերմինեն ցուցադրում էր նրա նկատմամբ: Հետաքրքիր ծանոթություններ եմ այստեղ ունենալու՝ մտածում էի ես անբավական:

Հետո Հերմինեին մի քանի անգամ հրավիրեցին պարի, մեծակ մտած մնացի թեյի սեղանի մոտ, լսում էի երաժշտություն, որը չէի կարողանում տանել առայժմ: Աստված իմ, մտածում էի, հիմա պետք է հարմարվեմ այստեղ և ինձ զգամ, ինչպես իմ տանը, ինձ համար այդքան օտար և հակակրեղի, իմ կողմից հոգատարությամբ ուշադրությունից դուրս թողնված, այդքան խորությամբ արհամարհված՝ անբանների և զվարճասերների այս աշխարհում, մարմարյա սեղանների, ջազային երաժշտության, կոկետուհիների, առևտրական շրջիկ գործակալների այս տափակ, պատճենավորված աշխարհում: Ընկճված՝ խմում էի իմ թեյը և ուշադիր նայում կես-պատվարժան ամբոխին: Երկու գեղանի աղջիկներ գրավեցին իմ ուշադրությունը, երկուսն էլ պարում էին, հիացած և նախանձով ես նայում էի, թե ինչպես են նրանք ճարպկորեն, գեղեցիկ, ուրախ և վստահ շարժումներով պարում:

Այդ պահին կրկին երևաց Հերմինեն, նա դժգոհ էր ինձնից: Ես այստեղ չեմ նրա համար, տիրակալներն ասաց նա, որպեսզի ցուցադրեմ մնան կեցվածք և անշարժ մտնեմ թեյի սեղանի մոտ, ես պետք է հենց հիմա աշխուժանամ և գնամ պա-

բերու: Ինչպե՞ս, ես չզիտեմ ո՞ւմ հետ: Գրա կարիքը բոլորովին չկա: Մի՞թե այստեղ աղջիկներ չկան, որոնք դուր են գալիս ինձ:

Ես նրան ցույց տվեցի նկատածս աղջիկներից մեկին, ավելի գեղեցիկին, որը կանգնած էր մեզանից ոչ հեռու և իր թավշյա սքանչելի կիսաշրջագետով, կարճ կարած, խիտ, շեկ մագերով և լիքը, կանացի թևերով հմայիչ տեսք ուներ: Հերմիներն պնդեց, որ անմիջապես մոտենամ և նրան հրավիրեմ պարի: Ես հուսահատորեն դիմադրում էի:

– Ախր, չեմ կարող, – դժբախտ տեսքով ասացի ես: – Այո, եթե գեղեցիկ, ջահել աղա լինեի: Բայց իմ պես ծեր, փայտացած դմբոն, որը պարել էլ չզիտի. նա ինձ կծաղրի:

Հերմիներն արհամարհանքով նայեց ինձ:

– Իսկ այն, որ ծաղրում եմ ես, քեզ համար, անշուշտ, միևնույն է: Ինչ վախկոտն ես: Ծաղրված լինելու վտանգին ենթարկվում է յուրաքանչյուր ոք, ով հանդգնում է մոտենալ աղջիկներին, դա անխուսափելի է: Ուրեմն՝ խիզախիք, Հարրի, և վատթարագույն դեպքում քեզ վրա կծիծաղեն, այլապես ես կդադարեմ հավատալ, որ դու հնազանդ ես ինձ:

Նա տեղի չէր տալիս: Ընկճված՝ վեր կացա և գնացի դեպի գեղեցիկ աղջիկը, հենց որ երաժշտությունը նորից սկսվեց:

– Ճիշտն ասած՝ ես ազատ չեմ, – ասաց նա և հետաքրքրությամբ նայեց ինձ իր մեծ, կենսալի աչքերով, – բայց ինձ հետ պարողը, կարծես, նստել-մնացել է բարում: Դե, ինչ արած՝ եկեք:

Ես գրկեցի նրան և կատարեցի առաջին քայլերը՝ շարունակելով դեռ զարմանալ, որ նա ինձ չմերժեց, բայց նա արդեն հասկացել էր, թե ինչ դրության մեջ եմ, և ստանձնեց առաջնորդությունը: Նա պարում էր հրաշալի՝ տանելով ինձ իր հետ, և ես մի պահ մտահան արեցի պարելու իմ բոլոր պատրաստակամություններն ու օրենքները, պարզապես լողացի նրա հետ, զգացի նրա պիրկ ազդրերը, դյուրամալ ծնկները և նայելով նրա ջահել, շողացող դեմքին՝ խոստովանեցի, որ իմ կյանքում պարում եմ առաջին անգամ: նա ժպտաց և քաջալերեց ինձ՝ պատասխանելով իմ հմայված հայացքներին և գայթակղիչ խոսքերին սքանչելի դյուրըմբռնողությամբ, ոչ բառերով, այլ հանգիստ, հմայիչ շարժումներով, որ մեզ կախարհորեն ավելի էին մոտեցնում միմյանց: Աջ ձեռքս ամուր դրել էի նրա կող-

քին, խենթացած և եռանդով հեռանում էի նրա ոտքերի, նրա ձեռքերի, նրա ուսերի շարժումներին: Ի զարմանս ինձ՝ ոչ մի անգամ չտրորեցի նրա ոտքերը, և երբ երաժշտությունը վերջացավ, մենք երկուսս մնացինք կանգնած և ծափ էինք տալիս, մինչև որ պարը կրկնվեց, և ես վերստին ինքնամոռաց, սիրահարված և ջերմեռանդորեն ավարտին հասցրեցի ծեսը:

Երբ պարն ավարտվեց, ի դեպ, ավարտվեց շատ վաղ, գեղեցիկ, թավշյա աղջիկը հեռացավ, և հանկարծ կողքիս կանգնեց Հերմիներն, որ հեռանում էր մեզ:

– Հիմա դու հասկացա՞ր ինչ-որ բան, – ծիծաղեց նա հավանությամբ: – Հայտնագործեցի՞ր, որ կանացի ոտքերը սեղանի ոտքեր չեն: Ուրեմն՝ ապրես: Խոքսն արդեն գիտես, փառք Աստծո, վաղը կձեռնարկենք բոստոն, և երեք շաբաթվա մեջ՝ դիմակահանդես «Գլոբուսի» դահլիճներում:

Պարային ընդմիջում էր, մենք նստեցինք, և այդ պահին մոտեցավ նաև գեղեցիկ, ջահել պարոն Պարբոն՝ սաքսոֆոնահարը, զույս տվեց և նստեց Հերմիների կողքին: Նա Հերմիների հետ, թվում է, շատ-շավ ընկերություն էր անում: Իսկ ինձ, խոստովանում եմ, հենց առաջին հանդիպումից այս պարունը բոլորովին դուր չեկավ: Նա գեղեցիկ էր, դա ժխտել չէր կարելի, գեղեցիկ հասակով, գեղեցիկ տեսքով, այլ առավելություններ, սակայն, նրա վրա ես չկարողացա գտնել: Բազմաթիվ լեզուների տիրապետելը ևս նրա համար հեշտ էր, քանի որ առհասարակ ոչինչ չէր խոսում, բացի առանձին բառերից, ինչպես, օրինակ, խնդրեմ, շնորհակալություն, շատ ճիշտ է, իհարկե, և մնան բառեր, որոնք նա գիտեր բազմաթիվ լեզուներով: Ոչ, նա ոչինչ չէր խոսում, սինյոր Պարբոն, և թվում էր նաև, որ շատ չի մտածում այդ գեղեցիկ կարալներն: Նրա զբաղմունքը ջազային նվագախմբում սաքսոֆոն փչելն էր, և այդ գործին, թվում է, նա նվիրվում էր սիրով ու եռանդով, նվագելու ժամանակ երբեմն ձեռքերով հանկարածկի ծափահարում էր կամ իրեն թույլ էր տալիս ոգևորության այլ դրսևորումներ, բարձր ու երգեցիկ ձայնով կանչում էր այսպիսի արտահայտություններ՝ օ-օ-օ-, հա-հա, հալլո: Իսկ առհասարակ աշխարհում ապրում էր սոսկ նրա համար, որպեսզի լիներ գեղեցիկ, որպեսզի դուր գար կանանց, նորագույն մոդայի օձիքներ և փողկապներ կրեր, ինչպես նաև բազմաթիվ մատանիներ՝ մատներին: Նրա մասնակցությունը գրույցներին այն էր, որ նստում էր մեր կողքին,

ժպտում էր մեզ, նայում էր իր ձեռքի ժամացույցին և իր համար սիգար էր փաթաթում, ինչի մեջ շատ հմուտ էր: Կրեոլի* նրա մուգ, գեղեցիկ աչքերը, նրա սև զանգուրները չէին թաքցնում ոչ մի ռոմանտիկա, ոչ մի նպատակ, ոչ մի միտք. մտախիլից այս գեղեցիկ, տարաշխարհիկ կիսաստվածը զվարճասեր և մի քիչ երես առած տղա էր՝ դուրեկան շարժումներով և ուրիշ ոչինչ: Ես խոսեցի նրա հետ իր գործիքի և ջազային երաժշտության մեջ ձայներանգների մասին, նա պետք է հասկանար, որ գործ ուներ երաժշտական արվեստի փորձառու սիրողի և գիտակի հետ: Բայց բանը դրան չհասավ, և երբ նրա, ավելի շուտ՝ Հերմինեի հանդեպ հարզանքից էլնելով ուզեցի որևէ երաժշտական-տեսական հիմնավորում գտնել ջազի համար, նա, բարենոգի ժպտալով, խույս տվեց ինձնից էլ, իմ ջանադիր հարցերից էլ, հավանաբար, նա բոլորովին անտեղյակ էր, որ ջազից առաջ և ջազից բացի գոյություն ունի նաև այլ երաժշտություն: Միբայիր մարդ էր նա, սիրալիր և կարգին, և երաշալի ժպտում էին նրա մեծ, դատարկ աչքերը, սակայն նրա և իմ միջև, թվում է, ընդհանուր ոչինչ չկար, այն ամենը, ինչ նրա համար գրեթե կարևոր ու սուրբ էր, ինձ համար այդպիսին չէր, մենք զալիս էինք հակառակ աշխարհներից, մեր լեզուներն ընդհանուր ոչ մի բառ չունեին: (Բայց հետագայում Հերմինեն պատմեց հետաքրքիր բան: Նա պատմում էր, որ այդ խոսակցությունից հետո Պարլոն իմ մասին ասել է Հերմինեին, որ նա լավ կանի, եթե այդ մարդու հետ վարվի շատ հոգատար, չէ՞ որ նա այնքան դժբախտ է: Եվ երբ Հերմինեն հարցրել է, թե այդ ինչից է նա հանգել այդ կարծիքին, Պարլոն պատասխանել է. «Նեղճ, խեղճ մարդ: Նայիր նրա աչքերին: Նա չի կարող ծիծաղել):

Երբ սևաչք Պարլոն հեռացավ և երաժշտությունը վերսկսվեց, Հերմինեն վեր կացավ:

– Այժմ մենք պետք է միասին մեկ անգամ էլ պարենք, Հարրի: Թե՞ չես ուզում այլև:

Նրա հետ էլ ես պարեցի շատ թեթև, ազատ և ուրախ, թեև ոչ այնքան անհոգ և ինքնամոռաց, ինչպես մյուս աղջկա հետ: Հերմինեն ինձ ենթարկվում էր հեշտությամբ ու նրբորեն, ինչ-

* Կրեոլ – առաջին իսպանացիների և պորտուգալացիների սերունդը Լատինական Ամերիկայում:

պես ծաղկաթերթ, և նրա մեջ նույնպես շուտով գտա և զգացի ընդառաջ եկող և հեռու փախչող բոլոր գեղեցկությունները, նրանից նույնպես կանացիություն և սեր էր բուրում, նրա պարը նույնպես նրբորեն և սրտակից երգում էր սեռի գայթակղիչ ու գեղեցիկ երգը, բայց այդ բոլորին ես չէի կարողանում պատասխանել լիովին ազատ ու զվարթորեն, չէի կարողանում ինքս ինձ մոռանալ և տրվել ամբողջությամբ: Հերմինեն ինձ շատ մոտ էր, նա իմ ընկերն էր, իմ բույրը, այնպիսին էր, ինչպիսին ես եմ, նմանվում էր թե՛ անձամբ, թե՛ մանկական բարեկամի՝ Հերմանին՝ երագողին, բանաստեղծին, իմ հոգևոր տվայտանքների և շվայտությունների կրակոտ ընկերոջը:

– Գիտեմ, – ասաց Հերմինեն ինձ հետո, երբ խոսում էի այդ մասին, – շատ լավ գիտեմ: Ես քեզ դեռ կտախպեմ սիրահարվել ինձ, բայց շտապել պետք չէ: Առայժմ մենք ընկերներ ենք, մարդիկ, ուլքեր ընկերներ դառնալու հույս ունեն, բանի որ մենք ճանաչում ենք միմյանց: Հիմա մենք առայժմ կսովորենք միմյանցից և կխաղանք միասին: Ես քեզ ցույց կտամ իմ փոքրիկ քատրոնը, կսովորեցնեմ պարել և մի փոքր ուրախ ու հիմար լինել, իսկ դու ինձ կցուցադրես քո մաքերը և ինչ-որ բան քո գիտելիքներից:

– Այս, Հերմինե, ցուցադրելու շատ բան չկա, չէ՞ որ դու շատ ավելին գիտես, քան ես: Ինչ գարմանալի մարդ ես դու: Ամեն ինչի մեջ դու հասկանում ես ինձ և իմ առջևում ես: Ես քեզ համար մի՞թե որևէ արժեք ունեմ: Չանձրալի չե՞մ քեզ համար:

Նա մոռալի հայացքը կախեց ցած:

– Ինձ դուր չի գալիս այդպես խոսելը: Հիշիր այն երեկոն, երբ հուսահատությունից ջարդված, քո մենակությունից ու տառապանքից նետվեցիր դեպի ինձ և դարձար իմ բարեկամը: Հապա ինչի՞ համար, քո կարծիքով, այն ժամանակ ես կարողացա ճանաչել և հասկանալ քեզ:

– Ինչի՞ համար, Հերմինե, ասա ինձ:

– Որովհետև ես նույնն եմ, ինչ որ դու: Որովհետև ես էլ այնպես մենակ եմ, ինչպես դու, և ինչպես դու՝ ես էլ չեմ կարող ինձ սիրել ու լրջորեն ընդունել ո՛չ կյանքը, ո՛չ մարդկանց, ո՛չ էլ ինքս ինձ: Չէ՞ որ միշտ էլ գտնվում եմ նման մարդիկ, ուլքեր կյանքից պահանջում են ամենաբարձրը և չեն կարող հաշտվել նրա տափակության և կոպտության հետ:

– Տեսնում ես, – բացականչեցի ես՝ խորապես զարմացած: – Ես քեզ հասկանում եմ, բարեկամ, ոչ որ չի հասկանում քեզ այնպես, ինչպես ես: Եվ, այդուամենայնիվ, դու ինձ համար հանելուկ ես: Դու այնպես հմտորեն պատրաստ ես կյանքին, նրա մանրամասնների և ուրախությունների հանդեպ օժտված ես զարմանալի հարգանքով, դու գիտես ապրելու արվեստը: Ինչպե՞ս կարող ես դու կյանքով տատապել: Ինչպե՞ս կարող ես դու հուսահատվել:

– Ես չեմ հուսահատվում, Հարրի: Բայց կյանքով տատապել, օ՛, այո, այո գործում ես փորձառություն ունեմ: Դու զարմանում ես, որ ես երջանիկ չեմ, որովհետև չե՞ որ պարել գիտեմ և ինձ այնպես լավ եմ պահում կյանքի մակերեսին: Իսկ ես, բարեկամս, զարմանում եմ, որ դու ես այդպես հիասթափված կյանքից, դու, որ հրաշալիորեն հասկանում ես ամենագեղեցիկ ու ամենախոր երևույթները՝ հոգու, արվեստի, մտածողության: Դրա համար էլ մենք մոռեցանք միմյանց, դրա համար էլ մենք քույր ու եղբայր ենք: Ես կսովորեցնեմ քեզ պարել, խաղալ և ծիծաղել, բայց ոչ գոհ լինել: Իսկ քեզնից կսովորեմ մտածել, հասկանալ, բայց ոչ գոհ լինել: Գիտես, որ մենք երկուսս էլ սատանայի զավակներ ենք:

– Այո, մենք նրա զավակներն ենք: Սատանան ոգի է, իսկ մենք՝ նրա դժբախտ զավակները: Մենք դուրս ենք ընկել բնությունից և կախված ենք դատարկության մեջ: Բայց ես, ահա, քե ինչ հիշեցի. Տափաստանի գայլի մասին քննախոսության մեջ, որի մասին քեզ պատմել եմ, ինչ-որ բան է գրված հաղագս այն, որ դա սուկ Հարրիի երևակայությունն է, նա հավատում է, որ ունի մեկ կամ երկու հոգի, որ նա կազմված է մեկ կամ երկու անձերից: Յուրաքանչյուր մարդ կազմված է տասը, հարյուր, հազար հոգիներից:

– Դա ինձ էլ շատ է դուր գալիս, – խոսեց Հերմիոնեն, – օրինակ՝ քո մեջ շատ է զարգացել հոգևորը, և այդ պատճառով դու շատ ես ետ մնացել ամեն տեսակ կենսական հմտություններում: Մտածող Հարրին՝ հարյուր տարեկան, իսկ պարող Հարրին՝ հազիվ կես օրական: Նրան մենք հիմա կյանքի ճանապարհ կտանք և նրա բոլոր կրասեր եղբայրներին, որ նրա պես փոքր են, հիմարիկ ու անփորձ, ինչպես ինքը:

Նա ժպտալով նայեց ինձ: Եվ հարցրեց ցածր, վախեցած ձայնով.

– Իսկ Մարիան դուր եկա՞վ քեզ:

– Մարիա՞ն: Ո՞վ է դա:

– Դա այն աղջիկն է, որի հետ պարում էիր: Գեղեցիկ աղջիկ էր, շատ գեղեցիկ: Որքան ես տեսնում եմ, նրան մի փոքր սիրահարված ես:

– Դու նրան ճանաչո՞ւմ ես:

– Օ՛, այո: Մենք միմյանց լավ գիտենք: Նա քեզ շա՞տ է հետաքրքրում:

– Նա ինձ դուր է գալիս, և ես շատ ուրախ եմ, որ շատ համբերատար էր պարիս նկատմամբ:

– Դե, եթե ընդամենը դա է: Դու պարտավոր ես նրան հարգանք մատուցել, Հարրի: Նա շատ չքնաղ է, լավ պարում է, և դու ինքդ էլ արդեն նրան սիրահարված ես: Ես կարծում եմ, որ կարող ես հաջողություններ ունենալ:

– Այս, մյան փառասիրություն չունեմ:

– Հիմա դու փոքր-ինչ ստում ես: Ես հո գիտեմ, որ դու աշխարհում ինչ-որ տեղ սիրեցյալ ունես քողած և նրան տեսնում ես կես տարին մեկ անգամ, որպեսզի հետը վիճես: Իհարկե, քո կողմից շատ լավ է, որ աշխատում ես այդ զարմանալի ընկերուհուդ հավատարիմ մնալ, բայց քույլ տուր ինձ դրան այդքան էլ լրջորեն չվերաբերվել: Ես, առհասարակ, կասկածում եմ, որ դու սերն ընդունում ես սարսափելի լրջորեն: Դու կարող ես այդպես անել, կարող ես սիրել քո իդեալական սիրով, որքան կամենում ես, դա քո խնդիրն է, դրա համար ես շատ չեմ անհանգստանում: Սակայն ես պետք է անհանգստանամ այն բանի համար, որ դու փոքր-ինչ ավելի լավ սովորես կյանքի մասն ու քեթև հմտություններն ու խաղերը, այդ բնագավառում ես քո ուսուցչուհին կլինեմ, ավելի լավ, քան քո իդեալական սիրեցյալն էր, կարող ես չկասկածել: Քեզ չէր խանգարի իսկապես, որ պառկելիք որևէ գեղեցիկ աղջկա հետ, Տափաստանի գայլ:

– Հերմիոնե, – բացականչեցի ես տանջահար, – հապա ինձ նայիր: Ծեր մարդ եմ ես:

– Ձախել մարդ ես դու: Եվ ինչպես որ ծուլացել ես պարել սովորելը, այդպես էլ քիչ է մնում բաց քողնես սիրել սովորելը: Օ՛, իմ բարեկամ, իդեալական և ողբերգական սիրուն դու, անշուշտ, ընդունակ ես գերազանցորեն, չեմ կասկածում, որ դա քեզ մոտ հրաշալի է ստացվում: Հիմա դու կսովորես նաև մի

քիչ սովորական և մարդկայնորեն սիրելի: Գործի սկիզբն արդեն արված է, շուտով քեզ պետք կլինի հաջողությունները խորացնել: Դե, դու դեռ ստիպված ես բռատն սովորել, դա մենք կսկսենք վաղվանից: Ես կգամ ժամը երեքին: Ընդհանրապես, դուր եկա՞վ քեզ այսօրվա երաժշտությունը:

– Գերազանց էր:

– Տեսնո՞ւմ ես, դա նույնպես առաջընթաց է, ինչ-որ բան դու սովորում ես: Առայժմ տանել չէիր կարող այդ ամբողջ պարային ու ջազային երաժշտությունը, այն քեզ համար անլուրջ էր, և ահա տեսնում ես, որ այդ երաժշտությունը բոլորովին էլ պետք չէ լրջորեն ընդունել, և որ այն կարող է նաև շատ սիրելի ու գրավիչ լինել: Ի դեպ, առանց Պարբոյի այդ ողջ նվագախումբը ոչինչ է: Նա է գլխավորում, շունչ տալիս դրան:

Ինչպես որ գրամոֆոնը իմ աշխատասենյակում կործանեց ասկետիկ ոգևորության մթնոլորտը, ինչպես որ ամերիկյան պարերը օտարի պես և ավերելով ներխուժեցին խնամքով մշակված իմ երաժշտական աշխարհը, այդպես էլ առայսօր հասակորեն գծված և խստորեն ներփակ իմ կյանքի մեջ բոլոր կողմերից ներխուժեց նոր, երկյուղալի և տարերային մի բան: Տափաստանի գայլի մասին քննախոսությունը և Հերմինեն ճշմարիտ էին հազարավոր հոգիների մասին իրենց ուսմունքով, նախկին բոլոր հոգիների կողքին հիմա իմ մեջ օրական դրսևորվում էին նորանոր հոգիներ, նրանք պահանջներ էին ներկայացնում, աղմկում, և ես, ինչպես նկարում, իմ առաջ տեսնում էի մինչայժմյան իմ մոլորությունը: Ես կարևորել էի միայն առանձին ընդունակություններ և սովորություններ, որոնցում ուժեղ էի պատահաբար և ստեղծել էի Հարրիի նկարը, ապրում էի Հարրիի կյանքով, որն, ըստ էության, ոչինչ էր, բացի պոեզիայի, երաժշտության և փիլիսոփայության աշխարհից, որտեղ շատ զարգացած մասնագետ էր նա, իմ անձնավորության ողջ մնացորդը, ընդունակություններիս, ձգտումներիս, մղումներիս մնացյալ ողջ քառսը ես ընդունում էի իբրև ձանձրալի և կապում էի Տափաստանի գայլի անվան հետ:

Ընդ որում՝ ինքնախաբերությունից իմ ազատագրումը, իմ անձնավորության այս փլուզումը բոլորովին էլ հաճելի ու զվարճալի զբաղմունք չէին. ընդհակառակը, դրանք ավելի հաճախ ցավալի էին, երբեմն նույնիսկ՝ անտանելի: Գրամոֆոնը երբևէն հնչում էր դժոխային ձայներով այն միջավայրում, որ-

տեղ ամեն ինչ նախատեսված էր այլ հնչյունների համար: Եվ մեկ-մեկ, որևէ մոդայիկ ռեստորանում, երբ ամեն տեսակ զվարճասերների ու արկածախնդիրների հետ իմ ուսնաստեպն էի պարում, ինքս ինձ քվում էի դավաճան մի մարդ, որ ուրացել է այն ամենը, ինչ կյանքում քանկ ու սրբազան է եղել: Եթե Հերմինեն ինձ մենակ բողներ ութ օր, ապա հեռու փախչելով՝ ես վերստին կազատվեի այս հոգնեցուցիչ ու ծիծաղելի արկածախնդրական փորձերից: Բայց Հերմինեն իմ կողքին էր միշտ, քեև նրան ամեն օր չէի տեսնում, բայց նա միշտ տեսնում էր ինձ, ուղղություն տալիս, հսկում, զնահատական տալիս իմ գործերին, անգամ ըմբոստության ու փախուստի բոլոր մտքերս նա ժպտալով կարդում էր իմ դեմքին:

Այն բանի փլուզումին գուզընթաց, ինչը ես նախկինում անվանում էի իմ անձնավորություն, սկսում էի նաև հասկանալ, քե ինչու, չնայած իմ ամբողջ հուսահատությանը, այդպես սարսափելի վախենում էի մահվանից և սկսում նկատել, որ այս ամոթալի ու նողկալի վախը մահվան հանդեպ նույնպես իմ հին, քաղթենիական, կեղծ էության մի մասն էր: Այդ նախկին պարոն Հալլերը՝ ընդունակ հեղինակը, Մոցարտի ու Գյոթեի գիտակը, արվեստի մետաֆիզիկային, հանճարին և ողբերգականությանը, մարդկայնությանը վերաբերող հետաքրքիր գործերի հեղինակը, գրքերով լեփլեցուն իմ խցի մենակյացը, ենթարկվում էր մանրամասն ինքնաքննադատության և պարտվում էր: Այդ ընդունակ և հետաքրքրաշարժ պարոն Հալլերը քեև քարոզում էր բանականություն և մարդկայնություն և ընդդիմանում պատերազմի դաժանությանը, սակայն պատերազմի ժամանակ թույլ չէր տվել իրեն պատի տակ կանգնեցնելու և զնդակահարելու, ինչը, ըստ էության, նրա մտածողության տրամաբանական ավարտը կլիներ, այլ գտել էր հարմարվելու ինչ-որ ձև, անշուշտ, շատ վայելուչ ու պատվարժան, որը, այնուամենայնիվ, հենց փոխզիջում էր: Այնուհետև, նա իշխանության և շահագործման հակառակորդն էր, սակայն բանկերում ուներ շատ արդյունաբերական ձեռնարկությունների արժեթղթեր, որոնց բերած տոկոսները առանց խղճի խայթի նա ուտում էր: Եվ այդպես էին նրա գործերը բոլոր հարցերում: Թեև Հարրի Հալլերը իրեն ներկայացնում էր իբրև հրաշալի իդեալիստ և աշխարհատյաց, իբրև մեղամաղձուտ մենակյաց և իբրև ռխակալ առաքյալ, սակայն իրականում նա բուրժուա էր,

այն կյանքը, որ վարում էր Հերմինեն, համարում էր դատապարտելի, գայրանում էր ռեստորաններում շռայլված զիշերների, այնտեղ մսխած քաղերների համար, զգում էր, որ խիղճը մաքուր չէ և բոլորովին չէր ձգտում իր ազատագրմանն ու կատարելագործմանը, այլ, ընդհակառակը, մշտապես մղվում էր դեպի ետ՝ դեպի այն հարմարավետ ժամանակները, երբ իր հոգևոր անսանձ զվարճանքները դեռևս ուրախացնում էին նրան և փառք բերում: Եհիշտ նույն ձևով, մինչպատերազմական երանելի օրերի համար, հոգոց էին հանում քերթերի այն ընթերցողները, որոնց նա արհամարհում էր ու ծաղրում, որովհետև դա ավելի հարմար էր, քան տեսածից դաս առնելը: Թուհ, սատանա, զզվանք էր պատճառում նա, այդ Հարրիի Հայրերը: Եվ, այդուամենայնիվ, ես պոկ չէի գալիս նրանից կամ էլ նրա՝ արդեն տարրալուծվող դիմակից, հոգևոր աշխարհի հետ նրա կոտրատվելուց, անկարգի և պատահականի (այդ թվում և՛ մահվան) հանդեպ նրա սարսափից և նոր Հարրիին, պարային դահլիճների այդ փոքր-ինչ վեհերտ ու ծիծաղաշարժ դիլետանտին նախանձով ու ծաղրանքով լի համեմատում էի նախկին, կեղծ խղեպական Հարրիի պատկերի հետ, որի մեջ նա՝ նոր Հարրին, արդեն հայտնագործել էր բոլոր այն տհաճ գործերը, որ նրան այն ժամանակ, պրոֆեսորի տան Գյոթեի նկարի մեջ այնքան գայրացրել էին: Անձամբ նա՝ հին Հարրին, հենց նույնպիսի, քաղքենիորեն խղեպականացված Գյոթե էր եղել, մի տեսակ հոգևոր իշխան՝ խիստ ազնվական դիմագծերով, վեհությամբ, հոգու և մարդկայնության ճառագումով, ինչպես աղամանդ և գրեթե ազդված իր իսկ հոգու ազնվականությունից: Մակայն, սատանան տանի, շատ խիստ էր ճարճրել այդ ազնվական պատկերը, այսօր միանգամայն ողբալի վիճակում էր ներկայանում խղեպական պարուն Հայրերը: Նրա տեսքը նման էր բարձրաստիճան պաշտոնյայի, որին թալանել էին ավագակները և թողել պատառոտված անդրավարտիքով, նա խելքը կվարվեր, եթե հաշտվեր շրջմուխի իր վիճակի հետ, սակայն դրա փոխարեն իր ցնցոտիները կրում էր այնպես, կարծես թե դրանց վրա դեռ կախված են շքանշաններ և արտասովորով՝ շարունակում էր հավակնել իր կորուսյալ պաշտոնին:

Ես շարունակ հանդիպում էի երաժիշտ Պարբոյին, նրա մասին իմ կարծիքը անհրաժեշտ էր փոխել քննուզել այն պատճառով,

որ Հերմինեն այդքան սիրում էր նրան և այդքան եռանդով փնտրում նրա ընկերակցությունը: Իմ էիշտողության մեջ Պարբոն մնացել էր գեղեցկատես ոչնչություն, մանր, ինչ-որ ունայն պճնամուղ, գոռ և անհոգ երեխա, որն ուրախությամբ խփում է տոնավաճառային իր թմբուկը և որին հեշտությամբ կարելի է կաշատել զովեստի խոսքերով և շոկոլադով: Բայց Պարբոն չէր հարցնում իմ կարծիքը, այն նրա համար անհետաքրքիր էր այնպես, ինչպես և իմ երաժշտական գիտելիքները: Նա ինձ լսում էր քաղաքավարությամբ ու սիրով՝ չդադարելով ժպտալուց, սակայն երբեք չէր տալիս իսկական պատասխան: Չնայած դրան՝ թվում էր, որ ես ինչ-որ հետաքրքրություն եմ առաջ բերել նրա մեջ, նա ձգտում էր ամեն կերպ դուր գալ ինձ և ինձ ցույց տալ իր համակրանքը: Երբ մի անգամ այդ անարդյունք գրույցներից ես գայրացա և փոքր-ինչ կոպտություններ թույլ տվեցի, նա ճնշված և տխուր դեմքով նայեց ինձ, վերցրեց իմ ձախ ձեռքը և սկսեց փաղաքշել այն, փոքրիկ, ոսկյա մի տուփից ինձ առաջարկեց ինչ-որ բան հոտոտել, դա ինձ կօզներ: Ես մայեցի Հերմինեին՝ հայացքով հարցնելով նրան, նա գլխով արեց, ես վերցրի տուփը և հոտոտեցի: Իրոք, քիչ անց թարմացա և առույզացա, հավանաբար, տուփի մեջ կոկաինի նման մի բան կար: Հերմինեն ինձ պատմեց, որ Պարբոն նման զանազան դեղամիջոցներ ունի, որոնք ստանում է գաղտնի ճանապարհով, երբեմն դրանցից բաժին է հանում ընկերներին և դրանց չափերի ու բաղադրամասերի վարպետ է. ցավազրկող միջոցներ, քնաբեր, բարի երազներ առաջ բերող, ուրախացնող, սիրահարություն հարուցող:

Մի անգամ նրան հանդիպեցի փողոցում, գետափին, և նա անմիջապես միացավ ինձ: Այս անգամ, վերջապես, ինձ հաջողվեց նրան խոսեցնել:

– Պարոն Պարբո, – ասացի ես, նա խաղում էր բարակ, մուգ արծաթյա մի փայտիկի հետ, – Դուք Հերմինեի ընկերն եք, դա է պատճառը, որ հետաքրքրվում եմ Ձեզանով: Բայց Դուք, ասեմ Ձեզ, այնքան էլ չեք օգնում, որ մեր խոսակցությունը հեշտանա: Ես մի քանի անգամ փորձել եմ Ձեզ հետ խոսել երաժշտության մասին, ինձ հետաքրքիր կլինեի լսել Ձեր կարծիքը, Ձեր առարկությունները, Ձեր դատողությունները, բայց Դուք բանի տեղ չեք դնում դա և ինձ չեք տալիս ամենաչնչին պատասխանն անգամ:

Նա սրտանց ծիծաղեց և այս անգամ ինձ չթողեց անպատասխան, այլ ասաց անտարբեր.

– Հասկանում եք, իմ կարծիքով, առհասարակ, հարկ չկա խոսելու երաժշտության մասին: Ես երբևէ երաժշտության մասին չեմ խոսում: Ի՞նչ կարող էի ասել Չեզ՝ ի պատասխան Չերխելացի և ճշմարիտ խոսքերի: Չէ՞ որ Դուք ճիշտ էիք այն ամենում, ինչ ասում էիք: Բայց, հասկանո՞ւմ եք, ես երաժիշտ եմ, ոչ գիտնական և չեմ կարծում, որ երաժշտության մեջ ճշմարտությունը ինչ-որ բան արժե: Երաժշտության մեջ կարևորը այն չէ, որ դու ճշմարիտ ես, որ ճաշակ ունես և կրթություն, և նման բաներ:

– Հասկանալի է: Իսկ ի՞նչն է կարևոր:

– Կարևորն այն է, պարոն Հալլեր, որ նվագում ես, նվագում ես որքան կարելի է լավ, որքան կարելի է շատ և որքան կարելի է ուժեղ: Ահա թե ինչն է խնդիրը, մայե: Երբ ուղեղումս ունենում եմ Բախի կամ Հայդնի բոլոր ստեղծագործությունները և նրանց մասին ասում եմ ամենախելացի բաները, ապա դրանով մարդկանց օգուտ չեմ քերում: Բայց երբ ձեռքս եմ առնում իմ փողը և մի կարգին շիմմի նվագում, ապա դա՝ անկախ նրանից, լավ եմ նվագում, թե վատ, միևնույն է, մարդկանց ուրախություն է պատճառում, նա շարժում է նրանց ոտքերն ու արյունը: Կարևորը հենց միայն դա է: Երբևէ պարահանդեսներում ուշադրություն դարձրեք դեմքերին այն պահին, երբ երկար ընդմիջումից հետո նորից հնչում է երաժշտությունը, ինչպես են փայլում աչքերը, ոտքերը վեր թռչում, դեմքերը սկսում են ծայտալ: Դա հենց այն է, հանուն որի նվագում եմ:

– Շատ լավ, պարոն Պարլո: Բայց գոյություն չունի միայն զգայական երաժշտություն, կա նաև հոգևոր երաժշտություն: Այն երաժշտությունից բացի, որը կատարվում է հենց այս պահին, կա նաև անմահ երաժշտություն, որը շարունակում է ապրել նույնիսկ այն ժամանակ, երբ տվյալ պահին չի կատարվում: Կարելի է մենակ պառկել անկողնում և մտքով կրկնել որևէ մեղեդի «Կախարդական սրինգ»-ից կամ «Կրքեր՝ ըստ Մատթեոսի»-ից: Այդ դեպքում երաժշտությունը կժմվի՝ առանց որևէ մեկի կողմից սրինգին կամ ջութակին դիպչելու:

– Անշուշտ, պարոն Հալլեր, «Անձկությունը» կամ «Լալենսիան»³⁵ նույնպես ամեն գիշեր լուռ վերարտադրում են մենակյաց շատ երագողներ, ամենաողորմելի մեքենագրուհին իսկ իր գրասենյակում հիշում է վերջին տանտակը և իր տա-

ռաստեղների վրա տկակացնում նրա մեղեդին: Դուք իրավացի եք, բոլոր այդ մենակները թող ունենան իրենց համր երաժշտությունը՝ լինի «Անձկությունը», «Կախարդական սրինգը», թե «Լալենսիան»: Բայց որտեղի՞ց են նրանք վերցնում իրենց միայնակ, համր երաժշտությունը: Նրանք դա վերցնում են մեզանից՝ երաժիշտներից, նախ պետք է այն կատարել, ունկնդրել, նախևառաջ այն պետք է մտնի արյան մեջ, իսկ հետո արդեն նրա մասին կարելի է մտածել ու երագել տանը, սեփական առանձնասենյակում:

– Համամիտ եմ,– ասացի սառը,– և, այնուամենայնիվ, չի կարելի նույն աստիճանի վրա դնել Մոցարտի և նորագույն ֆոքստրոտը: Եվ միևնույնը չէ, Դուք մարդկանց համար աստվածային, անմահ երաժշտություն եք կատարում, թե էժանագին, մեկօրյա կյանք ունեցող երգեր:

Երբ Պարլոն իմ ձայնի մեջ հուզմունք նկատեց, դեմքին անմիջապես սիրալիք արտահայտությունը տվեց, մեղմորեն շոյեց իմ ուրը և ձայնին հաղորդեց անհավատալի նրբություն:

– Ախ, սիրելի պարոն, աստիճանների առնչությամբ Դուք միանգամայն իրավացի եք: Անշուշտ, ես ոչինչ չունեմ այն բանի դեմ, որ Դուք Մոցարտին, Հայդնին և «Լալենսիան» դնեք այն աստիճանի վրա, որը հարմար եք գտնում: Ինձ համար դա միևնույն է, ես աստիճանները չեմ զանազանում, ինձ այդ մասին չեն հարցնում: Մոցարտը, հավանաբար, կհնչի նաև հարյուր տարի անց, իսկ «Լալենսիան»՝ երկու տարի անց, հավանաբար, արդեն կմոռացվի, ես կարծում եմ, որ այդ խնդիրը մենք կթողնենք ամենագոր Տիրոջը, նա արդարացի է և իր ձեռքերի մեջ է պահում մեր բոլորի կյանքի ժամանակը, անգամ յուրաքանչյուր վալսի ու յուրաքանչյուր ֆոքստրոտի, նա ճիշտ կվարվի հաստատապես: Սակայն մենք՝ երաժիշտներս, պետք է մեր գործը ունենանք, այն, ինչ մեր պարտականությունն ու խնդիրն է. մենք պետք է նվագենք այն, ինչ այս պահին ցանկանում են մարդիկ, և պետք է նվագենք այնքան լավ, գեղեցիկ և ազդու, որքան կարող ենք:

Հառաչելով՝ ես համաձայնեցի: Այս մարդուն բան հասկացնելը դժվար էր:

Շատ պահեր էին լինում, երբ հինն ու նորը, ցավը և ուրախությունը, սարսափը և հրճվանքը զարմանալիորեն իրար էին խառնվում: Ես մեկ երկինք էի բարձրանում, մեկ իջնում էի

դժոխք, հաճախ լինում էի երկուսում էլ միաժամանակ: Հին Հարրին և նորը սպրում էին երբեմն դաժան վեճերի մեջ, երբեմն՝ իրար հետ հաշտ ու խաղաղ: Հին Հարրին երբեմն թվում էր լիովին մեռած, թվում էր, որ նա մահացել է ու թաղվել, բայց հանկարծ վերստին մեջտեղ էր գալիս, հրամաններ արձակում, իշխանություն բանեցնում՝ լավ տեղյակ լինելով ամեն ինչին, իսկ նոր, կրտսեր, ջահել Հարրին ամաչում էր, լռում և թույլ էր տալիս իրեն պատին սեղմել: Պատահում էր, որ ջահել Հարրին բռնում էր ծերի կոկորդից և սեղմում ինչպես հարկն է, լավում էին տնքոցներ, ընթանում էր անզիջում պայքար, վերակենդանանում էին ածելու մասին մտքերը:

Բայց հաճախ ցավն ու երջանկությունը միասնական այլքով հարվածում էին ինձ: Այդպես եղավ այն պահին, երբ ես, իմ առաջին քաց պարային ելույթից հետո, երեկոյան մտա իմ ննջասենյակ և ամասելի գարնանքով, սպշորյամբ, սարսափով ու հիացքով տեսա գեղանի Մարիային՝ իմ անկողնում պառկած:

Բոլոր անակնկալներից, որ մինչ այդ Հերմինեն նախապատրաստել էր ինձ համար, սա ամենաազդեցիկն էր: Քանի որ ոչ մի պահ չէի կարող կասկածել, թե Հերմինեն այն աղջիկն է, որ ինձ կուղարկի այս դրախտային թռչունը: Այդ երեկո՝ որպես բացառություն, ես չէի անցկացրել Հերմինեի հետ, այլ Մայր տաճարում լսել էի հին, հոգևոր երաժշտության մի ընտիր կատարում. դա գեղեցիկ և մելամաղձոտ թռիչք էր դեպի իմ նախկին կյանքը, իմ երիտասարդության անդաստանները, իդեալական Հարրիի տարածքները: Եկեղեցու բարձր, գոթական սրահում, որի հոյակապ, ցանցկեն գմբեթը հոգևոր կենդանությանը երկինք էր բարձրանում թույլ լույսերի մեջ, ես լսեցի Բուքստեհուդի³⁶, Պախելբելի³⁷, Բախի, Հայդնի պիեսները, վերստին քայլեցի իմ սիրելի, հին ճանապարհներով, վերստին լսեցի հրաշալի ձայնը՝ Բախ կատարող մի երգչուհու, որի հետ երբևէ բարեկամներ էինք և արտակարգ շատ կատարումներ էինք լսել: Հնավանդ երաժշտության ձայները, նրա անսահման արժեքը և սրբությունը իմ հիշողության մեջ վերակենդանացրեցին երիտասարդության բոլոր թռիչքները, գմայլանքներն ու ոգևորությունը, տխուր և խորասուզված նստեցի եկեղեցու երգչախմբի բարձր դասում՝ մեկ ժամով հյուրընկալվելով ազնվական, երանելի այն աշխարհում, որ մի ժամանակ իմ հայրենիքն էր եղել: Հայտնի մի դուետ կատարելիս աչքերիցս

հանկարծ արցունք հոսեց, ես չսպասեցի համերգի ավարտին, հրաժարվեցի երգչուհուն հրաժեշտ տալուց (օ՛, որքան շողշողուն երեկոներ էի անցկացրել մի ժամանակ նման համերգներից հետո երաժիշտների հետ), անձայն դուրս եկա Մայր տաճարից և հոգնած քայլեցի գիշերային փողոցներով, որտեղ ամենուրեք, ռեստորանների պատուհաններից այն կողմ, ջազային երգիչները կատարում էին իմ ներկա կյանքի մեղեդիները: Օ՛, ինչ մռայլ թյուրիմացություն ստացվեց իմ կյանքից:

Գիշերային այս թափառումի ժամանակ ես երկար մտածեցի նաև իմ՝ երաժշտության հանդեպ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքի մասին, և այդ որքան հուզիչ, նույնքան էլ տհաճ վերաբերմունքի մեջ առ երաժշտություն վերստին տեսա զերմանական ողջ մտավորականության ճակատագիրը: Գերմանական հոգու մեջ իշխում է մայրական իրավունքը, բնության հետ կապվածությունը՝ երաժշտության առաջնայնության կարգով, որը անհայտ է մեկ այլ ժողովրդի: Մենք՝ մտավորականներս, փոխանակ տղամարդու պես ըմբոստանայինք սրա դեմ և մտքին, լոգոսին, խոսքին ականջալուր լինելիք, բոլորս միասին երագում ենք առանց խոսքի լեզվի մասին, որն ընդունակ է արտահայտելու անարտահայտելին, պատկերելու անպատկերելին: Փոխանակ այն բանի, որ հնարավոր չափով հավատարմորեն և ազնվորեն նվագենք սեփական գործիքի վրա, մտավոր գերմանացին մշտապես դիմադրել է բառին ու բանականությանը և սիրախաղ է արել երաժշտության հետ: Եվ երաժշտության մեջ, ձայնի հրաշալիորեն երանավետ պատկերների աշխարհում, հրաշալիորեն գեղեցիկ զգացմունքներում և արամադրություններում, որոնք երբեք չէին վերածվում իրականության, գերմանական ոգին մոռացության տվեց ինքն իրեն և աչքաթող արեց իր իսկական անելիքները: Մենք՝ մտավորականներս, բոլորս անխափր, չգիտելիք կյանքը, օտար էինք նրան ու թշնամի, այդ պատճառով էլ մեր՝ գերմանական իրականության մեջ, մեր պատմության մեջ, մեր քաղաքականության մեջ, մեր հասարակական գիտակցության մեջ մտավորականի դերն այդքան ողորմելի էր: Այո, անշուշտ, հաճախ էի այս մտքերին տրվում, ժամանակ առ ժամանակ խորապես բաղձելով առ այն, որպեսզի ինձ համար մեկ անգամ և ընդմիջտ լինեմ լուրջ և գործնական՝ փոխանակ անվերջ գրադվելու գեղագիտությանը և արվեստի ոգու խնդիրներով:

Բայց դա ամեն անգամ ավարտվում էր հիասթափությամբ, ճակատագրին համակերպվելով: Պարոնայք գեներալները և ծանր արդյունաբերության տերերը միանգամայն իրավացի էին. մեզանից՝ «մտավորականներից», բան հասկանալ չէր լինի, մենք ավերորդ, իրականությունից օտարացած, խելացի զվարճաբանների անպատասխանատու հասարակություն էինք: Թուհ, ածելի...

Այս մտքերով ու երաժշտության արձագանքներով լեցուն, ծանրաբեռ սրտով, որ համակված էր վշտով ու կյանքի, իրականության, իմաստի և անդարձ կորցրածի հանդեպ հուսահատ կարոտով, ի վերջո, ես վերադարձա տուն, բարձրացա իմ աստիճաններով, վառեցի սենյակիս լույսը, անօգուտ փորձեցի մի քիչ կարդալ, մտածեցի խոստմանս մասին, որն ինձ ստիպում էր վաղը երեկոյան գնալ «Սեսիլ» սրճարան վիսկի խմելու և պարելու, և զգացի դառնություն ու չարություն ոչ միայն ինքս իմ, այլև Հերմինեի հանդեպ: Որքան էլ բարի ու անկեղծ, որքան էլ հրաշալի արարած լիներ նա, շատ ավելի լավ կլիներ, եթե այն ժամանակ ինձ թույլ տար մեռնել՝ փոխանակ ներքաշելու այս խելագար, օտարացած, տագնապալի, անիսկական աշխարհի մեջ, որտեղ մշտապես լինելու եմ խորթ և լավագույն բաներն իմ մեջ ավերվելու են ու մատնվելու կորստյան:

Եվ տխուր մարեցի լույսը, տխուր մտա իմ ննջարան, տխուր սկսեցի հանվել, բայց այդ պահին ինչ-որ անսովոր բուրմունք շփոթության մատնեց ինձ, օժանելիքի հոտ էր փչում, և շրջվելով՝ տեսա գեղեցիկ Մարիային իմ անկողնում պատկած, ժպտերես, փոքր-ինչ վախեցած, մեծ, կապույտ աչքերով:

– Մարիա, – ասացի: Եվ իմ առաջին միտքն այս էր՝ տանտիրուհիս ինձ դուրս կանի բնակարանից, եթե սա իմանա:

– Ես եկա, – ասաց նա ցածր, – Դուք չարանո՞ւմ եք ինձ վրա:

– Ոչ, ոչ: Ես գիտեմ, Հերմինեն է Ձեզ տվել բանալին: Դե, հա:

– Օհ, Դուք չարանում եք: Ես կզմամ:

– Ոչ, գեղանի Մարիա, մնացեք: Միայն քե այսօր երեկոյան ես շատ տխրեցի, ուրախանալ այսօր չկարողացա, հավանաբար, կկարողանամ վաղը:

Ես փոքր-ինչ թեքվեցի նրա կողմը, նա իր մեծ, ամուր արե-րի մեջ առավ իմ գլուխը, մոտեցրեց իրեն և երկար համբուրեց ինձ: Ապա ես նստեցի նրա կողքին՝ անկողնուն, բռնեցի ձեռքը, խնդրեցի կամաց խոսել, որ մեզ չլսեն, նայեցի նրա գեղեցիկ, կյանքով լի դեմքին, որն ինչպես մեծ ծաղիկ՝ օտար ու հրաշալի, հանգչում էր իմ բարձին: Դանդաղորեն իմ ձեռքը մոտեցրեց իր շրթունքներին, տարավ վերնակի տակ և դրեց իր տաք, հանդարտ շնչող կրծքին:

– Կարող ես ուրախ չլինել, – ասաց նա, – Հերմինեն ինձ արդեն ասել է, որ դու վիշտ ունես: Դա ամեն մեկն էլ հասկանում է: Իսկ ես դեռ դո՞ւր եմ գալիս քեզ: Հա՞: Վերջերս, պարելիս, դու շատ սիրահարված էիր:

Ես համբուրեցի նրա աչքերը, բերանը, պարանոցը և կուրծքը: Հենց նոր ես մտածում էի Հերմինեի մասին դառնությամբ ու կշտամբանքով: Բայց ահա ձեռքերիս մեջ պահում էի նրա ընծան և երախտապարտ էի: Մարիայի սիրային քնքշանքները վիրավորանք չէին պատճառում այն հրաշալի երաժշտությանը, որ լսել էի այսօր, դրանք պատշաճ էին նրան և համակված նրանով: Գեղեցկուհու վրայից կամաց-կամաց մի կողմ տարա ծածկոցը, մինչև որ իմ համբույրներով հասա նրա ունամայրերին: Երբ պառկեցի նրա կողքին, ծաղկե դեմքը ժպտաց ինձ ամենագետ ժպիտով ու բարյացակամ:

Այդ գիշեր, Մարիայի կողքին, ես քնեցի ոչ երկար, բայց խոր ու լավ, ինչպես երեխա: Իսկ արթնության պահերին ընկեցի նրա գեղեցիկ, պայծառ ջահելությունը և անաղմուկ գրուցելով հետը՝ իմացա հետաքրքիր շատ բաներ նրա և Հերմինեի կյանքի մասին: Ես շատ քիչ բան գիտեի նման կյանքի մասին, նախկինում միայն թատերական աշխարհում էին երբեմն հանդիպում նման արարածներ՝ և՛ կանայք, և՛ տղամարդիկ, և՛ կիսաարվեստագետներ, և՛ կիսապոռնիկներ: Միայն այժմ ես փոքր-ինչ խորը տեսա այդ հետաքրքիր, այդ զարմանալիորեն անմեղ, այդ զարմանալիորեն աղավաղված գոյությունները: Այդ աղջիկները, մեծ մասամբ աղքատ տներից, չափազանց խելոք և չափազանց սիրունատես են, որպեսզի իրենց ամբողջ կյանքը հանձնեն վատ վարձատրվող ու անուրախ ինչ-որ ծառայության դիմաց՝ հանուն մի կտոր հացի, բուլբուլ էլ սպրում էին կամ պատահական վճարներով, կամ իրենց գրավչության ու հաճելիության հաշվին: Երբեմն ամիսներ

րով նրանք նստում էին գրամեքենայի առաջ, երբեմն դառնում էին ունևոր ցոփակյացների սիրուհիներ, ստանում էին գրպանի փող ու նվերներ, պատահում էր՝ ապրում էին մորթիների մեջ, շքեղ հյուրանոցներում և շրջում էին ավտոմեքենաներով, պատահում էին և այլ ժամանակներ, երբ հանգրվան էին գտնում ձեղնահարկերում, ու թեև երբեմն, չափազանց նպաստավոր առաջարկների դեպքում, համաձայնվում էին ամուսնանալ, սակայն, ընդհանուր առմամբ, չէին ձգտում դրան: Նրանցից շատերը սիրո մեջ տարփալից չէին և իրենց շնորհները տալիս էին միայն տհաճությամբ և ամենաբարձր արժեքի դիմաց: Մյուսները, և դրանց մեջ՝ նաև Մարիան, ամուսնոր չափով աչքի էին ընկնում սիրելու ընդունակությամբ և սիրո պահանջով, շատերը գիտեին սեր անել երկու սեռերի հետ էլ, նրանք ապրում էին բացառապես միայն հանուն սիրո և մշտապես, պաշտոնական և վճարունակ գույքակերների կողքին, ունենում էին նաև այլևայլ սիրային կապ: Ժրաջան ու բազմահոգ, հոգաառատ ու թեթևամիտ, խելացի, բայց և անգիտակից ապրում էին այդ թիթեռները իրենց որքան երախայական, նույնքան և նուրբ կյանքով, անկախ՝ տրվելով ոչ յուրաքանչյուրին, սպասելով իրենց երջանկությանը ու լավ եղանակին, սիրահարված կյանքին և, այդուամենայնիվ, ավելի քիչ կապված նրան, քան քաղթենիները, մշտապես պատրաստ՝ հետևելու որևէ հեքիաթային ասպետի՝ մեկնելու նրա ամբողջ, մշտապես պատրաստ, թեև կիսով չափ գիտակցելով ծանր ու տխուր իրենց վախճանը:

Մարիան այն զարմանալի առաջին գիշերը և հետագա օրերում ինձ սովորեցրեց շատ բան, ոչ միայն զգացմունքների նոր, գմայելի խաղեր ու վայելքներ, այլև նոր իմացություն, նոր ըմբռնումներ, նոր սեր: Պարերի և զվարճավայրերի, կինոյի, սրճարանների և հյուրանոցային թեյարանների աշխարհը, որ ինձ՝ մեծակյացիս ու գեղագետիս համար շարունակում էր ունենալ ինչ-որ թերարժեք, ինչ-որ արգելված և ստորացուցիչ կողմեր, Մարիայի համար, Հերմիների և նրանց ընկերուհիների համար պարզապես աշխարհ էր, այն ոչ բարի էր, ոչ չար, ոչ ցանկալի և ոչ էլ ատելության արժանի, այդ աշխարհում ծաղկում էր նրանց կարճ, անձկությամբ լի կյանքը, այդ աշխարհը տան պես էր ու ճանաչ նրանց համար: Նրանք սիրում էին շամպայնը կամ որևէ առանձնահատուկ տապակա, ինչպես

որ մենք ենք սիրում որևէ կոմպոզիտորի կամ բանաստեղծի և որևէ նոր, մոդայիկ պարային երաժշտության կամ ջազային երգչի սենտիմենտալ, քաղցր-մեղր երգի վրա վատնում էին նույն այն ոգևորությունը, հուզմունքը և խանդադատանքը, ինչը մենք զգում ենք Նիցշեի կամ Համսունի հանդեպ: Մարիան ինձ պատմում էր այդ գեղեցկատես սաքսոֆոնահարի՝ Պարլոյի մասին և խոսում ամերիկյան մի song-ից*, որը Պարլոն երբեմն կատարում էր նրանց համար, և խոսում էր այնպիսի հափշտակությամբ, այնպիսի զարմանքով ու սիրով, որ ես հուզվում ու զգացվում էի ավելի քան բարձրաճաշակ մեկի գմայլանքը կարող էր լինել որևէ ընտիր արվեստի առնչությամբ: Ես պատրաստ էի սրանչանալ նրա հետ միասին, ինչպիսին էլ այդ song-ը³⁸ լիներ: Մարիայի սիրառատ բառերը, նրա տարփանքով պայծառացած հայացքը խոր ճեղքեր էր առաջ բերում իմ գեղագիտության մեջ: Գեղեցիկը, այդուամենայնիվ, մնում էր այն սակավ, ընտիր գեղեցիկը, որը, իմ կարծիքով, բնավ ենթակա չէր կասկածի ու վիճարկման, ամենից առաջ՝ Մոցարտը, բայց որտե՞ղ էր նահմանը: Մի՞թե մենք՝ բոլոր գիտակներս ու քննադատներս, պատանության տարիներին չենք պաշտել արվեստի ստեղծագործություններ և արվեստագետների, որոնք հիմա թվում են կասկածելի ու տհաճ: Մի՞թե այդպես չի եղել Լիստի, Վազնեի, անգամ Բեթհովենի հետ: Ամերիկյան song-ի հանդեպ Մարիայի՝ մանկականորեն կրքոտ հափշտակությունը նույնպիսի մաքուր, գեղեցիկ, ոչ մի կասկածի չենթարկվող գեղագիտական ապրում չէ՞ր, ինչպիսին միջնակարգ դպրոցի որևէ ուսուցչի գմայլանքը կարող էր լինել «Տրիստան» օպերայի հանդեպ, կամ որևէ դիրիժորի ոգևորությունը «Էմմերորդ» սիմֆոնիան կատարելու ժամանակ: Եվ մի՞թե այս ամենը զարմանալիորեն չէր համընկնում պարոն Պարլոյի տեսակետների հետ և արդարացնում դրանք:

Այդ գեղեցկատես Պարլոյին, ինձ թվում է, Մարիան նույնպես շատ սիրում էր:

– Նա գեղեցիկ մարդ է, – ասացի ես, – ինձ էլ շատ է դուր գալիս: Բայց ասա, Մարիա, ինչպես կարող ես դու նրա հետ սիրել նաև ինձ, ձանձրալի, ծեր մարդուս, որը գեղեցիկ չէ, մազերն արդեն ճերմակին են տալիս, և ոչ սաքսոֆոն նվագել գիտի, ոչ էլ անգլիական սիրային երգեր երգել:

* Song – երգ (անգլ.):

– Այդպես վատ մի խոսիր, – կարեց նա: – Դա, ախր, շատ բնական է: Դու նույնպես ինձ դուր ես գալիս, դու նույնպես ինչ-որ գեղեցիկ, սիրելի և առանձնահատուկ կողմեր ունես: Դու իրավունք չունես լինել այլ, քան կաս: Այդպիսի բաների մասին մարդիկ չեն խոսում և չեն պահանջում հաշվետվություն: Տես, երբ դու համբուրում ես իմ պարանոցը կամ ականջը, ապա ես զգում եմ, որ դու սիրում ես ինձ, որ ես քեզ դուր եմ գալիս: Դու կարողանում ես համբուրել յուրատեսակ, ասես, փոքր-ինչ վախեցած, և դա ինձ ասում է՝ նա քեզ սիրում է, դրանով նա իր երախտագիտությունն է հայտնում քեզ, որ դու սքանչելի ես: Ես դա շատ, շատ եմ սիրում: Եվ հետո՝ մեկ ուրիշ տղամարդու հետ ինձ դուր է գալիս դրա ճիշտ հակառակը, երբ քվում է՝ նա ոչինչ չի անում ինձ համար և այնպես է համբուրում, կարծես իր կողմից մեծ զբասրություն է հանդես բերում:

Մենք մորից քուն մտանք: Ես մորից արթնացա՝ շարունակելով գրկել նրան՝ իմ գեղեցիկ, գեղեցիկ ծաղկին:

Եվ զարմանալի բան՝ այդ գեղեցիկ ծաղիկը անփոփոխ մնում էր իբրև ընծա, որն ինձ նվիրել էր Հերմինեն: Անփոփոխ կանգնած էր նա Մարիայի հետևում: Ղիմակի նման փակելով նրա դեմքը: Եվ հանկարծ, իմիջիայլոց, հիշեցի Էրիկային, իմ հեռու, չար սիրեցյալին, իմ խեղճ ընկերուհուն: Նա պակաս գեղեցիկ չէր, քան Մարիան, թեև այդքան ծաղկուն ու ազատ չէր, բայց ուներ սիրո արվեստի հանճարեղ շնորհներ, և իբրև պարզ ու ցավազին, սիրելի ու իմ ճակատագրի մեջ խոր մտած պատկեր՝ մի պահ կանգնեց իմ առաջ, ապա մորից անհետացավ՝ քաղվելով քնի մեջ, մոռացության, տխուր հեռաստանների:

Եվ այդպես, այդ գեղեցիկ, քնքուշ գիշերվա մեջ իմ առաջ կանգնեցին իմ կյանքի բազում պատկերներ, իսկ ես երկար ապրել էի այնպես դատարկ, ողորմելի և առանց պատկերների: Այժմ, Էրոսից ներշնչված, խոր ու բազմազան պատկերները բխում էին աղբյուրի պես, և հիացքից ու վշտից մի պահ իմ սիրտը նվաղեց այն մտքից, թե որքան հարուստ է եղել իմ կյանքի պատկերասրահը, հավերժական աստղերով ու աստղատիպոտներով որքան լիքն է եղել խեղճ Տափաստանի գայլի հոգին: Զնքշորեն ու պայծառ, ինչպես հեռավոր լեռան անսահման կապույտին խառնված երազային գոյություն, նայում էին մանկությունս ու մայրս, պղնձաձայն ու պարզորոշ հնչում էր իմ բարեկամների ձայնը՝ սկսած առասպելական Հերմա-

նից, որ Հերմինեի հոգևոր եղբայրն էր, բուրավետ ու անիրական, ինչպես ջրից բարձրացող ծովային ցողաքաթախ ծաղիկներ՝ դուրս էին լողում պատկերները բազմաթիվ կանանց, որոնց սիրել էի, որոնց ցանկացել էի ու երգել, որոնցից քչերին տիրել էի ու դարձրել իմ սեփականությունը: Երևաց նաև իմ կինը, որի հետ ապրել էի երկար տարիներ, որն ինձ սովորեցրել էր ընկերություն, անհամաձայնություն, հնազանդություն: Նրա նկատմամբ, չնայած բոլոր անբավականություններին, իմ ներսում պահպանվում էր խոր վստահություն մինչև այն օրը, երբ ինձ՝ խելագարվածիս ու հիվանդիս, լքեց հանկարծակի փախուստով ու կատաղի մերժմամբ, և ես հասկացա, թե որքան շատ եմ սիրել և որքան խորն եմ հավատացել նրան, որ նրա կողմից հավատարմության խախտումը այդքան ծանր նստեց վրաս՝ խորտակելով ամբողջ կյանքս:

Այդ պատկերները, դրանք հարյուրներով էին, անուններով և առանց անունների, բոլորը կրկին ինձ մոտ էին հավաքվել, ջահելացած ու նորացած բարձրանում էին այդ սիրային գիշերվա աղբյուրներից, և ես վերստին հասկացա, որ դժբախտության մեջ ես որքան երկար եմ մնացել, որ դրանք իմ կյանքի այն ունեցվածքն ու արժեքներն են, որոնք անխախտ են, պատմության աստղեր դառած այդ դեմքերը, որոնց թեև մոռացել, սակայն չէի կարողացել ոչնչացնել, որոնց հերքագայությունը հենց իմ կյանքի ասքն էր, իսկ նրանց աստղային փայլը՝ իմ գոյության անանց վաստակը: Իմ կյանքը տանջալից էր եղել, խտորված ու ապերջանիկ, այն տանում էր դեպի հրաժարում ու մերժում, այն դառն էր՝ իմ ճակատագրին խառնված ողջ մարդկության ճակատագրի աղից, բայց այն հարուստ էր եղել, հպարտ և հարուստ, անզամ թշվառության մեջ արքայական կյանք էր: Որքան էլ որ այդ կյանքի ճանապարհի վերջին հատվածը վատնվում էր այդպես անուրախ, այդուամենայնիվ, այդ կյանքը իր արմատներում ազնիվ էր, այն ուներ դեմք և ռասա, այն պարվում էր ոչ թե մանր դրամների, այլ աստղերի համար:

Դա համեմատաբար վաղուց էր, և շատ բաներ էին անցել ու փոխվել այն ժամանակներից, ես հիմա վատ եմ հիշում այդ գիշերվա մանրամասները, հիշում եմ միայն առանձին բառեր մեր խոսակցությունից, սիրային քնքշանքներից ծնված առանձին ղիմախաղեր ու հպումներ, հիշում եմ պայծառ ակնթարթները, երբ մենք արթնանում էինք սիրո խոնջանքի ծանր քնից:

Բայց այդ գիշեր, առաջին անգամ իմ անկման ժամանակներից սկսած, իմ սեփական կյանքը նայեց ինձ վրա անողոր վառվող աչքերով, այդ գիշերն էր, երբ ես վերստին պատահականությունն իբրև ճակատագիր, իմ գոյության ավերակները իբրև աստվածային բեկորներ զգացի: Իմ հոգին շողում էր վերստին, իմ աչքը վերստին տեսնում էր, և, ակնբարբային պատկերից դողահար, մտածում էի, որ բավական է արագորեն ի մի բերեմ ավերված պատկերների աշխարհը, բավական է հարրի-հալլերյան տափաստանագայլային կյանքը՝ իբրև ամբողջություն, բարձրացնեմ, հասցնեմ կերպարի, և ինքս անձամբ կմտնեմ կերպարների աշխարհ ու կդառնամ անմահ: Մի՞թե դա այն նպատակը չէր, դեպի ուր թափավագը էր վերցնում և որին փորձում էր հասնել մարդկային յուրաքանչյուր կյանք:

Առավոտյան, նախաճաշ Մարիայի հետ կխելուց հետո, ես պետք է նրան տնից թաքուն դուրս բերեի, և դա ինձ հաջողվեց: Նույն օրը, քաղաքի մոտիկ թաղամասերից մեկում, Մարիայի և ինձ համար փոքր մի սենյակ վարձեցի, որը միմիայն մեր հանդիպումների համար էր նախատեսված:

Պարի իմ ուսուցչուհի Հերմինեն եկավ իր պարտականությանը հավատարիմ, և ես ստիպված էի բռնաբռն սովորել: Նա խիստ էր և անողոր, և ինձ ոչ մի պարապմունքից չազատեց, քանզի վճռված էր, որ նրա հետ պետք է գնամ հաջորդ դիմակահանդեսին: Նա ինձնից դրամ խնդրեց զգևտի համար, որի մասին, սակայն, խուսափեց որևէ բան ասել ինձ: Այցելել նրան կամ գոնե իմանալ, թե որտեղ է ապրում՝ ինձ դեռ արգելված էր:

Մինչև դիմակահանդեսն ընկած ժամանակը, մոտ երեք շաբաթ, արտակարգ զեղեցիկ անցավ, ինձ թվում էր, որ Մարիան իսկապես սիրված առաջին կինն էր իմ կյանքում, որին ունեցել եմ: Այն կանանցից, որոնց սիրում էի, մշտապես պահանջում էի միտք ու կրթվածություն՝ առանց նկատելու, որ նույնիսկ ամենախելոք և համեմատաբար ամենակիրթ կինը նույնիսկ ոչ մի անգամ չէր համապատասխանում իմ բնավորությանը, այլ միշտ հակառակվում էր դրան, կանանց մոտ գալով՝ ես ինձ հետ բերում էի իմ խնդիրները և մտածումները, և ինձ միանգամայն անհնար էր թվում մեկ ժամից ավելի սիրել որևէ աղջկա, որը չի կարողացել ոչ մի գիրք, չի հասկանում, թե ինչ բան է բնթերցանությունը և չէր կարող զանազանել Չայկովսկուն Բեր-

հովենից: Մարիան կրթություն չուներ, նա չուներ այդ կողանցիկ ճանապարհների և փոխարինող աշխարհների կարիքը, նրա խնդիրները՝ բոլորն էլ ուղղակի ծագում էին զգայություններից: Իրեն տրված զգացողությամբ, իր առանձնահատուկ մարմնականուցվածքով, գույներով, իր մազերով, ձայնով, մաշկով, իր խառնվածքով գտնել, սիրած տղամարդուց կախարդանքով դուրս կորզել պատասխան, ըմբռնում, և կենսալի, երջանկացնող պատասխան խաղ սեփական յուրաքանչյուր շնորհի, սեփական գծերի յուրաքանչյուր փոփոխման, սեփական մարմնի յուրաքանչյուր ամենամուրբ ոլորքի դիմաց՝ ահա սա էր նրա արվեստն ու առաջադրանքը: Նրա հետ առաջին, վեհերոտ պարի ժամանակ արդեն ես հասկացա, կռահեցի այդ հանճարեղ, զմայլաբեմ բարձր մշակման հասցված զգայակա-նությունը և կախարդվել էի դրանով: Անշուշտ, պատահական չէր նաև այն, որ ամենագեղ Հերմինեն ինձ տարավ հենց նրա մոտ: Նրա բույրը և նրա ողջ կերպարը ամառային էր, վարդանման:

Ես չունեի Մարիայի եզակի կամ առաջնակարգ սիրեցյալը լինելու երջանկությունը, ես շատերից մեկն էի: Պատահում էր, որ նա ինձ համար ժամանակ չէր ունենում, երբեմն ինձ տրամադրում էր ետևսօրյա մեկ ժամ, ավելի քիչ անգամներ՝ մի ամբողջ գիշեր: Նա ինձնից փող չէր ուզում, դրա հետևում, երևի, Հերմինեն էր թաքնված: Սակայն նվերներ վերցնում էր հաճույքով, և երբ նրան, օրինակ, իբրև փոքրիկ ընծա, տվեցի նոր, կարմիր ներկված կաշվե դրամապանակ, իրավունք ունեի դրա մեջ տեղավորել նաև մի երկու-երեք ոսկեդրամ: Այդ կարմիր դրամապանակի համար, առհասարակ, նա ինձ վրա շատ ծիծաղեց: Դրամապանակը շատ գեղեցիկ էր, բայց պահանջարկ չունեցող, հնացած ապրանք էր: Այդ գործերից, որոնց մասին ես քիչ գաղափար ունեի և հասկանում էի այնքան, որքան էսկիմոսների լեզվից, Մարիայից շատ բան սովորեցի: Ամենից առաջ սովորեցի, որ այդ փոքրիկ խաղալիքները, մոդայի և ճոխության առարկաները ոչ միայն դատարկ և անպետք բաներ չեն և սոսկ դրամասեր ֆաբրիկատների ու արհեստավորների գյուտը, այլ փոքր, ավելի ճիշտ՝ մեծ աշխարհը լիիրավ, գեղեցիկ բազմազան իրերի, որոնք բոլորը ունեն մեկ նպատակ՝ ծառայել սիրուն, նրբացնել զգացմունքները, կենդանացնել մեռած միջավայրը՝ կախարդանքով այն օժտելով

սիրո նոր օրգաններով՝ դիմափոշիներից և օծանելիքից մինչև պարակոշիկներ, մասանուց մինչև ծխախտատուփ, գոտու ճարմանդից մինչև պայուսակ: Այդ պայուսակը պայուսակ չէր, դրամապանակը՝ դրամապանակ, ծաղիկները՝ ծաղիկ, հովհարը՝ հովհար, այդ ամենը սիրո, մոգության, հմայքի պլաստիկ նյութ էր, սուրբանդակ, մաքսամենզ իր, զենք, մարտականչ:

Ո՞ւմ էր Մարիան անկեղծորեն սիրում՝ դրա մասին ես հաճախ էի մտածում: Ամենից շատ, իմ կարծիքով, սիրում էր սաքսոֆոնահար, օտար, սև աչքերով և երկար, գունատ, նուրբ ու մեղամաղձիկ ձեռքերով ջահել Պարլոյին: Ես այդ Պարլոյին սիրո մեջ կարծում էի փոքր-ինչ երազկոտ, փափկասուն և կրավորական, բայց Մարիան ինձ հավատացրեց, որ նա, թեև դանդաղ է հասնում խանդավառության, սակայն հետո դառնում է ավելի ու ավելի ծիգ, ավելի դիմացկուն, ավելի այրական ու ավելի պահանջկոտ, քան որևէ բունցքամարտիկ կամ մծույզավար: Այդպես, ես իմացա ու հասկացա զաղտնիքներ սրա ու նրա մասին, ջազի, դերասանների, շատ կանանց, մեր շրջապատի աղջիկների ու տղամարդկանց մասին, իմացա ամեն տեսակի զաղտնիքներ, առնչությունների ու թշնամանքների մակերեսից նայեցի դրանց խորքը, դանդաղորեն (ես, որ այս աշխարհում միանգամայն օտար, առնչություններից զուրկ մարմին էի) դարձա մտերիմ ու հաղորդակից անձնավորություն: Հերմիների մասին նույնպես շատ բան իմացա: Բայց ամենից հաճախ հիմա հանդիպում էի պարոն Պարլոյի հետ, որը շատ էր սիրում Մարիային: Երբեմն Մարիան իր հետ բերում էր Պարլոյի գաղանի դեղամիջոցներից, ինձ նույնպես դրանք մեկ-մեկ հաճույք էին պատճառում, և Պարլոն մշտապես առանձնահատուկ ջանք էր քափում ինձ ծառայություններ մատուցելու համար: Մի անգամ նա այդ մասին ինձ ասաց՝ առանց այս ու այն կողմ ընկնելու:

– Դուք այնքան դժբախտ եք, դա լավ չէ, այդպես չի կարելի: Ցավում եմ: Մի փոքր օպիում ծխեք:

Այս ուրախ, խեղճ, մանկական ու դրա հետ միասին անբացատրելի մարդու մասին իմ կարծիքը շարունակ փոխվում էր, մենք դարձանք բարեկամներ, ոչ հազվադեպ ես վերցնում էի նրա դեղամիջոցներից: Մարիային իմ սիրահարվածությունը նա ընդունում էր ինչ-որ ուրախությամբ: Մի անգամ նա «տոն» կազմակերպեց իր սենյակում, քաղաքի արվարձանային հյու-

րանոցներից մեկի ձեռնահարկում: Այնտեղ միայն մի արքու կար, Մարիան և ես ստիպված էինք մահճակալին նստել: Նա խմիչք քերեց մեզ, դա երեք տարբեր շշերից լցված խորիզավոր, հրաշալի իկյոր էր: Հետո, երբ ես շատ լավ տրամադրության մեջ էի, վառվող աչքերով առաջարկեց մեզ սիրային օրգիա տոնել երեքով: Ես դա կարուկ մերժեցի, այդպիսի արարքն ինձ համար անընդունելի էր, բայց, այդուամենայնիվ, կողքանց նայեցի Մարիայի կողմը՝ իմանալու, թե ինչպիսին է նրա պահվածքը, ու թեև նա անմիջապես հաստատեց իմ կարծիքը, սակայն տեսա, թե ինչպես էին վառվում նրա աչքերը և զգացի նրա ամսասանքը այն մերժելու համար: Իմ մերժումից Պարլոն հիասթափվել էր, բայց ոչ վիրավորվել:

– Ափսոս, – ասաց նա, – Հարրին շատ է վախենում բարոյականությունից: Ոչինչ: Բայց կստացվեր հրաշալի, շատ հրաշալի: Բայց ես փոխարինող մի բան կմտածեմ:

Մեզանից յուրաքանչյուրը մի քանի շունչ օպիում ծխեցինք և անշարժ նստած՝ բաց աչքերով երեքս էլ ապրեցինք Պարլոյի ներշնչած տեսարանը, ընդ որում՝ Մարիան սքանչացումից դողում էր: Երբ դրանից հետո ես ինձ փոքր-ինչ վատ զգացի, Պարլոն ինձ պառկեցրեց մահճակալին, մի քանի կաթիլ ինչ-որ դեղ տվեց, և երբ մի քանի րոպե անց արդեն փակում էի աչքերս, զգացի ինչ-որ մեկի շատ հպանցիկ, հազիվ զգալի համբույրները իմ կուպերին: Ես դա ընդունեցի այնպես, ասես այն կարծիքին էի, որ Մարիան է ինձ համբուրում: Բայց ես լավ գիտեի, որ համբուրում էր Պարլոն:

– Իսկ մի անգամ՝ երեկոյան, նա ինձ զարմացրեց էլ ավելի: Մտավ իմ սենյակ, ասաց, որ քսան ֆրանկի կարիք ունի, որի համար դիմում է ինձ: Նա ինձ առաջարկում էր դա իբրև փոխանակություն, որպեսզի մի գիշեր իր փոխարեն Մարիայի հետ լինեմ ես:

– Պարլո, – սարսափած ասացի ես, – Դուք ինքներդ էլ չգիտեք, թե ինչ եք խոսում: Դրամով ուրիշին գիջել սիրած աղջկան՝ դա մեզ մոտ համարվում է ամենաամոթալին: Ես Չեր առաջարկը չեմ ընդունում, Պարլո:

Նա կարեկցանքով նայեց ինձ:

– Դուք դա չեք ուզում, պարոն Հարրի, լավ: Միշտ ինքներդ Չեզ համար դժվարություններ եք ստեղծում: Ուրեմն՝ այս գիշեր Դուք չեք լինի Մարիայի հետ, եթե դա ավելի հաճելի է Չեզ

համար, և ավեր ինձ դրամը հենց այնպես, ես այն կվերադարձնեմ: Դրա կարիքը ես շատ ունեմ:

– Ինչո՞ւ:

– Ազոստինոյի համար, Դուք ճանաչում եք նրան, փոքրամարմին, երկրորդ ջութակը: Արդեն ութ օր է՝ ինչ հիվանդ է, և ոչ ոք չի խնամում նրան: Մի պֆեննիզ դրամ չունի, իսկ իմն էլ վերջացել է:

Հետաքրքրության, նաև ինչ-որ չափով ինձ պատժելու համար Պարբոյի հետ գնացի Ազոստինոյի կողմը, նրա համար Պարբոն կաթ և դեղ բերեց նրա սենյակ, ձեղնահարկի իրոք խղճալի մի խուց, անկողին զցեց, օդափոխեց սենյակը, ջերմից վատվող զբոլխը փաթաթեց գեղեցիկ, արվեստի բոլոր կանոններով պատրաստված թրջոցով՝ ամեն ինչ անելով արագ, նրբորեն և գործի իմացությամբ, ինչպես գթության քույր: Այդ նույն երեկոյան ես նրան տեսա. մինչև առավոտ նվագում էր «Միտի» սրճարանում:

Հերմինեի հետ հաճախ երկար ու մանրամասն խոսում էինք Մարիայի մասին, նրա ձեռքերի, ուսերի, ազդրերի մասին, ծիծաղելու, համբուրելու, պարելու նրա ձևերի մասին:

– Նա արդեն քեզ ցո՞ւյց է ավել դրանք,– մի անգամ հարցրեց Հերմինեն և նկարագրեց համբուրելու ժամանակ լեզվի առանձնահատուկ մի խաղ:

Ես խնդրեցի, որ նա հենց հիմա անձամբ ցույց տա ինձ այդ բանը, բայց նա լրջորեն մերժեց:

– Դա կլինի ավելի ուշ,– ասաց նա,– դու դեռ չես սիրահարվել ինձ:

Ես նրան հարցրեցի, թե որտեղի՞ց գիտի Մարիայի համբուրելու ձևերը և նրա կյանքի բազմաթիվ գաղտնիքները, որոնց մասին կարող է իմանալ միմիայն սիրած տղամարդը:

– Օհ,– ասաց նա,– չէ՞ որ մենք ընկերներ ենք: Մի՞թե դու կարծում ես, որ մեր միջև կարող էին լինել գաղտնի բաներ: Ես բավականին հաճախ քնել եմ նրա կողքին և խաղացել նրա հետ: Այո, դու չքնաղ աղջիկ ես ձեռք զցել, որն ավելին կարող է, քան մյուսները:

– Ես կարծում եմ, Հերմինե, որ, այդուամենայնիվ, դուք էլ միմյանցից գաղտնիքներ ունեք: Թե՞ դու նրան պատմելու ես նաև այն ամենը, ինչ գիտես իմ մասին:

– Ոչ, դա արդեն ուրիշ բան է, որ Մարիան չի հասկանա: Մարիան հրաշալի է, քո բախտը բերել է, բայց քո և իմ միջև

կան բաներ, որոնց մասին նա զաղափար անգամ չունի: Ես նրան շատ եմ պատմել քո մասին, բնական է, շատ ավելին, քան դուր կգար քեզ, չէ՞ որ ես ստիպված էի նրան գայթակղել քեզանով: Բայց հասկանալ քեզ, բարեկամ, ինչպես ես եմ հասկանում, ոչ Մարիան կարող է, ոչ էլ որևէ մեկը: Զո մասին ինչ-որ բան էլ ես նրանից իմացա, քո մասին գիտեմ այն ամենը, ինչ գիտի Մարիան: Ես քեզ համարյա գիտեմ այնքան լավ, որքան, ասենք, կիմանայի, եթե պառկեիք միասին:

Երբ ես Մարիային հանդիպեցի նորից, ինձ համար զարմանալի ու վայրենաբարո էր տեղյակ լինելը, որ նա իր կրծքին սեղմել է Հերմինեին այնպես, ինչպես ինձ, որ նա Հերմինեի մարմինը, մազերը և մաշկը զգացել, համբուրել, գնահատել ու փորձել է նույն կերպ, ինչպես և իմը: Ինձ համար երևան էին գալիս նոր, անուղղակի, բարդ առնչություններ ու կապեր, սիրո և կյանքի նոր հնարավորություններ, և ես մտածում էի Տափաստանի գայլի վերաբերյալ քննախոսության հազարավոր հոգիների մասին:

Այդ կարճ ժամանակահատվածում՝ Մարիայի հետ իմ ծանոթության և մեծ դիմակահանդեսի միջակայքում, ես ուղղակի երջանիկ էի, այդուամենայնիվ, ոչ մի անգամ չունեցա այն զգացողությունը, որ դա փրկությունն է, նվաճված երանությունը, այլ շատ պարզ զգում էի, որ այս ամենը սոսկ նախաբան է ու նախապատրաստություն, որ ամեն ինչ սրբնաբարեմ շարժվում է առաջ, որ գլխավորը հետո է գալու:

Ես պարել սովորեցի այնքան, որ ինձ արդեն հնարավոր էր թվում մասնակցել դիմակահանդեսին, որի մասին խոսակցությունները օրեցօր շատանում էին: Հերմինեն գաղտնիք ուներ, նա այդպես էլ ինձ չհայտնեց, թե դիմակահանդեսին ինչ զգեստով էր լինելու ինքը: Նա ասում էր, որ ես դա ինչ-որ կերպ կիմանամ, իսկ եթե չկարողանամ իմանալ, ինքն ինձ կօգնի, բայց նախապես ինձ ոչինչ չպետք է հայտնի լինի: Նա նաև ոչ մի հետաքրքրություն չէր ցուցաբերում դիմակահանդեսին իմ ծրագրերի հանդեպ, և ես վճռեցի, որ, առհասարակ, զգեստներս չվախճեմ: Մարիան, երբ ցանկանում էի նրան դիմակահանդեսի հրավիրել, ինձ հայտնեց, որ այդ տոնակատարությանը ինքն արդեն ասպետ ունի, ձեռք է բերել նաև մուտքի տոմս, և ես, մի փոքր հիասթափված, մտածեցի, որ դիմակահանդեսին ներկայանալու եմ մենակ: Դա քաղաքի ամենա-

պատվավոր հանդերձավորված պարահանդեսն էր, որ ամեն տարի «Գլորուսի» սրահներում կազմակերպվում էր արվեստի մարդկանց կողմից:

Այդ օրերին Հերմիներն քիչ էի տեսնում, դիմակահանդեսի նախօրեին նա ինձ հետ էր մի կարճ ժամանակով. եկել էր անցատունսի հեռակից, որ գնել էի իր համար, և իմ սենյակում հանգիստ նստած էր ինձ հետ, և ահա այդ պահին սկսվեց մի խոսակցություն, որը ինձ համար տարօրինակ էր և թողեց խոր տպավորություն:

– Հիմա, ըստ էության, քո գործերը լավ են, – ասաց Հերմիներն, – պարերը օգտակար եղան քեզ: Ով քեզ չորս շաբաթ չի տեսել, հագիլ քե հիմա ճանաչի:

– Այո, – պատասխանեցի, – տարիներ շարունակ իմ գործերը երբեք այսպես լավ չեն եղել: Այդ ամենը քեզանից է գալիս, Հերմիներ:

– Օհ, ո՞չ քո գեղեցկուհի Մարիայից:

– Ոչ, նրան նույնպես դու ես ինձ նվիրել: Նա հրաշալի է:

– Մարիան այն կինն է, որի կարիքը դու ունես, Տափաստանի գայլ: Գեղեցիկ, ջահել, լավ տրամադրությամբ, սիրո մեջ՝ շատ բանիմաց և ոչ ամեն օրվա համար մատչելի: Եթե դու նրան չկիսեիր մյուսների հետ, եթե նա քեզ մոտ միայն ժամանակավոր հյուր չլիներ, այդքան լավ չէր լինի:

Այո, ես նույնպես ընդունում էի դա:

– Ուրեմն, դու հիմա ունես այն ամենը, ինչ անհրաժեշտ է քեզ:

– Ոչ, Հերմիներ, այդպես չէ: Ես իմ մեջ ինչ-որ շատ գեղեցիկ ու սքանչելի բան ունեմ, մի մեծ ուրախություն, մի սիրելի սփռփանք: Ես ուղղակի երջանիկ կլինեմ...

– Այ քեզ բան: Էլ ի՞նչ ես դու ուզում:

– Ես ավելին եմ ուզում: Երջանիկ լինելուց գոհ չեմ ես, դրա համար չեմ ստեղծվել, դա իմ կոչումը չէ: Իմ կոչումը հակառակն է դրա:

– Այսինքն՝ դժբախտ լինել: Դե, դու այն բավականաչափ ունեիր, այն ժամանակ, երբ ամենու պատճառով չէիր կարողանում այլևս տուն վերադառնալ:

– Ոչ, Հերմիներ, դա ուրիշ բան է: Այն ժամանակ ես, ճիշտ է, դժբախտ էի: Բայց դա հիմար դժբախտություն էր, անպտուղ:

– Ինչո՞ւ:

– Որովհետև այդպես չէի ունենա այս վախճ մահվան հանդեպ, որը ցանկանում էի: Դժբախտությունը, որի կարիքն ունեմ ես և երագում եմ, այլ է, դա այն է, ինչը քույր կտա ինձ տատապել ազախորեն և մեռնել երանությամբ: Դա այն դժբախտությունն է կամ երջանկությունը, որին ես սպասում եմ:

– Ես քեզ հասկանում եմ: Այդ գործում մենք քույր ու եղբայր ենք: Բայց ինչու ես հակառակ այն երջանկությանը, որ գտել ես հիմա Մարիայի հետ: Ինչո՞ւ գոհ չես:

– Ես ոչինչ չունեմ այդ երջանկության դեմ, օ՛, ոչ, ես սիրում եմ այն, երախտապարտ եմ նրան: Մարիան հրաշալի է, ինչպես անձրևոտ ամառվա արևոտ օր: Բայց զգում եմ, որ այն երկար տևել չի կարող: Այս երջանկությունը ևս անպտուղ է: Այն գոհացնում է, սակայն գոհ լինելն ինձ համար կարևոր չէ: Նա քնեցնում է Տափաստանի գայլին, նրան դարձնում է կուշտ: Դա այն երջանկությունը չէ, որի համար արժե մեռնել:

– Այսինքն՝ մեռնել պե՞տք է, Տափաստանի գայլ:

– Իմ կարծիքով՝ այո: Ես շատ գոհ եմ իմ երջանկությունից, որոշ ժամանակ դեռ կարող եմ տանել այն: Բայց երբ երջանկությունն ինձ որոշ ժամանակ մեռնակ է թողնում, որպեսզի արթնանամ և բաղձանքներ ունենամ, իմ ողջ բաղձանքները ծախսվում են ոչ քե նրա վրա, որ ընդմիջտ պահպանեմ այդ երջանկությունը, այլ՝ որպեսզի տատապեմ նորից, միայն քե ավելի գեղեցիկ և ավելի քիչ խղճահարույց, ինչպես նախկինում: Ես երագում եմ տատապանքներ, որոնք ինձ մահվան համար կդարձնեին պատրաստ ու նրա հետ համաձայն:

Հերմիներն քնքշորեն նայեց իմ աչքերի մեջ այն մտայլ հայացքով, որ այնպես հանկարծակի կարող էր երևալ նրա դեմքին: Հոյակապ, սարսափազդու հայացք: Դանդաղորեն, բաները մեկ-մեկ ընտրելով և միմյանց կողքին դնելով՝ նա ասաց այնքան ցածր, որ լարվեցի՝ լսելու համար:

– Ես քեզ ուզում եմ մի բան ասել, մի բան, որ վաղուց արդեն զիտեի, և դու ինքդ էլ արդեն զիտես դա, բայց, հավանաբար, ինքդ քեզ դեռ չես ասել: Ես կասեմ քեզ հիմա, քե ինչ զիտեմ իմ մասին, քո մասին և մեր ճակատագրի մասին: Դու, Հարրի, արվեստագետ էիր և մտածող, ուրախություններով և հավատով լի մարդ, մշտապես հակված դեպի մեծը, հավերժականը, երբեք գեղեցիկից ու փոքրից չգոհացող: Սակայն որքան ավելի էր կյանքը քեզ արթնացնում և մոտեցնում քո ինքնությանը,

այնքան ավելի մեծանում էր քո ցավը, այնքան ավելի խորն էիր թաղվում տառապանքի, վախի և հուսահատության մեջ՝ մինչև կոկորդո, և այն ամենը, ինչ դու նախկինում գիտեիր, սիրում էիր ու պաշտում՝ իբրև զեղեցիկ և սրբազան, մարդկանց և մեր բարձր նշանակության հանդեպ քո ողջ նախկին հավատը քեզ չօգնեց ոչնչով, կորցրեց իր արժեքը և փշուր-փշուր եղավ: Շնչահեղձ եղավ քո հավատը: Իսկ շնչահեղձությունը դաժան մահ է: Եր՞շտ է, Հարրի: Դա՞ է քո ճակատագիրը:

Դա է, դա է, դա է, համաձայնեցի ես՝ գլխով անելով:

– Դու կյանքի մասին ինչ-որ պատկերացում ունեիր, ինչ-որ հավատ, ինչ-որ պահանջ, դու պատրաստ էիր գործելու, տառապելու և զոհաբերության, իսկ հետո աստիճանաբար տեսար, որ կյանքը քեզանից ոչ մի գործ ու զոհաբերություն և նման ոչ մի բան չի պահանջում, որ կյանքը հերոսական ասք չէ՝ հերոսական կերպարներով ու նման բաներով հանդերձ, այլ բյուրգերական սարքուկարգին բնակարան, որի մեջ կատարելապես գոհ են ուտելով ու խմելով, սուրճով ու գուլպա գործելով, թղթախաղով և ռադիոերաժշտությամբ: Եվ ով կամենում է ու կրում է իր ներսում հերոսական ու զեղեցիկ ինչ-որ այլ բան, մեծ բանաստեղծների պաշտամունք կամ պաշտամունք սրբերի, մա հիմար է կամ ասպետ Դոն Կիխոտ: Բարի: Ինձ հետ էլ է այդպես պատահել, իմ բարեկամ: Ես լավ ընդունակություններ ունեցող աղջիկ էի՝ ծնված նրա համար, որպեսզի ասյրեի բարձր օրինակի համաձայն, որպեսզի իմ առջև դնեի բարձր պահանջներ, կատարեի արժանապատիվ գործեր: Ես կարող էի մեծ բախտի արժանանալ, և դառնալ թագավորի կին, հեղափոխականի սիրուհի, հանճարի քույր, նահատակի մայր: Իսկ կյանքը ինձ քույր սովեց լինել ընդամենը ինչ-որ չափով տանելի ճաշակի տեր կուրտիզանուհի, բայց դա էլ ինձ արվեց մեծ դժվարությամբ: Այսպես է, ահա, իմ բանը: Մի ժամանակ ես անհույս էի, և իմ մեջ երկար փնտրում էի մեղավորին: Կյանքը, մտածում էի, միշտ էլ, ի վերջո, ճշմարիտ է, և երբ նա իմ զեղեցիկ երագները ծաղրում էր, ուրեմն, մտածում էի, իմ երագներն էին հիմար ու անարդարացի: Բայց դա ոչնչով չօգնեց: Ու քանի որ ես լավ աչքեր ու ականջներ ունեի, նաև հետաքրքրություններ, ես էլ սկսեցի կողքից դիտել այդ, այսպես կոչված կյանքը, իմ ծանոթներին ու հարևաններին, հիսուն և ավելի մարդկանց ու ճակատագրեր, և ես, Հարրի, նկատեցի. իմ ե-

րագները ճշմարիտ էին, հազար անգամ ճշմարիտ, ինչպես որ քոնը: Կյանքը, սակայն, իրականությունն անարդարացի էին: Այն, որ իմ կարգի կինն այլ ընտրություն չի գտնում, քան ինչ-որ դրամատիրոջ մոտ գրամեքենայի առաջ ողորմելիորեն և անմտորեն ծերանալը կամ հանուն հենց այդ դրամների նրա հետ ամուսնանալը, կամ պռոնիկի պես մի բան դառնալը, նույնքան անարդար էր, որքան այն, որ քեզ նման մարդը՝ մատնված մեռալույթյան, վախի և հուսահատության, ստիպված է նետվել դեպի ածելին: Իմ կյանքը, դժբախտությունը, գուցե, ավելի նյութական ու բարոյական կողմ ունեին, քո կյանքը՝ հոգևոր, բայց ճանապարհը նույնն էր: Դու կարծում ես ֆոքստրոտի հանդեպ քո վախը, սրճարանների և պարահարթակների նկատմամբ քո հակակրանքը, ջազային երաժշտության և ամեն տեսակի անպետքությունների նկատմամբ քո հակառակությունը ես չե՞մ կարող հասկանալ: Հասկանում եմ շատ լավ, նմանապես քո խորշանքը քաղաքակա-նությունից, կուսակցությունների, մամուլի անպատասխանատու աղմուկից ու բարբաջանքներից ծնված քո տխրությունը, քո հուսահատությունը պատերազմից՝ անցյալ, թե գալիք, մտածելու, կարդալու, կառուցելու, երաժշտություն հորինելու, տոնահանդեսներ անելու, կրթություն ստանալու ժամանակակից ձևերից: Դու իրավացի ես, Տափաստանի գայլ, հազար անգամ իրավացի, բայց և այնպես՝ դու պետք է մեռնես: Այս պարզունակ, հարմարվող, այդքան քչով բավարարվող այսօրվա աշխարհի համար դու շատ խստապահանջ ու քաղցած ես, այդ աշխարհը մի կողմ կշարտի քեզ, դու մի չափում ավելին ունես, քան անհրաժեշտ է նրան: Ով այսօր ուզում է ապրել և իր կյանքից գոհ լինել, նա իրավունք չունի լինել քեզ և ինձ նման: Ով ճակատակցի փոխարեն պահանջում է երաժշտություն, հայացքների փոխարեն՝ ուրախություններ, դրամի փոխարեն՝ հոգի, վազվզոցի փոխարեն՝ իսկական աշխատանք, զվարճալիքի փոխարեն՝ իսկական կրքեր, նրա համար մեր այս փառավոր աշխարհը հայրենիք չէ...

Նա մայեց ցած՝ զեռնին և մտքերի մեջ ընկավ:

– Հերմինե, – կանչեցի ես քնքշությամբ, – քույր, ինչ զեղեցիկ աչքեր ունես: Եվ, այդուհանդերձ, դու ինձ սովորեցրիր ֆոքստրոտ պարել: Բայց ինչպե՞ս հասկանալ այն, որ մեզ նման մարդիկ՝ մի չափում ավելին ունեցողները, այստեղ ասյրել չեն կա-

բողանում: Ի՞նչն է պատճառը: Դա միայն մե՞ք ժամանակներում է, հիմա՞ է այդպես: Թե՞ միշտ այդպես է եղել:

– Չգիտեմ: Ի պատիվ աշխարհի՝ պատրաստ եմ ենթադրել, որ դա միայն մեր ժամանակներում է, որ այն սոսկ հիվանդությունն է, ժամանակավոր դժբախտություն: Առաջնորդները եռանդորեն և հաջողությամբ աշխատում են հաջորդ պատերազմի վրա, իսկ մենք՝ մնացյալներս, այդ ընթացքում պարում ենք ֆոքստրոտ, փող ենք աշխատում և ուտում ենք շոկոլադ. չէ՞ որ նման ժամանակներում աշխարհը պետք է իսկապես համեստ տեսք ունենա: Հուսով լինենք, որ մյուս ժամանակները ավելի լավն են եղել և էլ ավելի լավն են լինելու, ավելի հարուստ, ավելի ծավալուն, ավելի խորը: Բայց դա մեզ չի օգնելու: Եվ, հավանաբար, միշտ էլ այդպես է եղել...

– Միշտ, ինչպես այսօ՞ր: Մշտապես միայն քաղաքագետների, խարդախների, սպասավորների և քեֆչիների աշխա՞րհ, իսկ մարդկանց համար շնչելու օդ չկա:

– Դե, ես դա չգիտեմ, ոչ ոք դա չգիտի: Ու մաս միևնույնը չէ՞: Բայց ես հիմա, իմ բարեկամ, մտածում եմ քո սիրեցյալի մասին, որից ինձ երբեմն պատմել ես և մամակներ կարդացել՝ Մոցարտի: Հապա ինչպես է նա ապրել: Նրա ժամանակներում ո՞վ էր աշխարհը կառավարում, օգտվում ամենալավ բաներից, իշխում և ուներ կշիռ. Մոցարտը կամ խարդախները, Մոցարտը կամ տափակ մարդուկները: Եվ ինչպես է նա մահացել ու թաղվել: Եվ այդպես, կարծում եմ, միշտ է եղել ու միշտ է լինելու, և այն, ինչ նրանք դպրոցներում անվանում են «համաշխարհային պատմություն» և կրթություն ստանալու համար պետք է անգիր սովորեն՝ այդ բոլոր հերոսներով, հանճարներով, մեծամեծ գործերով ու կրքերով, այդ ամենը մերկ սուտ է՝ հայտնագործված դպրոցական ուսուցիչների կողմից կրթական նպատակների համար, որպեսզի երեխաները նախատեսված տարիների ընթացքում ինչ-որ բանով զբաղված լինեն: Միշտ այդպես է եղել և այդպես էլ լինելու է, որ ժամանակն ու աշխարհը, ոսկին և իշխանությունը պատկանելու են մանր ու տափակ մարդկանց, իսկ մյուսներին, իսկական մարդկանց, ոչինչ չի պատկանելու: Ոչինչ, միայն մահը:

– Եվ ոչի՞նչ ավելի:

– Ոչ, մաս հավիտենականությունը:

– Դու ի նկատի ունես անունը, փառքը և սերունդնե՞րը:

– Ոչ, գայլաձագ, ոչ փառքը, մի՞թե դա որևէ արժեք ունի: Եվ դու հավատո՞ւմ ես, որ բոլոր իսկապես կարգին ու լիարժեք մարդիկ արժանացել են փառքի և հայտնի են հետագա սերունդներին:

– Ոչ, բնականաբար՝ ոչ:

– Ուրեմն՝ դա փառքը չէ: Փառքը գոյություն ունի սոսկ այնպես, կրթության համար, դա դպրոցական ուսուցիչների գրադմունքն է: Փառքը չէ, օ, ոչ: Այլ այն, ինչ ես անվանում եմ հավիտենականություն: Բարեպաշտները այն անվանում են Աստծո արքայություն: Ինքս ինձ մտածում եմ՝ մենք բոլորս՝ խստապահանջներս, բաղձանքներով ապրողներս, ավերորդ չափ ունեցողներս, երբեք էլ չէինք կարող ապրել, եթե այս աշխարհի օդից բացի գոյություն չունենար մաս այլ աշխարհի օդ, եթե ժամանակից բացի գոյություն չունենար հավիտենականություն, և դա հենց իսկական արքայությունն է: Դրան է պատկանում Մոցարտի երաժշտությունը և քո մեծ բանաստեղծների գործերը, դրան են պատկանում սրբերը, ովքեր հրաշքներ են գործել, կրել են տանջալից մահ և մարդկանց տվել մեծ կյանքի օրինակներ: Սակայն հավիտենականությանը ճիշտ նույն կարգով պատկանում է մաս յուրաքանչյուր իսկական քաջության օրինակ, յուրաքանչյուր իսկական զգացմունքի ուժ, նույնիսկ եթե ոչ ոք չգիտի այդ մասին, չի տեսել, չի գրել և չի թողել հետագա սերունդներին ի պահ: Հավիտենականության մեջ չկան սերունդներ, այլ միմիայն ժամանակակիցներ:

– Դա ճշմարիտ է, – ասացի ես:

– Բարեպաշտները, – մտածկոտ շարունակեց նա, – այդ մասին ամեն դեպքում գիտեին ավելի, քան մյուսները: Նրանք այդ նպատակով էլ հաստատում էին սրբեր և այն, ինչ նրանք «սրբերի համայնք» են անվանում: Սրբերը, որ իսկական մարդիկ են, կրտսեր եղբայրներն են Փրկչի: Դեպի նրանց տանող ճանապարհին յուրաքանչյուր բարի արարքի, յուրաքանչյուր խիզախ մտքի, յուրաքանչյուր սիրո հետ երկարում է մեր կյանքը: Սրբերի համայնքը, որ անցյալում նկարիչների կողմից պատկերվում էր ոսկեգօծ երկնքի ֆոնին, լուսաճառագ, գեղեցիկ և խաղաղությամբ լի, այլ բան չէ, քան այն, ինչը քիչ առաջ ես անվանեցի «հավիտենականություն»: Դա արքայությունն է ժամանակներից ու երևույթներից այն կողմ: Նրան ենք մենք պատկանում, այնտեղ է մեր հայրենիքը, այնտեղ է ձգտում

մեր սիրտը, Տափաստանի գայլ, ահա թե ինչու ենք մենք բաղձում մահը: Այնտեղ դու նորից կգտնես քո Գյոթեին և քո Նովալիսին և Մոցարտին, իսկ ես՝ իմ սրբերին, Քրիստոֆորին, Ֆիլիպ ֆոն Ներրիին³⁹ և բոլորին: Շատ սրբեր կան, որ սկզբում եղել են վատթար մեղավորներ, մեղքը նույնպես կարող է ճանապարհ լինել դեպի սրբություն, մեղքը և արատը: Դու կարող է ծիծաղես, բայց ես հաճախ մտածում եմ, որ իմ բարեկամ Պարոն նույնպես, երևի թե, ծպտված սուրբ է: Ախ, Հարրի, մենք պետք է անցնենք այնքան կեղտի ու անհեթեթության միջով, որպեսզի հասնենք տուն: Եվ մենք չունենք ոչ ոք, որ առաջնորդի մեզ, մեր միակ առաջնորդը հայրենի տան կարտուն է:

Իր վերջին խոսքերը նա նորից բողբոլվին ցածրաձայն առաջ, և հիմա սենյակում խաղաղ լուծություն էր, արևը մայր էր մտել, և իմ գրադարանի գրքերին նրա լույսերը գրում էին ոսկե դողդոջուն տառեր: Հերմիների գլուխն առա իմ ափերի մեջ, համբուրեցի նրա ճակատը, երեսու դրեցի նրա երեսին, քույր ու եղբոր պես, և այդպես մնացինք մի պահ: Հաճույքով կուզենայի այդպես էլ մնալ և այսօր այլևս ոչ մի տեղ չզնայ: Բայց այդ գիշեր, որ մեծ դիմակահանդեսից առաջ վերջինն էր, Մարիան խոստացել էր նվիրել ինձ:

Բայց Մարիայի մոտ գնալու ճանապարհին ես չէի մտածում նրա մասին, այլ այն, ինչ ասաց Հերմիներն: Դրանք բողբոլը, ինչպես թվում էր ինձ, նրա մտքերը չէին, այլ իմը, որ այդ պայծառատեսը, կարողավ ու ներշնչվելով, վերադարձնում էր ինձ այնպես, կարծես՝ դրանք հենց նոր էին ձևավորվել և իբրև նոր՝ ասվել ինձ համար: Այն, ինչ Հերմիներն ասաց հավիտենականության մասին, այդ պահին ինձ հատկապես համակեց նրա հանդեպ խոր երախտագիտությամբ: Ես հասկացա, որ զգում եմ նրա կարիքը և առանց նրա չէի կարող ապրել ու մահ մեռնել: Սրբազան անդրաշխարհը, անկախ որևէ ժամանակից, հավիտենական արժեքների աշխարհը, աստվածային էությունը այսօր վերստին ես նվեր ստացա իմ ընկերուհուց և պարի ուսուցչուհուց: Ես ստիպված հիշեցի Գյոթեի մասին իմ երազը, ծեր իմաստունի պատկերը, որ այնպես ծիծաղում էր ոչ մարդկային ծիծաղով ու խոսում ինձ հետ իր անմահ կատակներով: Հիմա նոր հասկացա ես նրա ծիծաղը, անմահ ծիծաղը: Այն անառարկայական էր, այդ ծիծաղը, միայն լույս էր այն, միայն քափանցիկություն, դա այն էր, ինչ մնում է արդյունքում, երբ իսկական մարդը, անցնելով մարդկային տառա-

պանքների, արատների, խելահեղությունների, կրքերի և թյուրիմացությունների միջով, հասնում է հավիտենականության և համաշխարհային տարածության: Եվ «հավիտենականությունը» այլ բան չէր, քան ձերբազատում ժամանակներից, մի տեսակ ժամանակների վերադարձ դեպի անմեղություն, նրանց հակադարձ փոխակերպում տարածության:

Ես Մարիային փնտրում էի այնտեղ, որտեղ միշտ մեր երեկոների ընթացքում ճաշում էինք, բայց նա դեռ չէր երևում: Արվարձանային խաղաղ գարեջրատանը, պատրաստի սեղանի մոտ նստած՝ ես սպասում էի ու շարունակում մտածել մեր խոսակցության մասին: Բոլոր այդ մտքերը, որ ծնվել էին իմ և Հերմիների մեջ, ինձ այնքան հարազատ թվացին, վաղցորեն այնքան ծանոթ, կարծես պետք լիներ ինձ անձնական առասպելից, կերպարների իմ աշխարհից: Անմահները, որ սուրբում են անժամանակ տարածության մեջ՝ ներանձնացված, կերպար դարձած, և բյուրեղյա հավիտենականությունը հոսում է՝ քվելով նրանց և իր մեջ առնելով նրանց, ինչպես եթեր, և սառը աստղերով շողարձակ պարզությունը այդ վերերկրային աշխարհի. ինչո՞ւ է ինձ այդքան հարազատ այս ամենը: Ես միաբա լարեցի և հիշեցի առանձին հատվածներ Մոցարտի «Գանգատներից», Բախի «Լավ տեսակերացված դաշնամուրից», և ամեն տեղ այդ երաժշտության մեջ, ինձ թվում էր, ճանաչում էր նույն այդ սառը, աստղային քափանցիկությունը, իշխում էր նույն եթերային պարզությունը: Այո, հենց այդպես, այդ երաժշտությունը կարծես թե սառած, տարածության վերածված ժամանակ լիներ, և նրա վերևում անվերջորեն ճախրում էր մի գերմարդկային պարզություն, հավիտենական, աստվածային մի ծիծաղ: Օհ, դրան շատ լավ համապատասխան կլիներ մահ իմ երազի ծեր Գյոթեն: Եվ հանկարծ իմ շուրջը լսեցի այդ անհասանելի ծիծաղը, լսեցի անմահների ծիծաղը: Նստած էի կախարդված, կախարդված դուրս բերեցի մատիարը ժլետիս գրպանից, գտա թուղթ, իմ առաջ սեղանին տեսա գինիների գնացուցակը, շրջեցի այն և գրեցի հակառակ էջին, գրեցի բանաստեղծություն, որը միայն հաջորդ օրը գտա իմ գրպանում: Ահա այն.

ԱՆՄԱՀՆԵՐԸ

Երկրի ձորերից աղմուկը կյանքի
Ելնում է դեպ մեզ լայնքով անեզերք,

Քաղցածի աղերս, կշտացածի երգ,
 Եվ արյան հոտը դահճախնջույքի:
 Կրքերն են ծաղկում և տենչը փողի,
 Լույ ձեռքեր դահճի կամ՝ աղոթողի,
 Ահն հարածում է, ախտերը՝ տանջում,
 Մարդկային ցեղը սողում է ճահճում:
 Շնչում է մոլի խճճերով անտեր,
 Խժռում ինքն իրեն և թքում կրկին,
 Պատերազմներ է ծնում, արվեստներ,
 Չարդարում տունն իր՝ մատնած կրակին:
 Ապրում է, խաբում, մաւ շնանում,
 Տոնավաճառի աշխարհը այդ խենթ
 Ամեն մեկի հետ նորից է ծնվում
 Եվ նորից մեռնում ամեն մեկի հետ:
 Իսկ մենք ապրում ենք այստեղ՝ հեռավոր
 Աստղաստացային եթերի մեջ մեր,
 Ոչ ժամանակ ենք ճանաչում, ոչ օր,
 Ոչ այր ենք, ոչ կին, ոչ ջահել, ոչ ծեր:
 Հանցանքներին ձեր ժամառ ու անպատում,
 Ոճիրներին ու անթիվ ախտերին՝
 Նայում ենք ինչպես հեռու աստղերին,
 Երկար է օրը մեզ մոտ՝ եթերում,
 Լուս մայելով ձեր գործերին ետին,
 Լուս հետևելով աստղերի երթին՝
 Շնչում ենք կյանքով հավերժաճմեռ,
 Եվ քարեկամն ենք երկնքի արդար,
 Մամն, անփութիս է գոյությունը մեր,
 Մամն, աստեղային՝ մեր ծիծաղը հար:

Հետո եկավ Մարիան: Եվ աշխույժ ընթրիքից հետո նրա հետ եկանք մեր սենյակ: Այդ երեկո նա ավելի գեղեցիկ էր, ավելի ջերմ ու սրտառույզ, քան երբևէ, և ընծայեց ինձ քնքշություններ ու սիրախաղեր, որոնց մեջ տեսա տրվելու անգուգական պատրաստակամություն:

– Մարիա, – ասացի ես, – դու այսօր շոայլ ես, ինչպես աստվածուհի: Մեր երկուսին մի տանջիր մահու չափ, չէ՞ որ առավոտյան դիմակահանդեսն է: Ի՞նչ ասպետ ես վաղն ունենալու: Վախենամ, իմ թանկագին ծաղիկ, որ դա լինելու է հեքիաթի

իշխան, և նա փախցնելու է քեզ, ու դու այլևս չես վերադառնա ինձ մոտ: Դու ինձ այսօր սիրում ես զրեթե այնպես, ինչպես դա անում են խենթ սիրահարները վերջին հրաժեշտի ժամանակ:

Նա շրթունքները կիպ մոտեցրեց իմ ականջին ու շնջաց:

– Մի ասա այդպես, Հարրի: Յուրաքանչյուր անգամը կարող է լինել վերջինը: Երբ Հերմիոնն վերցնում է քեզ, դու այլևս ինձ մոտ չես գալիս: Հավանաբար, առավոտյան նա կվերցնի քեզ:

Երբեք այն օրերի առանձնահատուկ զգացումը, նրանց զարմանալիորեն եզակի, քաղցրադառն տրամադրությունը ավելի ուժեղ չեմ զգացել, ինչպես դիմակահանդեսի նախորդ գիշերը: Այն, ինչ զգում էի ես, երջանկությունն էր. Մարիայի գեղեցկությունն ու անձնվիրումը, հարյուրավոր քնքշագույն զգացումների, հայումների, միմյանց շնչով ասրելու վայելքները, որոնք ես՝ իբրև մարդ, ճանաչում էի միայն այդքան ուշ՝ օրորվելով բավականության մեղմիկ, դողդոջուն ալիքների վրա: Եվ, այդուհանդերձ, դա միայն պատյանն էր. ներսում ամեն ինչ լի էր իմաստով, լարվածությամբ ու ճակատագրով և երբ սիրառատորեն ու նվաղումով տրվում էի սիրո քաղցր, զրգոյի մանրուքներին, կարծես լողալով մաքուր, տաք երջանկության մեջ, զգում էի սրտանց, թե ինչպես է իմ ճակատագիրը գլխապառույտ արագությամբ մղվում առաջ, ինչպես խրամած նժույգ՝ հալածված ընթանալով վիհին ընդառաջ, ընդառաջ կործանումին՝ վախով, ըղձանքով, առ մահը անձնվիրումով լի: Ինչպես որ մի փոքր առաջ ես մտավախությամբ ու երկյուղով ընդդիմանում էի սուսկ զգայական սիրո հաճելի թեթևամտությանը, ինչպես որ վերջերս արտասվում էի Մարիայի ժպտացող, տեղի տալուն պատրաստ գեղեցկությունից, այդպես էլ այժմ վախ էի զգում մահվանից, բայց մի վախ, որն արդեն գիտելի՝ շուտով փոխվելու էր անձնվիրումի ու վերկության:

Մինչ մենք լուռ տրված էինք մեր սիրո բազմաեզր խաղերին, և պատկանում էինք միմյանց ավելի սրտանց, քան երբևէ, իմ հոգին հրաժեշտ էր տալիս Մարիային, հրաժեշտ այն ամենին, ինչ նշանակում էր նա ինձ համար: Նրա միջոցով ես սովորեցի ավարտից առաջ մեկ անգամ ևս մանկականորեն տրվել մակերեսային խաղին, փնտրել անցողիկ զգացողություններ, սեռի անմեղության մեջ երեխա և կենդանի լինելու մի վիճակ, որին իմ նախկին կյանքում ծանոթ էի միայն իբրև

հազվագյուտ բացառություն, քանի որ զգայական կյանքը և սեռը ինձ համար համարյա միշտ ունեցել են մեղքի ավերող դառը, քաղցր, բայց երկյուղալի համը արգելված պտղի, որից հոգին արժևորող մարդը պետք է զգուշանա: Այժմ Հերմիներն և Մարիան ինձ ցույց էին տվել այդ այգին՝ իր անմեղության մեջ, ես երախտապարտ էի, որ այդ այգու հյուրն էի եղել, սակայն ինձ համար հասել էր ժամը ավելի առաջ գնալու, չափազանց գեղեցիկ ու արևոտ էր այդ այգին: Վերստին մղվել դեպի կյանքի պսակը, վերստին ապաշխարել կյանքի անվերջանալի մեղքը՝ այդ էր նշանակված ինձ համար: Թեթև կյանքը, թեթև սերը, թեթև մահը ինձ համար չէին:

Աղջիկների ակնարկներից հասկացա, որ վաղը՝ դիմակահանդեսին կամ այն վերջանալուց հետո, ծրագրված են միանգամայն առանձնահատուկ հաճույքներ ու շվայտ խրախճանքներ: Հավանաբար, դա էր վերջը, հավանաբար, ճիշտ էր Մարիան իր գուշակությամբ, և մենք այսօր միմյանց կողքի պառկած ենք վերջին անգամ: Հավանաբար, վաղը ճակատագիրը նո՞ր ճանապարհ ցույց տա: Ես լի էի այրող բաղձանքով, լի էի խեղդող վախով և հուսահատորեն կառչելով Մարիայից՝ մի անգամ նորից, ազահորեն ու տենդի մեջ, անցնում էի նրա այգու բուրբ շավիղներով ու թավուտներով, մի անգամ նորից ճաշակում էի դրախտածառի քաղցր պտուղը:

Այդ գիշերվա բաց թողած քունը ես ըմբռնվեցի ցերեկը: Առավոտյան զնացի բաղնիք, հետո, մահու չափ հոգնած, վերադարձա տուն, մթնեցրեցի ննջասենյակս, գրպանումս գտա իմ բանաստեղծությունը, նորից մոռացա նրա մասին, անմիջապես պառկեցի, մոռացա Մարիայի մասին, Հերմիների և դիմակահանդեսի և քնեցի ամբողջ ցերեկը: Երբ երեկոյան վեր կացա, միայն սավիթվելիս հիշեցի, որ մեկ ժամից արդեն սկսվում է դիմակահանդեսը, և ես պետք է նախապատրաստեմ ֆրակիս վերնաշապիկը: Լավ տրամադրությամբ ավարտելով պատրաստություններս՝ դուրս եկա սնից, որ մի բան ուտեմ:

Դա առաջին դիմակահանդեսն էր, որին պետք է մասնակցեի: Նախկինում, առհասարակ, ես մեկ-մեկ այցելում էի նման տոնահանդեսներ, դրանք երբեմն գտնում էի գեղեցիկ, բայց չէի պարում, այլ միայն դիտում էի, և ոգևորությունը, որով այդ մասին պատմում էին, որով սպասում էին դրանց ուրիշները, ինձ միշտ թվում էին ծիծաղելի: Իսկ այսօրվա դիմակահանդես-

սը ինձ համար էլ իրադարձություն էր, նրանով ես ուրախանում էի լարվածությամբ և ոչ առանց երկյուղի: Քանի որ ես ոչ մի դամա չունեի, որոշեցի այնտեղ գնալ միայն ուշ, դա ինձ խորհուրդ էր տվել նաև Հերմիներն:

Վերջերս հազվադեպ էի այցելում «Պողպատե սաղավար» զինետուն՝ իմ նախկին ապաստարանը, որտեղ հուսալքված մարդիկ անցկացնում էին իրենց երեկոները, խմում էին իրենց գինին, խաղում ամուրիի իրենց կյանքը: Այդ զինետունն այլևս չէր համապատասխանում իմ այժմվա կյանքին: Բայց այսօր երեկոյան իմ ոտքերը, կարծես՝ իրենք իրենց, ինձ նորից ձգում-տանում էին այնտեղ, ճակատագրի և հրաժեշտի այն երկյուղած-ուրախ զգացումով, որն այժմ համակել էր ինձ, իմ կյանքի բոլոր իրադարձությունները և հիշատակի վայրերը մի անգամ էլ լուսավորվեցին անցյալի գեղեցիկ, ցավազին փայլով, նաև այդ փոքր, ծխամած զինետունը, որտեղ դեռ վերջերս համարվում էի մշտական այցելու, որտեղ դեռ վերջերս ինձ բավական էր մի շիշ տեղական գինին՝ իբրև քթացնող միջոց, որպեսզի մի գիշեր էլ պառկեի միայնակի իմ անկողնում, որպեսզի մեկ օրով նորից կարողանայի կյանքը կրել: Այլ, առավել զրգոհյ միջոցներ փորձեցի այդ ժամանակներից սկսած, կույ տվեցի առավել քաղցր թույներ: Ժպտալով՝ մտա հին գինետուն: Տիրուհու ողջույնը կ'մշտական այցելուների՝ զվխով լուռ բարևելը դիմավորեցին ինձ: Առաջարկեցին և բերեցին տապակած ճուտ, գյուղական հաստ բաժակի մեջ լցվեց սպիտակ, ջահել էլզասյան գինի, ուրախ ինձ էին նայում մաքուր, սպիտակ փայտյա սեղանները, հին, դեղնած մանրահատակը: Եվ մինչ ես ուտում էի ու խմում, իմ ներսում ավելի ու ավելի ուժեղանում էր թառամումի և հրաժեշտի զգացումը, քաղցր ու հիվանդագին, երբեք ամբողջովին չփլուզված, բայց հիմա արդեն փլուզման համար հասունացած՝ իմ նախկին կյանքի բոլոր վայրերի ու առարկաների հետ միասին լինելու զգացումը: «Ժամանակակից» մարդը դա անվանում է սենտիմենտալություն, նա այլևս չի սիրում առարկաները, նույնիսկ ամենասրբազան առարկաները՝ իր ավտոմոբիլը, որ հույս ունի հենց առաջին հնարավորության դեպքում փոխարինել նոր տեսակով: Այս ժամանակակից մարդը եռանդուն է, գործնական, առողջ և ձիգ, զերազանց մի առանձնատիպ, որ իրեն դեռ հիանալիորեն ցույց է տալու հաջորդ պատերազմում: Դա ինձ

չէր հետաքրքրում, ես ոչ միայն ժամանակակից մարդ, այլևս երիտասարդ չէի, ես դուրս էի ընկել ժամանակից և շարունակում էի ընթացնալ ինչ-որ տեղ՝ ավելի մոտենալով մահվանը, պատրաստվելով մահվանը: Ես ոչինչ չունեի սեմտիմենտալությամբ ղեմ, ուրախ էի ու երախտապարտ, որ այրված սրտիս մեջ զգացմունքների նման ինչ-որ բան է պահպանվել: Եվ այդպես, այդ հին գինեաանը տրվել էի հիշողություններին, հին, տձև արձուներին իմ կապվածությանը, տրվել էի ծխախոտի ու գինու բույրերին, սովորության, ջերմության, հայրենիքի նմանության այն աղոտ լույսերին, որ զգում էի այդ ամենի մեջ: Հրաժեշտ տալը գեղեցիկ է, այն քնքշացնում է: Միքելի էր ինձ համար իմ ծանրամեծ նստելը, իմ գեղջկական բաժակը, էլ-զասյան գինու սառը մրգահամը, իմ հավատարմությունն ամեն ինչին և բոլորին այս սրահում, սիրելի էին հարբեցողների երազկոտ դեմքերը, այդ հուսահատների, որոնց եղբայրն էի եղել երկար ժամանակ: Բյուրգերական զգայապաշտություն էր դա, որ ըմբռնվում էի այստեղ՝ թեթևաբեռն համեմված պանդոկների հնաճոճ ռոմանտիկայի բուրմունքով այն ժամանակների, երբ պանդոկները, գինին և սիգարները դեռևս արգելված, խորհրդավոր ու հրաշալի բաներ էին: Իսկ Տափաստանի գայլը տեղից չէր բարձրանում, որպեսզի ցույց տա ժանիքները և կտոր-կտոր անի իմ զգայապաշտությունը: Հանգիստ նստել էի ես այնտեղ՝ լուսավորված անցյալով, արդեն ընկնող աստղի բույլ լույսով:

Ներս մտավ փողոցային մանրավաճառը՝ իր բոված շագանակով, և ես մի բուռ գնեցի: Ներս մտավ մի ծեր կին՝ ծաղիկներով, նրանից գնեցի մի քանի մեխակ ու նվիրեցի գինետան ախրուհուն: Միայն երբ ցանկացա վճարել և ձեռքս իզուր տարա պիջակիս սովորական գրպանը, նկատեցի, որ ֆրակով եմ: Դիմակահանդեսը: Հերմինեն:

Բայց դեռ շատ վաղ էր, ես չէի կարողանում վճռել, որ այդ պահին վեր կենամ ու գնամ «Գլորուս»: Բացի այդ, ինչպես վերջերս էր ամեն տեսակ զվարճանքների ժամանակ պատահում ինձ հետ, զգում էի ներքին ինչ-որ դիմադրություն ու արգելակում, մեծ, լեփլեցուն, աղմկոտ սրահներ մտնելու ինչ-որ կաշկանդվածություն, օտար միջավայրի, զվարճասեր մարդկանց աշխարհի, պարերի հանդեպ դպրոցականին պատշաճ ինչ-որ վեհերատություն:

Քարշ գալով փողոցներով ու անցնելով մի կինոթատրոնի մոտով՝ նայում էի լույսերի խրճերին ու վիթխարի լուսազդագրերին, ուզում էի շարունակել ճանապարհս, բայց հետ դարձա և ներս մտա: Մոտավորապես մինչև ժամը տասնմեկը այստեղ կարող էի շատ հանգիստ նստել մթության մեջ: Ծառայողը ցույց տվեց ճանապարհը՝ լուսավորելով այն ձեռքի լապտերով, ես անցա վարագույրը և հայտնվեցի մութ դահլիճում, գտա ազատ տեղ և անսպասելիորեն հայտնվեցի Հին կուսկարանում: Ցուցադրվում էր մեկը այն կինոնկարներից, որոնք, կարծես, շահույթի համար չէին, այլ ազնիվ ու սրբազան նպատակի՝ արված մեծ ծախսերի գնով ու մեծ հմտությամբ, որոնց ետճաշա ժամերին բերվում են անզամ հոգևոր դպրոցների սաները՝ իրենց ուսուցիչների կողմից: Ցուցադրվում էր Մովսեսի և իսրայելցիների պատմությունը Եգիպտոսում՝ մարդկանց, ձիերի, ուղտերի, պալատների, փարավոնի հարստությունների և անապատի վառվող ավազներում հրեաների տառապանքների բազմաթիվ պատկերներով: Ես տեսնում էի Մովսեսին, տեսնում էի, թե ինչպես է նա, որ ուներ Ուղտ Ուրիթմենի սանրվածքը՝ թատերական փառահեղ մի Մովսես, Վոթան աստծո լայն քայլերով⁴⁰ ու երկար գավազանով, կրակոտ ու մռայլ, հրեաների առջևից ընկած, քափառում է անապատներում: Ես տեսնում էի նրան Կարմիր ծովի ափին՝ Աստծուն աղոթելիս, և տեսա, թե ինչպես Կարմիր ծովը բացվեց ու ճանապարհ տվեց նրան՝ ջրային երկու լեռնակուտակ հորձանքների միջև առաջացնելով կիրճ (թե ինչ ճանապարհով էին կինոարտադրողները գլուխ բերել դա՝ այդ մասին կարող էին երկար վիճել այս կրոնական կինոնկարի դիտմանը իրենց քահանայի կողմից բերված երիտասարդ բողոքական սաները), տեսա, թե ինչպես այդտեղով անցան մարգարեն և ահաբեկված ժողովուրդը, տեսա, թե ինչպես նրանց հետևից երևաց փարավոնի մարտակառքը, տեսա, թե ինչպես եգիպտացիները գրոհեցին ափը, սարսափած կանգ առան, ապա հանդգնեցին առաջ նետվել, և տեսա, թե ինչպես են փառահեղ, ոսկեսաղավարտ փարավոնի ու նրա բոլոր մարտակառքերի ու մարդկանց վրա փլվում, իրար վրա գալիս ջրային երկու լեռները, և հիշեցի երկու բասի համար գրված Հենդելի դուետը, որտեղ հրաշալիորեն պատկերված է այս իրադարձությունը: Տեսա, թե ինչպես է հետո Մովսեսը՝ ժայռոտ անապատների մռայլ հերոսը, բարձրանում

Մինա լեռ, և տեսա, թե ինչպես է Եհովան՝ փոքորիկի, ամպրոպի և լուսային ազդանշանների միջոցով հայանում տասը պատվիրանները, որի ընթացքում նրա անարժան ժողովուրդը լեռան ստորոտին կառուցում է Ոսկե Հորթը և համարյա խելահեղձներն տրվում զվարճանքների: Ինձ համար զարմանալի և անհավատալի էր տեսնել այդ ամենը, և սրբազան պատմությունները, նրա հերոսներն ու հրաշքները, որ երբևէ մեր մակույթյան վրա վառել էին մեկ այլ աշխարհի, ինչ-որ գերմարդկայինի մասին առաջին ադոտ տպավորությունները, մուտքի համար նախապես վճարելով՝ կարելի էր տեսնել այստեղ՝ երախտապարտ հասարակության առաջ ցուցադրված, որ լուս ծամում է հետը բերած մի կտոր բլիթը՝ այս ժամանակների հնուտի ու անարժեք մշակույթից մի հրաշալի, մի փոքր պատկեր: Աստված իմ, այս խոգության առաջն առնելու համար լավ կլիներ, որ այն ժամանակ կոտորվեին ոչ միայն եզիպտացիները, այլև հրեաներն ու բոլոր մնացած մարդիկ, մեռնեին բռնի ու վայելուչ մահով, այլ ոչ թե այս սարսափելի, թվացյալ մահով, որով մեռնում ենք այսօր: Այո, արդարացի կլիներ:

Իմ քաբուն կաշկանդվածությունը, իմ բնագղական երկյուրը դիմակահանդեսի նկատմամբ կլինակարի ու նրա կողմից հարուցած զգացումներով չնվազեցին, այլ տհաճորեն ուժեղացան, և ես, Հերմիների մասին մտածելով, ստիպված էի ուժ գործադրել ինձ վրա, որպեսզի ի վերջո քայլեմ դեպի «Գլորուս» ու մտնեմ ներս: Ուշ էր, և դիմակահանդեսը վաղուց իր վարժեք ընթացքի մեջ էր մտել: Զգաստ ու վախեցած՝ հազիվ էի հանել վերարկուս, երբ անմիջապես հայտնվեցի դիմակահանդեսի աշխույժ իրարանցման մեջ, ինձ մտերմորեն հրում էին ամեն կողմից, աղջիկները պահանջում էին, որ իրենց շամպայն հյուրասիրեն, ծաղրածուները խփում էին ուսերիս և խոսում դուռով: Ուշադրություն չդարձնելով ոչ մեկին՝ լիքը լցված դահլիճներով մի կերպ հասա հանդերձարանին, ստացա համարս, այն մեծ խնամքով տեղավորեցի գրպանումս՝ մտածելով, որ այն, հավանաբար, շուտով ետ եմ տալու, երբ բավականաչափ կհոգնեմ այս աղմուկից:

Վիթխարի շենքի բոլոր դահլիճներում տոնական հանդես էր, բոլոր սրահներում պարում էին, անգամ նկուղային հարկաբաժինը, բոլոր միջանցքները և սանդուղքները լեվիեցում էին դիմակներով, սլարով, երաժշտությամբ, ծիծաղով ու վազվազու-

քով: Ընչահեղձ լինելով՝ մի կերպ առաջ էի գնում այդ բառսի միջով, նեզրական երգչախմբից անցնելով գեղջկական երաժշտության, մեծ, լույսերով ողողված դահլիճից՝ դեպի միջանցքները, սանդուղքները, աստիճանները, բուֆետները, դեպի այն սենյակները, որտեղ շամպայն էին խմում: Պատերին կախված էին ամենաերիտասարդ նկարիչների վայրենի, ուրախ նկարներ: Բոլորն այստեղ էին՝ նկարիչները, լրագրողները, գիտնականները, առևտրականները և դրանց հետ միասին նաև քաղաքի ողջ զվարճասեր հասարակությունը: Նվագախմբերից մեկում նստած էր միտար Պարլոն և ոգևորված փչում էր իր կեռ փողը: Երբ նա ճանաչեց ինձ, բարձր նվագով ողջունեց: Մեղմվելով ամբոխից՝ ես մի սրահից անցնում էի մյուսը, բարձրանում, իջնում էի սանդուղքները, նկուղային հարկաբաժնում նկարիչները միջանցքներից մեկին դժոխքի տեսք էին տվել, և սատանաների երաժշտական խումբը այնտեղ կատաղորեն աղմկում էր թմբուկների վրա: Աստիճանաբար սկսեցի աչքս պահել տեսնելու համար, թե որտեղ է Հերմիներն, որտեղ է Մարիան, փնտրել նրանց, մի քանի անգամ փորձեցի անցնել մեծ դահլիճ, բայց ամեն անգամ շեղվում էի ճանապարհիցս կամ տեղի տալիս դիմացից եկող ամբոխին: Կեսգիշեր էր, իսկ ես դեռ ոչ մեկին չէի գտել, թեև դեռ չէի պարել, բայց արդեն քրտնած էի, գլուխս պտտվում էր, նստեցի առաջին պատահած արժոյն, բոլորովին անժանոք մարդկանց մեջ, ասացի, որ զինի բերեն ինձ և գտա, որ նման աղմկուտ տոնահանդեսներին ինձ նման ծեր մարդկանց մասնակցելը ճիշտ չէ: Համակերպված՝ խմեցի իմ գինին, հայացքս հառեցի կանանց հոլանի քներին ու մեջքերին, տեսա, թե ինչպես են կողքիցս անցնում տարօրինակ դիմակներ հագած բազմաթիվ մարդիկ, լռեցի, երբ հրմշտեցին կողքից, ինձնից անձայն հեռացրեցի մի քանի աղջիկների, որ ուզում էին նստել ծնկներիս կամ պարել ինձ հետ: «Ծեր փնթիփնթան», - կանչեց նրանցից մեկը, և նա իրավացի էր: Վճռեցի ի պետս քաջության և տրամադրության մի փոքր խմել, բայց զինին նույնպես դուր չեկավ և դժվարությամբ կարողացա խմել-վերջացնել երկրորդ բաժակը: Եվ աստիճանաբար զգում էի, թե ինչպես է իմ քիկուներում կանգնում Տախաստանի գայլը և դուրս հանում լեզուն: Ոչինչ չէր ստացվում, ես այստեղ օտար էի: Բայց եկել էի լավագույն նպատակներով, սակայն ուրախանալ այստեղ ինձ չէր հաջող-

վում, և այս բարձր, բուն ցնծությունը, քրքիջը և ամբողջ մոլե-
զին իրարանցումը ինձ թվում էին հիմար ու շինծու:

Եվ այնպես եղավ, որ ժամը մեկին, հիասթափված ու չա-
րացած, նորից մոլեցի դեպի հանդերձարանը, որ վերցնեմ վե-
րարկուս ու գնամ: Դա պարտություն էր, վերադարձ դեպի Տա-
փաստանի գայլը, և Հերմինեն դա չէր ներելու ինձ: Բայց այլ
կերպ չէի կարող: Դժվարությամբ կարելով ամբոխը և շարժվե-
լով դեպի հանդերձարանը՝ ես մի անգամ ևս ուշադիր իմ շուրջը
նայեցի՝ տեսնելու, թե չե՞ն երևում ինձ ծանոթ աղջիկները: Ի-
զուր: Ահա և ես կանգնած էի հանդերձարանի պատուհանի
մոտ, քաղաքավարի ծառայողը, կանգնած բազրիքի այն կող-
մում, արդեն ինձ էր պարզել ձևերը, և ես ձեռքս տարա ժիլե-
տիս գրպանը, համարն այնտեղ չէր: Մատանան տանի, դա՞
էր ինձ պակաս: Երբ տխուր թափառում էի դահլիճում, երբ
խմում էի անհամ զինին և այստեղից հեռանալու վճռի հետ
կռիվ տալով՝ ձեռքս միշտ տանում էի գրպանս, միշտ այդ կողմ,
տափակ համարանիշը գտնում էի իր տեղում: Իսկ հիմա այն
չկար: Ամեն ինչ իմ դեմ էր:

– Համարանի՞շն եք կորցրել,– հարցրեց մոտիկ կանգնած
կարմրադեղնավուն, փոքրիկ մի սատանա՝ ճչան ձայնով:–
Վերցրու իմը, բարեկամ,– և արագ ինձ պարզեց իր համարա-
նիշը:

Մինչ ես մեքենաբար վերցրեցի և մատներիս մեջ շուռումուռ
էի տալիս այն, փոքրամարմին գաճաճը անհետացավ:

Երբ, այնուամենայնիվ, աչքերիս մոտեցրի փոքր, կլոր կար-
տոնի այդ կտորը, տեսնելու համարանիշը, վրան ոչ մի նիշ էլ
չկար, այլ միայն մանր տառերով ինչ-որ խզրզանքներ: Հան-
դերձապահին խնդրեցի սպասել, մոտեցա ամենամոտ աշտա-
նակին և դրա տակ կանգնած՝ կարդացի: Մանր, երերուն,
դժվար ընթեռնելի տառերով այնտեղ ինչ-որ բան էր խզրզած:

Այս գիշեր ժամը չորսից մոզական քատրոն

– միայն խելագարների համար –

Մուտքի վարձը՝ քանականություն

Ոչ բոլորի համար: Հերմինեն դժոխքում է:

Ինչպես խաղատիկնիկ, որի մետաղալարերը խաղացնողի
ձեռքից մի պահ սահել, դուրս են ընկել և մի կարճ, անշարժ

մահից ու թուրքունից հեռո վերստին կենդանանում է,
վերստին սկսում է խաղալ, պարում է ու կատարում իր դերը,
այդպես և ես, մոզական մետաղալարից ցնցված, ճկուն շար-
ժումներով, ջահել ու եռանդուն, վազ տվեցի ես՝ դեպի այն
խառնամբոխը, որից հենց նոր հոգնած, անուրախ ու ծերա-
ցած փախչում էի: Մեղավորներից մեկն այդ աճապարանքով
չէր շարժվի, որ հասներ դժոխք: Բիչ առաջ տրորում էին իմ լա-
քե կոշիկները, ինձ համար զզվելի էր օժանելիքով ներծծված,
բանձր օդը, ինձ թուլացնում էր տապը, իսկ հիմա թեթևաշարժ,
փետուրե ոտքերիս վրա, ուսնատեպի չափի տակ ես վազում էի
բոլոր դահլիճներով դեպի դժոխք, զգում էի կախարդանքով լի
օդը, ես դարձել էի անկշիռ, ինձ տանում էր այդ ջերմությունը,
այդ ամբողջ շառաչող երաժշտությունը, գույների գլխապտույ-
տը, կանանց ուսերի բուրմունքը, հարյուրավորների աղմուկը,
ծիծաղը, պարային ռիթմը, սյրվող աչքերի այդ ամբողջ փայ-
լը: Իսպանացի մի պարուհի բռավ իմ գիրկը. «Պարիր ինձ
հետ»: «Չի կարելի,– ասացի,– պետք է դժոխք գնամ, բայց քե-
զանից հետս մի համբույր կվերցնեմ հաճությամբ»: Դիմակի
տակ կարմիր շրթունքներն ինձ ընդառաջ եկան, և հենց համ-
բուրելիս՝ ճանաչեցի Մարիային: Ամուր առա նրան իմ քերի
մեջ, նրա լիքը շրթունքները ծաղկել էին ինչպես ամառային
հասուն վարդ: Եվ մենք պարում էինք արդեն՝ շրթունք շրթուն-
քի, և պարելով անցանք Պարլոյի կողքով, որ սիրահարված
կախվել էր իր քնքշորեն հեկեկացող փողից, և մեզ իր մեջ էր
առել նրա շողուն ու կիսով չափ բացակա, գեղեցիկ, կենդանա-
կան հայացքը: Բայց հագիվ էինք մի պարաքայլ կատարել,
երբ երաժշտությունն ընդհատվեց, ես տհաճությամբ իմ գրկից
բաց թողեցի Մարիային:

– Միրով նորից կպարելի քեզ հետ,– ասացի ես՝ արբեցած
նրա ջերմությամբ,– մի քանի քայլ արա ինձ հետ, Մարիա, ես
սիրահարված եմ քո գեղեցիկ քերիին, բույլ տուր մի պահ ևս
նայեմ դրանց: Բայց, հասկանում ես, Հերմինեն կանչել է ինձ:
Նա դժոխքում է:

– Այդպես էլ մտածում էի: Մնաս բարով, Հարրի, ես քեզ սի-
րով կհիշեմ:

Նա մնաս բարով ասաց: Դա հրաժեշտ էր, դա աշուն էր,
ճակատագիր, որով այդպես հասուն ու լիքը բուրում էր ամա-
ռային վարդը:

Ես շարունակեցի վագրս, նուրբ հրմշտոցով լի երկար միջանցքներով, սանդուղքներով ի վար՝ դեպի դժոխք: Այնտեղ ձյուքի պես սև պատերի վրա վառվում էին շարությանը պայծառ լուսամտիկներ և տենդորեն նվազում էր սատանաների նվազախամբը: Բարին մոտ՝ սրճարանային բարձր աթոռների վրա, նստած էր մի գեղեցիկ պատանի՝ առանց դիմակի, ֆրակով, նա իր հեզնական հայացքով կարճ զննեց ինձ: Պարողների հորձանքը ինձ սեղմեց պատին, շատ նեղ այս տարածքում պարում էին մոտ քսան զույգ: Ազահությանը ու վախով նայեցի բոլոր կանանց, մեծ մասը դեռ դիմակներով էին, մի քանիսը ժպտացին ինձ, բայց դրանցից ոչ մեկը Հերմինեն չէր: Գեղեցիկ պատանին հեզնական նայում էր իր բարձր աթոռից: Պարի հաջորդ ընդմիջմանը մտածեցի՝ Հերմինեն կգա և ինձ կհրավիրի: Պարը վերջացավ, բայց ոչ ոք ինձ չմտեցավ:

— Գնացի բարի կողմը, որ սեղմված էր փոքր, ցածր սրահի անկյունում: Պատանու աթոռի մոտ կանգնելով՝ խնդրեցի վիսկի: Մինչ խմում էի, տեսա երիտասարդի կիսադեմը, նա շատ ծանոթ ու սրանչելի տեսք ուներ, կարծես՝ շատ հեռու ժամանակների նկար՝ անցյալի թեթևակի փոշով քանկ դարձած: Օհ, հանկարծ գլխի ընկա. չէ՞ որ դա Հերմանն է, պատանության տարիների իմ ընկերը:

— Հերման, — ասացի ես վարանքով:

Նա ծիծաղեց:

— Հարբի, դու ինձ գտա՞ր:

Դա Հերմինեն էր, միայն փոքր-ինչ այլ սանրվածքով և թեթևորեն շպարված, անսովոր ու գունատ էր նրա խելացի դեմքը մոդայիկ բարձր օձիքի միջից, զարմանալիորեն փոքր էին նրա ձեռքերը, որ երևում էին լայն, սև ֆրակի թևերի ու սպիտակ թեզանիքների միջից, զարմանալի նուրբ էին ուղեքերը՝ տղամարդու սև-սպիտակ, մետաքսե զուլպաների մեջ, որ երևում էին սև, երկար տարատի տակից:

— Մա՞ է այն զգեստը, Հերմինե, որով ուզում էիր այնպես անել, որ սիրահարվեմ քեզ:

— Առայժմ, — գլխով արեց նա, — սիրահարության եմ հասցրել մի քանի դամաների: Հիմա քո հերթն է: Արի, նախ մի բաժակ շամպայն խմենք:

Մենք խմում էինք՝ նստած մեր բարձր աթոռներին, մինչ մեր կողքին շարունակվում էր պարը և թնդում էր բուռն, անողոր

լարային երաժշտությունը: Եվ Հերմինեի կողմից առանց որևէ ջանքերի, շատ շուտով ես սիրահարվեցի նրան: Բանի որ նա տղամարդու զգեստներ էր կրում, ես չէի կարող նրա հետ պարել, չէի կարող թույլ տալ ոչ մի քնքշություն, ոչ մի նախաձեռնություն, ու չնայած տղամարդու դիմակով ու հագուստներով քվում էր հեռու և անհաղորդ, նրա հայացքները, բառերը, շարժումները շնչում էին կանացիության բոլոր հրապույրներով: Առանց նրան մատով անգամ դիպչելու՝ ես ենթարկվեցի նրա կախարդանքին, և այդ կախարդանքը ինքնին նրա մի մասն էր, դա երկսեռ սիրո կախարդանք էր⁴¹: Բանի որ նա ինձ հետ խոսում էր Հերմանի և մանկության մասին, իմ և իր մանկության, միևնույն կանացիության հասունացման այն տարիների մասին, երբ սիրո մանկական ուժը ուղղվում է ոչ միայն երկու սեռերին, այլև առհասարակ ամեն ինչին ու բոլորին, զգայականին ու հոգևորին, և ամեն ինչ օժտում սիրո այն կախարդանքով ու կերպարանով, որ հեքիաթային այն ընդունակությամբ, ինչը միայն ընտրյալները և բանաստեղծներն են վերապրում ուշ տարիքում: Հերմինեն, անկասկած, պատանի էր խաղում, ծխում էր սիգարետներ, զրուցում էր թեթև ու խելացի, երբեմն փոքր-ինչ հեզնական, սակայն ամեն ինչում լուսավորված էրուսով, ամեն ինչ իմ զգայարաններին հասնելու ճանապարհին փոխակերպվում էր գեղեցիկ հրապուրանքի:

Որքան լավ ու ճշմարիտ, իմ կարծիքով, ես գիտեի Հերմինեին և որքան կատարյալ ու նորովի այդ գիշեր ինձ համար բացվեց նա: Ինչ նրբությամբ ու անտես ձևերով նա իմ շուրջը հյուսեց բաղձալի ցանցը, ինչ խաղերով ու ջրահարսի պես տվեց ինձ խմելու քաղցր թույնը:

Մենք նստած էինք, զրուցում էինք ու խմում շամպայն: Աջ ու ձախ նայելով՝ քափառում էինք սրահներով, արկածախնդիր խաղերի մեջ էինք մտնում՝ ընտրելով գույզերը և ականջ դնելով նրանց սիրային քվիչոցներին: Նա ինձ ցույց էր տալիս կանանց, որոնց հետ պետք է պարելի, և խորհուրդ էր տալիս գործածել գայթակղության առանձին հմտություններ, որ անհրաժեշտ էին այս կամ այն կնոջ հետ վարվելիս: Մենք հանդես էինք գալիս իբրև հակառակորդներ, մի պահ երկուսս էլ կպչում էինք միևնույն կնոջը, փոխելով միմյանց, երկուսս էլ պարում էինք նրա հետ, երկուսս էլ փորձում էինք նվաճել նրան: Բայց այդ ամենը սոսկ դիմակահանդես էր, միայն խաղ

էր մեր երկուսի միջև, որ ավելի էր մերձեցնում մեզ, բոբրոքում իրարով: Ամեն ինչ հեթիաթ էր, ամեն ինչ մեկ չափումով ավելի հարուստ էր, մեկ իմաստով ավելի խորը, խաղ էր ու խորհրդանշան: Մենք տեսանք շատ գեղեցիկ, ջահել մի կին, որը փոքր-ինչ տառապած ու դժգոհ տեսք ուներ, Հերմանը պարեց նրա հետ, ծաղիկներ ավեց նրան, նրա հետ անհետացավ շամպայն խմելու տաղավարներից մեկում, իսկ հետո ինձ պատմեց, որ այդ կնոջը նվաճել է ոչ թե իբրև տղամարդ, այլ իբրև կին՝ լեսբոսյան կախարդանքով: Մակայն ինձ համար այդ ամբողջ աղմկալից տոնը՝ պարերից թնդացող լիքը դահլիճներով, այդ դիմակավոր հարբած ժողովուրդը աստիճանարար վերածվում էին մի խելագար, անիրական դրախտի, իրենց բույրերով, մեկը մյուսից ետ չմնալով, ինձ գայթակղում էին ծաղիկները, մատներով փորձելով՝ անցնում էի մրգից միրգ, օձերը հրապուրանքով նայում էին կանաչ սաղարթների ստվերներից, լուռու ծաղիկը սավառնում էր սև ճահիճի վերևում, կախարդական թռչունները իրենց կողմն էին գրավում ճյուղերի մեջ, բայց ամեն ինչ ինձ տանում էր դեպի բաղձալի նպատակը, ամեն ինչ ինձ վերստին լցնում էր տենչանքով առ միակը: Մի անգամ պարեցի ինչ-որ անծանոթ աղջկա հետ, շիկնած ու գայթակղիչ՝ նա օրորվում էր զինուց, և երբ մենք սավառնում էինք անիրականի սահմաններում, ասաց նա՝ հանկարծ ծիծաղելով. «Քեզ ճանաչել չի լինի: Այսօր երեկոյան դու հիմար և տհաճ տեսք ունեիր»: Եվ ես ճանաչեցի այն աղջկան, որը մի ժամ առաջ ինձ ասել էր «ծեր փնթիմբան»: Այժմ նրան քվում էր, թե ձեռք էր բերել ինձ, բայց հաջորդ պարի ժամանակ ես այլ կնոջ գրկում էի, որն ինձ քովել էր: Ես պարեցի երկու կամ ավելի ժամ, պարեցի բոլոր պարերը, նաև այնպիսիք, որ չէի սովորել: Իմ կողքին շարունակ հայտնվում էր Հերմանը՝ ժպտացող պատանին, գլխով էր անում և անհետանում ամբոխի մեջ:]

Մի զգացում, որ անծանոթ մնաց ինձ հիսուն տարեկանում, թեև այն հայտնի է յուրաքանչյուր դեռահաս աղջկա և ուսանողի, բայց ունեցա սպրելու այս հանդեսի զիջերը. տոնահանդեսի զգացումը, արբեցումն ընդհանուր ուրախությամբ, զանգվածի մեջ անձի ոչնչացման գաղտնիքը, Unio mystica-յի հրճվանքը: Ես հաճախ էի լսել այդ մասին պատմություններ,

* Unio mystica – միասնական միություն (լատ.):

դրանք ծանոթ են ամեն մի սպասուհու, և հաճախ էի կայծեր տեսել այդ մասին պատմողի աչքերի մեջ, իսկ ինքս միշտ միայն թերահավատ էի դրան և թեթև ժպտում նախանձով: Հուսալքվածի, ինքն իրենից ազատագրվածի հարբած աչքերի այդ ճառագումը, այդ ժպիտն ու գրեթե խելագար ինքնազայվածությունը նրանց, ովքեր կրանվում են ընդհանուրի արբեցումով, ես իմ կյանքում տեսել էի հարյուրավոր անգամներ, ինչպես բարձր, այնպես էլ ցածր օրինակներով՝ հարբած նորակոչիկների ու նավաստիների, նաև մեծ նկարիչների մոտ, ովքեր համակված էին տոնահանդեսների ոգևորությամբ, ոչ պակաս չափով տեսել էի նաև երիտասարդ զինվորների աչքերում, որոնք մեկնում էին պատերազմ, իսկ վերջին ժամանակներս երջանիկ օտարացման փայլն ու ժպիտը՝ զարմանալով, սիրելով, ծաղրելով ու նախանձելով, տեսել էի իմ բարեկամ Պարլոյի մոտ, երբ նա, նվազախմբի երաժշտությամբ հարբած, երջանկորեն կախվում էր իր սաքսֆոնի վրա կամ սքանչացած, զմայլանքով նայում նվազավարին, թմբկահարին, բանջո նվագողին: Այդպիսի ժպիտը, մանկական այդպիսի ճառագումը, մտածում էի մեկ-մեկ, տրված են միայն շատ երիտասարդ մարդկանց կամ ժողովուրդների, որոնք թույլ չեն տալիս իրենցից առանձնացնել իրենց անհատներին: Բայց այսօր, այս երանկի զիջերը ճառագում էի ես ինքս՝ Տափաստանի գայլ Հարրիս, ինքս փայլում էի՝ այդ ժպիտը դեմքիս, լողում էի այդ խոր, մանկական, հեթիաթային երջանկության մեջ, շնչում էի ընդհանրության, երաժշտության, ուրիշի, զինու և սիրո հրճվանքի այդ քաղցր երազով ու հափշտակությամբ, ինչի մասին զովասանքները երբևէ այնպես հաճախ ծաղրանքով ու գերազանցության ողորմելի զգացումով ես լսում էի դիմակահանդեսին ներկա զանված որևէ ուսուցչի շուրթերից: Ես այլևս ես չէի, իմ անհատականությունը, ինչպես աղը՝ ջրում, լուծվել էր տոնական արբեցման մեջ: Ես պարում էի այս կամ այն կնոջ հետ, բայց այդ կինը ոչ միայն նա էր, որին ես ունեի իմ գրկում, որի մազերը քսվում էին ինձ, որի բուրմունքը խմում էի ես, այլ բոլորը, մյուս բոլոր կանայք նրա հետ, ովքեր միևնույն սրահում, միևնույն պարի, միևնույն երաժշտության ուրիշի տակ պարում էին ինչպես ես, և որոնց ճառագող դեմքերը վիթխարի, հեթիաթային ծաղիկների նման սահում-անցնում էին իմ կողքով, բոլորը պատկանում էին ինձ, ես պատկանում էի բոլորին,

ամեն մեկս բոլորից մաս ունեինք: Նաև տղամարդիկ էին դրանց մեջ, ես նաև նրանցից մեկն էի, նրանք նույնպես ինձ օտար չէին, նրանց ժպիտը իմն էր, կանանց նկատմամբ նրանց ուռնձգությունները իմն էին, իմը՝ նրանցն էին:»

Այդ ձևեր աշխարհը նվաճել էր մի նոր պար՝ «Անձկություն» անունով ֆորսարտը: Մի երկու անգամ, ի դեպ, կատարեցին այս «Անձկությունը»՝ մշտապես առաջ բերելով նոր հետաքրքրություն, մենք բոլորս նրանով համակվեցինք ու արբեցանք, բոլորս քթի տակ մրմնջում էինք նրա մեղեդիին: Ես պարտում էի առանց դադարի, պարում էի յուրաքանչյուր կնոջ հետ, որ հանդիպում էր իմ ճանապարհին՝ անչափ ջահել աղջիկների, ծաղկող կանանց, ամուսն պես հասուն կամ քայսժոտ-քառամած կանանց հետ՝ բոլորից էլ սրանչացած, ժպտալով, երջանիկ ու ճառագող: Եվ երբ Պարբուն ինձ տեսավ այդպես պայծառացած, ինձ, որին միշտ համարում էր շատ փնթփնթան, ողորմելի սատանա, նրա շողացող աչքերը անմիջապես ուղղվեցին ինձ, նա ոգևորված վեր կացավ նվազախմբի իր արժույթից, եռանդորեն փչեց իր փողը, ապա բարձրացավ արժույթի և վերևում կանգնած, երանությանը ու տենդորեն օրորվելով իր փողի հետ «Անձկության» ռիթմով, շարունակեց փչել իր լիքը թշերով, թե ես, թե իմ ընկերուհին նրան օդային համբույրներ ուղարկեցինք ու բարձր երգեցինք նրա հետ: Այս, մտածում էի ես, ինչ ուզում է, թող լինի, գոնե մեկ անգամ երջանիկ եղա, պայծառ, գոնե մեկ անգամ ազատվեցի ինքս ինձնից, եղբայր եղա Պարբային, եղա մանուկ:

Ժամանակի զգացումը ես կորցրել էի, չգիտեի, թե քանի ժամ կամ ակնթարթ տևեց այդ հարբած երջանկությունը: Չնկատեցի նաև, որ տոնահանդեսը այնքանով, որքանով նրա լարվածությունը մեծանում էր, ավելի ու ավելի կենտրոնանում էր մի նեղ տարածության վրա: Հյուրերից շատերն արդեն հեռացել էին, միջանցքներում արդեն լուռ էր, շատ լույսեր արդեն հանգել էին, սանդղահարթակը մատնվել էր մահվան, վերևի դահլիճներում մեկը մյուսի հետևից լուռ էին երգչախմբերը, և երաժիշտները հեռանում էին, միայն մեծ դահլիճում և ցածում՝ դժոխքում, ավելի ու ավելի բորբոքվելով՝ աղմկում էր հարբածների գունագեղ հասարակությունը: Քանի որ Հերմինեի՝ պատանու հետ ես պարել չէի կարող, նրա հետ հանդիպում ու ողջունում էինք միմյանց միայն հպանցիկ, պարային դադարներ

րի ժամանակ, և, ի վերջո, նրան կորցրեցի բոլորովին ոչ միայն աչքերով, այլև մտքով: Մտքեր այլևս չկային: Ես տարբարվեցի էի պարերի, հարբած ամբոխի մեջ, ինձ էին հպվում հոտեր, ձայներ, հառաչանքներ, բառեր, ինձ ողջունում ու բորբոքում էին օտար աչքեր, շրջապատել էին օտար դեմքեր, շրթունքներ, այտեր, ուսեր, կրծքեր, ծնկներ, ինձ, իբրև ալիք, երաժշտությանը նետում էր այս ու այն կողմ:

Հանկարծ, կես արթնության մեջ, դեռ մնացած վերջին հյուրերի շարքում, որոնք այժմ լցվել էին փոքր դահլիճներից մեկը, դա վերջին դահլիճն էր, որտեղ հնչում էր երաժշտություն, հանկարծ նկատեցի մի սև Pierrette*, նրա դեմքը ներկված էր սպիտակ, գեղեցիկ, թարմ մի աղջիկ, միակը, որի դեմքը ծածկում էր դիմակը, հրապուրիչ մարմնով, որի նման այս ամբողջ գիշերվա ընթացքում դեռ չէի տեսել: Մինչ մյուսների տեսքից, նրանց կարմրած, տաքացած դեմքերից, ճմրված զգեստներից, թառամած օձիքներից ու զանգուրներից նկատելի էր, որ արդեն ուշ ժամ է, սև Pierrette-ն՝ թարմ դեմքով, որ երևում էր դիմակի տակից, առանց ծալքերի զգեստով, կուսական զանգուրներով, ձյունասպիտակ թեզանիքներով ու թարմ սանրվածքով, կանգնած էր կարծես նուրբ-նոր: Նա դեպի իրեն էր ձգում ինձ, ես գրկեցի նրան, մտքների պարի մեջ, նրա խուպուպը խուտուտ է տալիս ծնոտս, մազերը շոյում էին այտերս, ավելի քնքշորեն և ավելի մտերմորեն, քան որևէ այլ պարուհի այդ գիշեր, նրա պիտկ, ջահել մարմինն ընդառաջ էր գալիս իմ շարժումներին, հեռանում էր նրանցից և խաղալով՝ մշտապես պարտադրում էր ու գայթակղում նորանոր հպումների: Եվ հանկարծ, երբ պարելու ժամանակ կռացա և իմ շրթունքների դեմ փնտրում էի նրա շրթունքները, այդ շրթունքները ժպտացին ինքնահավան ու վաղուց ճանաչ ժպիտով, ես ճանաչեցի այդ ամուր ծնոտը, երջանկորեն ճանաչեցի ուսերը, նրա արմունկները, ձեռքերը: Դա Հերմինեն էր, ոչ այլևս Հերմանը, զգեստները փոխած, թարմ, թեթև օձանելիքով ցողված և շպարված: Այրվելով՝ իրար հանդիպեցին մեր շրթունքները, մի ակնթարթ նրա ողջ մարմինը, ընդհուպ մինչև ծնկները, ազահարար ու ինքնամոռաց սեղմվել էր ինձ, ապա ինձնից ետ տարավ շրթունքները և պարեց գուսպ ու խուսափուկ: Երբ ա-

* Pierrette – ֆրանսիական կատակերգություններում կին գործող անձ (ֆր.):

վարավեց երաժշտությունը, մենք իրար փաթաթված մնացինք կանգնած, հրաբորբոք բոլոր գույգերը ծափահարում էին մեզ, ուսմերը զեախն խփում ու բղավում՝ հոգնած նվագախմբին պարտադրելով կրկնել «Անձկությունը»: Եվ մեկն բոլորս զգացինք առավուտը, վարագույների հեռւում տեսանք գունատ լույսը, զգացինք ուրախության մոտեցող ավարտը, նշաններցինք մոտեցող հոգնածությունը և մի անգամ նորից՝ կուրորեն, ժպտալով, հուսահատ, նեավեցինք դեպի պարը, դեպի երաժշտությունը, դեպի լուսային մակընթացությունը, մոլեզունքն մտանք չափի մեջ, մեկ անգամ էլ երանությանը զգացինք, թե ինչպես է այդ վիթխարի ալիքը տակով տալիս մեզ: Այդ պարի ընթացքում Հերմինեն մոռացավ իր սեծամտությունը, իր հեզնանքը, ստոնությունը, նա հասկացավ, որ ինքը այլև դրանց կարիքը չունի, որպեսզի ինձ սիրահարել տա իրեն: Ես արդեն պատակահամում էի նրան: Եվ նա հանձնվեց՝ պարով, հայացքով, համբույրներով, ժպիտներով: Այս անդահար գիշերվա բոլոր կանայք, բոլորը, որոնց հետ ես պարում էի, բոլորը, որոնց ես բորբոքել էի, բոլորը, ովքեր բորբոքել էին ինձ, բոլորը, որոնց տարվածում էի ես, բոլորը, որոնց ազահորեն սեղմվում էի ես, բոլորը, որոնց նայում էի սիրո կարոտով, միաձուլվեցին ու դարձան այն մեկը, որ ծաղկում էր իմ գրկում:

Երկար տևեց հարսանեկան այդ պարը: Երկու, երեք անգամ լոնց երաժշտությունը, փողհարները ցած էին կախում իրենց գործիքները, դաշնակահարը վեր էր կենում, առաջին ջութակահարը ուժասպառ տարուրերում էր գլուխը, և յուրաքանչյուր անգամ վերջին պարողների աղերսագին արբեցումներից նվագում էին մեկ անգամ էլ, նվագում էին արագ, ավելի կատաղի: Այնուհետև (մենք դեռ կանգնած էինք՝ իրար փաթաթված և վերջին անհոգ պարից հագիվ շնչելով) դաշնամուրի կափարիչը աղմուկով փակվեց, մեր ձեռքերը ցած կախվեցին այնպես, ինչպես փողերն ու ջութակները, և սրնգահարը, աչքով անելով, փակեց սրինգը տուփի մեջ, դռները բացվեցին, սառը օդը խուժեց ներս, երևացին սպասավորները՝ վերարկուներով, և բարձր ենթանց լույսը: Ուրվականային և անալի ինչ-որ բան կար համընդհանուր այս հեռացման մեջ, և պարողները, որ քիչ առաջ այրվում էին կրակված, փաթաթվեցին իրենց վերարկուներով և բարձրացրեցին օձիքները: Հերմինեն կանգնած էր գունատ, բայց ժպտում էր: Նա դանդաղ բարձ-

բացրեց ձեռքերը և սկսեց մագերը հարդարել, նրա քնատակը հագիվ նշմարելի փայլեց լույսի մեջ, անսահմանորեն բնքուշ մի սովեր այդտեղից անցավ դեպի փակ կուրծքը, և ինձ թվաց, որ այդ մեղմ, օրորվող սավերագիծը, ժպիտի նման, իր մեջ է ամփոփել նրա ողջ հրապույրը, նրա գեղեցիկ մարմնի բոլոր խաղերն ու հնարավորությունները:

Մենք կանգնել ու նայում էինք միմյանց, սրահում գտնվող վերջին մարդիկս, վերջիններս այդ տան մեջ: Լսեցի, թե ինչպես ներքևում՝ ինչ-որ տեղ, դուռ փակվեց, ջարդվեց բաժակ, խլացավ մի քրքիջ՝ խառնվելով գործի գցված ավտոմոբիլների չար, աճապարող աղմուկին: Ինչ-որ տեղ՝ անհասկանալի հեռավորության ու բարձրության վրա, լսեցի, թե ինչպես հնչեց մի քրքիջ, անսովոր հնչեղ և ուրախ, սակայն սարսափազրու և օտար քրքիջ, ասես՝ բյուրեղյա ու սառցե մի ծիծաղ, պայծառ և ճառագող, սակայն սառն ու անխնայ: Բայց որտեղից էր հնչում ինձ ծանոթ այդ զարմանալի ծիծաղը: Դա չկարողացա հասկանալ:

Երկար կանգնել ու նայում էինք իրար: Մի ակնթարթում ես արթնացա և զգաստացա, զգացի, թե ինչպես է թիկունքից վրաս ծանրանում անսահման հոգնությունը, զգացի, թե անհանդուրժելի ինչպես է ինձ կաշուն քրտինքից խոնավ ու սառը հագուստը, տեսա ճանճված ու քրտնքակողով թեզանիքներից դուրս գցված իմ կարմիր ու ջղաւ ձեռքերը: Բայց այդ բոլորն անմիջապես անհետացավ, Հերմինեի հայացքը ջնջեց այդ ամենը: Նրա հայացքի դեմ, որով թվաց՝ ինձ էր նայում իմ սեփական հոգին, փլուզվեց ողջ իրականությունը, այդ թվում և նրա հանդեպ իմ զգայական հրապուրանքի իրողությունը: Կախարդված նայում էինք մենք միմյանց, իմ խեղճ, փոքր հոգին նայում էր ինձ:

– Դու պատրաստ ես, – հարցրեց Հերմինեն, և նրա ժպիտը անհետացավ, ինչպես որ անհետացել էր նաև նրա կրծքի սավերը: Հեռվում և բարձրում, անծանոթ տարածություններում մարեց այդ օտար ծիծաղը:

Ես զլխով նշան արեցի: Օ, այո, ես պատրաստ էի:

Այժմ դռների մեջ երևաց Պարլոն՝ երաժիշտը, և լուսավորեց մեզ իր պայծառ աչքերով, որոնք, ըստ էության, կենդանու աչքեր էին, բայց կենդանու աչքերը միշտ լուրջ են, իսկ նրա աչքերը միշտ ծիծաղում էին, և հենց ծիծաղն էլ դրանք դարձնում էր մարդկային: Իր ամբողջ սրտագին մտերմությամբ նա ձեռ-

քով նշան արեց մեզ: Հագել էր անային գույնզգույն մետաքսե պիջակ, որի կարմիր դարձածալի վրա ամբողջովին տամկացած վերնաշապիկի օձիքը և տանջահար, գունատ դեմքը քվում էին շատ քառամած, բայց ճառագող, սև աչքերը քողարկում էին դա: Դրանք քողարկում էին նաև իրականությունը, նաև կախարդում էին դրանք:

Մենք հետևեցինք նրա նշանին, և դռների մոտ նա ցածրաձայն ասաց ինձ.

– Եղբայր Հարրի, քեզ հրավիրում են փոքրիկ ներկայացման: Մտաքը միայն խելագարների համար, արժեքը՝ բանականություն: Պատրաստ եք:

Ես կրկին գլխով արեցի:

Այ թե փառավոր տղա է: Քնքշորեն և հոգատարությամբ նա մտավ մեր թևը, Հերմիոնին՝ աջից, ինձ՝ ձախից, և սանդուղքներով մեզ տարավ վեր՝ մի փոքր, կլոր սենյակ, որ վերևից լուսավորված էր կապույտ լույսով ու գրեթե դատարկ էր, այնտեղ ոչինչ չկար, բացի փոքր, կլոր սեղանից և երեք բազկաթոռից, որոնց վրա և նստեցինք:

Որտե՞ղ էինք մենք: Քնա՞ծ էի ևս: Տա՞նն էի: Նստած էի մեքենայի մեջ և գնա՞նք էի: Ոչ, ես նստած էի կապույտ լուսավորված, կլոր մի սենյակում, նոսրացված օդում, չափազանց անոսր իրականության շերտի մեջ: Ինչո՞ւ էր Հերմիոնն այդքան գունատ: Ինչո՞ւ էր Պարլոն խոսում այդքան շատ: Գուցե այդ ե՞ս էի նրան ստիպում խոսել, այդ ե՞ս էի խոսում նրա բերանով: Եվ ինձ չէ՞ր նայում արդյոք նրա սև աչքերից հենց իմ հոգին՝ մոլորված, սոսկահար թռչունը, ճիշտ այնպես, ինչպես նայում էր Հերմիոնի գորշ աչքերից:

Բարեկամ Պարլոն մեզ էր նայում իր ողջ մտերմությամբ, որ բարի էր ու փոքր-ինչ հանդիսավոր, և խոսում էր, խոսում երկար ու շատ: Նա, որի կապակցված խոսքը ես երբեք չէի լսել, որին չէր հետաքրքրում ոչ մի բանավեճ ու եզրակացություն, որից ես չէի սպասում որևէ խեղճականություն, այժմ խոսում էր, խոսում իր բարի, ջերմ ձայնով, սառուն և առանց սխալների:

– Բարեկամներ, ես ձեզ հրավիրել եմ մի ներկայացման, որին Հարրին սպասում էր արդեն վաղուց, որի մասին վաղուց երազում էր նա: Փոքր-ինչ ուշ է հիմա, բոլորս էլ, հավանաբար, հոգնած ենք մի քիչ: Ուստի եկեք նախ հանգստանանք այստեղ և ամրապնդվենք:

Պատի բացվածքներից մեկից նա վերցրեց երեք բաժակ և փոքր, ծիծաղելի մի շիշ, վերցրեց փոքր, գույնզգույն փայտերից պատրաստված, տարաշխարհիկ մի տուփ, լիքը լցրեց բաժակները, տուփից հանեց երեք բարակ, երկար, դեղին սիգարներ, մետաքսյա պիջակի գրպանից հանեց վառիչը և վառեց մեր սիգարները: Մենք, ես ընկնելով մեր բազկաթոռներին, սկսեցինք դանդաղորեն ծխել մեր սիգարները, որոնք խնկի նման քանձր ծուխ էին արձակում, և մանր, հանդարտ կոմերով խմել թթվաքաղցր, զարմանալի անծանոթ ու օտարահամ հեղուկը, որն, արդարև, անսահման աշխուժացնող և երջանկացնող ներգործություն քողեց, մարդ, ասես, լցվում էր զագով ու կորցնում իր ծանրությունը: Այդպես նստած էինք, ծխում էինք հանդարտ, հանգստանում, խմում փոքր կոմերով և զգում էինք մեզ թեթև և ուրախ: Եվ Պարլոն իր ջերմ ձայնով ցածրաձայն ասաց.

– Ուրախ եմ, սիրելի Հարրի, որ կարող եմ այսօր մի փոքր հյուրասիրել Ձեզ: Դուք հաճախ էիք դժգոհում Ձեր կյանքից, Դուք ձգտում էիք հեռանալ այստեղից, այնպես չէ՞: Դուք երազում էիք այն մասին, որ թողնեք այս ժամանակը, այս աշխարհը, այս իրականությունը և մեկ այլ, Ձեզ համապատասխան իրականություն անցնել, առանց ժամանակի մի աշխարհ: Կատարեք դա, սիրելի բարեկամ, ես Ձեզ առաջարկում եմ դա անել: Դուք արդեն զխտեք, թե որտեղ է թաքնված այդ աշխարհը, այդ աշխարհը Ձեր իսկ սեփական հոգին է, որ Դուք որոնում եք: Միայն Ձեր սեփական ներաշխարհում է ապրում այն, մյուս իրականությունը, որը բաղձում էր Դուք: Ես Ձեզ կարող եմ տալ սոսկ այն, ինչ արդեն գոյություն ունի Ձեր մեջ: Ձեր առաջ կարող եմ բացել սոսկ այն պատկերասրահը, որը կա Ձեր հոգում: Ես չեմ կարող Ձեզ ավելին տալ, քան միայն առիթ, խթան, բանալի: Ես կօգնեմ Ձեզ՝ տեսանելի դարձնելու Ձեր սեփական հոգին, ահա և բոլորը:

Նա ձեռքը նորից տարավ իր գույնզգույն պիջակի գրպանը և հանեց մի փոքր հայելի:

– Տեսեք, մինչև այսօր Դուք ինքներդ Ձեզ տեսնում էիք այս տեսքով:

Նա հայելին պահեց իմ աչքերի դեմ (հիշեցի մի մանկական բանաստեղծություն՝ «Փոքրիկ հայելի, հայելի ձեռքի»)՝⁴² և ես, մի փոքր տարտամ ու մթամած, տեսա սարսափազդու, ներքուստ շարժուն, ներքուստ սաստիկ զրգոված ու խռովված մի

նկար՝ անձամբ ինձ, Հարրի Հալլերին, և այդ Հարրիի ներսում՝ Տափաստանի գայլին՝ վայրի, գեղեցիկ, սակայն մոլորված ու տազնապած նայող գայլին, որի աչքերում մեկ թախիծ, մեկ չարություն էր առկայծում, և գայլի այդ կերպարանքն անդադար շարժմամբ հոսում էր Հարրիի միջով, նման վտակի, որ այլ երանգ է հաղորդում գետին, և երկուսն էլ, տանջալիորեն կովերով իրար դեմ, խժռում են մեկմեկու՝ կերպավորվելու անխուսափելի տենչանքով լի: Տխուր, տխուր նայում էր ինձ հոսուն, կիսակերպարանք գայլը իր գեղեցիկ, վայրի աչքերով:

– Այդպիսին էիք Դուք ինքներդ տեսնում Ձեզ,– կրկնեց Պարլոն քնքշորեն և նորից հայելին դրեց գրպանը:

Ես երախտագիտությանը փակեցի աչքերս և խմեցի ըմպելիքից:

– Ահա և մենք հանգստացանք,– ասաց Պարլոն,– ամրացանք և մի քիչ շատախոսեցինք: Եթե այլևս հոգնած չեք զգում, Ձեզ հիմա կտանեն իմ գաղանի պատուհանի մոտ և ցույց կտան իմ փոքրիկ քատրոնը: Համաձա՞յն եք:

Մենք վեր կացանք: Ժպտալով՝ առջևից զնում էր Պարլոն, նա մի դուռ բացեց, մի կողմ քաշեց ինչ-որ վարագույր, և մենք հայտնվեցինք քատրոնի կողք, պայտանման միջանցքում, միջանցքի հենց մեջտեղում, և երկու կողմերից, անչափ շատ, անհաշվելիորեն շատ օբյակների դռների մոտով ձգվում էին անցումները:

– Սա մեր քատրոնն է,– բացասրեց Պարլոն,– զվարճալի քատրոն է, հույս ունեմ, որ այստեղ Ձեզ կհաջողվի ծիծաղել:

Այդ ասելով՝ նա բարձր ծիծաղեց, արտաբերեց միայն մի քանի հնչյուն, բայց դրանք շեշտակիորեն ծակեցին անցան իմ միջով, դա հենց այն հնչել, օտարոտի ծիծաղն էր, որն արդեն լսել էի:

– Իմ փոքրիկ քատրոնն ունի այնքան օբյակներ, որքան Դուք կցանկանաք՝ տասը, հարյուր կամ հազար, և յուրաքանչյուր դռնից այն կողմ Ձեզ սպասում է այն, ինչ հիմա փնտրում եք: Սա մի հոյակապ պատկերասրահ է, սիրելի բարեկամ, բայց Դուք չպետք է այն աչքի անցկացնեք այն հայացքով, ինչպիսին Դուք կաք: Դուք կաշկանդված ու կուրացած կլինեք նրանով, ինչը սովոր եք անվանել Ձեր անձնավորությունը: Անկասկած, արդեն հասկացել եք, որ ժամանակի հաղթահարումը, իրականությունից ազատվելը և ուրիշ էլ ինչ անուն տալու լինեք Ձեր տերությանը, այլ բան չեն նշանակում, քան Ձեր,

այսպես կոչված, անձնավորությունից ազատագրման ցանկություն: Դա բանա է, որում Դուք նստած եք: Եվ եթե Դուք քատրոն մտնեիք այնպիսին, ինչպիսին կաք, ամեն ինչ կոտենեիք Հարրիի աչքերով, Տափաստանի գայլի հնացած ակնոցով: Դուք հրավիրվել եք հենց նրա համար, որ ազատվեք այդ ակնոցից և այդ պատվարժան անձնավորությանը սիրով հանձնեք այստեղի հանդերձարան, որտեղից ցանկացած ժամանակ նա կարող է դրվել Ձեր տրամադրության տակ: Հրաշալի պարահանդեսը, որին Դուք մասնակցեցիք, Տափաստանի գայլի մասին քննախոսությունը, վերջապես, նաև փոքրաքանակ խթանիչը, որ քիչ առաջ ստացաք, հավանաբար նախապատրաստեցին Ձեզ բավականաչափ: Դուք, Հարրի, Ձեր պատվարժան անձը հանդերձարան հանձնելուց հետո տնօրինության տակ կունենաք քատրոնի ձախ կողմը, իսկ Հերմիոնն՝ աջ, հանդիպել դուք կարող եք ցանկացած ժամանակ, ներսում: Հերմիոն, խնդրեմ, կարճ ժամանակով անցիք վարագույրից այն կողմ, ես կուզենայի նախ՝ Հարրիին տանել:

Հերմիոնն անհետացավ աջ կողմում, անցնելով հսկայական հայելու միջով, որ ծածկում էր երկու պատերը հատակից մինչև առաստաղ:

– Այսպես, Հարրի, եկեք հիմա և պահպանեք լավ տրամադրությունը: Բարձրացնել Ձեր տրամադրությունը, սովորեցնել Ձեզ ծիծաղել՝ սա է այս ողջ ներկայացման նպատակը: Ես հուսով եմ, որ Դուք կրեքլացնեք իմ հոգսը: Դուք Ձեզ լա՞վ եք զգում: Այո՞: Չե՞ք վախենում: Ուրեմն՝ լավ է, շատ լավ: Այժմ, առանց վախի և սրտանց, հաճույքով Դուք կմտնեք մեր թվացյալ աշխարհը, ինչպես ընդունված է, փոքրիկ, թվացյալ ինքնասպանությամբ:

Նա գրպանից նորից հանեց ձեռքի հայելին և պահեց իմ դեմքին մոտ: Կրկին ինձ նայեց մոլորյալ, մշուշված, կովազան Տափաստանի գայլի կերպարանքով լվացված Հարրին, ինձ լավ ծանոթ և ճիշտն ասած՝ ոչ այնքան համակրելի մի պատկեր, որի ոչնչացումը ինձ համար մեծ հոգս չէր կարող լինել:

– Այլևս ավելորդ դարձած այս հայելային պատկերը Դուք այժմ կջնջեք, սիրելի բարեկամ, այն այժմ ոչ մի բանի պետք չէ: Բավական է, որ Դուք, երբ դա հնարմար կլինի Ձեր տրամադրությանը, նայեք նրան անկեղծ ծիծաղով: Այժմ Դուք գտնվում եք երզիծանքի դպրոցում, Դուք պետք է ծիծաղել սո-

վորեք: Իսկ յուրաքանչյուր բարձր երգիծանք սկսվում է նրանով, որ դադարում ես լրջորեն ընդունել սեփական անձող:

Ես սևեռումն նայեցի փոքրիկ հայելու մեջ՝ հայելի-փոքրիկ-ձեռքի-հայելիի, որում իր դիմացնցումներն էր անում Հարրի-գայր: Մի պահ իմ մեջ, հոգուս խորքում, մի բան ձգվեց՝ թույլ, բայց ցավազին, ինչպես հիշողությունը, ինչպես հայրենի տան կարոտ, ինչպես զոջում: Ապա թեթև ճնշվածությունը փոխվեց նոր զգացումով, նման նրան, որ մարդ զգում է, երբ կոկաինով սառեցված լնդից դուրս է քաշվում հիվանդ ատամը՝ խոր թեթևացման, նաև զարմանքի զգացում, որ բոլորովին էլ ցավոտ չէ: Եվ այդ զգացումին միախառնվում էր ինչ-որ բարձր զվարթություն և խիճող, որին դիմադրել ես չէի կարող, այնպես որ բռնվեցի փրկիչ ծիծաղով:

Հայելում փոքրիկ, աղոտ պատկերը ցնցվեց և անհետացավ, հայելու փոքր, կլոր մակերեսը մի պահ կարծես այրված լինեք, դարձել էր գորշ, անհարթ և անթափանց: Ծիծաղելով՝ Պարթուն մի կողմ նետեց ապակու այդ կտորը, գրորվելով հատակի վրա՝ այն կորավ անվերջանալի միջանցքների ինչ-որ անկյունում:

– Լավ ծիծաղեցիր, Հարրի, – կանչեց Պարթուն, – դու դեռ կսովորես ծիծաղել անմահների նման: Վերջապես՝ դու սպանեցիր Տափաստանի-գայրին: Դա չէր կարելի ածելով անել: Տես, որ նա մեռած մնա: Այժմ դու կարող ես թողնել հիմար իրականությունը: Առաջիկայում դրա համար մենք բրուդեր-շաֆթ կլանենք: Սիրելիս, դու երբեք ինձ այնքան դուր չես եկել, որքան այսօր: Եվ եթե քեզ համար դա հետո էլ չի կորցնելու իր արժեքը, մենք կարող ենք քեզ հետ միասին փիլիսոփայել, բանավիճել, խոսել երաժշտության, Մոցարտի, Գլյուկի, Պլատոնի, Գյոթեի մասին այնքան, որքան կամենում ես: Դու այժմ կհասկանաս, թե ինչու դա նախկինում չէր ստացվում: Հույս ունեմ, որ քո բախտը կրերի, և այսօր դու Տափաստանի գայրից ազատ կլինես: Քանզի քո ինքնասպանությունը, բնականաբար, բրորովին էլ վերջնականը չէ, այժմ մենք զանվում ենք մոզական քառորդում, այստեղ միայն նկարներ են, իրականություն չկա: Քեզ համար ընտրիր զեղեցիկ և զվարթ նկարներ և ապացուցիր, որ դու իրականում սիրահարված չես քո կասկածելի անձին: Բայց եթե դու, այնուամենայնիվ, ուզում ես վերադարձնել այն, ապա բավական է՝ նայես հայելուն, որ հիմա

ցույց կաան քեզ: Դու, ախր, գիտես հին խնաստությունը՝ մի փոքր ձեռքի հայելին ավելի լավ է, քան երկուսը՝ պատին: Հա-հա: – Նա նորից ծիծաղեց այնպես զեղեցիկ ու սարսափազդու: – Այդպես, իսկ այժմ մնում է լույ մի աննշան, ուրախ արարողություն կատարել: Դու այժմ դեռ նետեցիր քո անհատականության ակնոցը, հապա մի վերջին անգամ էլ նայիր իրական հայելու մեջ: Դա քեզ ուրախություն կստանձառի:

Ծիծաղով և զվարթ շոյանքներով նա ինձ պատեցրեց այնպես, որ հայտնվեցի պատի վիթխարի հայելու առաջ: Այնտեղ ես տեսնում էի ինձ:

Ինչ-որ կարճ մի ակնթարթի ընթացքում ես տեսա ծանոթ Հարրիին, սակայն անսովոր բարձր արամադրության մեջ՝ պայծառ, ժպտացող դեմքով: Բայց հազիվ էի նրան ճանաչել, երբ նա քայքայվեց, նրանից առանձնացավ երկրորդ կերպարանքը, երրորդը, տասներորդը, քսաներորդը, և այդ վիթխարի հայելին ամբողջությամբ լցվեց միայն Հարրիով կամ Հարրիի կերպարանքներով, անթիվ Հարրիներ, որոնցից յուրաքանչյուրին ես տեսնում և ճանաչում էի միայն վայրկյանի մի կարճ՝ կայծակնային ակնթարթում: Այդ բազմաթիվ Հարրիներից մի քանիսն ունեին այն հասակը, ինչ ես, մի քանիսն ավելի ծեր էին, կային զառամյալ Հարրիներ, մյուսները բոլորովին ջահել էին, պատանիներ, երեխաներ, դպրոցահասակներ, մանչեր, մանկիկներ: Հիսունամյա և քսանամյա Հարրիները վազում էին ու բռնկոտամ իրար հետ, երեսնամյաները և հինգ տարեկանները՝ լուրջ և ուրախ, պատկառելի և ծիծաղաշարժ, լավ հագնված և քրքրված զգեստներով, նաև ամբողջովին մերկ, անմազ և երկար խոպոպներով, և դրանք բոլորը ես էի, և յուրաքանչյուրին ես տեսնում ու ճանաչում էի վայրկյանի արագությամբ, ապա կերպարանքը անհետանում էր, նրանք փախչում, հեռանում էին տարբեր կողմեր՝ աջ, ձախ, դեպի հայելու խորքը, հայելուց դուրս: Մեկը, մի բարետես, ջահել փոքրիկ, ժպտալով թռավ Պարթույի կրծքին, զրկեց նրան և փախավ նրա հետ: Իսկ մեկ ուրիշը, որ առանձնապես դուր էր գնալիս ինձ, տասնվեց կամ տասնյոթ տարեկան մի հրաշալի, հրապուրիչ պատանի, կայծակի պես ներս ընկավ միջանցք, ազահուքյամբ կարդաց բոլոր դռների վրայի մակագրությունները, ես վազ ավեցի նրա հետևից, դռներից մեկի առջև նա կանգ առավ, աչքովս ընկավ այնտեղ գրվածը:

Քոյր աղջիկները բռն են
Վճարիր մեկ մարկ

Գրավիչ տղան վեր ցատկեց, առաջ մղելով գլուխը՝ դրան բաց ճեղքից մտավ ներս ու անհետացավ դրան հետևում:

Պարոն նույնպես անհետացավ, հայելին, թվաց, նույնպես անհետացավ, և նրա բոլոր անհամար Հարրի-կերպարանքները: Ես զգացի, որ այժմ թողնված եմ ինքս իմ ու թատրոնի կամքին, հետաքրքրությամբ անցա դռնից դուռ, և յուրաքանչյուր դրան վրա կարդում էի որևէ մի մակագրություն, հրապուրանք, խոստում:

Առաջարկում ենք գվարճալի որս
Խոշոր որս՝ ավտոմոբիլ

մակագրությունը ինձ գրավեց, ես բացեցի նեղ դուռը և ներս մտա:

Ինձ անմիջապես փախցրեց-տարավ ինչ-որ աղմկոտ ու տագնապալի աշխարհ: Փողոցներով սլանում էին ավտոմոբիլներ, մասամբ՝ զրահապատ, և որս էին անում հետիոտների վրա, անցնում էին՝ ճխլելով նրանց և ծեփելով տների պատերին: Ես անմիջապես գլխի ընկա. դա մարդկանց և մեքենաների միջև կռիվն էր⁴³, որ նախապատրաստվում էր վաղուց, վաղուց էր սպասվում, վաղուց էր սարսափ հարուցում և, ահա, վերջապես բռնկվել էր: Ամենուրեք թափված էին դիակներ և բզկտված մարմինների կտորներ, ամենուրեք երևում էին նաև ջախջախված, ծոռոված, կիսայրված ավտոմոբիլներ, այդ խելագար խառնաշփոթի վրա պտտվում էին ինքնաթիռները, նրանց վրա նույնպես բազմաթիվ տանիքներից ու պատուհաններից կրակում էին հրացաններով և զնդացիորներով: Վայրենի, ճոխ ու գրգռիչ պլակատները բոլոր պատերից վիթխարի տառերով, որ վառվում էին, ինչպես ջահեր, ազգից պահանջում էին՝ վերջնականապես անցնել մեքենաների դեմ պայքարող մարդկանց կողմը, վերջնականապես ոչնչացնել ճարպոտ, լավ հագնված, շպարված հարուստներին, ովքեր մեքենաների օգնությամբ ճարպ են քամում մյուսներից, և նրանց հետ միասին նաև նրանց մեծ, փռշտացող, չարությամբ հռնդացող, դիվային ձայներ արձակող ավտոմեքենաները, վերջնականա-

պես կրակի մասնել գործարանները և փոքր-ինչ մաքրել ու ազատել բռնաբարված երկիրը, որպեսզի խոտ աճի նորից, որպեսզի ցեմենտի փռշու մեջ թաղված աշխարհը կրկին վերածվի անտառի, մարգագետնի, դաշտի, գետի և ճահճի: Իրանց հակառակ, մյուս պլակատները՝ հրաշալիորեն պատրաստված, ճոխ ոճավորումներով, ավելի նուրբ, պակաս մանկամիտ երանգներով, արտակարգ խելացի և հմուտ ձևակերպումներով բոլոր ունեւորներին և շրջահայացներին հուզված նախազգուշացնում էին սպառնացող անարխիսիայի քառսից, իսկապես սրտառույշ երանգներով պատկերում կարգուկանոնի, աշխատանքի, սեփականության, մշակույթի, իրավունքի երջանկությունը և փառաբանում էին մեքենաներն իբրև մարդկանց ամենաբարձր ու վերջին հայտնագործություններ, որոնց օգնությամբ նրանք կարող են դառնալ աստվածներ: Մտահոգ և զարմանքով կարդում էի այդ պլակատները, թե կարմիրները և թե կանաչները, ինձ վրա սրտառույշ տպավորություն էին բողոքում նրանց կրակոտ պերճախոսությունը, նրանց երկաթյա տրամաբանությունը, նրանք իրավացի էին, և խորապես համոզված կարդացածիս մեջ՝ կանգնում էի մեկ այս, մեկ մյուս պլակատի առաջ, չնայած զգում էի, որ ինձ խանգարում է շուրջբոլորս ընթացող բավական ուժեղ, փոխադարձ հրածությունը: Ինչ արած, հիմնականը պարզ էր. պատերազմ էր՝ թե՛, փառավոր և չափազանց համակրելի պատերազմ, որտեղ խոսքը ոչ կայսեր, ոչ հանրապետության, ոչ երկրի սահմանների, ոչ դրոշմների և կուսակցությունների ու դրանց նման դեկորատիվ ու քատերական բաների մասին է, դրանք, ըստ էության, դատարկ բաներ են, այլ պատերազմի, որտեղ յուրաքանչյուրն, ում չէր բավարարում օղը և ում կյանքը զզվեցրել է, արտահայտում էր իր անբավականությունը կտրուկ միջոցներով և ձգտում էր հասնել մետաղական քաղաքակրթության աշխարհի համընդհանուր ոչնչացման: Ես տեսնում էի, թե ինչպես է բոլորի աչքերում հնչել ու անբաքույց ծիծաղում սպանության ու փլուզումի հրճվանքը, և իմ ներսում փարթամորեն ու ատառ ծաղկում էին այդ վայրի, կարմիր ծաղիկները, և նրանց ծիծաղում պակաս չէր և աղմուկը: Ես ուրախությամբ արվեցի պայքարին:

Բայց ամենից հրաշալին այն էր, որ հանկարծ իմ կողքին հայտնվեց դպրոցական ընկերս՝ Գուտտալը, որի մասին արդեն տասնյակ տարիներ ոչինչ չգիտեի, իմ վաղ մանկության

ամենաանասանձ, ամենաուժեղ և կենսախիճը ընկերը: Իմ սիրտը ուրախացավ, երբ առաջ տեսա նրա բաց կապույտ աչքերը: Նա նշան արեց ինձ, և ես ուրախությամբ անմիջապես հետևեցի նրան:

– Աստված իմ, Գուստավ, – կանչեցի ես երջանիկ, – քեզ նորից եմ տեսնում: Ի՞նչ ես անում այստեղ:

– Նա վրդովված ծիծաղեց, ինչպես մանկության օրերին:

– Անխելը, մի՞թե պետք է այդպես արագ-արագ հարձակվել հարցերով ու շատախոսությամբ: Աստվածաբանության պրոֆեսոր եմ ես հիմա, ահա և դա իմացար, բայց այժմ աստվածաբանության ժամանակ չէ, ծերուկ, այլ պատերազմի, բարեբախտաբար: Գնացի՛նք:

Փորրաչափ մեքենայից, որ փնչալով գալիս էր ուղիղ դեպի մեզ, նա կրակեց, վայր գցեց վարորդին, կապիկի պես ճարպկորեն թռավ մեքենայի մեջ, կանգնեցրեց այն, նստեցրեց ինձ, ապա խելագար արագությամբ, հրացանների կրակոցների ու շրջված ավտոմեքենաների միջով սլացանք առաջ՝ հեռանալով քաղաքից:

– Գու գործարանատերերի՞ կողմն ես, – հարցրեցի ընկերոջս:

– Ի՞նչ ես ասում, դա ճաշակի խնդիր է, դուրս գանք քաղաքից՝ կխոսենք այդ մասին: Բայց՝ ոչ, սպասիր, ավելի շատ կողմ եմ նրան, որ մենք ընտրենք հակառակ կուսակցությունը, թեև, ըստ էության, դա բոլորովին կարևոր չէ: Ես աստվածաբան եմ, և իմ նախնի Լյութերը իր ժամանակին օգնում էր իշխաններին և հարուստներին՝ ընդդեմ գյուղացիների, իսկ մենք հիմա այդ բանը մի փոքր կուղղենք: Գեն գցելու մեքենա է, հավանաբար մի քանի կիլոմետրից կանգ առնի:

Արագ, ինչպես երկնային քամի, մեր ավտոմեքենան աղմուկով դուրս եկավ քաղաքից դեպի կանաչ, հանգիստ մարզագետախիճները, մեծ հարթավայրով անցանք շատ մղոններ, ապա դանդաղորեն բարձրացանք և խորացանք բարձր լեռների մեջ: Այստեղ կանգ առանք հարթ, սայթաքուն ճանապարհի վրա, որը, խիզախ որդաններով անցնցելով զարիթափ ժայռի և ցածրիկ եզրապատի արանքով, բարձրանում էր վեր, վեր՝ դեպի լեռնագոգին շողացող կապույտ լիճը:

– Գեղեցիկ վայր է, – ասացի ես:

– Շատ գեղեցիկ է: Մենք իրավունք ունենք այն Սոնիների ճանապարհ կոչել, այստեղ քիչ սոնիներ չեն կտարվելու, Հարրի աղա, կտեսնես:

Ճանապարհին կանգնած էր մի մեծ, խալական սոճի, և սոճու վրա՝ վերևում, տեսանք տախտակներից պատրաստված հյուղակ՝ դիտակետի պես մի բան: Բարձր ծիծաղելով՝ Գուստավը խորամանկորեն ինձ նշան արեց իր կապույտ աչքերով, մենք մեքենայից արագորեն իջանք, ծառաբնով բարձրացանք վեր, և ծանր շնչելով՝ քաքավեցինք հյուղակում, որ մեզ շատ դուր եկավ: Այդտեղ գտանք հրացաններ, ատրճանակներ, փամփուշտներով լի արկղեր: Եվ հազիվ էինք հասցրել փոքրինչ շունչ առնել և հարմարվել մեր դարանատեղում, երբ մտաիկ ուրբանից լավեց կտրուկ և տիրական ազդանշանը մեծ, շքեղ մի ավտոմեքենայի, որը մեծ արագությամբ, ռոնալով առաջ էր ընթանում լեռնային հարթ ճանապարհով: Հրացանները արդեն մեր ձեռքին էին: Անչափ հետաքրքիր էր:

– Նշան բռնենք վարորդին, – արագ հրաման ավեց Գուստավը. ծանր մեքենան ներքևում անցնում էր հենց մեր կողքից:

Ես փութով նշան բռնեցի և սեղմեցի ձգանը՝ ուղիղ վարորդի կապույտ գլխարկին: Մարդը տապալվեց, մեքենան շարունակեց առաջ ընթանալ, խիվեց ժայռին, ընկրկեց ետ, ինչպես մի մեծ, գեր իշամեղու՝ ծանրորեն ու չորությամբ խիվեց ցածրիկ եզրապատին ու շրջվելով՝ կարճ, անձայն ճեխնչով գլորվեց անդունդը:

– Պատրաստ է, – ծիծաղեց Գուստավը, – հաջորդն իմն է:

Եվ սլանալով՝ մոտենում էր հաջորդ մեքենան, նրա մեջ երևում էին երեք թե չորս ուղևորների կերպարանքներ, կանացի մի գլխի մոտ, անշարժ և հորիզոնական դիրքով, փողփողում էր շարժի ծայրը, բաց կապույտ շարժի, ճիշտն ասած՝ ես խղճացի նրան, ինչ իմանաս, գուցե նրա տակ ծիծաղում է կանացի շատ գեղեցիկ մի դեմք: Աստված իմ, եթե մենք ավազակներ ենք խաղում, ապա արդարացի և գեղեցիկ կլինեք, գուցե, հետևել մեր մեծ նախնիների օրինակին և սպանության մեր փառավոր զվարճանքը չտարածել գեղանի կանանց վրա: Բայց Գուստավն արդեն կրակել էր: Վարորդը ցնցվեց, փլվեց ինքն իր վրա, ավտոմեքենան բարձրացավ օդ, խիվեց ուղղահայաց ժայռին, թրխկալով ետ ընկավ ճանապարհի վրա՝ անիվները վեր: Մենք սպասում էինք, ոչինչ չէր շարժվում, մար-

դիկ անձայն պատկած էին մեքենայի տակ՝ ինչպես թակարդն ընկածներ: Մեքենան դեռ աղմկում էր, հռնդում, և օդի մեջ ծիծաղելիորեն պտտեցնում անիվները, բայց հանկարծ տարսափելի դողոյուն արձակեց և բռնկվեց պայծառ բոցով:

– «Ճորդ» էր, – ասաց Գուստավը, – պետք է ցած իջնել և նորից կարգի բերել ճանապարհը:

Մենք իջանք ցած և դիտեցինք այրվող մեքենան: Այն այրվեց շատ արագ, այդ ընթացքում ջահել ծառերից լինգեր սարքեցինք, մեքենան հրեցինք մի կողմ ու եզրապատից շուռ տվեցինք ցած, որից հետո ներքևում՝ թփերի մեջ, ինչ-որ բան էր ճարճատում: Մեքենան շրջելիս՝ դիակներից երկուսը դուրս բնկան և հիմա ընկած էին ճանապարհին՝ հանդերձները կիսով չափ այրված: Նրանցից մեկի վրա բավականին լավ պահպանվել էր պիջակը, ես նայեցի նրա գրպանները՝ հույս ունենալով իմանալ, թե ով է նա: Գուստավը գրամապանակ, նրա մեջ՝ այցետոմսեր: Վերցրեցի դրանցից մեկը և կարդացի հետևյալ բառերը. «Tat twam asi»*:

– Շատ սրամիտ է, – ասաց Գուստավը: – Բայց իրականում այնքան էլ կարևոր չէ, թե ինչ անուններ ունեն այս մարդիկ, որոնց հենց նոր սպանեցինք: Նրանք էլ մեզ նման խեղճուկրակներ են, անուններից քիչ բան է կախված: Այս աշխարհը արժանի է կործանման, և մենք էլ՝ նրա հետ: Տասը բուպեով սառը ցնցուղը ամենաանցավ փրկությունը կլիներ դրա համար:

Մենք սպանվածներին ավտոմեքենաների հետևից նետեցինք ցած: Ազդանշան տալով՝ մի նոր ավտոմեքենա էր մոտենում: Դրա վրա կրակեցինք ուղղակի ճանապարհից՝ միասին: Այն, հարթածի պես օրորվելով, շարունակեց մի փոքր առաջ սլանալ, ապա շրջվեց և մնաց այդպես շնչակտուր ընկած, մի ուղևոր հանգիստ նստած էր ներսում, մի ջահել, գեղեցկատես աղջիկ, բոլորովին անվնաս, բայց գունատ և խիստ դողահար՝ դուրս եկավ մեքենայից: Բարեկամաբար ողջունեցինք նրան և առաջարկեցինք մեր ծառայությունները: Նա անչափ տարսափած էր, չէր կարողանում խոսել և մի պահ մեզ էր նայում ցնորվածի նման:

– Լավ, մենք նախ զբաղվենք ծերուկով, – ասաց Գուստավը և շրջվեց դեպի ուղևորը, որը շարունակում էր նստած մնալ մեքենայում՝ բռնած սպանված վարորդի նստատեղից: Դա մի

* «Tat twam asi» – այդ դու ես (սանսկրիտ):

պարոն էր՝ կարճ, գորշ մազերով, նա չէր փակել իր խելացի, բաց գորշավուն աչքերը, բայց, ինչպես երևում է, խիստ վնասվել էր, ամեն դեպքում՝ նրա բերանից արյուն էր հոսում, իսկ պարանոցը ինչ-որ տազնապալիորեն թեք էր պահում և անշարժ:

– Թույլ տվեք, հարգարժան պարոն, իմ անունն է Գուստավ: Մենք թույլ տվեցինք մեզ սպանել Ձեր վարորդին: Կարո՞ղ ենք իմանալ, թե ում հետ պատիվ ունենք:

Շերունու մանր, գորշ աչքերը նայում էին սառն ու տխուր:

– Ես ավագ դատախազ Լոնդինգն եմ, – ասաց նա դանդաղ: – Դուք ոչ միայն սպանեցիք իմ խեղճ վարորդին, այլև ինձ, ես զգում եմ, որ իմ վերջը մոտ է: Բայց ինչու կրակեցիք մեզ վրա:

– Դուք շատ արագ էիք գնում:

– Մենք գնում էինք չափավոր արագությամբ:

– Այն, ինչ երեկ չափավոր էր, այսօր այլևս չափավոր չէ, պարոն ավագ դատախազ: Այսօր մենք այն կարծիքին ենք, որ ցանկացած արագությունը, որով կարող է ընթանալ ավտոմեքենան, չափազանց մեծ է: Մենք այսօր ոչնչացնում ենք ավտոմեքենաները, բոլորը և մյուս մեքենաները նույնպես:

– Ձեր հրացանները նույնպե՞ս:

– Դրանց հերթը նույնպես կգա, երբ դրանց համար ժամանակ ունենանք: Հավանաբար, վաղը կամ մյուս օրը մենք բոլորով մեռնելու ենք: Չե՞ որ Դուք գիտեք, որ մեր աշխարհամասը սարսափելիորեն բազմամարդ է դարձել: Այո, իսկ այսպես ավելի ազատ կլինի շնչելը:

– Ուրեմն, Դուք կրակում եք բոլորի՞ վրա, առանց ընտրության:

– Իհարկե: Ոմանց համար կարելի է, անկասկած, ավստասալ: Օրինակ՝ այս ջահել, գեղեցիկ կնոջ՝ նա հավանաբար Ձեր դուստրն է:

– Ոչ, նա իմ մեքենագրուհին է:

– Ավելի լավ: Դե, հիմա դուրս եկեք, խնդրեմ, կամ թույլ տվեք Ձեզ դուրս բերել ավտոմեքենայից, քանի որ այն ոչնչացվելու է:

– Նախընտրում եմ ոչնչացվել ավտոմեքենայի հետ միասին:

– Ինչպես կկամենաք: Թույլ տվեք ևս մեկ հարց: Դուք դատախազ եք: Ինձ համար միշտ անհասկանալի էր, թե ինչպես

կարող է մարդ դատախազ լինել: Դուք սպրում եք այն բանի հաշվին, որ այլ մարդկանց, մեծ մասամբ խեղճ ողորմելիների, մեղադրում եք և դատապարտում պատժի: Այդպես չէ՞:

– Այդպես է: Ես կատարում եմ իմ պարտականությունը: Դա իմ գործն է: Ինչպես որ դահճի պարտականությունն է՝ մահապատժի ենթարկել իմ կողմից դատապարտվածներին: Դուք ինքնեք էլ Չեզ վրա վերցրել եք մնան պարտականություն: Չէ՞ որ Դուք նույնպես սպանում եք:

– Ճիշտ է, միայն թե մենք չենք սպանում պարտականությունից ելնելով, այլ հաճույքից կամ ավելի ճիշտ՝ անբավականությունից, այն բանից, որ հուսահատվել ենք աշխարհից: Այդ պատճառով էլ սպանությունը մեզ որոշակիորեն զվարճացնում է: Սպանությունը Չեզ չի՞ զվարճացնում:

– Դուք ինձ ձանձրացնում եք: Բարի եղեք՝ վերջացնել Ձեր գործերը: Եթե պարտքի զգացումը Չեզ անձանոթ է...

Նա լռեց և ծռեց շրթունքները, ասես՝ ուզում էր բրել: Բայց շատ քիչ արյուն դուրս եկավ, որ մնաց շրթունքներին կպած:

– Սպասեք, – ասաց Գուստավը քաղաքավարի: – Անշուշտ, պարտքի զգացում ես չունեմ, այլևս չունեմ: Նախկինում, պարտականության բերումով, ես շատ էի առնչվում այդ հասկացության հետ, ես աստվածաբանության պրոֆեսոր էի: Բացի դրանից, ես զինվոր էի և մասնակցել եմ պատերազմին: Այն, ինչ թվում էր պարտականություն, և ինչ կարգադրում էին ավագներն ու ղեկավարները, ոչ մի լավ բան չեմ ներկայացնում իրենից, ես նախընտրում էի հակառակն անել: Բայց եթե ես չունեմ պարտքի զգացում, ապա ունեմ հասկացողություն մեղքի, դրանք, հավանաբար, միևնույն բաներն են: Քանի որ ինձ մայր է ծնել, ուրեմն ես մեղավոր եմ, դատապարտված եմ սպրելու, պարտավոր եմ որևէ պետության հպատակ լինել, զինվոր լինել, սպանել, վճարել տուրքերս՝ ի նպաստ ռազմական մրցավազքի: Եվ հիմա, այս պահին կյանքի մեղքը վերստին, ինչպես պատերազմի ժամանակ, ստիպում է սպանել: Բայց այս անգամ ես սպանում եմ առանց զգվանքի, ես հաշտվել եմ իմ մեղքի հետ, ես ոչինչ չունեմ այն բանի դեմ, որպեսզի այս հիմար, խցանափակ աշխարհը փլուզվի, ես ուրախ կլինեմ, և թե կարողանամ օգնել, և ուրախությամբ ինքս էլ կմեռնեմ:

Դատախազը չափից դուրս լարված էր, որպեսզի կարողանար արյունոտված շրթունքներով ժպտալ: Դա նրան չէր հա-

ջողվում ինչպես հարկն է, բայց նրա բարի մղումը հասկանալի էր:

– Լավ է, – ասաց նա: – Ուրեմն՝ մենք գործընկերներ ենք: Իսկ հիմա, պարտն գործընկեր, խնդրում եմ կատարեք Ձեր պարտքը:

Մինչ այս, մինչ այն՝ գեղեցկատես աղջիկը ուշաքափվել, ընկել էր ճամփեզրին:

Այդ պահին նորից հնչեց ավտոմեքենայի հռնդոց, որ մտնեցնում էր մեծ արագությամբ: Մենք աղջկան մի կողմ տարանք, սեղմվեցինք ժայռին և թույլ տվեցինք, որ մոտեցող ավտոմեքենան խփվի մյուսին: Սա կտրուկ արգելակեց ընթացքը, ծառս եղավ, ոչ մի վնասվածք չտուճանալով՝ մնաց տեղում կանգնած: Մենք արագորեն մեր ձեռքն առանք հրացանները և նշան բռնեցինք նորեկներին:

– Դուրս եկեք, – հրաման տվեց Գուստավը: – Չեղքներդ վեր: Երեք տղամարդ էին, որ դուրս եկան ավտոմեքենայից և հնազանդ վեր պարզեցին ձեռքերը:

– Ձեր մեջ բժիշկ կա՞, – հարցրեց Գուստավը:

Նրանք բացասաբար շարժեցին գլուխները:

– Այդ դեպքում՝ բարի եղեք, դուրս բերեք ավտոմեքենայի մեջ մնացած այս մարդուն, նա ծանր վիրավոր է: Նրան Ձեր մեքենայով տարեք մոտակա քաղաքը: Առաջ, վերցրեցինք:

Շուտով ծերունուն տեղավորեցին մյուս ավտոմեքենայի մեջ, Գուստավը հրաման տվեց, և բոլորը մեկնեցին:

Իսկ այդ ընթացքում մեր մեքենագրուհին նորից ուշքի էր եկել և հետևում էր իրրադարձություններին: Ինձ համար հաճելի էր, որ մենք այդպիսի գեղեցիկ ավար ունեցանք:

– Օրիորդ, – ասաց Գուստավը, – Դուք կորցրեցիք Ձեր գործատուին: Հույս ունեմ, որ այդ ծերուկը ուրիշ ոչնչով Չեզ մոտիկ չէր: Չեզ վերցնում եմ ես, մեզ լավ ընկեր եղեք: Այսպես, իսկ հիմա շտապենք: Շուտով այստեղ մնալը տհաճ կլինի: Դուք ծառ բարձրանալ կարո՞ղ եք: Այո՞: Ուրեմն, բարձրացեք մեզ հետ, մենք Չեզ կօգնենք:

Բոլորս էլ՝ երեքով, աշխատելով որքան հնարավոր է՝ արագ, բարձրացանք ծառը, որտեղ մեր հյուղակն էր: Օրիորդը վերևում իրեն վատ զգաց, բայց մի քիչ կոնյակ խմելով՝ այնքան բարմացավ, որ գնահատեց դեպի լեռները և լիճը բացվող փառավոր բնապատկերը, ապա հայտնեց, որ իր անունն է Դորա:

Գրանից անմիջապես հետո ներքևում նորից ավտոմեքենա երևաց, որը, կանգ չառնելով, զգուշությամբ շրջանցեց տապալվածը և կտրուկ արագացրեց ընթացքը:

– Դասալիք,– ծիծաղեց Գուստավը և զնդակահար արեց վարորդին: Ավտոմեքենան, փոքր-ինչ պար գալով, մի ուսայուն կատարեց դեպի ցածրիկ եզրապատը, խփեց՝ փլցրեց այն և թեթուքյամբ կախվեց անդունդի վրա:

– Դորա,– ասացի,– Դուք կարո՞ղ եք հրացան գործածել:

Դորան այն անել չէր կարող, բայց մեզանից սովորեց, թե ինչպես են հրացան լցնում: Սկզբում անպատրաստ էր և մատն արյունոտելու աստիճան ճզմեց, լաց եղավ և պահանջեց անգլիական սպեղանի: Բայց Գուստավը նրանց բացատրեց, որ պատերազմ է, և նա պետք է ցույց տա, որ ինքը հրաշալի, քաջ աղջիկ է: Հետո ամեն ինչ ստացվեց, ինչպես հարկն է:

– Բայց ի՞նչ է լինելու մեզ հետ,– հարցրեց նա հետո:

– Ես չգիտեմ,– ասաց Գուստավը:– Իմ բարեկամ Հարրին շատ է սիրում գեղեցիկ կանանց, նա Չեր ընկերն է լինելու:

– Բայց նրանք կզան ոստիկաններով ու զինվորներով և կսպանեն մեզ:

– Ոստիկաններ և դրանց նմաններ այլևս գոյություն չունեն: Մենք պետք է ընտրություն կատարենք, Դորա: Կամ հանգիստ մնում ենք այստեղ՝ վերևում, և զնդակոծում ենք անցնող բոլոր ավտոմեքենաները: Կամ էլ ինքներս վերցնում ենք մի ավտոմեքենա, մեկնում ենք այստեղից և թույլ տալիս, որ ուրիշները զնդակոծեն մեզ: Միևնույն է, թե որ կուսակցության հետ եք լինելու: Ես այստեղ մնալու կողմնակից եմ:

Ներքևում նորից ավտոմեքենա երևաց, մեզ հասավ նրա լիարոր ազդանշանը: Շուտով նրա վերջն էլ տվեցինք, և նա շրջվեց, մնաց անիվները վեր տնկած:

– Ծիծաղելի է,– ասացի ես,– որ կրակելը կարող է այդքան բավականություն պատճառել: Բայց չէ՞ որ նախկինում ես պատերազմի ղեմ էի:

Գուստավը ժպտաց:

– Այո, հենց այդ է, որ աշխարհում չափից դուրս շատ է մարդկանց թիվը: Նախկինում դա այնքան էլ նկատելի չէր: Բայց այսօր, երբ յուրաքանչյուրը ցանկանում է ոչ միայն օդ շնչել, այլև ավտոմոբիլ ունենալ, այդ բանը նկատվում է: Բնականաբար, այն, ինչ մենք անում ենք հիմա, անբանական է, ե-

քելխայություն, ինչպես որ պատերազմն է մեծ երկխայություն: Ավելի ուշ, ինչ-որ ժամանակ մարդկությունը կտոճորի իր բազմացումը՝ բանական միջոցներով սահմանափակել: Առայժմ մենք անտանելի այս իրավիճակի հանդեպ մեր վերաբերմունքը դրսևորում ենք բավական անբանական ձևով, բայց, ըստ էության, անում ենք այն, ինչ անհրաժեշտ է՝ մենք քանակություն ենք կրճատում:

– Այո,– ասացի ես,– ինչ մենք անում ենք, հավանաբար խելագարություն է, և, այդուամենայնիվ, գուցե թե լավ է ու անհրաժեշտ: Լավ չէ, երբ մարդկությունը գերլարում է բանականությունը և փորձում բանականության օգնությամբ կարգի բերել բաներ, որոնք մատչելի չեն բանականությանը: Այդ դեպքում ծնվում են այնպիսի իդեալներ, ինչպիսիք են ամերիկացիների կամ բոլշևիկների իդեալները, երկուսն էլ չափազանց բանական են, բայց, այդուհանդերձ, դրանք սարսափելիորեն բռնաբարում են ու կողոպտում են կյանքը, քանի որ պարզունակորեն շատ են հասարակացնում այն: Մարդու կերպարը, երբևէ եղած բարձր իդեալը, սպառնում է դառնալ կաղապարված պատճեն: Մենք՝ խելագարներս, նորից ենք ազնվացնելու մարդկությանը:

Ծիծաղելով՝ Գուստավը պատասխան տվեց.

– Ծերուկ, դու խոսում ես հրաշալիորեն խելացի, իմացության այդ աղբյուրին ականջ դնելը և՛ տրախալի է, և՛ օգտակար: Եվ, հավանաբար, դու ինչ-որ տեղ իրավացի ես: Բայց բարի եղիր հիմա և նորից լցրու քո հրացանը, դու փոքր-ինչ երագներին մեջ ընկար: Ամեն ակնթարթի կարող եմ այժմաներ երևալ ու անցնել, նրանց մենք չենք կարող փիլիսոփայելով սպանել, փողի մեջ զնդակ է պետք ունենալ:

Մի ավտոմեքենա երևաց ու անմիջապես շունչը փչեց, ճանապարհն այժմ փակված էր: Ողջ մնացած մեկը, գեր, շիկագլուխ մի մարդ, ավտոմեքենայի կողքին կանգնելով, սկսեց կատաղի շարժումներ անել, նայում էր վեր ու վար և հայտնագործելով մեր թաքստոցը՝ մոնրաչով մոտ վազեց, ատրճանակից մի բանի անգամ կրակեց վեր՝ մեզ վրա:

– Հեռացեք, թե չէ հենց հիմա կկրակեմ,– գոռաց Գուստավը:

Մարդը նշան բռնեց նրան և մի անգամ էլ կրակեց: Այդ ժամանակ մենք տապալեցինք նրան երկու կրակոցով:

Երկու ավտոմեքենա էլ եկան, որոնք խփվեցին մեր կողմից: Հեռու ճանապարհը խաղաղվեց ու դատարկվեց, երևում է՝ նրա վտանգավորության մասին տարածվել էր տեղեկություն: Մենք ժամանակ ունեինք դիտելու գեղեցիկ տեսարանը: Լճից այն կողմ՝ հովտում, ընկած էր մի փոքրիկ քաղաք, այնտեղից ծուխ էր բարձրանում, և շուտով տեսանք, թե ինչպես է կրակը մի կողմից մյուսն անցնում: Լսվում էին նաև կրակոցներ: Դորան մի փոքր լաց եղավ, ես շոյեցի նրա քաց այտերը:

– Ուրեմն՝ մենք բոլորս էլ պետք է մեռնե՞նք, – հարցրեց նա:

Ոչ որ պատասխան չտվեց: Այդ ժամանակ ներքևում երևաց մի հետիոտն, նկատեց շրջված ավտոմեքենաները, հոտոտեց դրանք բոլոր կողմերից, թեքվեց դրանցից մեկի վրա, դուրս բերեց մի գույնզգույն անձրևանոց, կանացի պայուսակ, գինու շիշ, հանգիստ նստեց եզրապատին, խմեց շշից, կերավ պայուսակից հանած ինչ-որ բան, որ փաթաթված էր անագաթոթի մեջ, լրիվ դատարկեց շիշը, գոհ շարունակեց ճանապարհը՝ հովանոցը թևի տակ: Նա հանգիստ գնում էր իր ճանապարհը, և ես Գուտտավին ասացի.

– Դու հիմա կկարողանայի՞ր կրակել այդ հրաշալի տղայի վրա, ծակեիր գլուխը: Աստված վկա՝ ես չեի կարող:

– Այդ բանն անել չի էլ պահանջվում, – մրթմրթաց ընկերս:

Բայց նա հոգեպես նեղված էր: Բավական է, որ մենք տեսնենք մարդու, որն իրեն պահում է դեռևս անվնաս, բարեհոգի և մանկականորեն, որը դեռևս ապրում է անմեղության մեջ, որպեսզի մեր այս ողջ գովված ու անհրաժեշտ արարքները միանգամից թվան հիմար և անդուր մի բան: Թուխ, սատանա, այսբան շատ բախված արյուն: Մենք ամաչեցինք: Բայց ասում են, որ գեներալները նույնպես պատերազմի ժամանակ կրթեմն ապրում են այդպիսի զգացումներ:

– Այստեղ մենք երկար չենք կարող մնալ, – զանգատվեց Դորան, – եկեք ցած իջնենք, ավտոմեքենաների մեջ հաստատ ուտելու բան կգտնենք: Դուք չե՞ք սովածացել՝ բոլշևիկներդ:

Ներքևում՝ այրվող քաղաքում, հնչեցին զանգերը՝ տագնապահար ու երկյուղալի: Մենք պատրաստվեցինք ցած իջնել: Երբ Դորային օգնում էի անցնել ճաղաշարը, համբուրեցի նրա ծնկները: Լսվեց նրա հնչեղ ծիծաղը: Բայց այդ պահին սյունեքը չդիմացան, և մենք երկուսով փվեցինք դատարկության մեջ...

Ես ինձ վերստին գտա կողմ միջանցքում՝ դրսի արկածից խոր տապալորված: Եվ ամենուրեք, անթիվ-անհամար բոլոր դռների վրա, զրավչության փայլում էին մակագրություններ.

Mutabor*⁴⁴

Փոխակերպում ուզած կենդանու և ուզած բույսի

Կամասուտրա⁴⁵

Ուսուցում հնդկական սիրո արվեստի
Դասընթացներ սկսնակների համար.
սիրո 42 տարբեր հնարքներ

Հաճույք ինքնասպանությունից
Մեռնում ես ծիծաղից

Ուզո՞ւմ եք վերածվել ոգու
Արևելքի իմաստությունը

Օ՛, եթե ունենայի հազար լեզու
Միայն տղամարդկանց համար

Եվրոպայի մայրամուտը⁴⁶

Գները իջեցված են: Ամեն ինչ մրցակցությունից դուրս

Արվեստի բովանդակությունը
Ժամանակի փոխակերպումը տարածության
երաժշտության միջոցով

Ծիծաղող արցունքներ
Երգիծանքի աշխատասենյակ

* Mutabor – Ես փոխակերպվում եմ (լատ.):

Մենակյացի խաղեր
Ցանկացած շփման լիակատար փոխարինում

Մակագրությունների շարքը ձգվում էր անվերջորեն: Դրանցից մեկը հայտարարում էր.

Անձնավորության կառուցման դաս
Հաջողությունը երաշխավորվում է

Դա գրավեց ուշադրությունս, և ես ներս մտա:

Ինձ ընդունեց մտայն, լուռ մի սենյակ, այնտեղ, առանց արժի, արևելյան սովորությամբ հատակին նստած էր մի մարդ, որի առջևում շախմատի տախտակի նման⁴⁷ ինչ-որ բան կար: Առաջին պահ թվաց, թե նա բարեկամ Պարլոն է, ամեն դեպքում, նրա նման գույնզգույն մետաքսյա պիջակ էր կրում և ուներ նրան նմանվող մուգ, ճառագող աչքեր:

– Դուք Պարլոն եք, – հարցրեցի ես:

– Ես ոչ որ չեմ, – բացատրեց նա բարեկամաբար: – Այստեղ մենք ոչ մի անուն չունենք, մենք այստեղ անձեր չենք: Ես շախմատի վարպետ եմ: Ուզո՞ւմ եք անձնավորություն կառուցելու դաս վերցնել:

– Այո, խնդրեմ:

– Այդ դեպքում՝ բարի եղև ինձ ներկայացնել մի երկու տասնյակ ձեր կերպածներից:

– Իմ կերպածների՞ց...

– Կերպածներից, որոնց մեջ, ինչպես տեսաք, բաժան-բաժան եղավ Ձեր, այսպես կոչված, անձնավորությունը: Առանց դրանց ես չեմ կարող խաղալ:

Նա իմ առջևում պահեց մի հայելի, նորից դուրս մեջ ես տեսա իմ անձնավորության ամբողջականությունը՝ բաժանված բազմաթիվ ես-երի մեջ, նրանց քանակությունը, թվաց, էլ ավելի շատացել է: Կերպածները, սակայն, հիմա շատ մանր էին, շախմատային սովորական խաղաքարերի չափի, և շախմատ խաղացողը լուռ, վստահ մատնաշարժումներով դրանցից ընտրեց մի քանի տասնյակ և դրեց հատակին՝ շախմատի տախտակի կողքին: Այդ անելով՝ նա խոսեց միասպաղաղ, նման այն մարդուն, ով գիտի կրկնել լավ սերտած խոսքը կամ դասախոսությունը:

– Ձեզ հայանի է սխալ և չարաբաստիկ այն պատկերացումը, թե մարդը կայուն միասնություն է: Ձեզ նմանապես հայանի է, որ մարդը բաղկացած է բազմաթիվ հոգիներից, ես-ի մեծ բազմազանությունից: Անձի թվացյալ միասնության տարանջատումը այս բազմազան կերպարների համարվում է խելագարություն, զիտությունը դրա համար գտել է անվանում՝ մտագարություն: Գիտությունը այդտեղ իրավացի է այնքանով, որքանով ոչ մի բազմության չի կարելի իշխել առանց ուղեցույցի, առանց հայանի կարգաբերման, հայանի խմբավորման: Անճշտությունը այն է, որ ենթադրվում է, թե, իբր, հնարավոր է ես-ի ենթաձևերի միայն մի, մեկ անգամ և ընդմիշտ տրված, անփոփոխ կարգուկանոն: Գիտության այս մոլորությունը ունի մի շարք տեսած հետևանքներ, նրա արժեքը սուկ այն է, որ թեթևացնում է պետական ծառայության մեջ գտնվող ուսուցիչների և դաստիարակների աշխատանքը և նրանց ազատում է մտածելու ու փորձարարությամբ զբաղվելու դժվարությունից: Այս մոլորության հետևանքով, հաճախ «կանոնավոր», նույնիսկ հասարակականորեն բարձրարժեք են համարվում շատ մարդիկ, ովքեր անբուժելի հիվանդ են խելագարությամբ, և ընդհակառակը՝ իբրև խելագարների են նայում շատերին, ինչպիսիք են հանճարները: Ուստի՝ անկատար զիտական հոգեբանությունը մենք լրացնում ենք մի հասկացությամբ, որ անվանում ենք կառուցման արվեստ: Նրան, ով տեսել է իր ես-ի փլուզումը, մենք ցույց ենք տալիս, որ նա ցանկացած ժամանակ կարող է վերադասավորել նրա կտորները ցանկացած ձևով ու դրանով հասնել կենսախաղի անվերջանալի բազմազանության: Ինչպես գրողն է լիարժեք կերպարներով ստեղծում դրամա, այդպես էլ մենք մեր ես-ի բաժան-բաժան եղած կերպածներից մշտապես ստեղծում ենք նորանոր ամբողջություններ՝ նոր խաղերով ու լարվածություններով և հավերժաբար նոր իրավիճակներով համդերձ:

Լուռ, խելացի մատներով նա վերցրեց իմ կերպածները, բոլոր այդ ծերերին, պատանիներին, երեխաներին, կանանց, բոլոր այդ զվարթներին ու ախարներին, ուժեղներին ու քնքույններին, ճարպիկներին ու անօգնականներին և նրանցից տախտակի վրա արագորեն դասավորեց մի խաղաղիք, որում նրանք անմիջապես դասավորվեցին իբրև խմբեր ու ընտանիքներ՝ հանուն խաղի և սպաքարի, հանուն բարեկամության և

թշմամանքի՝ ստեղծելով մի փոքրիկ աշխարհ: Իմ հիացած աչքերի առաջ նա ստիպում էր այդ կենդանի, բայց խտորեն կարգաբերված փոքրիկ աշխարհին շարժվել, խաղալ և պայքարել, ստեղծել միություններ և պատերազմներ վարել, սիրահարվել միմյանց, ամուսնանալ, բազմանալ: Դա, իրոք, բազմակերպար, շարժում և լարված դրամա էր:

Ահա նա դեմքի ուրախ արտահայտությամբ ձեռքը սահեցրեց տախտակի վրայով, դրանք հավաքեց իրար վրա և մտախոհ, չմահավան նկարիչի պես, այդ նույն կերպարանքներից դասավորեց բոլորովին նոր մի խաղավիճակ՝ բոլորովին այլ խմբավորումներով, առնչություններով և հյուսվածքներով: Երկրորդ խաղը առաջինին նման էր. միևնույն աշխարհն էր, և այն պատրաստված էր միևնույն նյութից, բայց փոխվել էր հնչերանգը, այլ էր արագությունը, ուրիշ էին գործողությունների շարժառիթները, իրավիճակները ձեռք էին բերել այլ տեսք:

Եվ այդպես, այդ խելացի շինարարը պատկերներով, որոնցից յուրաքանչյուրը անձամբ իմ մի մասն էր, ստեղծում էր խաղ խաղի հետևից, դրանք բոլորը հեռավոր ձևով հիշեցնում էին միմյանց, բոլորն էլ ակներևաբար պատկանում էին միևնույն աշխարհին, ունեին միևնույն ծագումը, բայց դրանցից յուրաքանչյուրը ամբողջության մեջ նոր էր:

— Մա հենց կյանքի արվեստն է, — խոսեց նա ուսուցողաբար: — Դուք ինքներդ այսուհետ կարող եք Ձեր կյանքի խաղը Ձեր ուզած ձևով զարգացնել և աշխուժացնել, բարդացնել և հարստացնել, դա Ձեր հնարավորությունների սահմաններում է: Ինչպես որ խելագարությունն է, ամենաբարձր իմաստով, ամեն մի իմաստության սկիզբ, այնպես էլ մտազարությունը ամեն մի արվեստի, ամեն մի երևակայության ակունքն է: Նույնիսկ գիտնականները այս բանը կիսով չափ գիտեն արդեն, որի մասին կարելի է կարդալ, օրինակ՝ «Իշխանի կախարդական եղջյուրի մեջ»⁴⁸, մի հրաշալի գրքույկ, որում գիտնականի քրտնաջան և ջանասեր աշխատանքը ազնվացնում է խելացի համագործակցությունը մի քանի խելագար նկարիչների, որոնք փակված են եղել հոգեբուժարաններում: Ձեզ հետ վերցրեք Ձեր կերպածները, այդ խաղը Ձեզ դեռ ուրախություն է պատճառելու: Կերպարանքը, որ այսօր վերածել է անտանելի խրովիլակի և փչացնում է Ձեզ խաղը, Դուք վաղը նրան կաստիճանագրվեք՝ դարձնելով անվնաս, երկրորդական դեմք: Իսկ սիրելի, խեղճ կերպածներից, որ թվում է՝ արդեն դատա-

պարտված է մշտական անհաջողությունների ու փորձանքների, հաջող խաղի ժամանակ ստեղծեք իշխանուհի: Ձեզ, պարոն, ցանկանում եմ լավ արամադրություն:

Մեծ երախտագիտությամբ ես խոնարհվեցի այդ տաղանդավոր շախմատային վարպետի առաջ, կերպարանքները լցրեցի իմ գրպանը և մեղ դռնով դուրս եկա:

Ընդհանրապես մտածում էի, որ ուղղակի կնստեմ միջանցքի հատակին ու ժամերով, մի ամբողջ հավիտենականություն կխաղամ կերպարանքներով, բայց հազիվ էի նորից հայտնվել կլոր, պայծառ լուսավորված քատերական միջանցքում, երբ ինձ քշեցին-տարան նոր հոսանքների, որոնք ուժեղ էին ինձնից: Իմ աչքերի առաջ պայծառորեն բռնկվեց մի պլակատ.

Տախաստանի գայլեր վարժեցնողի հրաշքները ✓

Բազմաթիվ զգացմունքներ առաջ բերեց իմ մեջ այդ մակագրությունը, ամեն տեսակ վախեր ու հարկադրանքներ, որ գալիս էին իմ նախկին կյանքից, լքված իրականությունից՝ տանջալիորեն սեղմելով իմ սիրտը: Դողացող ձեռքով բացեցի դուռը և մտա ինչ-որ տոնավաճառային կրպակ, որտեղ տեսա երկաթյա վանդակապատ, այն ինձ բաժանում էր աղբատիկ տախտակամածներից: Իսկ տախտակամածների վրա կանգնած էր զազաններ վարժեցնողը՝ սնապարծ տեսք ունեցող և գոռոզ մի պարոն, որը հակառակ մեծ բեղերի, զորեղ դաստակների և գունազարդ կրկեսային հագուստի, ինչ-որ նենգ, բավականին տհաճ ձևով նման էր ինձ: Այդ ուժեղ մարդը, կապից բռնած, ինչպես շուն (խղճալի պատկեր) տանում էր մեծ, գեղեցիկ, բայց սարսափելիորեն նիհարած և ստրկական-երկյուղած հայացքով մի գայլ: Եվ որքան տհաճ, նույնքան էլ հետաքրքիր, որքան զարշելի, նույնքան և թաքունորեն քաղցր էր դիտել, թե ինչպես էր այդ դաժան վարժեցնողն այդպիսի ազնվագարն և, այդուհանդերձ, այդպես ամոթալիորեն հնազանդ գիշառչին ցուցադրում ապշեցուցիչ հնարանքների ու տեսարանների շարքով:

✓ Այդ մարդը՝ իմ անիծյալ ծաղրանկարային երկվորյակը, իր գայլին, ամեն դեպքում, ընտելացրել էր հրաշալի: Գայլը հնազանդ լսում էր յուրաքանչյուր հրաման, շան պես ուշադիր արձագանքում էր յուրաքանչյուր կանչի ու մտրակահարվածի,

նա ծնկի էր իջնում, մեռած էր ձևանում, կանգնում էր ետին ոտքերի վրա, հլու և խելացիորեն ատամների մեջ պահում էր բորոնահաց, ձու, մսակտոր, գամբյուղ, ավելին՝ վարժեցնողի մտքակլը, որ ցած զցեց վերջինս, նա վերցրեց և երախի մեջ պահած՝ բերեց նրան՝ անտանելի ստորաքարշուքյամբ օրորելով պոչը: Գային մոտեցրին նապաստակ, իսկ հետո՝ սպիտակ գառնուկ, ու քեև նա մերկացրեց ժանիքները, քեև մեծ ախորժակից գրգռված՝ բերանից հոսեցին ջրերը, բայց նա կենդանիներից ոչ մեկին ձեռք չավեց, այլ, հրամանի համաձայն, հոյակապ մի թռչչքով ցատկեց նրանց վրայով, որ դողահար սեղմվել էին հատակին, ավելին՝ պատկեց նապաստակի և գառնուկի միջև, երկուսին էլ գրկեց առջևի թաթերով և նրանց հետ կազմեց հուզիչ ընամենական ամբողջություն: Այնուհետև նա մարդու ձեռքից կերավ մի կտոր շոկոլադ: Տանջալիորեն ծանր էր տեսնել, թե անհավանական ինչ աստիճանի է հասել այս գայլը սեփական բնությունն ուրանալու դասերի մեջ, և իմ մազերը բիզ-բիզ էին կանգնում:

Բայց այդ տանջանքների համար հուզված հանդիսականները և գայլն ինքը նույնպես ներկայացման երկրորդ մասում վարձատրվեցին: Ընտելացման այս բարդ ծրագրից հետո, այն բանից հետո, երբ վարժեցնողը հաղթականորեն, քաղցր ժպիտը դեմքին, թեքվեց գայլ-գառնուկ խմբի վրա, դերերը փոխվեցին: Հարրիին մմանակող վարժեցնողը հանկարծ իր մտքակլը, հարգալից խոնարհումով, դրեց գայլի ոտքերի առաջ և սկսեց դողալ, կուչ գալ և խղճալի տեսք ընդունել ճիշտ այնպես, ինչպես քիչ առաջ գայլը: Իսկ գայլը ժպտալով լիզում էր երախը, նրանից անհետացան ամեն տեսակ լարվածություն ու շինծու կեցվածք, նրա հայացքը պայծառացավ, ամբողջ մարմինը ձգվեց ու ծաղկեց վերստին ձեռք բերած վայրենությամբ:

Այժմ հրամայում էր գայլը, իսկ մարդը՝ հնազանդվում: Ենթարկվելով հրամաններին՝ մարդը ծնկի էր իջնում, գայլ էր խաղում, դուրս հանում լեզուն, լցունված ատամներով պատառոտում էր իր վրայի հագուստները: Նայած՝ ինչպես կերամայեր մարդ վարժեցնողը, քայլում էր իր երկու կամ չորս ոտքերի վրա, ծառայություններ էր մատուցում, ձևանում էր մեռած, մեջքին դրած տանում էր գայլին, նրա հետևից տանում էր մտքակլը: Ըան հնազանդությամբ ու հնարամտորեն տրվելով խելացնոր երևակայության՝ նա իրեն ենթարկում էր ուզած

նվաստացման և ծամածոության: Բեմ մտավ մի գեղեցիկ աղջիկ, մոտեցավ ընտելացված մարդուն, շոյեց նրա ծնոտը, քսեց իր այտը նրա այտին, բայց մարդը շարունակեց մնալ չորս ոտքի վրա, մնաց վայրի կենդանի, թափահարեց գլուխը, գեղեցկուհուն ատամներ ցույց տվեց, վերջին պահին այնպես սպառնալի ու գայլակերպ, որ աղջիկը փախավ: Նրան առաջարկվեց շոկոլադ, բայց նա արհամարհանքով հոտոտեց ու մի կողմ հրեց: Իսկ վերջում նորից բերեցին սպիտակ գառնուկին ու գեր, խայտաբղետ նապաստակին, և ուշիմ մարդը կատարեց իր վերջին համարը, այնպես խաղաց գայլ, որ միայն ուրախություն էր նայելը: Մատներով ու ատամներով բռնելով ճղճղացող կենդանիներին՝ նրանցից պոկեց մորթու և մսի կտորներ, քնծիծաղ տալով ծամեց նրանց դեռևս կենդանի միսը և աչքերը փակ, ինքնամոռաց արբեցումով ու կրքով խմեց նրանց տաք արյունը:

Ահաբեկված՝ ես դուրս փախա: Այդ մոզական թատրոնը, ինչպես ես էի կարծում, անաղարտ դրախտ չէր, նրա գեղեցիկ արտաքինը թաքցնում էր իսկական դժոխք: Օ՛, Աստված իմ, մի՞թե այստեղ նույնպես չկար փրկություն:

Երկյուղով բռնված՝ այս ու այն կողմ էի վազում, բերանիս մեջ զգում էի արյան համը և համը շոկոլադի, մեկը մյուսից զգվելի, սաստիկ մղումով ցանկանում էի խուսափել այդ պոտոր ալիքից, եռանդով փորձում էի ինքս իմ մեջ ավելի տանելի, ավելի մտերիմ պատկերներով համակվել: «Օ՛, բարեկամներ, վերջ այս ձայներին»⁴⁹, - հնչում էր իմ ներսում, և ես սարսափով հիշեցի ռազմաճակատից ուղարկված այն հրեշավոր լուսանկարները, որ ժամանակ առ ժամանակ իմ աչքով էին ընկնում պատերազմի տարիներին՝ իրար վրա լցված անկարգ դիակներ, որոնց դեմքերը հակազազերը փոխակերպել էին սատանայական մոտիվների: Որքան հիմար էի այն ժամանակ դեռ և պարզամիտ, եթե ինձ՝ պատերազմն ատող մարդասերիս, սարսափի էին մատնում այդ նկարները: Այսօր ես գիտեի արդեն, որ ոչ մի վարժեցնող, ոչ մի նախարար, ոչ մի գեներալ, ոչ մի խելագար ընդունակ չէ իր ուղեղում նյութել այն բոլոր մտքերն ու պատկերները, որ դրանք լինեին նույնքան հրեշավոր, նույնքան վայրի ու չար, նույնքան բիրտ ու անմիտ, ինչպիսիք որ ապրում էին անձամբ իմ մեջ:

Հոգոց հանելով՝ հիշեցի մի մակագրություն, որը, ինչպես տեսա ներկայացման սկզբում, հարուցեց այն գեղեցիկ պատանու հիացմունքը, այն է՝

Բոլոր աղջիկները բռնն են

և ինձ թվաց, որ ամեն դեպքում, ուրիշ այլ բան, քան սա, չարժե ցանկալ: Ուրախացած այն բանի համար, որ կարող եմ նորից փախչել-հեռանալ անիծյալ գայլաշխարհից, ես ներս մտա:

Հրա՛շք. այնքա՛ն հեքիաթային և միաժամանակ այնքան մտերիմ էր դա, որ ես սարսուցի, այնուեղ ինձ վրա փոփեց պատանության իմ բույրը, իմ մանկական-պատանեկան ժամանակների քամին, և իմ սիրտը լցվեց այն օրերի արյամբ: Այն ամենը, ինչ հենց նոր արել ու մտածել էի, թոթափվեց ինձ-նից, և ես կրկին ջահելացա: Դեռ մեկ ժամ, դեռ մեկ րոպե առաջ ես կարծում էի, թե բավական լավ գիտեմ, թե ինչ բան է սերը, ցանկությունը, բաղձանքը, բայց դա ծեր մարդու սեր ու ցանկություն էր եղել: Այժմ ես նորից ջահել էի, և այն, ինչ զգում էի իմ ներսում, իմ մեջ հոսող այդ այրող կրակը, հզոր ուժով ձգող այդ տենչանքը, այդ խոնավ մարտյան քամին, կաշկանդումներից ազատող այդ կրքոտությունը, ջահել էին, նոր ու իսկական: Օհ, ինչպես էին վերստին բռնկվում մոռացված կրակները, ինչպես էին լիաթոք ու խորհրդավոր հնչում անցյալի ձայները, ինչպես էր խաղում արյունս, ինչպես էր ճշում ու համերգում հոգիս: Ես աղա էի, աասնհինգ կամ տասնվեց տարեկան, գլուխս լիքն էր հունարենով, լատիներենով և բանաստեղծների գեղեցիկ տողերով, իմ մտածումները լիքն էին ձգտումներով ու պատվախանդությամբ, իմ երևակայությունը՝ արվեստագետի երանգներով, բայց շատ ավելի խոր, ուժեղ և ազդեցիկ, քան բոլոր այդ բոցավառ կրակները, իմ ներսում այրվում ու խաղում էր սիրտ կրակը, սեռի քաղցը, հաճույքի մաշող նախազգացումը:

Ես կանգնած էի ժայռոտ բլրին, որ բարձրանում էր իմ հայրենի փոքրիկ քաղաքի վրա, զգում էի խոնավ քամու և առաջին մանուշակների բուրմունքը, ներքևում, փոքրիկ քաղաքից երևում էր փայլող գետը, երևում էին իմ հայրական տան պատուհանները, և այդ ամենը նայում էր, հնչում ու բուրում էր արբեցմամբ այնպես լի, այնպես նոր և արարմամբ հագեցած,

այնպես էր շողում գունեղանգներով և զարմանային քամու մեջ փողփողում էր այնպես վերերկրային ու անմիջական, ինչպես որ տեսել էի մի ժամանակ աշխարհը իմ առաջին պատանության լեցուն, բանաստեղծական ժամերին: Ես կանգնած էի բլուրին, քամին տարուբերում էր իմ երկար մազերը, սիրտ տենչանքով համակված, մոլորուն մատներով հենց նոր կանաչած ինչ-որ թփից պոկեցի ջահել, կիսարաց մի բողբոջ, պահեցի աչքերիս դեմ, հոտ քաշեցի (և հենց այդ պահին հոտն ինձ այրեց հիշողություններով այն ամենի մասին, ինչ եղել էր անցյալում), ապա խաղ անելով՝ փոքրիկ, կանաչ բողբոջը դրեցի բերանս, որ դեռ չէր համբուրել ոչ մի աղջկա, ու սկսեցի ծամել: Եվ այդ տախի, բուրավետ-դառը համից ես հանկարծ ճշգրտորեն զգացի, թե ինչ է կատարվում ինձ հետ՝ ամեն ինչ նորից վերադարձել էր: Ես վերստին ապրում էի իմ ուշ պատանության տարիներից մեկ ժամ, վաղ զարման մի կիրակի՝ այն օրը, երբ մենակ զբոսնելով՝ հանդիպեցի Ռոզա Կրայպերին, և այնպես վեհերոտ ողջունեցի, այնպես խենթացած սիրահարվեցի նրան:

Այն ժամանակ երկյուղով լի սպասմամբ էի ես նայում գեղեցիկ աղջկան, որ մենակ ու երազկոտ բարձրանում էր բլուրը և դեռ ինձ չէր նկատել, տեսնում էի նրա մազերը՝ հյուսածո հաստ ծամերը՝ այտերի մոտ ազատ մազափնջերով, որ խաղում էին քամու տակ: Ես տեսնում էի, առաջին անգամ իմ կյանքում, թե որքան գեղեցիկ է այդ աղջիկը, որքան գեղեցիկ ու հրաշալի է քամու պարը նրա քնքուշ մազերի մեջ, որքան գեղեցիկ ու տենչանքներ արթնացնող է նրա ջահել մարմնանդամների վրա նուրբ, կսպույտ զգեստը, և, ինչպես ծամած բողբոջի դառը թնդահամից, ես ամբողջովին զգացի զարման վեհերոտ-քաղցր ուրախությունն ու ահը, այդպես էլ այդ աղջկան տեսնելուն պես իմ մեջ լցվեց սիրտ սպանիչ նախազգացումը, կնոջ պատկերացումը՝ անսահման հնարավորությունների ու խոստումների ցնցող կանխավայելքներով, անպատմելի հաճույքներով, մաքից դուրս խոռվքներով, վախերով ու տանջանքներով, մեծագույն ազատագրումով ու խորագույն մեղրով: Օ՛, ինչպես էր լեզուս այրում դառը զարմանահամը: Օ՛, ինչպես էր նրա կարմիր այտերի մոտ ազատ արձակված մազերի մեջ խաղալով՝ կոհակվում քամին: Հեռո նա մոտեցավ ինձ, նայեց, ծիծաղեց, ճանաչեց ինձ, մի պահ փոքր-ինչ շիկ-

նց և շրջեց հայացքը, հետո ես ողջունեցի նրան՝ հանելով ճեմարականի իմ գլխարկը, և Ռոզան անմիջապես հավաքեց իրեն, ողջունեց ինձ՝ կանացիորեն մի քիչ բարձր պահած գլուխը, և դանդաղ, վստահ ու հաղթանակած շարունակեց ճանապարհը՝ պարտոված սիրային հագարավոր տենչանքներով, պահանջներով ու մեծարանքներով, որ ես ուղարկում էի նրա հետևից:

Այդպես էր եղել մի ժամանակ, երեսունհինգ տարի առաջ մի կիրակի օր, և այդ ամբողջ անցածը վերադարձել էր այս պահին՝ բլուրն ու քաղաքը, մարտյան քամին ու բողբոջի համը, Ռոզան ու նրա շագանակագույն մազերը, այս ահագնացող տենչանքն ու քաղցր, խեղդող վախը: Ամեն ինչ այնպես էր, ինչպես այն ժամանակ, և ինձ թվաց, որ ես իմ կյանքում երբեք այնպես չեմ սիրել, ինչպես այն ժամանակ Ռոզային: Բայց այս անգամ ինձ տրված էր նրան հանդիպել այլ կերպ, քան անցած անգամ: Ես տեսա նրա շառագունները, երբ ճանաչեց ինձ, տեսա շիկնանքը քաքցնելու նրա ջանքերը և անմիջապես հասկացա, որ նա սիրում է ինձ, որ նրա համար այս հանդիպումը նույն նշանակությունն ունի, ինչ որ իմ: Եվ փոխանակ նորից գլխարկս հանելու և հանված գլխարկով հանդիսավոր կանգնելու, մինչև նա կանցներ իմ կողքով, այս անգամ, չնայած վախին և ամաչկոտությամբ, արեցի այն, ինչ թելադրում էր իմ արյունը, և բղավեցի. «Ռոզա, փառք Աստծո, որ դու եկել ես՝ զեղեցիկ, զեղեցիկ աղջիկ: Ես քեզ այնպես եմ սիրում»: Դա, հավանաբար, ամենասրամիտ խոսքը չէր, որ այդ պահին պետք է ասել, բայց այդտեղ բոլորովին խելք պետք չէր, այդքանը միանգամայն բավարար էր: Ռոզան կանացի կեցվածք չընդունեց և շարունակեց ճանապարհը, Ռոզան մնաց կանգնած, նայեց ինձ, ավելի շառագունեց, քան նախկինում և ասաց. «Ողջույն, Հարրի, դու իսկապե՞ս սիրում ես ինձ»: Այդ ասելիս նրա շագանակագույն աչքերը շողում էին հաստատակամ դեմքին, և ես զգացի. իմ անցած ողջ կյանքը և սերը կեղծ, անհեթեթ և հիմարությամբ լի դժբախտություն են եղել այն պահից սկսած, երբ ես այդ կիրակի օրը Ռոզային թույլ տվեցի հեռանալ: Բայց հիմա սխալը ուղղվում էր, և ամեն ինչ լավ էր:

Մենք ձեռք ձեռքի տվեցինք և ձեռք ձեռքի տված, դանդաղ քայլեցինք առաջ՝ անասելիորեն երջանիկ, անչափ շփոթահար, մենք չգիտեինք ինչ խոսել և ինչ անել, շփոթմունքից

սկսեցինք վազ տալ ու վարձել, մինչև որ շունչներս չկտրվեց ու կանգ չառանք՝ առանց բաց թողնելու միմյանց ձեռքը: Մենք երկուսս էլ դեռ երեխաներ էինք և չգիտեինք, թե ինչ պետք է անենք միմյանց հետ, այն կիրակի օրը մենք չէինք հասել անգամ առաջին համբույրին, բայց մենք անսահմանորեն երջանիկ էինք: Մենք կանգ առանք և ազատ շունչ քաշեցինք, մտեցինք խոտերին, և ես շոյեցի նրա ձեռքը, իսկ նա մյուս ձեռքով երկյուղած հավեց իմ մազերին, ապա վեր կացանք նորից, փորձեցինք չափել, թե մեզանից ում հասակն է ավելի բարձր, ճիշտն ասած՝ ես մի մատնաչափ բարձր էի նրանից, բայց այդ մասին ոչինչ չասացի, այլ համոզված հայտնեցի, որ միանգամայն միևնույն հասակն ունենք և որ Արարիչը մեզ ստեղծել է միմյանց համար, և որ ավելի ուշ մենք ամուսնանալու ենք: Դրա վրա Ռոզան ասաց, որ մանուշակի հոտ է առնում, և ծնկների վրա գարնանային կարճ խոտերի վրայով առաջանալով՝ մենք գտանք մի քանի մանուշակ՝ կարճ ցողուններով, և մեր մանուշակները նվիրեցինք մեկմեկու, և երբ ցրտեց ու լույսը թեթուքամբ սկսեց ընկնել ժայռերի վրա, Ռոզան ասաց, որ ինքը պետք է տուն գնա, և մենք երկուսս էլ շատ տխրեցինք, որովհետև ես իրավունք չունեի նրան ուղեկցելու, բայց հիմա մենք իրար հետ ունեինք ընդհանուր գաղտնիք, և դա ամենահրաշալիս էր, ինչ մենք ունեինք: Ես մնացի վերևում, ժայռերի մեջ, հոտոտում էի Ռոզայի մանուշակները, գառնափերից մեկի մոտ պառկեցի գետնին, հայացքս դեպի անդունդը և սկսեցի նայել ցած՝ քաղաքին, ու նայեցի այնքան ժամանակ, մինչև որ ներքևում չհայտնվեց Ռոզայի սիրելի կերպարանքը, մինչև որ չտեսա նրա վազ տալը ջրհորի մոտով ու կամրջով: Եվ հիմա ես գիտեի, որ նա հասել է իր հայրական տուն և անցնում է սենյակներով, իսկ ես պառկած եմ այստեղ՝ վերևում, հեռու նրանից, բայց ինձնից դեպի նա ձգվում էր ինչ-որ թել, ինչ-որ հոսանք, իրեն էր մատնում ինչ-որ գաղտնիք:

Մենք նորից տեսնվեցինք, տարբեր տեղերում՝ ժայռերի վրա, պարտեզի պարսպի տակ այս գարնան ողջ ընթացքում, և երբ յաասմանը սկսեց ծաղկել, առաջին անգամ երկյուղած համբուրվեցինք: Քիչ բան կար, ինչ մենք՝ երեխաներս, կարող էինք տալ միմյանց, և մեր համբույրները դեռևս գերծ էին բոցից ու լիությունից, ու նրա ականջների մոտ ազատ արձակած խոսույները ես հանդգնեցի ընդամենը զգուշարար շոյել, բայց

ամբողջ սերն ու հրճվանքը, որին մենք ընդունակ էինք, մերն էր, և յուրաքանչյուր ամաչկոտ հպում, սիրո յուրաքանչյուր դեռ չհասունացած խոսք, միմյանց սպասելու յուրաքանչյուր երկյուղած առիթ մեզ սովորեցնում էր նոր երջանկության, մի նոր աստիճանի բարձրացնում սիրո սանդուղքներով:

Այդպես, սկսելով Ռոզայից և մանուշակից, ես վերստին ապրեցի իմ ողջ սիրային կյանքը՝ էլ ավելի երջանիկ աստղերի տակ: Ռոզային կորցրեցի ես, հայտնվեց Իրմզարդը, և արևը դարձավ ավելի բորբոք, աստղերը՝ ավելի հարբած, բայց ոչ Ռոզան, ոչ Իրմզարդը չդարձան իմը, ես ստիպված էի բարձրանալ աստիճան առ աստիճան, տեսնել շատ բան, շատ բան սովորել, նորից կորցնել Իրմզարդին, նաև Աննային: Յուրաքանչյուր աղջիկ, որին մի ժամանակ սիրել էի իմ պատանուության օրերին, սիրում էի նորից, բայց ընդունակ էի յուրաքանչյուրին համակել սիրով, յուրաքանչյուրին ինչ-որ բան տալ, ստանալ յուրաքանչյուրի շնորհները: Ցանկությունները, երազանքները և հնարավորությունները, որ ապրել էին միմիայն իմ երևակայության մեջ, այժմ իրականություն էին և գոյություն ունեին իսկապես: Օ՛, դուք, բոլոր գեղեցիկ ծաղիկներդ՝ Իդա և Լորա, բոլորդ, որոնց սիրել էի մի ժամանակ՝ թեկուզև մի ամառ, մի ամիս, մի ողջ օր:

Ես հասկացա, որ այժմ այն հրաշալի, տաքարյուն, փոքր պատանին եմ, որին տեսել էի նախկինում՝ խենթորեն դեպի սիրո դարպասները մղվելիս, հասկացա, որ այժմ թույլ էի տալիս դրսևորվել ու զարգանալ իմ այդ մասնիկին, այդ՝ ընդամենը տասներորդ, հազարերորդ իրականացված մասնիկին իմ էության ու կյանքի, իմ էության, որին այժմ չէին ծանրաբեռնում ես-իս բոլոր այլազան կերպածները, չէր խանգարում մտածողը, չէր տանջում Տափաստանի գայլը, չէր սահմանափակում բանաստեղծը, ֆանտաստը, բարոյախոսը: Ոչ, ես այլ բան չէի, բան սիրող, այլ տառապանք ու այլ երջանկություն չէի շնչում, բան սիրո տառապանքն ու երջանկությունը: Իրմզարդն արդեն սովորեցնում էր պարել, Իդան՝ համբուրվել, իսկ ամենագեղեցիկը նրանցից՝ Էմման, առաջինն էր, որ աշնանային մի երեկո, կնճենու խշտացող սաղարթների տակ ինձ թույլ տվեց համբուրել իր թուխ սահմանները և խմել ցանկության գավաթից:

Շատ բան ապրեցի ես Պաբլոյի փոքրիկ թատրոնում, այդ ամենի անգամ մեկ հազարերորդ մասը ես չեմ կարող արտա-

հայտել բառերով: Բոլոր աղջիկները, որոնց մի ժամանակ սիրելի էի, այժմ իմն էին, յուրաքանչյուրն ինձ տալիս էր այն, ինչ կարող էր տալ միմիայն նա, նրանցից ամեն մեկին ես տալիս էի այն, ինչ միայն նա կարող էր ընդունել: Շատ սեր, շատ երջանկություն, շատ հաճույքներ, նաև շատ տազնապներ ու տանջանք բաժին ընկավ ինձ տեսնելու, իմ կյանքում բաց թողած բոլոր սերերս կախարդական ուժով ծաղկում էին իմ այգում այդ հեքիաթային ժամին՝ անմեղ, նուրբ ծաղիկներ, վատ, հրաշեկ ծաղիկներ, մուգ, արագ թառամող ծաղիկներ, առկայծող վավաշոտություն, մտերիմ ցնորքներ, այրող թախիծ, տազնապահար մահացում, ճառագող վերածնունդ: Ես գտա կանանց, որոնց կարելի էր տիրել միայն հապճեպորեն ու գրտեղով, և ուրիշ կանանց, որոնց երկար ու հոգատարությամբ հրապուրելը իսկական երջանկություն էր: Այժմ վերստին երևում էր իմ կյանքի յուրաքանչյուր մշուշոտ անկյունը, որտեղ մի ժամանակ, թեկուզև մեկ րոպեով, ինձ կանչել էր սեռի ձայնը, բորբոքել էր կանացի հայացքը, խելքահան էր արել կանացի սպիտակ մաշկի փայլը, և ամբողջ բաց թողածս վերադարձվում էր: Յուրաքանչյուր կին դառնում էր իմը, յուրաքանչյուրը՝ իր ձևով: Երևաց վուշանման խոպուպների տակ մուգ շագանակագույն աչքերով անսովոր կինը, որի կողքին երբևէ կանգնել էի մի ճեպընթացի միջանցքում, պատուհանի տակ, և որը հետագայում մի բանի անգամ երևացել էր ինձ երազներում, նա չէր ասել ոչ մի խոսք, բայց սովորեցրել էր սիրո անակնկալ, վախեցնող, մահացու արվեստը: Եվ ողորկամաշկ, լուռ ապակյա ժպիտով չինոհին՝ Մարսելի նավահանգստում՝ ողորկ, մուգ սև մազերով ու լողացող աչքերով, նա նույնպես գիտեր անպատմելի բաներ: Յուրաքանչյուրն ուներ իր գաղտնիքը, երկրային արքայության իր բույրը, յուրաքանչյուրն համբուրվում էր, ծիծաղում էր իր ձևով, իր՝ առանձնահատուկ ձևով ամաչկոտ էր, իր՝ առանձնահատուկ ձևով անամոթ: Նրանք գալիս էին ու անցնում, հոսանքը նրանց բերում էր ինձ մոտ, տանում էր ինձ նրանց մոտ ու հեռացնում, սեռի հոսանքի մեջ դա դյուրաշարժ, մանկական լողանցում էր՝ բավականություններով, վտանգներով և անակնկալներով լեցուն: Եվ ես ուրախանում էի նրանով, թե որքան հարուստ էր իմ կյանքը, այդքան ողորմելի ու անսեր թվացող Տափաստանի գայլի իմ կյանքը՝ սիրահարվածություններով, բարի դիպվածներով, գայթակություններով: Ես

դրանք բոլորը գրեթե բաց էի թողել, համարյա բոլորից փախել էի՝ սայթափելով դրանց վրա, մոռացել էի դրանք որքան հնարավոր է արագ, բայց ահա դրանք բոլորը պահպանվել էին հարյուրներով, առանց կորստի: Եվ հիմա ես տեսնում էի նրանց, տրվում էի նրանց՝ հայտնաբերված նրանց կողմից, սուզված նրանց դժոխքի վարդագույն կիսալույսի մեջ: Վերադարձել էր և այն գայթակությունը, որ մի ժամանակ ինձ առաջարկել էր Պարլոն, առաջարկել էին ուրիշները, ավելի վաղ շրջանի գայթակություններ, որոնք այն ժամանակ ես մի կարգին չէի հասկանում՝ ֆանտաստիկ խաղեր երեքով և չորսով, ժպտալով՝ նրանք ընդունում էին ինձ իրենց խմբի մեջ: Շատ բաներ էին կատարվում, խաղացվում էին այնպիսի խաղեր, որոնք խոսքերով չես պատմի:

Գայթակությունների, արատների, բախումների անվերջանալի հոսքից ես նորից դուրս եկա հանգիստ, լուռ, պատրաստված, իմացությամբ լեցուն, իմաստուն, փորձված, Հերմիների համար հասունացած: Իբրև իմ հազարապատում դիցաբանության վերջին կերպար, անվերջանալի շարքի իբրև վերջին անուն՝ դարձավ նա՝ Հերմիներն, ու դրա հետ վերադարձավ և գիտակցությունս ու վերջ տվեց սիրո հեքիաթին, քանզի Հերմիների հետ չէի ուզում հանդիպել այստեղ, կախարդական հայելու մշուշների մեջ, նրան էր պատկանում ոչ միայն իմ շախմատային քարերից մեկը, այլև Հարրին ամբողջությամբ: Օհ, հիմա հարկ էր, որ իմ շախմատային կերպարները ես դասավորեի այնպես, որ ամեն ինչ կապվեր նրա հետ ու իրականանար:

Հոսանքը ինձ դուրս շարժեց ավի, ես նորից հայտնվեցի թատրոնի լուռ միջանցքում: Ի՞նչ անել հիմա: Ուզում էի ձեռքս տանել դեպի գրպանիս կերպարները, բայց այդ ցանկությունը շուտ անցավ: Անվերջանալի էր ինձ շրջապատող դռների, մակաբությունների, մոզական հայելիների աշխարհը: Ես բնագործներն կարդացի ամենամոտ մակաբությունը և ցնցվեցի: Այնտեղ գրված էր.



Ինչպես են սպանում սիրով

Իմ հիշողությունների մեջ անմիջապես կենդանացավ մի պատկեր՝ Հերմիներն, ռեստորանի սեղանի մոտ, գինի ու ուտե-

լիք մոռացած և անսպասելիորեն խորհրդավոր մի խոսակցության մեջ խրված, երբ սարսափելի լռությամբ ասաց, թե ինձ կտռիայի սիրահարվել իրեն միայն նրա համար, որպեսզի իմ ձեռքից ընդունի իր մահը: Խավարի ու վախի ծանր սարսուռը ցնցեց իմ սիրտը, ամեն բան նորից կանգնեց իմ առաջ, հոգուս խորքերում հանկարծ նորից զգացի աղետն ու ճակատագիրը: Հուսահատ ձեռքս տարա գրպանս, որ դուրս բերեմ խաղաքարերը, որպեսզի մի փոքր կախարդությամբ զբաղվեմ և շախմատային իմ տախտակի վրա փոփոխեմ դասավորվածությունը: Խաղաքարերի փոխարեն գրպանիցս հանեցի դանակ: Մահից վախեցած՝ վազ տվեցի միջանցքով՝ դռների մոտով, և հանկարծ կանգ առա հսկա հայելու առաջ, նայեցի նրա ներսը: Հայելու մեջ, ճիշտ իմ բարձրության, կանգնած էր գեղեցիկ, վիթխարի մի գայլ, կանգնած էր լուռ՝ վախեցած փայլեցնելով անհանգիստ աչքերը: Ժամանակ առ ժամանակ նա ինձ աչքով էր անում, ծիծաղում էր, որից նրա շրթունքները մի պահ բացվում էին և երևում էր կարմիր լեզուն:

Որտե՞ղ էր Պարլոն: Որտե՞ղ էր Հերմիներն: Որտե՞ղ էր խելացի տղան, որ այդպես գեղեցիկ խոսում էր անձնավորություն կառուցելու մասին:

Մի անգամ էլ ես նայեցի հայելու մեջ: Քիչ առաջ խելքս երևի տեղում չէր: Բարձր ապակու մեջ լեզուն տարուրերող ոչ մի գայլ էլ չկար: Հայելու մեջ ես էի կանգնած, կանգնած էր Հարրին՝ գորշ դեմքով, բոլոր խաղերից լքված, բոլոր արատներից հոգնատանջ, սարսափելի գունատ, բայց, այդուհանդերձ, մարդ, այդուհանդերձ, ինչ-որ մեկը, որի հետ հնարավոր էր խոսել:

– Հարրի, – ասացի, – ի՞նչ ես անում այստեղ:

– Ոչինչ, – պատասխանեց նա հայելու մեջ, – ես միայն սպասում եմ: Սպասում եմ մահին:

– Բայց որտե՞ղ է մահը, – հարցրեցի ես:

– Նա կգա, – ասաց հայելու միջինը:

Եվ ես լսեցի, որ թատրոնի դատարկ դահլիճների կողմից հնչում է երաժշտություն, գեղեցիկ ու սարսափելի երաժշտություն, այն երաժշտությունը «Դոն ժուանից», որ ուղեկցում է Քարե հյուրին՝ բեմ մտնելիս: Չարագույժ շեշտերով էին լցնում սառցե հնչյունները ուրվականների այդ տունը՝ գալով անդրաշխարհից, անմահներից:

«Մոցարտն է», – մտածեցի ես և կախարդանքով արթնացրի իմ ներաշխարհի ամենասիրելի և ամենաբարձր դեմքերին:

Այդ պահին իմ ետևում լավեց ծիծաղ, հնչեղ և սառցասառը մի ծիծաղ, որ ծնվել էր մարդուն անձանոք անդրաշխարհի տառաայլալ, անդրաշխարհի աստվածային հումորից: Մտած ու երջանկացած այդ ծիծաղից՝ ես շրջվեցի, և այդ պահին երևաց Մոցարտը, ծիծաղելով անցավ իմ կողքով և անխռով ուղղվեց դեպի օթյակ տանող դռներից մեկը, բացեց այն, ներս մտավ, և ես անհագոթյամբ հետևեցի նրան՝ պատանոթյան ժամանակներին իմ Աստծուն, իմ սիրո և հարգանքի մշտական նպատակին: Երաժշտությունը շարունակում էր հնչել: Մոցարտը կանգնեց օթյակի բազրիքի մոտ, քատրոնից ոչ մի բան չէր երևում, խավարը լցնում էր անսահման տարածությունը:

– Տեսնում եք, – ասաց Մոցարտը, – կարելի է նաև առանց սաքսոֆոնի: Չնայած ես բոլորովին, անշուշտ, չեմ ուզում վիճակորել այդ հրաշալի գործիքը:

– Որտե՞ղ ենք մենք, – հարցրեցի ես:

– Մենք «Դոն Ժուանի» վերջին գործողության մեջ ենք, Լեպորելլոն արդեն ծնկի է իջել: Գերագանց տեսարան է, դե ինչ, երաժշտությունը նույնպես վատը չէ: Թեև նրա մեջ դեռևս շատ է մարդկայինը, այդուհանդերձ՝ լսելի է անդրաշխարհի ձայնը, լսելի է ծիծաղը, այնպես չէ՞:

– Դա վերջին մեծ երաժշտությունն է՞, որ գրվել է, – ասացի ես հանդիսավոր, դպրոցական աշակերտի մտան: – Իհարկե, հետո դեռ Շոբերտը եկավ, եկավ նաև Հուգո Վոլֆը, նաև Խեդե, հրաշալի Շոբերտին ես չպետք է մոռանամ: Գուր կհնճոտում եք Չեր ճակատը, վարպետ, օ՞, այո, նաև Բեթհովենը, նա նույնպես սքանչելի է: Բայց այդ ամենի մեջ, որքան էլ այն գեղեցիկ լինի, առկա են հատվածայնության, փլուզման ինչ-որ տարրեր, նման կատարյալ ամբողջականության երկ «Դոն Ժուան»-ից հետո մարդն այլևս չստեղծեց:

– Մի լարվեք, – սարսափելի ծաղրանքով ծիծաղեց Մոցարտը: – Դուք նույնպես, երևի, երաժիշտ եք: Իսկ ես թողեցի այդ գրադմունքը և անցա հանգստի: Միայն մեկ-մեկ, այն էլ կատակի համար, նայում եմ այս իրարանցմանը:

Նա բարձրացրեց ձեռքերը, ասես՝ չափ տալիս լինեք, և ինչ-որ տեղ բարձրացավ լուսինը, թե՞ մեկ այլ լուսատու, բազրիքի վրայով ես նայում էի անսահման տարածություններին, այն-

տեղ լողում էին մշուշներ ու ամպեր, առկայծում էին լեռներն ու ծովերը, մեր ներքևում ծավալվում էր աշխարհի չափ անվերջանալի մի տափարակ, որ նման էր անապատի: Այդ տափարակի վրա մենք տեսանք ծեր, երկարամորթ, պատվարժան տեսքով մի պարոնի, որը տխրադեմ առաջնորդում էր սևեր հագած հագարավոր մարդկանց վիթխարի երթը: Նրա տեսքը արտում էր ու հուսալքված, և Մոցարտն ասաց:

– Տեսնո՞ւմ եք, դա Բրամսն է: Նա ձգտում է ազատագրման, բայց դրա համար ժամանակը դեռ վաղ է:

Ես հասկացա, որ սեռագեեստ հագարավորները՝ բոլորն էլ այն ձայների ու նոտաների կատարողներն են, որոնք, աստվածայինի տեսանկյունից, ավելորդ կլինեին նրա պարտիտուրաներում:

– Չափից դուրս թանձր գործիքավորում է, չափից դուրս շատ նյութ է ծախված, – գլուխը տարուբերեց Մոցարտը:

Եվ անմիջապես դրանից հետո մենք տեսանք Ռիխարդ Վագներին, որ քայլում էր նույնչափ անհաշվելի մարդկանց գլուխ անցած և զգացիմ, թե ինչպիսի ծանր բեռ են նրա համար այդ հագարավորները: Նա նույնպես, մենք էլ տեսանք, քարշ էր գալիս նահատակի քայլերով:

– Իմ պատանոթյան տարիներին, – տխուր նկատեցի ես, – այս երկու երաժիշտները համարվում էին միմյանց ծայրաստիճան հակառակ:

Մոցարտը ծիծաղեց:

– Այո, դա միշտ այդպես է: Եթե նայենք որոշակի հեռավորությունից, սպա նման հակադրությունները սովորաբար ավելի ու ավելի են իրար նմանվում: Թանձր գործիքավորումը, ի դեպ, ոչ Վագների և ոչ էլ Բրամսի անձնական սխալն էր, դա մոլորությունն էր ժամանակի:

– Ինչպե՞ս: Եվ դրա համար նրանք պետք է այդպես քա՞նկ վճարեն, – կանչեցի ես դատապարտող շեշտով:

– Իհարկե: Ամեն ինչ կպարզվի աստիճանաբար: Միայն այն բանից հետո, երբ նրանք կփակեն ժամանակի հետ իրենց պարտքերը, կերևա, թե, արդյոք, մնացե՞լ են այնքան անհատական գծեր, որոնց համար արժե դրանք գեղչել:

– Բայց նրանք երկուսն էլ մեղավոր չեն դրա համար:

– Իհարկե՞ ոչ: Նրանք մեղավոր չեն նաև, որ Ադամը խնձորը կերել է, բայց ստիպված են դրա համար ապաշխարել:

– Դա սարսափելի է:

– Անշուշտ, կյանքը միշտ էլ սարսափելի է: Մենք մեղավոր չենք, բայց պատասխանատվություն ենք կրում: Ծնվել ես, և արդեն մեղավոր ես: Ինչ զարմանալի կրոնական դաստիարակություն եք ստացել, եթե չգիտեք դա:

Ես ինձ շատ դժբախտ զգացի: Ես տեսա ինքս ինձ իբրև մահվան հոգևորություն ունեցող մի ուխտագնաց, որ քափառում է անդրաշխարհի անապատով՝ ծանրաբեռ բազմաթիվ անպետք գրքերով, որ ինքս էի գրել, բոլոր այդ հողվածներով, բոլոր այդ գրառումներով, հետևից՝ գրաշարների բանակը, որ պետք է աշխատեր դրանց վրա, ընթերցողների, որ պետք է այդ բոլորը կոչ տային: Աստված իմ: Եվ բացի դրանից, կային նաև Ադամն ու խնձորը, և վաղնջական մնացած ամբողջ մեղքը: Այդ ամենը, ուրեմն, պետք էր բավել, անցնել անվերջանալի քավարանի միջով, և միայն դրանից հետո կարող էր ծնվել հարցը, թե, արդյոք, այս ամենից հետո առկա՞ է որևէ անձնական, որևէ սեփական բան, թե՞ իմ բոլոր ջանքերը և դրանց հետևանքը եղել է միայն դատարկ փրփուրը ծովում, միայն անիմաստ խաղ իրադարձությունների հոսքի մեջ:

Իմ երկար դեմքը նկատելով՝ Մոցարտը բարձր ծիծաղեց: Ծիծաղից նա օղի մեջ շրջվեց և սկսեց դավադրել ոտքերով: Այդ անելիս՝ բաղվեց ինձ վրա.

– Հե՛յ, ջահել, կծեցիր լեզուդ անվայել, փայծաղդ սկսեց ցավե՞լ: Հիշեցի՞ր ընթերցողներիդ էլի, էդ մուրքներին սարսափելի, ախորժակով որկրամոլի, և քո գրաշարներին, հերետիկոս գարշապարներին, անիծյալ սաղրիչներին, երկերեսանի լեզվազարներին: Այսպես դեռ խնդացած չէի, ով դու՞ զարմիկդ հրեշի, բարձր այնքան ծիծաղեցի, որ խելքս խապառ կորցրի, քիչ մնաց՝ վարտիքս քրջեի: Ով դու, որ հավատում ես անդադար, հանուն խոսքերիդ տպատառ, հանուն քո սրտի տանջահար, ես մո՞մ կվառեմ ընկերաբար, բայց սոսկ կատակի համար: Մտի տուրակդ բացեցիր, ինչ ասես՝ փչեցիր, մեծ աղմուկ հանեցիր, չար կատակներ սարքեցիր, շատ պաշ խաղացրեցիր, վատ հոտ հանեցիր: Աստված վկա՝ դժոխք կընկնես, գրածներիդ համար անմիտ քոթակ կուտես, զի բոլորն էլ գողացել ես:

Մա արդեն ինձ թվաց չափից դուրս, զայրույթից այլևս ժամանակ չունեի արամուրյանը արվելու: Բռնեցի Մոցարտի մո-

րուքից, նա թռավ-բարձրացավ վեր, նրա մորուքը սկսեց երկարել, ինչպես գիսատողի սյուղ, որի մի ծայրից ես էի կախվել և սլանում էի տիեզերքով: Սառանան տանի, ինչ ցուրտ էր այս աշխարհում: Այդ անմահները սարսափելի սիրում էին նուրացված սառցային օդը: Բայց դա ուրախացնում էր, այդ սառցային օդը, դա ես զգացի արդեն մի կախված ակնթարթ, որից հետո կորցրեցի գիտակցությունս: Ինձ համակեց սաստիկ սուր, պողպատի պես փայլուն, սառցե զվարթությունը, միևնույն հնչեղ, մոլեգին, ոչ երկրային ծիծաղի հրճվանքը, որով ծիծաղել էր Մոցարտը: Բայց այդ պահին շունչս կտրվեց և գիտակցությունս կորցրեցի:

Ես վերստին ուշքի եկա շփոթահար ու ջարդված, միջանցքի սպիտակ լույսը արտացոլվում էր փայլուն հատակին: Ես անմահների հետ չէի, դեռևս նրանց հետ չէի: Դեռ հանելուկների, տառապանքի, Տափաստանի գայլերի, տանջալից հակասությունների այսրաշխարհում էի: Նողկալի վայր է, այստեղ ապրելը անտանելի է: Դրան պետք է վերջ տրվեր:

Պատի մեծ հայելու մեջ՝ իմ դիմաց, կանգնած էր Հարրին: Նրա տեսքը վատն էր, շատ չէր զանազանվում նրանից, որ Հարրին ուներ այն գիշեր պրոֆեսորին այցելելուց կամ «Սև արծվի» պարահանդեսից հետո: Բայց դա շատ վաղուց էր, շատ տարիներ, հարյուրամյակներ առաջ: Հարրին ծերացել էր, սովորել էր պարել, այցելել էր մոզական քառորդ, նա լսել էր Մոցարտի ծիծաղը, պարերից, կանանցից, ամելիներից նա այլևս չէր վախենում: Նույնիսկ չափավորապես օժտված մարդն է հասունանում՝ վազքով անցնելով հարյուրամյակների միջով: Ես հայելու մեջ երկար նայում էի Հարրին՝ դեռ լավ գիտեի նրան, նա դեռ մի փոքր նման էր տասնհինգամյա Հարրին, որը մարտի կիրակիներից մեկում, ժայռերի մեջ, հանդիպել էր Ռոզային և նրա առաջ հանել ճեմարանականի իր գլխարկը: Եվ, այդուհանդերձ, այն ժամանակներից հետո⁵¹, հիմա, նա ծերացել էր հարյուրավոր տարիներով, զբաղվել էր երաժշտությամբ և փիլիսոփայությամբ ու կշտացել դրանցից, «Պողպատե սաղավարում» խմել էր էլզասյան գինի և բարեհամբավ գիտնականների հետ բանավիճել Կրիշնայի շուրջ, սիրել էր Մարիային ու Էրիկային, դարձել էր Հերմիների բարեկամը, ավտոմեքենաներ էր գնդակոծել, քնել էր ողորկամարմին չինուհու հետ, հանդիպել էր Գյոթեին ու Մոցարտին և զա-

նագան տեղերում կտրել-մտել էր ժամանակների ու թվացյալ իրականության ցանցը, որի մեջ նա դեռ բռնված էր: Վերստին կորցրել էր իր շախմատային խաղաքարերը, բայց գրպանում դեռ ունեւր մի հրաշալի դանակ: Առաջ, ծերուկ Հարրի, ծեր, հոգնած պառաւ:

Թուհ, ինչ դառնահամ էր կյանքը: Ես հայելու մեջ թրեցի Հարրիի վրա, ոտքով խփեցի նրան և ջարդուվշուր արեցի: Հանդարտ անցա արծագանք տվող միջանցքով, ուշադիր դիտեցի դռները, որ այնքան հրաշալի բաներ էին խոստանում ինձ. դրանց վրա այլև ոչ մի մակագրություն չկար: Անձայն անցա մոզական թատրոնի հարյուրավոր դռների առջևով: Այսօր չէ՞ր, որ դիմակահանդեսում էի: Այդ օրվանից անցել են հարյուրավոր տարիներ: Շուտով այլևս ոչ մի տարի չի լինելու: Ինչ-որ բան դեռ կար անելու: Հերմիներն սպասում էր դեռ: Տարօրինակ հարսանիք էր լինելու դա: Մի պղտոր ալիք ինձ տարավ առաջ, մոայլորեն լողում էի ինչ-որ ուղղությամբ՝ ես՝ սարուկս, Տափաստանի գայլս: Թուհ, սատանա:

Վերջին դռան մոտ կանգ առա: Պղտոր ալիքը ինձ բշեց այնտեղ: Օ՛, Ռոզա, օ՛, հեռավոր պատանություն, օ՛, Գյոթե և Մոցարտ:

Բացեցի դուռը: Այն, ինչ գտա դռան ետևում, սովորական և գեղեցիկ մի պատկեր էր: Հատակին՝ գորգի վրա, տեսա երկու մերկ մարդկանց՝ պառկած, գեղեցիկ Հերմիներն և գեղեցիկ Պարլոն, կողք կողքի, խոր քնած, խիստ հոգնած սիրո խաղերից, որ թվում էին անհագուրդ, բայց շատ արագ հոգնեցնող: Գեղեցիկ, գեղեցիկ արարածներ, աննման պատկերներ, հրաշալի մարմիններ: Հերմիների ձախ կրծքի տակ թարմ, կլոր մի նշան կար, մուգ արնահոսքով՝ սիրո խայթը Պարլոյի գեղեցիկ, փայլուն առամներից մնացած: Այնտեղ, որտեղ նշանն էր, ես խրեցի իմ դանակը՝ որքան մխրճվեց շեղքը: Արյունը հոսեց Հերմիների ճերմակ, նուրբ մաշկն ի վար: Ես այդ արյունը կենդանուհի համբույրով, եթե ամեն ինչ մի փոքր այլ լիներ, եթե դասավորվեր մի փոքր այլ կերպ: Բայց ես դա չարեցի, միայն նայում էի ուշադիր, թե ինչպես է հոսում արյունը, և տեսա, որ մի պահ բացվեցին նրա աչքերը՝ ցավով ու խոր զարմանքով լի: «Հերմիներն ինչու է զարմացած», - մտածեցի ես: Այնուհետև մտածեցի, որ անհրաժեշտ է փակել նրա աչքերը: Բայց դրանք իրենց իրենց փակվեցին նորից: Գործը արված էր: Նա միայն

փոքր-ինչ թեքվեց կողքի, ես տեսա, թե ինչպես քատակից դեպի կուրծքը ձգվեց քնքշանուրբ մի սովերացույթ, որն ինձ հիշեցնում էր ինչ-որ բան: Մոռացա: Ապա Հերմիներն անշարժացավ:

Երկար նայում էի ես նրան: Վերջապես, կարծես արթնացա քնից և ցանկություն ունեցա գնալու: Այդ պահին տեսա, թե ինչպես ձգվեց Պարլոն, տեսա, թե ինչպես էր բացում աչքերը և ուղղում անդամները, տեսա, թե ինչպես է կրպուցել մեռած գեղեցկուհու վրա և ժպտում է: Երբեք այդ տղան լուրջ լինել չի կարող, մտածեցի, ամեն ինչի վրա ծիծաղում է: Պարլոն զգուշորեն ետ ծալեց գորգի անկյունը և մինչև կուրծքը ծածկեց Հերմիներին, այնպես որ վերքը այլևս չէր երևում և անաղմուկ դուրս եկավ օրյակից: Ո՞ր գնաց նա: Բողոքն ինձ մենա՞կ են թողնում: Ես մենակ մնացի կիսածածկ մեռյալի հետ, որին սիրում էի ու նախանձում: Նրա գունատ ճակատն ի վար կախված էր մանկական խոպույր, խիստ գունատ դեմքի վրա փայլում էին կարմիր շրթունքները, որ մի փոքր բացված էին, նրա մազերը հրաշալի բուրում էին՝ երևան հանելով փոքրիկ, քնքշանուրբ ականջը:

Ահա և նրա ցանկությունը իրականացավ: Մինչ ամբողջությամբ կդառնար իմը, ես սպանեցի իմ սիրեցյալին: Ես կատարել էի անհավատալի բան, և, ահա, ծնկի իջա՝ չիմանալով, թե ինչ է նշանակում այդ արարքը, չիմանալով անգամ՝ ճիշտ է այն, արդարացի, թե՞ ընդհակառակը: Ի՞նչ կասեր այդ արարքի մասին այն խելացի շախմատ խաղացողը, ի՞նչ կասեր Պարլոն: Ոչինչ չգիտեի, ես անկարող էի մտածել: Հանգչող դեմքի վրա ավելի ու ավելի պայծառ էին շողում ներկված շրթունքները: Այդպես էր եղել իմ ողջ կյանքը, այդպիսին էին իմ փոքրիկ երջանկությունն ու սերը՝ ճիշտ և ճիշտ նման այս լուսած շրթունքներին՝ թեթևորեն վարդագույն մեռած դեմքի վրա:

Եվ ահա մեռած դեմքից, մեռած ճերմակ ուսերից, մեռած ճերմակ ձեռքերից, դանդաղորեն սողալով, վեր էին բարձրանում սնրսափը, ձմեռային ամայությունը և մենակությունը, դանդաղորեն, դանդաղորեն աճող սառնությունը, որի մեջ իմ ձեռքերն ու շրթունքները սկսեցին սառչել: Մի՞թե ես հանգցրեցի արևը: Մի՞թե սպանեցի ամենայն կենդանի սիրտ: Մի՞թե սաներխոսումն էր տիեզերքի մահացու ցրտի:

Գողահար նայում էի նրա քարացած ճակատին, քարացած խոսքերին, ականջախեցու գունատ-սառնավուն առկայծումին: Մառնությունը, որ փչում էր նրանցից, մահացու էր և, այդուհանդերձ՝ գեղեցիկ. այն հնչում էր, հրաշալիորեն ծածանվում, դա երաժշտություն էր:

Մի՞թե մի ժամանակ, նախկին օրերում, ես արդեն չէի զգացել այս սարսափը, որը միևնույն պահին կարծես նման լիներ երջանկության: Մի՞թե արդեն մի անգամ ես չէի լսել այս երաժշտությունը: Այո, Մոցարտի մոտ, անմահների:

Հիշեցի բանաստեղծությունը, որ ինքս մի օր՝ նախկինում, գտել էի ինչ-որ տեղ.

Իսկ մենք ապրում ենք այստեղ՝ հեռավոր
Աստղասառցային երեքի մեջ մեր,
Ոչ ժամանակ ենք ճանաչում, ոչ օր,
Ոչ այր ենք, ոչ կին, ոչ ջահել, ոչ ծեր...
Մառն, անփոփոխ է գոյությունը մեր,
Մառն, աստղային՝ մեր ծիծաղը հար:

Այդ պահին օթյակի դուռը բացվեց ու ներս մտավ, ես նրան ճանաչեցի միայն երկրորդ անգամ նայելով, Մոցարտը՝ առանց կեղծամի, առանց մինչև ծնկները հասնող վարսիքի և առանց ճարմանդավոր կոշիկների, այլ ժամանակակից հագուստով: Նա շատ մոտ նստեց իմ կողքին, այնքան մոտ, որ ձեռքս կհասներ նրան ետ պահելու համար, որպեսզի նրան չքավեր Հերմիների կրծքից հատակին թափված արյունը: Նա նստեց ու սկսեց կենտրոնացած զբաղվել մանր մի քանի սարքերով ու գործիքներով, որ դրված էին կողքին: Նա շատ մտահոգ ինչ-որ բաներ էր պատեցնում գործիքներով, և ես զարմանքով նայում էի նրա ճարպիկ, արագաշարժ մատներին, որ մի ժամանակ սիրով տեսել էի դաշնամուր նվագելիս: Մտախոհ նայում էի նրան, ավելի ճիշտ՝ ոչ մտախոհ, այլ երագկոտ, ամբողջովին արվելով նրա գեղեցիկ, խելացի տպավորությանը՝ ջերմանալով և փոքր-ինչ երկյուղելով նրա մերձությունից: Թե ինչ էր նա անում, ինչ էր պատեցնում ու հարմարեցնում՝ կարևոր չէր ինձ համար:

Իսկ դա ռադիոընդունիչ էր, որը նա կարգի բերեց, գտավ համապատասխան ալիքը և միացնելով բարձրախոսը՝ ասաց.

– Սա Մյունխենն է, հաղորդում են Հենդելի ֆա-մաժոր «Կոնչերտո գրոստոն»:

Եվ, իրոք, ի հաստատումն իմ աննկարագրելի զարմանքի և սոսկումի, քիթեղյա սատանայական ձագարը շուտով դուրս քրեց բրոնխային խորխի ու ծանված ռեաինի այն խառնուրդը, որը երաժշտություն են անվանում գրամոֆոն ունեցողները և ռադիոյի մասնագետները, իսկ պղտոր խորխի և խախոցների հետևում, ինչպես կեղտի թանձր շերտի տակ՝ իբրև հին, արժեքավոր գեղանկար, երևում էր այդ աստվածային երաժշտության ազնվական էությունը. արքայական կառույցը, սառը, խորախոր շունչը, նրա լայն, լարավոր լիաձայնությունը:

– Աստված իմ, – կանչեցի ես սարսափած, – ի՞նչ եք անում, Մոցարտ: Մի՞թե անյուրջ եք այնքան, որ Ձեզ և ինձ ստիպում եք լսել այս անպետքությունը, որ մեզ վրա եք բաց թողնում այս նողկալի գործիքը՝ մեր ժամանակի հաղթանշանը, նրա վերջին հաղթական զենքը արվեստը ոչնչացնելու կովում: Մի՞թե առանց դրա չի կարելի, Մոցարտ:

Օ՛, ինչպես ծիծաղեց այդ ահավոր մարդը, ինչ սառը և ուրվականային, ինչ անձայն և, այդուամենայնիվ, ամեն ինչ ավերող ծիծաղով: Անկեղծ հաճույքով նայում էր նա իմ տանջանքին, պատեցնում էր անիծյալ պատուակները, շրջում քիթեղյա ձագարը: Ծիծաղելով՝ շարունակում էր տաքածության մեջ կաթ-կաթ ծորացնել աղավաղված, անշնչացած և թունավորված երաժշտությունը, ծիծաղելով՝ պատասխան տվեց ինձ.

– Խնդրեմ, թողեք ոգևորությունը, իմ բարի հարևան: Ի դեպ, Գուր ուշադրություն դարձրե՛՛ր եք այս ռիտարդանդոյին* : Գյուտ է, հը՞: Այո, այդ դեպքում ընդունեք Ձեր մեջ, ով անհամբեր պարոն, այս ռիտարդանդոյի զաղափարը, լսո՞ւմ եք բասերը: Նրանք անցնում են քայլով, ինչպես աստվածներ, և թող ծերուկ Հենդելի այս գյուտը թափանցի ու հանգստացնի Ձեր անհանգիստ սիրտը: Ունկնդիր եղեք, ով մարդուկ, լսեք առանց ոգևորության և առանց կատակի, թե ինչպես է, իրոք, այս ծիծաղելի գործիքի անհուսալիտեն հիմար աղմուկի տակ առկայծում աստվածային երաժշտության հեռավոր էությունը: Ուշադիր լսեք, այն, Ձեզ շատ բան կտվորեցնի: Ի նկատի ունեցեք, թե ինչպես է այս խելագար ձայնավորը անում, թվում է,

* Ռիտարդանդո – երաժշտական տեմպ (լատ. → իտ.):

աշխարհի ամենահիմար, ամենաանպետք և ամենաարգելված բանը և ինչ-որ տեղ կատարվող երաժշտությունն առանց ընտրության, հիմարավարի և կուրորեն, միաժամանակ ցավալիորեն աղավաղելով այն՝ ցփնում նրա համար բոլորովին օտար, նրան ամենասահարիք տեղերում և, այդուամենայնիվ, ինչպես չի կարողանում ոչնչացնել այդ երաժշտության նախնական ոգին, այլ նրա վրա միմիայն ցուցադրում իր տեխնիկայի անօգնականությունն ու անհոգի գործնականությունը: Լավ լսեք, ով մարդուկ, դա պետք է Ձեզ: Սրեք ձեր ականջները: Այդպես: Եվ հիմա դուք լսում եք ոչ միայն ռադիոընդունիչի կողմից բռնաբարված Հենդել, որ նույնիսկ այս ամենամոդկալի տեսքով աստվածային է, Դուք, հարգելիս, միաժամանակ տեսնում ու լսում եք կյանքի մի գերազանց օրինակ առհասարակ: Երբ լսում եք ռադիոընդունիչը, Դուք լսում ու տեսնում եք նախնական կոնիվը գաղափարի և նրա արտահայտության, հավերժության ու ժամանակի, աստվածայինի և մարդկայինի միջև: Նման այն բանին, սիրելիս, ինչպես ռադիոն տասը բույսի ընթացքում աշխարհի ամենահոյակապ երաժշտությունը վերածում է անմտության, այն առանց ընտրության դուրս շարժում ամենասահարիկ վայրերում, քաղքենի սալոններում և ձեռնահարկային մանր սենյակներում՝ իր շողակրատ, շատակեր, հորանջող, քնող արոնենտների միջավայրում, ինչպես է նա երաժշտությունից գողանում նրա զգայական գեղեցկությունը, ինչպես է փչացնում այն, ծամածռում և լորձուքոտում, բայց, այնուամենայնիվ, չի կարողանում ամբողջովին սպանել նրա ոգին, նույն կարգով և կյանքը, այսպես կոչված՝ իրականությունը, առանց ընտրության այս ու այն կողմ է շարժում աշխարհի հոյակապ կերպածները, բույլ է տալիս, որ Հենդելի երաժշտությանը հաջորդի միջին արդյունաբերական ձեռնարկություններում հաշվեկշռի հաշվարկման մեխանիզմի մասին հաշվետվությունը, նվագախմբի երաժշտության կախարդական հնչյունները վերածում տհաճ հնչախորհի, ամենուրեք իր տեխնիկան, իր գործամոլությունը, իր ամայացնող բնական կարիքը և ոչնչամտությունը խցկում գաղափարի և իրականության, նվագախմբի և ականջի միջև: Ամբողջ կյանքն է այդպիսին, փոքրիկս, և մենք պետք է թողնենք նրան մնալ այդպիսին, և եթե ավանակներ չենք, պետք է ուրախ լինենք դրա համար: Չեր նման մարդկանց բոլորովին չի սագում քննադատել

ռադիոն կամ կյանքը: Ավելի լավ է՝ Դուք սովորեք նախ լռություն լսել: Սովորեք լռություն վերաբերվել այն բանին, ինչ արժանի է լուրջ վերաբերմունքի, և ծիծաղեք մնացյալ բաների վրա: Իսկ մի՞թե Դուք ինքնեղ վարվել եք ավելի լավ, ավելի ազնիվ, ավելի խելոք, ավելի ճաշակավոր: Օ՛, ոչ, մայր Հարրի, Դուք այդպես չեք վարվել: Դուք Չեր կյանքից դուրս եք բերել հիվանդության ինչ-որ զգվելի պատմություն, Չեր շնորհներից՝ դժբախտություն: Եվ Դուք, ինչպես տեսնում եմ, այսպիսի գեղեցիկ, այսպիսի հմայիչ ջանքեր աղջկա համար չեք գտել այլ բան, քան դանակահար անելը և սպանելը: Դուք դա համարում եք ճիշտ:

– Ճի՞շտ: Օ՛, ոչ,– բացականչեցի ես:– Աստված իմ, այդ ամենն այնպես սուտ է, այնպես դաժանորեն հիմար ու վատ: Ես անասուն եմ, Մոցարտ, չար, հիմար անասուն, հիվանդ և փչացած, Դուք հազար անգամ իրավացի եք: Իսկ ինչ վերաբերում է այս աղջկան, ապա նա ինքն է այդպես կամեցել, ես միայն նրա ցանկությունն եմ կատարել:

Մոցարտն անձայն ծիծաղեց, բայց բարի եղավ անջատել ռադիոընդունիչը:

Իմ արդարացումը, չնայած ես դրան հավատում էի դեռ մաքուր սրտով, ինձ անսպասելիորեն թվաց բավական հիմար: Երբ մի ժամանակ Հերմինեն, հիշեցի հանկարծակի, խոսում էր ժամանակի և հավերժության մասին, ես անմիջապես պատրաստ էի նրա մտքերը իմ մտքերի արտացոլում համարել: Իսկ միտքն այն մասին, թե ես պետք է սպանեմ նրան, Հերմինեի սեփական գյուտն ու ցանկությունն էր և ինձ հետ ամենաչնչին կապ չունեք, ես ընդունում էի իբրև ինքնին հասկանալի բան: Բայց ինչու այն ժամանակ այդ սարսափելի և օտարոտի միտքը ես չէի ընդունել պարզապես, չէի հավատացել, այլ նույնիսկ գուշակել էի վաղօրոք: Ո՞չ այն պատճառով, գուցե, որ այն իմ սեփական միտքն էր: Եվ ինչու սպանեցի Հերմինեին հենց այն պահին, երբ նրան գտա Պարբլի գրկում՝ մերկ: Մոցարտի անձայն ծիծաղը հնչեց ամենիմաստությամբ ու ծաղրանքով լի:

– Հարրի,– ասաց նա,– Դուք կատակարան եք: Մի՞թե իրականում այս գեղեցիկ աղջիկը Չեզնից այլ բան չէր ցանկանում, քան դանակի հարվածը: Դա պատմեք որևէ այլ մարդու: Դե, չնայած դանակը խրեցիք գերազանց, բայց խեղճ աղջիկը շունչը փչել է: Ժամանակն է, երևի, որ ինքդ քեզ համար պար-

գաբաներ Չեր կնամեծարության հետևանքները այս տիկնոջ նկատմամբ: Թե՞ Դուք ցանկանում եք խուսափել պատասխանատվությունից:

– Ոչ,– բացականչեցի ես:– Մի՞թե Դուք ոչինչ չեք հասկանում: Խուսափել պատասխանատվությունից: Եթե ես որևէ բան եմ փափագում, ապա միայն ապաշխարանք, ապաշխարանք, ապաշխարանք, գլուխս կացնի տակ դնել և ինձ պատժել, ինձ ոչնչացնել:

Մոցարաը նայում էր ինձ անտանելի ծաղրանքով:

– Որքան պաքետիկ եք միշտ: Բայց Դուք դեռ կրնաեղանաք երգիծանքին, Հարրի: Երգիծանքը մշտապես կախաղան հանվածի երգիծանքն է, և հարկ եղած դեպքում Դուք կրնաեղանաք դրան հենց կախաղանի վրա: Պատրաստ եղեք դրան: Այո՞: Բարի, այդ դեպքում գնացեք դատախազի մոտ և ներկայացրեք երգիծանքից գուրկ ողջ դատական քաշքշուկը մինչև այն պահը, երբ վաղ առավոտյան, բանտում սառնասրառներն կկտրեն Չեր գլուխը: Դուք, ուրեմն, պատրաստ եք:

Հանկարծ իմ աչքերի դեմ բռնկվեց մակագրություն.

Հարրիի մահապատիժը

և ես, ի նշան համաձայնության, գլխով արեցի: Ենդապատ, փոքր լուսամուտներով չորս պատերի միջև դատարկ գավիթ, մարտիր սրբած, հարդարված գիյոտին, պարեզոտ և սևեր հագած մի տասնյակ պարոններ, և ես կանգնած էի մեջտեղում՝ վաղ առավոտվա պաղ օդից դողահար, խեղճ սիրոս սարսափից կծկված, սակայն պատրաստ և համաձայն: Հրամանին հնազանդ՝ ես առաջ եկա և ծնկի իջա: Դատախազը հանեց իր գլխարկը ու թեթևակի հագաց, և մնացած բոլորը նույնպես թեթևակի հագացին: Նա բացեց պաշտոնական ինչ-որ թուղթ և սկսեց կարդալ.

– Պարոնայք, ձեր առաջ կանգնած է Հարրի Հայլերը՝ մեղադրյալ և իր մեղքը ընդունած, այն է՝ մեր մոզական թատրոնը միտումնավոր չար նպատակներով օգտագործելու: Հայլերը ոչ միայն վիրավորել է բարձր արվեստը, շփոթելով մեր գեղեցիկ պատկերասրահը, այսպես կոչված, իրականության հետ և աղջկա հայելային անդրադարձը մահացու խոցելով դանակի հայելային անդրադարձումով, այլև, դրանից բացի, ոչ երգի-

ծական եղանակով ցուցաբերել է մեր թատրոնը իրրև ինքնապանության մեքենա գործածելու մտադրություն: Այդ պատճառով մենք Հայլերին դատապարտում ենք հավիտյան ապրելու պատժի և զրկում ենք տասներկու ժամով մեր թատրոն մասնելու իրավունքից: Մեղադրյալը չի կարող ազատվել նաև մեկ անգամ ծաղրի ենթարկվելու պատժից: Պարոնայք, սկսեք՝ մեկ, երկու, երեք:

Եվ երեք թվի հետ բոլոր ներկաները բարեխղճորեն բռնվեցին ծիծաղով, բարձրյալների խմբի ծիծաղով, ահագող, անդրաշխարհի այն ծիծաղով, որը մարդկանց համար անտանելի է:

Երբ ուշքի եկա, կողքիս առաջվա պես նստած Մոցարաը թփթփացրեց ուխտ և ասաց.

– Դուք լսեցի՞ք Չեր դատավճիռը: Ուրեմն, ստիպված եք ընդունել, որ առաջիկայում ևս լսելու եք կյանքի ռադիոեռաժշտությունը: Դա Չեզ համար օգտակար կլինի: Դուք, սիրելի հիմարիկ, անսովոր չափով թույլ ընդունակություններ ունեք, բայց հիմա քիչ-քիչ հասկացաք, թե ինչ է պահանջվում Չեզանից: Դուք պետք է սովորեք ծիծաղել՝ ահա թե ինչ է պետք: Դուք պարտավոր եք հասկանալ կյանքի ծիծաղը, այս կյանքի կախաղանային ծիծաղը: Բայց Դուք, բնականաբար, նաև պատրաստ եք ամեն բանի այս աշխարհում, ոչ միայն նրան, ինչ պահանջվում է Չեզանից: Դուք պատրաստ եք մահացու դանակահարել աղջկա, պատրաստ եք հանդիսավորապես մահապատժի ենթարկվել: Դուք, հավանաբար, պատրաստ կլինեք նաև հարյուր տարի շարունակ ձաղկել ինքներդ Չեզ և խարազանել: Թե՞ ոչ:

– Օ, այո, սրտանց պատրաստ եմ,– բացականչեցի ես խեղճացած:

– Բնական է: Չեզ, մեծահոգի իմ պարոն, կարելի է մղել ամեն մի հիմար և ծիծաղից գուրկ արարքի, ամեն բանի, ինչը պաքետիկ է և գուրկ է կատակից: Իսկ ինձ նման բանի մղել անհնար է, Չեր ամբողջ ռոմանտիկ ապաշխարանքի համար չէի տա անգամ մեկ գրոշ: Դուք ուզում եք մահապատժի ենթարկվել: Դուք ուզում եք, որ Չեր գլուխը կտրեն, ով դիվոտած մարդ: Այդ հիմար գաղափարի համար Դուք պատրաստ եք դեռ տասնյակ սպանություններ կատարել: Դուք կամենում եք մեռնել, փոքրոգի մարդ, ոչ թե ապրել: Սառսանան տանի, բայց

Դուք պետք է հենց ապրեք: Արդարացի կյիներ, որ Չեզ դա-
տապարտեին ամենաձանր պատժին:

– Օհ, իսկ ո՞րն է այդ պատիժը:

– Մենք կարող էինք, օրինակ, այս աղջկան վերակենդա-
նացնել և քեզ ամուսնացնել նրա հետ:

– Ոչ, ես դրան պատրաստ չեմ: Աղետ կյիներ դա:

– Կարծես քե դու արդեն իսկ աղետի մեջ չես: Բայց պաթե-
տիկային և սպանությանը այժմ պետք է վերջ տրվի: Խելքի ե-
կեր վերջապես: Դուք պատրաստվում եք ապրել և պարտավոր
եք ծիծաղել սովորել: Դուք պարտավոր եք կյանքի ռադիոնե-
րաժշտության ունկնդիր լինելուն սովորել, պարտավոր եք փա-
ռաբանել նրա հետևում թաքնված ոգին, պարտավոր եք ծիծա-
ղել սովորել նրա թոհորոհի վրա: Ընդամենը սա է, Չեզանից
այլ բան չեն պահանջում:

Ցածրածայն, սեղմած առամներիս արանքից հարցրեցի.

– Իսկ եթե հրաժարվե՞մ: Իսկ եթե Չեզ, պարոն Մոցարտ, ի-
րավունք չտա՞մ տնօրինել Տափաստանի գայլին և ուղղորդել
նրա ճակատագիրը:

– Այդ դեպքում,– բարեկամաբար ասաց Մոցարտը,– ես
կառաջարկեի Չեզ մեկ անգամ էլ ծխել իմ հրաշալի սիգարետե-
րից:

Եվ մինչ նա ասաց դա և ինչ-որ կախարդանքով պիջակի
գրպանից հանելով սիգարը՝ պարզեց ինձ, նա այլևս Մոցարտը
չէր, այլ ինձ էր նայում ջերմ, տարաշխարհիկ աչքերով մեկը և
դա իմ բարեկամ Պարթուն էր, միաժամանակ, ինչպես երկվոր-
յակ, նման էր այն մարդուն, որը ինձ սովորեցրեց պատկերիկ-
ներով շախմատ խաղալ:

– Պարթո,– կանչեցի ես սարսուռով,– Պարթո, որտե՞ղ ենք
մենք:

Պարթուն ինձ սվեց սիգարը և նրան մոտեցրեց կրակը:

– Մենք,– ժպտաց նա,– իմ մոզական քառորդում ենք, և ե-
թե, բան է, ուզում ես տանգո սովորել, զեներալ դառնալ կամ
զրուցել Ալեքսանդր Մեծի հետ, ապա այդ ամենը հաջորդ ան-
գամ կկատարվի քեզ համար: Բայց քեզ, Հարրի, պետք է ա-
սեմ, որ ինձ մի փոքր հուսախաբ արեցիր: Դու բոլորովին կորց-
րեցիր գլուխդ, դու փչացրեցիր իմ փոքրիկ թատրոնի երգիծանե-
քը և պատճառ դարձար անկարգությունների, դու հարվածե-
ցիր դանակով և իրականության բծերով սղծեցիր պատկերնե-

րի մեր փառավոր աշխարհը: Հուսով եմ, որ դու, ամեն դեպ-
քում, դա կատարեցիր գոնե խանդից մղված, երբ տեսար Հեր-
մինեին ու ինձ այստեղ պատկած: Այդ պատկերի հետ, ցավոք
սրտի, դու չկարողացար վարվել ըստ պատշաճի, հուսով եմ,
դու այդ խաղը կսովորես ավելի լավ: Ոչինչ, դա կարելի է ուղ-
ղել:

Նա վերցրեց Հերմինեին, որ նրա մատների մեջ դարձավ
փոքր խաղապատկերիկ և այն խոթեց պիջակի գրպանը, որ-
տեղից քիչ առաջ հանել էր սիգարը:

Հաճելի էր քաղցրահամ, թանձր ծխի բույրը, ես ինձ զգում
էի ամայացած և պատրաստ էի մի տարի քուն մտել:

Օ՛, ես հասկացա ամեն ինչ, հասկացա Պարթոյին, հասկա-
ցա Մոցարտին, իմ ետևում ինչ-որ տեղ լսեցի նրա ծիծաղը, զի-
տեի, որ կենսախաղի հարյուր-հազարավոր պատկերիկները
իմ գրպանում են, ես զարմանքով հասկացել էի դրանց իմաս-
տը, կուզենայի նորից մի անգամ էլ սկսել խաղը, նրա տառա-
պանքները մի անգամ էլ ճաշակել, նրա անհեթեթություններից
մի անգամ էլ սոսկալ, մի անգամ էլ, անթիվ անգամներ նորից
անցնել իմ ներաշխարհի դժոխքի միջով:

Օրերից մի օր ես կտվորեմ այս խաղը ավելի լավ խաղալ:
Օրերից մի օր ես կսովորեմ ծիծաղել: Ինձ էր սպասում Պար-
թուն: Մոցարտն սպասում էր ինձ:

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵՆ ԵՎ ԻՐ ԱՆՍՈՎՈՐ ՎԵՊԸ

20-րդ դարի գրականության պատմության մեջ Հերման Հեսսեն (1877-1962) ամենախնդրատիպ դեմքերից մեկն է: Նրա անունը մեր օրերում կապվում է հոգևոր մեծ ներուժ ունեցող և բարոյական բարձր իդեալների միտված գրականության հետ: Արտակարգ օժտվածությունը նրան հնարավորություն էր տալիս ստեղծագործել գրական գրեթե բոլոր հիմնական ժանրերում, թեև փառք նրան բերեց արձակը, մասամբ նաև քնարերգությունը: 1987թ. Մայնի Ֆրանկֆուրտում հրատարակված 12 հատորյակը ամփոփում է գրողի ամբողջական ժառանգությունը, որում, ի շարք արձակի և բանաստեղծության, տեղ են գտել նաև Հեսսեի դրամատիկական, օրագրային, քննադատական-մշակութաբանական, հրապարակախոսական գործերը և հարուստ նամակահին: Ավելացնենք, որ Հեսսեն նաև նկարում էր, գրում երաժշտություն:

Կյանքի վերջին տարիներին, խսելով իր հոգեմտավոր զարգացման մասին, Հեսսեն նշում է այն երեք ակունքները, որոնց ուժեղ ազդեցությունը կրել է ինքը՝ հայրական տան քրիստոնեական, ազգայնականությունից ամբողջությամբ զերծ ուզին, մեծ չինացիների ուսմունքները և մշակույթի պատմաբան Յակոբ Բուրկհարդարը:

Հեսսեն ապրեց բարդ, դարձողարձիկ ժամանակներում: Նրա գրական ճանապարհին այբի է ընկնում տևականությամբ (շուրջ 60 տարի), սեփական գեղարվեստական ինքնության համար և տրևաչան որոնմամբ: Նա ուշ հասավ գեղարվեստական խոսքի այն որակին, որին ձգտում էր շարունակ, հասավ ինքնաճանաչման դժվարին ճանապարհով, և նրա ժառանգությունը մի ընդհանուր հայացքի տակ առնելիս՝ անհնար է չտեսնել սկզբնական և ուշ արձակի միջև առկա գեղագիտական գաղափարական վիթխարի զանազանությունները:

Սկսնակ Հեսսեն, «Պեաեր Կամենցինդ» (1904), «Անիվների տակ» (1906). «Գերտորտ» (1910), խորապես ավանդապաշտ էր, շարունակողը Մյորիկեից, Ռ-աաբեից, Շթրմից ու Շրիֆտերից եկող գեղագիտության ու աշխարհընկալման («...ես ապրում էի ողջ աշխարհի հետ ներդաշն», - այդ տարիների մասին գրում է Հեսսեն): Հետագա տարիներին, սակայն, 10-ական քվականների կեսերից սկսած, գրողի ուշադրությունը առավելապես կենտրոնանում է դրսից և ներսից քառսի մեջ հայտնված ու տառապող մարդու և նրա հոգևոր ամբողջականության որոնման խնդիրների վրա՝ «Դեմիան» (1919), «Միդ-հարա» (1922) «Տափաստանի գայլը» (1927): Վերջին շրջանում Հեսսեի համար առավել բնորոշ է դառնում իրականության մոգական ընկալումը («Հույունքախաղ»): Ակնհայտ զանազանություններ ունենալով հանդերձ՝ նրա երկերը, սակայն, ներքին տրամաբանությամբ, իրրև միևնույն առասպելի տարրերը հասակներ, շողկապված են իրար: «Գրեթե բոլոր արձակ գործերը, որ գրել եմ ես, - նշում է Հեսսեն, - ոգու կենսագրություններ են, նրանց մեջ խոսվում է ոչ թե պատմությունների, այլ մեծապիսի բարդ ու խճճված հյուսվածքների մասին, այլ դրանք, ըստ էության, մենախոսություններ են, որոնցում դիտարկվում է մեկ եզակի դեմք...»:

Հերսսեի արձակը բազմաշերտ է, բազմադեմ: Նրանում կարելի է տեսնել անցյալի և մոդեռն գրական զանազան ուղղությունների ու մտածողությունների դրոշմը դաստիարակության վեպից մինչև էքսպրեսիոնիզմ, սենտիմենտալիզմից մինչև սյուրռեալիզմ: Գերմանական գրականության պատմության մեջ ընդունված է, օրինակ, նրա սկզբնական շրջանի գործերը համարել նոր ռոմանտիկական (Հ. Պոնգս), թեև ռոմանտիզմի գծեր ակնհայտ են Հեսսեի գրեթե բոլոր վեպերում:

Հեսսեի ստեղծագործությունը նաև խորապես ինքնակենսագրական է: Նա ծնվել է Հարավային Գերմանիայի Կալվ քաղաքում, հասակ առել ու ձևավորվել շվարական բարեպաշտության, բարենոգի յստության, քրիստոնեական պիետիզմի և բարոյական հստակ պատկերացումների միջավայրում: Ընտանեկան ավանդույթից է գալիս նաև երիտասարդ Հեսսեի ոգևորությունը արևելյան (հնդկական և չինական) իմաստասիրական ուսմունքներով (հայրը և մայրը մի կարճ ժամանակա-

հատված միսիոներներ էին Հնդկաստանում), որից սակայն Հեսսեն հետագայում ստեղծեց մի անբողջ «կյանքի փիլիսոփայություն»:

Հեսսեի գրական դիմնանկարի կարևոր գծերից է և «շվաբական համառությունը»: «Բավական է լսել» «Դու պարտավոր ես», որպեսզի իմ մեջ ամեն ինչ տակնուվրա լիներ, և ես դառնում էի անտղղելի», – հիշում է գրողը:

Ստեղծագործական գրեթե ողջ ճանապարհի ընթացքում նա հավատարիմ մնաց իր մտածողությանն ու կենսակերպին, եղավ մենակյաց՝ բառի բուն, արևելյան իմաստով, ապրեց եվրոպական մեծ քաղաքներից ու մշակույթի կենտրոններից գրեթե հեռու, բայց ոչ հեռու մշակութային ու քաղաքական կյանքից: Բայց դա կաֆկայական մեկուսացումը չէր՝ կյանքի բոլոր ձևերի արմատական մերժմամբ: Ընդհակառակը, Հեսսեն ապրեց լիարժեք կյանքով և կարողացավ հաստատել իր կենսակերպի, ստեղծագործական իր ճանապարհի և մտածողության ճշմարտացիությունը: Լավագույն երկերը, որ ստեղծվեցին նրա գրչի տակ, 20-րդ դարի մարդու հոգևոր որոնումների արդյունք են և անկեղծ ճիզեր՝ միմյանց մոտեցնելու Ոգին և Բնությունը, Դուրսը և Ներսը, Բանականությունը և Բնագիր, Գիտությունը և Արվեստը:

«Տափաստանի գայլը» վեպը ամփոփումը եղավ 10-20-ական քվականների որոնումների, որոնք գրողի համար ամենածանրն էին ու ճզնաժամայինը, բայց և ամենարեղունը: Վեպը մեծապես ամրապնդեց այն հաջողությունը, որ գրողին բերել էր «Դեմիանը»:

Մտաջին համաշխարհային պատերազմը արմատապես փոխեց Հեսսեի հայացքը մարդու և իրերի հանդեպ, նրան բեյադրեց սոստեցումներ և սկզբունքներ, որոնք մինչ այդ անծանոթ էին: Պատերազմի բերած հոգևոր ցնցումներին հաջորդեցին նաև անձնական կորուստները (մահացավ հայրը (1916), ապա խեղազարվեց կինը՝ ծանր հոգեկան եփվանդության ախտորոշմամբ): Հոգեբանության, հատկապես հոգեվերլուծության խնդիրները ակամա հայտնվեցին գրողի ուշադրության կենտրոնում: Ի տարբերություն ժամանակակից առանձին գրողների (օրինակ՝ Ռիլկեի կամ Չեստերտոնի), ովքեր բերա-հավատ էին Ֆրեյդի հայտնագործությունների նկատմամբ,

Հեսսեն ամբողջությամբ տարվեց հոգեվերլուծությամբ, նրա մտերիմները դարձան Կ. Գ. Յունգը և նրա աշակերտ Յ. Բ. Լանգը, որոնցից նա վերցնում էր հոգեբանության դասեր: Հեսսեն, նույնիսկ պահպանելով իրեն յուրահատուկ քննական մոտեցումը, 1918թ. գրեց էսսե՝ «Արվեստագետը և հոգեվերլուծությունը» վերնագրով: Ներաշխարհային խնդիրները, որ Հեսսեի գրականության համար մշտապես առանցքային էին, անձի ֆրեյդյան կառուցվածքի և հատկապես Յունգի խորքային հոգեբանության մեկնաբանություններով ստացան նոր բովանդակություն: Անշուշտ, դեպի ներսը հայացքը նորություն չէր գրականության պատմության համար. «Ճանաչիր ինքդ քեզ» կարգախոսից մինչև Օգոստինոս Երանելու, Շերսպիրի, Գյոթեի և այլոց հոգեբանական հայտնագործությունները, օրինակ՝ Համլետի հանրահայտ խոստովանությունը՝ «...իմ մեջ այնպիսի բաներ եմ տեսնում, որ ավելի լավ էր՝ մայրս ինձ ծնած չլիներ», քաջածանոթ էին Հեսսեին: Մակայն հենց հոգեվերլուծությունը նրան հնարավորություն տվեց որոշակիորեն տեսնելու հասարակական մեծ ու փոքր աղետների և մարդու անհատական արատների խոր կապվածությունը՝ իբրև օբյեկտիվ ճշմարտություն: Կենսական շատ արժեքներ, որ նախկինում տիեզերաստեղծման կառուցվածքի մեջ թվում էին անխախտ ու մեկրնդմիշտ տրված, այժմ ենթարկվելով քննության՝ աստիճանաբար սկսում են քայքայվել: Մարդը նայում է իր ներսը և հայտնվում մեծ անկարգության մեջ: Ներսից ու դրսից վտանգված մարդը դառնում է դարասկզբի Եվրոպայի մասին պատմող ամեն ճշմարիտ գրական կերպարը:

Հեսսեն չափազանց ծանր էր տանում նաև հասարակական-քաղաքական քառոր: Վայմարյան հանրապետության մասին, նրա գոյության ողջ ընթացքում (1919-1933), ամենից հաճախ գործածվողը հենց քառասյին բնորոշումն էր: Պատահական չէ, որ Հեսսեն 1923թ. հրաժարվեց գերմանական քաղաքացիությունից և տեղափոխվեց Շվեյցարիա: Այդ արամադրությունների բնորոշ արտահայտություն է «Հայացք դեպի քառոր» էսսեն (1919): Դոստոևսկու գրականության քննությանը նվիրված այս գործում Հեսսեն գրում էր. «Արդեն կես Եվրոպան... քառսի ճանապարհին է, և անդունդ է զահավիժում սրբազան մոլորությամբ արթած ու դրա հետ երգելով, երգելով

հարբած ու փառաբանված, ինչպես Դմիտրի Կարամազովն էր երգում»:

Շ«Տափաստանի գայլը» վեպ է հիվանդ հասարակության և հիվանդ մարդու մասին: Հերոսը տառապում է մի հիվանդությանը, որ հոգեբանության մեջ հայտնի է երկվորություն (Ambivalenz) անունով (այն մանրամասնորեն դիտարկված է նաև Կաֆկայի, Թ. Մանի, Հ. Բրոխի, Ռ. Մուզիլի վեպերում և պատմվածքներում): Հիվանդության հիմքում դնելով մարդու և զագանի հակասությունը՝ Հեսսեն իր վեպին հաղորդում է ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական բովանդակություն՝ դարձնելով այն ուղղակի գեղարվեստական անդրադարձը դարասկզբի եվրոպական ավերիչ պատերազմների ու հեղափոխությունների: Վեպի գաղափարական շեշտադրումների առումով կարևոր է նաև այն, որ ոչ միայն պատկերվում է հիվանդությունը, այլև բուժման դեղատոմս է առաջարկվում, դա վեպին հաղորդում է բարոյախոսական, ինչ-որ չափով՝ դաստիարակության վեպերին բնորոշ գծեր: 3

§20-րդ դարի բոլոր մեծ վեպերի նման «Տափաստանի գայլը» ևս բազմաշերտ է, ունի դիցաբանական, փիլիսոփայական և սոցիալ-հոգեբանական իր մեկնակետերը: Թ. Մանը նրա մասին գրում է. «Անհրաժեշտ է ասել, որ «Տափաստանի գայլը» վեպ է, որն իր փորձարարական հանդգնությամբ ետ չի մնում Ջոյսի «Ուլիսից» և Ժիդի «Դրամանեեզներից» Վեպի կառուցվածքը եռաստիճան է: ԴԳլխավոր հերոս Հարրի Հայլերին մենք տեսնում ենք երեք տարբեր չափումներում: Նախ՝ այսպես կոչված, «Հրատարակչի առաջաբանում», որ ծառայում է իբրև նախադրություն, ապա «Հարրի Հայլերի հիշողություններում», որոնք «Միայն խելագարների համար» վերտառությունն ունեն և կազմում են վեպի բուն տեքստը և վերջապես՝ «Ըննախոսություն Տափաստանի գայլի մասին» միջակայական հատվածում, որը կարևոր կառուցվածքային և կապող օղակ է վիպական մյուս մասերի միջև: Իրականում ուսումնասիրողներ (առաջինը՝ Թ. Յիդլկովսկին, 1930) իրավամբ նշում են վիպական կառուցվածքի մեծ հարագատությունը սոնատին (այդ դեպքում «Ըննախոսությունը» կարող է համարվել իբրև ինտերմեցցո): Կառուցվածքի նման ձևի ընտրությունը ստեղծում է պատումային երեք հեռանկարների հնարավորություն և

ընձեռում նյութի, գաղափարների, հերոսի դիտարկման բազմազանություն: Վեպի կառուցվածքային մտահղացումներից է նաև հեղինակային ես-ի տարրալուծումը Հարրի Հայլերի և մյուս կերպարների մեջ, մի առանձնահատկություն, որ Հեսսեն վեպում առաջարկում է տեսնել «Ֆաուստի» և մյուս բոլոր մեծ ստեղծագործությունների մեջ, այսինքն՝ եթե Գյոթեի ողբերգության մեջ հիմնական մի բանի կերպարները ոչ այլ որ են, քան հենց Ֆաուստի կամ հեղինակային ես-ի դրսևորումներ, ապա նույն տրամաբանությամբ «Տափաստանի գայլը» վեպը ունի միայն մեկ կերպար՝ Հարրի Հայլերը (կամ Հերման Հեսսեն), մյուսները Հարրիի այլազան դրսևորումներն են:

ՃՎեպն աղքատիկ է գործողություններով, դրա փոխարեն Հարրին շատ «փիլիսոփայում է» (Կվաանգավոր գիծ, որից զգուշացնում էր ժամանակին Գյոթեն), վերապրում իր կյանքն ու ժամանակը: Նա միանգամայն իրական անձնավորություն է, հիսնամյա միայնակ գրող, որն ինքն իրենից ու հասարակությունից օտարացման ճանապարհով հայտնվել է փակուղում, չի կարող ապրել, իր անձնավորությունը ամբողջությամբ տեղափոխել է «Տափաստանի գայլ» հասկացության մեջ և ձեռնահարկի իր մեղրիկ սենյակում տրվում է ոգու պարապմունքների ու մշտական գրույցների Նովալիսի, Ժան Պոլի, Նիցշեի և ամենից շատ՝ Գյոթեի ու Մոցարտի հետ, որոնց անվանում է անմահներ (անվանումը Հեսսեն է անցել Հյոլդեիսից) կամ իրեն տալիս գիշերային պանդոկների անձկությանը: Նա մերժում է բուրժուական հասարակությունը՝ նրա մեջ տեսնելով սոսկ արդյունաբերական բնագրներով շարժվող և քաղրենի մարդկանց զանգված, որը ոտնատակ է տալիս անցյալի բոլոր բարձր արժեքները՝ արվեստը, կրոնը, բանականությունը, և սփռում է չարություն, պատերազմ: Ներքին գայլը նրան անվերջ մղում է ինքնասպանության: Գայլը վեպում ունի երկակի իմաստ, խորհրդանշում է ամենայն բանականություն, անկեղծություն, ուժեղ կամք՝ դիմադրելու արդի քաղաքակրթության քարոյական անկումներին, քայց նաև՝ վայրենություն, անգուպություն և մերկ զգայականություն: Հարրի մեջ ընթացող մարդու և գայլի կռիվը, ի վերջո, վերածվում է բանականության և բնագրի կռիվի, և առաջնությունը, բնականաբար, տրվում է բանականությանը՝ գայլը պետք է ոչնչանա: Տառապանքներ

րի բարձրակետին, երբ արդեն մոտ է ածելին ձեռքը վերցնելու պահը, Հարրին պատահաբար հանդիպում է կուրաիզանուհի Հեքմինեին և նրա օգնությամբ անցնում ինքնաճանաչման քավարանով: Հեքմինեն, Մարիան, Պարլոն, դիմակահանդեսը, Գյոթեն, մոզական քատրոնը, ի վերջո, Մոցարտը Հարրիի ինքնաճանաչման փուլերն են: Դիմակահանդեսում Հարրին ապրում է *unio mystica* և տեսնում իր անհատականության ոչնչացումն ընդհանուրի մեջ: Պարլոն նրան բացատրում է, որ մոզական քատրոնի նպատակը նրան ապրել ու ծիծաղել սովորեցնելն է: Մինչ Մոցարտից «ծիծաղի դասեր» առնելը՝ ամբողջության որոնման ճանապարհին Հարրին Պարլոյի մոզական քատրոնում տրվում է իր ցանկություններին ու կրքերին: «Ավտոմորփիզների որս», «Տափաստանի գայլեր վարժեցնողի հրաշքները», «Բոլոր աղջիկները քոնն են» և «Անձնավորության կառուցման դաս» կարգախոսներով ընթացող քատերական ներկայացումներում (հարյուր-հազարավոր հնարավոր տարբեր տարբերակներից դրանք է հատկապես ընտրում Հարրին) մենք տեսնում ենք նախ ֆրեյդյան մարդուն՝ իր սեռական և ավերման անսահման բնագոյներով, ապա և բազմազան կյանքի քառսից անսովոր, հետաքրքիր, ինչ-որ չափով երգիծանքի, բայց հաստատապես դառնության ուժեղ շեշտերով հերիաք ստեղծելու Հեսսեի գրական բարձր վարպետությունը: Մոզական քատրոնի տեսարանները, որ շատ են հիշեցնում մուրտիպլիկացիայի արվեստը, և որոնց միջոցով Հեսսեն սրբնաբաց ավարտի է հասցնում վեպը, շատ ավելի խորն են ու իմաստավից, քան թվում են առաջին տպավորությամբ: Նայելով իր ներքը՝ Հարրին խոստովանում է. «Այսօր ես գիտեի արդեն, որ ոչ մի վարժեցնող, ոչ մի նախարար, ոչ մի գեներալ, ոչ մի խելագար ընդունակ չէ իր ուղեղում նյութել այն բոլոր մտքերն ու պատկերները, և որ դրանք լինեն նույնքան հրեշավոր, նույնքան վայրի ու չար, նույնքան բիրտ ու անմիտ, որքան որ անձամբ իմ մեջ եղածներն էին» (այս և-վերը բերված համեմատյան խոստովանությունների միջև սկզբունքային տարբերություն չկա, ինքնաճանաչող գիտակցության միևնույն ողբերգականությունն է): «Խելքի եկեր վերջապես, - Հարրին ասում է Մոցարտը, - Դուք պարտավոր եք ապրել և ծիծաղել սովորել: Դուք պարտավոր եք սովորել կյանքի ուսովներածչությունը

ունկնդիր լինել, պարտավոր եք փառաբանել նրա հետևում քարնված ոգին, պարտավոր եք ծիծաղել սովորել նրա բոհորոհի վրա: Ընդամենը սա է, Չեզանից այլ բան չի պահանջվում»: Եվ սա ոչ միայն Մոցարտի, այլև Գյոթեի և առեսարակ բոլոր անմահների կենսական փիլիսոփայության բանաձևն է՝ վեպի ընկալմամբ:

Ի վերջո, հաշտվելով իրականության անհաղթահարելիության հետ՝ Հարրին համակվում է վերածննդի և ծիծաղով ու ճիշտ նորից ապրելու տեսիլքով. «Պարլոն սպասում էր ինձ: Ինձ սպասում էր Մոցարտը»:

Անշուշտ, բավական իրական գծերով, քաղքենիական-բյուրգերական միջավայրի փայլուն մեկնաբանություններով վեպում պատկերվում է այն իրականությունը, որի մեջ ինքնասպանության է պատրաստվում Հարրին («Մարդը, որ ի վիճակի է հասկանալ Բուրդային, չի կարող ապրել այս աշխարհում»): Մակայն այստեղ զլխավորը դա չէ: Բացի այդ, այն փակուղին, որում հայտնվել է Հարրի Հալլերը, ախեզերական չէ և համոզիչ լինելու չափ ողբերգական: Դա ոչ Յոզեֆ Կ-ի էքզիստենցիալ («Դատավարություն») և ոչ էլ Հանս Կաստորպի («Կախարդական լեռ») ինտելեկտուալ փակուղին է, որից հետո հերոսները կամ ոչնչացնում են, կամ անէանում: Հեսսեն իր հերոսի համար պատրաստում է բոլորովին այլ ճակատագիր: Նա շրջանցում է փակուղին: Նամակներից մեկում Հեսսեն գրում է. «Տափաստանի գայլի» բովանդակությունը և վերջնական նպատակը ոչ թե ժամանակաշրջանի բնադատությունն է, այլ Մոցարտը և անմահները»: Այսինքն՝ ավելի կարևորվում են մարդու կատարելագործումն ու հաշտեցումը, որոնցով Հեսսեի վեպը խստորեն տարբերվում է մոդեռնի շատ գործերից (մոդեռն արվեստին մեծավ մասամբ բնորոշ չեն ուսուցողական առները): Հեսսեն դրան հասնում է մոզական քատրոնի և հերիաքի ճանապարհով:

Այս հաշտեցումը, իր և իր միջավայրի հետ ներդաշն ապրելու անհրաժեշտության գաղափարը բնորոշ է Հեսսեի գրեթե բոլոր վեպերին: «Միդիարտ» վեպի հերոսը, օրինակ, կյանքը քննելու իրավունքը վերապահելով միմիայն մեծ մտածողներին, ասում է. «Բայ ինձ մնում է միայն աշխարհը սիրել կարողանալ, այն չարհամարիել, աշխարհը և ինձ չատել, աշխար-

հին, ինձ և բոլոր արարածներին սիրով, զարմանքով ու ակնածանքով նայել»:

Մետաֆորներով, խորհրդանիշներով արտակարգ հարուստ այս վեպում (հայելի, քամելիա, լուսու, կարիճ, ոսկեցույց, ծիծաղ և այլն) առանձնահատուկ գաղափարական կշիռ է ստանում երաժշտությունը՝ իր սովորական իմաստացի աստիճանաբար վերածվելով գերմանական և առհասարակ մարդկային ոգու ճանաչման բանարու: Գերմանական գրականության մեջ Հոֆմանից հետո Հեսսեն և ապա Թ. Մանը երաժշտությունը դարձրեցին այն միջոցը, որով հնարավոր է խոսել արդի բարդ աշխարհի մասին: Երաժշտության մասին դասադուրյուններով լեցուն են Հեսսեի գրեթե բոլոր երկերը («Էնիան», «Էլինգգորի վերջին ամառը», «Հովեկները»), սակայն «Տափաստանի գայլը» և հատկապես «Հուրունքախաղը» կարող են ինչ-որ չափով նույնիսկ երաժշտական ձեռնարկներ համարվել: Մարդկային ամբողջականության իդեալին ձգտող Հարրիի համար Մոցարտի «Կախարդական սրինգը» այն երաժշտությունն է, որը կարող է մարդուն վերադարձնել ներդաշնակ կեցության, ոչնչացնել նրա մեջ ոչ միայն մարդու և գայլի, այլև բազմաթիվ ես-երի հակամարտությունը (նա կարծում է, որ մարդու էության մեջ ոչ թե երկու, այլ բազմաթիվ ես-եր են առկա), մինչդեռ ժամանակակից երաժշտությունը և պարերը մարդուն մղում են ոչ թե ամբողջականության, այլ բնագոյային աղճատումների, զգայական կրքերի ու եսամոլության, ի վերջո, հասարակական քաոսի, որը Հեսսեի համար անտանելի էր: Քազի դեմ դիմադրությունը ամերիկյանացման դեմ գերմանական հասարակության դարասկզբի շարժումների արտահայտություն է, սակայն խորհրդանշում է նաև ընդհանրապես արվեստի զանգվածայնացման և հասարակայնացման դեմ ըմբոստությունը («Տարորինակ է, բայց փաստ, որ ժամանակակից աշխարհում Հեսսեն ամենախայն ճանաչումը վայելում է հենց ԱՄՆ-ում»):

Հոգեբանական առումով, վեպը կատարաբար է, Հեսսեն ամեն կերպ ջանում է իր հերոսին դիոնիսոսյան ողբերգականության ծանր միջավայրից տեղափոխել բնականոն, արևոտ, ապողոնյան տարածքներ և վերջապես հասնում է դրան՝ իրականության գծերի համարյա ամբողջությամբ կորստյան ճանապարհով: Հաշտեցումը (ուտայիան), որի կողմերը վեպում

Մոցարտն է, Գյոթեն և անմահները, հավանաբար, անհնար է առանց այդպիսի կորուստների: Եվ եթե վեպի սկզբում աշխարհի հետ անհաշտ և տառապող Հարրին անհատականացված է, ապա հետագայում, ննցնելով ինքնաճանաչման քափարանով՝ աստիճանաբար կերպարանափոխվում է, հաշտվելու հետ միասին՝ կորցնում անհատականության իր գծերը, միջինացվում: Ջրկվելով «գայլային» իր շնորհներից՝ նա դառնում է հարյուր-հազարավորներից մեկը, որն այլևս հանճարեղ գրող չէ, այլ հեքիաթի հերոս, որը արդեն սովորել է ապրել և պատրաստ է երջանիկ լինել: Հեսսեն Հարրիին առաջնորդում է ոչ թե դեպի ինքնասպանություն, որը թեև իրական կյիներ, բայց ոչ հարագատ Հեսսեի մտածողությանը, այլ դեպի ինքնահաղթանակ: Վիպական այսպիսի լուծման մեջ հատկապես զգալի է Նիցշեի շունչը: «Մարդս մի բան է, որ պետք է հաղթահարվի», – ասում էր Ջրադաշտը:

Վիպական կառուցվածքում կարևորագույն տարր հանդիսացող մոզական քաոսոնի հետ է կապվում նաև վեպի դիցաբանական մեկնակետը: Հեսսեն փորձում է հեքիաթի սովորական սահմաններից անցնել այն կողմ, առնչվել խաղին՝ վեպի փիլիսոփայական հարցադրումները տեղափոխելով գրավոր խոսքի հնագույն և ծիսական ոլորտներ: Խաղի՝ իբրև կյանքի ընկալման որոշակի փիլիսոփայության գաղափարը ևս լայնորեն արժարժվում է Հեսսեի գրականության մեջ: Օրինակ՝ «Ճանապարհորդություն դեպի Արևելք» վեպի հերոս Լեոն, որ ճանապարհորդների առաջնորդն է, նրանց սովորեցնում է կյանքն ընկալել իբրև մեծ խաղ, այն պարաքի կատարման կամ պատերազմի վերածելը նշանակում է փչացնել կյանքը: Իսկ ահա «Հուրունքախաղ» վեպում գաղափարը դառնում է ընդհանրական: «Առանց մոզության ուժ չէր լինի տանելու այս աշխարհը», – խոստովանում է գրողը:

«Տափաստանի գայլը» վեպը գերմանական հասարակության կողմից չընդունվեց միայն հիացմունքով: Վեպի մասին եդան նաև բացասական գնահատականներ: Հեսսեն քննադատվեց իրականությունը չհասկանալու և կեղծելու մեջ՝ ի տարբերություն գրական էլիտայի (Թ. Ման, Թ. Էլիոթ, Ա. Ժիդ, Ս. Յվայզ և ուրիշներ), որ բարձր կարծիք ուներ վեպի և առհասարակ Հեսսեի գրականության մասին: Միայն 40-ական րվա-

կաններից՝ հատկապես Նորեյյան մրցանակ ստանալուց (1946) հետո, Եվրոպայում և այլուր մեծապես աճեց գրողի համբավը:

«Տափաստանի գայլը» վեպն այսօր քարգմանվել է ավելի քան երեսուն լեզուներով, նկարահանվել է (1987):

Հայերեն հրատարակվում է առաջին անգամ:

Արա Առաքելյան
բան. գիտությունների բեկնածու

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տափաստանի գայլը» վեպը բացառիկ տեղ է զբաղում Հերման Հեսսեի ժառանգության մեջ: Վեպի վրա գրողը սկսեց աշխատել 1920-ական քվականների սկզբին՝ Բագերում, և ավարտել 1927թ. Յյուրիխում: Հետաքրքիր է, որ վեպն ավարտելուց հետո Հեսսեն 1927թ. նույն վերնագրով և նույն թեմայով գրում է նաև պատմվածք:

«Տափաստանի գայլը» վեպի վերնագիրը բազմիմաստ է: Նրանքում կարելի է նկատել, մասնավորապես, Ֆ. Նիցշեի «Դիոնիսոսյան դիֆիրամբներ» (1888) շարքի մի բանաստեղծության ազդեցությունը, որում բանաստեղծը պատկերված է երգիծանքով և համարվում է իբրև վայրի, անտուն գազան (Raubtier): Դրանով Նիցշեն ակնարկում է նաև անհայրենիք, հասարակությունից օտարացած մտավորականին:

Այս վեպը ծանոթագրելը, առհասարակ, կապված է որոշակի դժվարությունների հետ: Բանն այն է, որ նրանում զգալի ծավալ են կազմում եվրոպացի և արևելյան մտածողների, գիտնականների, գրողների, հատկապես Գյոթեի, Նովելիսի, Նիցշեի, Յունգի և այլոց մտքերի, դասադրությունների, գեղարվեստական հաավածների հետ հեռավոր կամ մտաիկ զուգահեռները: Հրատարակությունը շատ չժանրաբեռնելու նպատակով հաճախ խոստովել ենք նման հատվածները ծանոթագրելուց:

Որոշակի չափով օգտագործված են գերմանական հրատարակությունների ծանոթագրություններ:

1 «...մեզ մոտ մնացած գրառումները...» – Յ. Վ. Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպից և ռոմանտիկներից մնացած քննադատ արտահայտություն է, որոնց հետ Հեսսեին կապում են բազմաթիվ գծեր:

2 «Տափաստանի գայլը հիսունին մոտ մարդ էր» – Ինքնակենսագրական փաստ է: Վեպը գրելիս Հեսսեն նույնպես հիսուն տարեկան էր:

3 «...որին կոչում էին Հարրի Հալլեր» – Բազմաթիվ կողմերով իր քարոյական, քաղաքական, գեղագիտական ըմբռնումներով գլխավոր հերոսը հիշեցնում է Հերման Հեսսեին: Տվյալ դեպքում համընկնում են նաև նրանց անվան և ազգանվան սկզբնատառերը:

4 «Պատերից կախվեցին նկարներ...» – Ինքնակենսագրական ակնարկ է: Հեսսեն նույնպես նկարում էր:

5 «Սոֆիի ճանապարհորդությունը Մենելից Սարսոնիա» – Յոհան Տիմոթեոս Հերմեսի (1738-1821) հինգհատորյա նամականի վեպն է:

6 «...Ջրհուսի նշանի տակ եմ...» – Գերմանական դիցաբանության մեջ ջրհուսը համարվում է ջրի չար ոգի:

7 «...երբ Աղալերա Շքիֆտերին...» – Ավստրիացի գրող Աղալերա Շքիֆտերը (1805-1868) անբուժելի հիվանդության տառապանքներին վերջ տալու համար ամենիով կտրում է կոկորդը և մեռնում:

8 «...սուկեցուք...» – Խորհրդանշական պատկեր է, որ հանդիպում է նաև Հեսսեի «Իրիս» հեքիաթում և կապվում է անհասականության կարևոր, բայց քաբուն կողմերի հետ: Նմանատիպ խորհրդանշական իմաստ ունեն վեպում նաև արխիդեան, քամելիան, ջուրը, կարիճը և այլ առարկաներ:

9 «...այս նեղ, փակ դարպասը...» – Արտահայտությունը հիշեցնում է Նոր կտակարանի հեռույալ խոսքերը. «Ինչքան անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթեոս, 7, 14):

10 Մոզական քատրոն – Վեպի առանցքային հասկացություններից մեկն է, որ նշանակում է հոգու կախարդական հայելի, որով հնարավոր է քափանցել մարդու ներաշխարհ:

11 «...ողագնաց Ջանոցցոն...» – Ժան Պոլ Ռիխտերի (1763-1825) «Օղագնաց Ջանոցցոյի ծովային գիրքը» վեպի հերոսն է:

12 Աբիլլա Շմելցլ – Ժան Պոլի «Դաշտային քարոզիչ Շմելցլի քափառումները ֆրեացում» երկի հերոսն է:

13 Բորբորուդուր – 1835թ, ճավա կղզում հայտնաբերված բուդդայական ճարտարապետության մոնումենտալ հուշարձան (8-րդ դար մ.թ.):

14 Գուրիո – Վայր իտալական Պերուջո գավառում:

15 «Բայց երբ տեղավորվեցի...» – Տողերը հիշեցնում են Նովալիսի «Հենրիխ ֆոն Օֆտերդինգեն» վեպի պատկերներից մեկը, երբ Հենրիխը քարայրում, ճգնակյաց ծերունու գրքերից մեկում, զարմանքով

կարդում է իր իսկ կյանքի անցյալ և ապագա իրադարձություններին վերաբերող տեղեկություններ:

16 «...մի մեղավորը կարող է...» – Ակնարկում է Նոր կտակարանի խոսքը. «Ասում են ձեզ, որ այսպես ուրախություն կլինի երկնքում մի մեղավորի համար, քան ասյաշխարհում է, քան իննսունհինը արդարների համար, որոնց այսաշխարհում պետք չէ» (Դուկաս, 15,7):

17 «...երգիծանքի մեջ գտնվում է հաշտարար երբ» – Այստեղ դրսևարվում է երգիծանքի մասին Հեսսեի գեղագիտության որոշ կողմեր, նկատելի է բնդիանությունը Ժան Պոլի, Շոպենհաուերի առանձին դրույթների հետ, սակայն առկա են նաև ազդեցություններ Նիցշեից, մասնավորապես «Ողբերգության ծագումը երաժշտության ոգուց» (1872) աշխատության մեջ նա հորոգում է. «Դուք պարտավոր եք նախևառաջ այսկողմնային հույսի արվեստը ուսանել, դուք պարտավոր եք ծիծաղել սովորել, իմ պատանի բարեկամներ»: Այս միտքը քառացիորեն կրկնվում է վեպում մի քանի անգամ:

18 «...ստանալով մեր փոքրիկ հայելիներից մեկը...» – Հայելին վեպի հիմնական խորհրդանշիչ-գաղափարներից մեկն է, ինքնաճանաչման կարևոր միջոց:

19 «...հանդիպելով անմահներին...» – Անմահներ՝ քացառիկ անհատներ, ովքեր ներկայացնում են ոգու և մարմնի աստվածային ներդաշնակությունը:

20 «...մարդը այլ բան չէ, քան նեղ, վտանգավոր կամրջով...» – Դատադրությունը կրկին հիշեցնում է Նիցշեի մտքերից մեկը. «Մարդս մեծ է նրանով, որ նա կամրջ է և ոչ թե նպատակ» («Այսպես խոսեց Ջրադաշտը»): Նիցշեի այս միտքը հիմք է ծառայել նաև Կաֆկայի համար՝ գրելու իր «Կամրջը» պատմվածքը (1917):

21 «...որ շնորհում է Գեթսեմանի այգին» – Ակնարկում է Նոր կտակարանի պատմությունը Քրիստոսի մեռնելու և վերջին գիշերվա տազնասպանի մասին: Մոտիվը օգտագործված է նաև Ռիլկեի կողմից՝ «Գեթսեմանի այգին» բանաստեղծության մեջ (1903):

22 «Երանությունը տրված է լույս մանուկներին» – Կրկնեթղ Ալբերտ Լաբրոցինգի (1801-1851) «Թագավորը և եյուսներ» օպերայից:

23 Մեջբերված բանաստեղծությունը Հեսսեն գրել է 1926թ.: Հյուդեռլինի, Նովալիսի, Գյոթեի նման, որոնց նկատմամբ պաշտամունք ուներ, Հեսսեն ինքն էլ իր վեպերում հաճախ տեղ էր հասկացնում բանաստեղծական հատվածների: Դրանում կարելի է տեսնել նաև որոշակի տուրք միջնադարյան գերմանական արձակի ավանդույթին:

24 «...հոգեկան հիվանդություն ստացած իմ կինը...» – Կարևոր փաստ, որ Հեսսեի համար ինքնակենսագրական է: 1919թ. գրողի առաջին կինը՝ Մարիա Բեռնուլիին, հոգեկան հիվանդություն ստացավ:

25 «...որ կա Նիցշեի աշնանային երգում» – Խոսքը վերաբերում է Նիցշեի «Մենավոր մարդը» քանաստեղծությանը:

26 «...ս. Մարտին արվարձանում հանդիպեցի» – Վայր, որ գոյություն ունի իրականում: Այն գտնվում է Բագելի հյուսիսարևմտյան մասում:

27 «...զնայեք «Սև արծիվ» – Իրականում գոյություն ունեցող ռեստորան Ցյուրիխում: Այդպիսիք են նաև վեպում հիշատակվող «Օդեոն» ռեստորանը, «Բալանս» հյուրանոցը և շատ այլ տեղանուններ:

28 «Բացի այդ, ինձ անհանգստացնում էր մի կարիճ...» – Կարիճին, ընդհանրապես, միջնադարյան խորհրդապաշտությունը վերագրում է բազմաթիվ բացասական գծեր՝ խարեություն, անհավատարմություն, պարտաված սատանա և այլն:

29 Ֆրիդրիխ ֆոն Մատիսոն (1761-1801) – Գերմանացի բանաստեղծ:

30 Գոտֆրիդ Ավգուստ Բյուրգեր (1747-1794) – Գերմանացի բանաստեղծ:

31 Մոլլի – Բանաստեղծ Բյուրգերի կինն է:

32 Վուլպիուս – Գյոթեի կնոջ օրիորդական անունն է:

33 Վալտեր ֆոն Ֆոգելվեյդե (մոտ 1170 - մոտ 1230) – Գերմանացի միջնադարյան բանաստեղծ, միննեզանգի ամենանշանավոր դեմքը:

34 «Հերմինե՞ է քո անունը» – Հերմինեն՝ իբրև անուն, առհասարակ շատ խառն է: Այն կապվում է Հերմանի հետ և ընդգծում հեղինակի անվան հետ ունեցած ընդհանրությունը: Բացի այդ, Հերմինեի կերպարը կարող է գուգակցվել առասպելի Հերմեսի հետ, որն ընդհանրապես հովանավորում էր մոզոությունը:

35 «Անձկությունը» և «Վալենսիան» – Պարային մեղեդիներ էին, որ տարածված էին Եվրոպայում 20-րդ դարասկզբին:

36 Թուրստեհուդ Գիտրիլս (1637-1707) – Գերմանացի երգահան:

37 Պախերլեյ Յոհան (1653-1706) – Գերմանացի երգահան:

38 Song – Բառի գերմաներեն համարժեքը՝ Gesang-ը, Հեսսեն չի գործածում ոճական առումով: Տվյալ դեպքում song-ը խորհրդանշում է ցածրարժեք, կարարևտային երաժշտությունը:

39 «...իսկ ես՝ իմ սրբերին՝ Քրիստոֆորին, Ֆիլիպ Ներրին – Կարալիկ եկեղեցու հանրահայտ սրբեր: Քրիստոֆորը, լեզունդի համաձայն, Քրիստոսին վրկել է գետանցի ժամանակ: Ֆիլիպ Ներրին պատմական անձնավորություն է (1515-1595):

40 «...Վոքան ասածո լայն քայլերով...» – Վոքանը գերմանական դիցաբանության մեջ անպրոպի աստվածն է:

41 «...դա երկսեռ սիրո կախարդանք էր» – (Hermaphrodit) Ըստ հունական դիցաբանության՝ ծագում է Հերմեսի և Աֆրոդիտեի որդու՝ Հերմաֆրոդիտոսի և Սալմակիդա հավերժահարսի միավորումից:

42 «Փոքրիկ հայելի, հայելի ձեռքի» – Բանաստեղծական տող գերմանական «Չյունանուշիկը» հեքիաթից:

43 «...դա մարդկանց և մեքենաների միջև կոխն էր...» – Այս քեմայով Հեսսեն ունի բանաստեղծություն՝ «Մեքենաների պատերազմը», որ գրվել է 20-ական թթ. սկզբին: 1923թ. Ռիլկեի գրած «Մպառնում է մեքենան» սոնետը գրեթե նույն տարամաղբությունների արտահայտությունն է:

44 Metabor – Կախարդական խոսք Վիլհելմ Հաուֆի (1802-1827) «Ռալֆ-արագիլը» հեքիաթում, որն արտասանելիս կարելի էր վերափոխվել ցանկացած կենդանու:

45 Կամասուտրա – Սիրո արվեստի հին հնդկական դասագիրք:

46 Եվրոպայի մայրամուտը – Այդպես էր վերանգրված Օ. Շայնզլերի (1880-1936) փիլիսոփայական-մշակութաբանական երկը:

47 «...որի առջևում շախմատի տախտակի նման...» – Շախմատը նույնպես սովորական մանրամասն չէ: Այն կապվում է ինչպես արևելյան իմաստության, այնպես էլ խաղ խորհրդանշական գաղափարի հետ ընդհանրապես:

48 «Իշխանի կախարդական եղջերափողի մեջ...» – Անվանումը համընկնում է ռոմանտիկ գրողներ Աոնիմի և Բրենտանոյի կազմած «Պատանու կախարդական եղջյուրը» ժողովրդական երգերի ժողովածուի վերնագրին, բայց այն ակնարկում է նաև գերմանացի հոգեբույժ Պրինցհոբնի անունը, որը 1922թ. հրատարակեց հոգեկան հիվանդների նկարչական փորձերի մասին աշխատություն: Պրինցհոբն անվան մեջ առկա է բառախաղ: «Պրինց»՝ իշխան, «հորն»՝ գերմաներեն նշանակում է հենց եղջյուր:

49 «Օ՛, բարեկամներ, վերջ այս ձայներին» – Ռեչիտատիվ, որը նախորդում է Բեթհովենի «Իններորդ սիմֆոնիայի» ավարտական

խմբերգին: Այդպես է վերնագրել Հեսսեն նաև 1914թ. գրած հակա-
պատերազմական բեմայով իր հողվածներից մեկը:

50 «Դա վերջին մեծ երաժշտությունն է...» – (հմմտ.) «Բարի հին
ժամանակն անցավ», Մոցարտի մեջ այն հնչեց վերջին անգամ (Ֆր.
Նիցշե. «Բարուց և չարից անդին», Երևան, 1992, էջ 135):

51 «Եվ այդուհանդերձ այն ժամանակներից հետո...» – Հարրիի
«գործունեության» թվարկումը հիշեցնում է «Ֆաուստի» հայտնի
հատվածը.

Ես քափանցեցի խորքը իմաստության,

Դարձա և՛ բժիշկ, և՛ իրավաբան...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչի առաջաբանը	3
Հարրի Հալլերի գրառումները	24
Քննախոսություն Տափաստանի գայլի մասին	41
Հերման Հեսսեն և իր անսովոր վեպը	222
Ծանոթագրություններ	233

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵ
ՏԱՓԱՍՏԱՆԻ ԳԱՅԼԸ
Վեպ

Герман Гессе
СТЕПНОЙ ВОЛК
Роман

Խմբագիր՝ Մ. Ա. Թորոսյան
Նկարիչ՝ Գ. Վ. Մարիկյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան
Համակարգչային շարվածքը՝ Ն. Ա. Վարդանյանի
Համակարգչային էջադրումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Չափը՝ 84x108 1/32: Թողոթ՝ տպ. № 1:
Տառատեսակ՝ «Թայմս Արմենիան»:
Տպագրություն՝ օֆսեթ: 12,6 պայմ. մամ., 11,1 հրատ. մամ.:
Տպարանակ՝ 500: Պատվեր՝ 62: Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տեղյան 91